

ՅԱՅ ԵՐԵՎԱՆ

V SURB

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ի Բ

№ 4

Ա Պ Ր Ի Լ

1905

Հ Յ Վ Հ

Թ Ա Ֆ Լ Ի Ռ Ա

Տպարան „ՀԵՐՄԻԿՈՒ“ Մալոյ. փող. № 15.

1905

ԲՈՎԱՆԴԱԿԱԹԵՐԻՆ

№ 4

Եթև

1. ՍԱՄՈՒՆՑԻ ԴԱԼԻԹ ԵՒ ՄԱՐԶՄԵԼԻՐ, (գրամատիկական պոեմ), Խեմի Մամուչեանի	5
2. ԴԵՊԻ ԱՆԻ, Ա. Անարդնեանի	35
3. * * ռամաւորներ, Ը. Շատակիսանի	45
4. ԲՆԿԵՐՆԵՐԸ (գիւղակ, կեանքից), Ջանախեցի	47
5. ԲԱԼՑԻ ԽԱՂԱ ռաման, Շլշ. Ճանուրիսանի	52
6. ԴԱՐԱԼԱԳԵԱԾ ԿՈՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ, Մ. Տ. Ա.ի	53
7. ԴԱՇԱԽՄ ռաման, Ալ. Ճանուրիսանի	64
8. Թ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ,	65
9. ԹԻԼԲՐԻՅՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Խորեն Յեղիկիսանի	98
10. ՄԹԱՅԼ ՕՐԵՐ, (պատմուածը) տիկ, Եկ. Բահամդորի	107
11. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ, Վ. Բ.ի	114
12. ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏՈՍԽԱՆՆԵՐԸ, Լ Մի Հայ աղջկայ ձայնը, օր. Մ. Հ.ի և Մի Հայ կոսջ կարծիքը տիկ, Մար. Տէր-Դրիվորիսանի	147
13. ԱՌԻՍԱՅ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ֆ. Գորկի «Ճանակ».—Լ. Անդրեև «Կրանի Ծմբխ» , Տ-ի.	151
14. ՕՐԵՐԼԵՆԵՐԸ, վէպ Ռինէ Բազկնի	165
15. ՔՆՆԱԴԱՇՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԿՈՍՈՒԹԻՒՆ. — Գ. Վարդանի անցեանի «Հայ մելինակներ. — Յ. Տ. Ա. : 2) «Սիրու երգի»—Ն. Քուչուկի երգերը—մշակեց Գ. Ա.ստուր. — Տ. Զ. : 3) Ա. Մարգար, «Երախոսիր».—Տ. Զ. : 4) Նար-զոս, «Առորածին մանուկը».—Ա. : 5) Մ. Տիր-դանիէլեան, «Բուզա-Լաւաշի զմիը».—Ա. : 6) Արման Սիրիստը և Մարսէլ Պրէփօ. «Յանցաւոր մօր խոստվանութիւնը», «Ընկերակից».—Ա.	274
16. ՆՈՐ ՄԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ	192
17. ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱԲՀԻՑ. — Համալուտ տեսութիւն դեղարուեսի դպրոցներու սկիզբէն մինչեւ նորադայն շրջանները Հը. Ալեսենար	193
18. ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Հասարակական արթնացած գիտակցութեան անընդհատ աշումը: — Բուլիգինեան խորհրդակցութիւն: — Փետր. 18-ի Անհատին տուած բնիկիստի հետեւանքները հասակակական կարծիքի աղատարտայացման համար: — Ազգաքնակրութեան զանազան	

Նոր շրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀՅՈՒՍՔԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԵԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 4

ԱՊՐԻԼ

1905

ՀՅՈՒՍՔԵԿԱՆ

Թիֆլիս
Տպարան „ՀՅՈՒՍՔԵԿԱՆ“ Բնկ. Մադար. փող., 15.
1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 6 апрѣля.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

	Երես
1. ՍԱՍՈՒՅՑԻ ԴԱՒԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՔ, (գրամատիկական պօչմա), Ղետոն Մանուկեանի	5
2. ԴԷՊԻ ԱՆԻ, Ա. Ահարոնեանի	35
3. * * ոտանաւորներ, Աւ. Խամհակեանի.	45
4. ՀՆԿԵՐՆԵՐԸ (գիւղակ, կեանքից), Ջաւախիցի.	47
5. ԲԱԽՏԻ ԽԱՂԸ ոտան, Ալ. Ժաստորեանի	52
6. ԴԱՐԱԼԱԳԻԵՍԶ ԿԱՄ ՎԱՅՈՅ ԶՈՐ, Մ. Տ.-Ա.ի	53
7. ԴԱՇՏՈՒՄ ոտան, Ալ. Ժաստորեանի	64
8. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ,	65
9. ԹԻՒՐԹԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ, Ռուբէն Բերբերեանի .	98
10. ՄՌԱՅԼ ՕՐԵՐ, (պատմուածք) տիկ. Եկ. Բահաթուրի .	107
11. Յ. ՊԱՐՈՒԵԱՆ, Վ. Բ.ի	114
12. ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՊԱՏՍՍԽԱՆՆԵՐԸ. 1 Մի հայ աղջկայ ձայնը, օր. Մ. Հ.ի և Մի հայ կնոջ կարծիքը տիկ. Մար. Տէր-Գրիգորեանի	147
13. ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Մ. Գորկի «Դաշնիկ».—Լ. Անդրէեվ «Կրասնի Ծմѣхъ», Տ.-ի. .	151
14. ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, վէպ Ռընէ Բազէնի	165
15. ՔՆՆԱԴԱՏԱՇՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Գր.Վանցիանի «Հայ հեղինակներ. — Յ. Տ. Մ. : 2) «Սիրու երգիչ»—Ն. Գուշակի երգերը—մշակեց Գ. Ասատուր. — Տ. Զ. : 3) Ա. Մարգար, «Երախտիք».—Տ. Զ. : 4) Նար-Դոս. «Նորածին մանուկը».—Ա. : 5) Մ. Տէրդանիելեան. «Բուղա-Լաւաշի գոհը».—Ա. : 6) Արման Սիլվեստր և Մարտէլ Պրէփո. «Յանցաւոր մօր խոսափանութիւնը». «Ընկերակից».—Ա.	274
16. ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ	192
17. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ.—Համառօտ տեսութիւն դեղարուեստի դպրոցներու սկրիպէն մինչեւ նորագոյն շըրշամները Հր. Ալեանար	193
18. ՆԵՐԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հասարակական արթնացած գիտակցութեան անընդհատ աճումը:—Յուլիկինեան խորհրդակցութիւն:—Փետր. 18-ի Սենատին տուած թիսկիպուի հետեւանքները հասակակական կարծիքի ազատարտայտման համար:—Ազգաբնակութեան զանազան	

իսաւրի եւ կորպորացիաների պահանջնը լը և բժիշկ-ների Գլուխովի ման համաժողովի վճիռը իբրև արոգրամին:—Զինովյաների եւ արաւուաւ նովելորականութեան ազգութիւր հաստրակական ներկայ տրամադրութիւնից:—Նւրկացացոցական ժողովի առաջ դրած իրաւասութեան սահմանները:—Ներկայ հոսանքի Թշնամիների առակտիկան:—Գլուխոցիական շարժումներ և զրանց կովկասեան առանձնայատկութիւնները:—Գրաստանի գլուղացիների պահանջները:—Ճորտերի ազատութիւնն եւ տնտեսական կախում ազնուականութիւնից:—Ծեփորմների պահանջը կովկասում:—Նոր ուղղութեան նշարներ:—Կովկասեան փոխարքայի խօսքերը Թիֆլիսի եւ Կաթողիկոսի պատգամաւորներին:—† Ք. Միքայէլեան:—† Մ. Եկմաշեան:—Ս. Ֆէլիկիեան:—Սեւ ծովերեաց գաղթականների հարցը:—Կովկասարքայի գիմումը երկրիս ազգաբնակութեան:—Բարձրագոյն ուկազ եւ բհսկիպստ փոխարքայութեան վերաբերեալ:—Գործակատարների շարժումը Թիֆլիսում:—Բազուկի դէպէրի ստեղծած լարուածութիւնը:—Անաչառ հրապարակային քննութեան անհրաժեշտութիւնը:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ: Լ. Ս. . . . 208

19. ԿՈՎԿԱՍԻ ԹՌԻՐՔ ՄԱՄՈՒԻԼԻ:—Գործեալ «Շարքի-Ռուսի» նոր ուղղութեան մասին:—Հայերն եւ Թիւրքիան, համեմաշխութեան եւ գործակցութեան կոչ Խուրք ինտելիգենցիան:—Կրօնը եւ քաղաքակրթութիւնն:—Լոռութիւնը նշանաբան. Տիգրանի 229

20. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Ռուս-հասկանական պատերազմը:—Ֆրանսիան եւ Գերմանիան Մարոկկոյում:—Կրէտական առաստամբութիւն:—Արաբական շարժումը:—Թիշէկ Զալիխիլի ձեռնարկութիւնը Թիւրքաց Հայաստանում:—Պարսկական զործերից:—Նոր հնդկա-պարսկական առեւորական ընկերութիւն:—Փէլ-Վէրն Լ. Ս. . . . 236

21. ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, 243

22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 247

23. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 253

24. ՅԱՒԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան. 1—16

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԵՒ ՄՄՐԱՄԵԼԻՔ

Դրամատիկական պօէմա դիւցազնական ժամանակներից

Պ Օ Է Մ Ա Յ Ա Ն Զ Ի Ն Գ Ի Ն Ք

ԴԱԻԻԹ, Մհերի որդին.
Զէնով-ՅՈՆՅԱՆ, Դաւթի հօրեղբայրը.
ՍԱՄԻԱ, Զէնով-ՅՈՆՅԱՆի կինը.
ԳԻԼՆԱԶ, պառաւ.
ՄՄՐԱՄԵԼԻՔ, Մորայ տէրը.
ԻՍՄԻԼ-ԽԱՆՈՒՄ, Արա կինը, Դաւթի մայրը.
ԼԵՅԱ, Մորամելիքի աղջիկը.
ԿՈՍԲԱԴԻՆ, Մորամելիքի սիրելին.
ԶԱՐԽԱԴԻՆ, Մորամելիքի մերձաւորը.
ՄԻԿԴԻՆ
ԲՅԴԻՆ { Մորամելիքի հարկահանները,
ԾԵՐՈՒՆԻ Մորա բանակից.
ՈՐՍԿԱՆՆԵՐ.
Դաւթի զինակիցները.
Պահապաններ.
Ժողովուրդ՝ աղամարդիկ, կանայք, աղջկերք, մանուկներ.
Մառայ Զէնով-ՅՈՆՅԱՆի տանը.
Թիկնապահներ.

Պ Ա Տ Կ Ե Բ 1.

Կորելի արտ, որի ձախ կողմում երևում է մի փոքրիկ
կիսաւեր խրճիթ։ Արաի շարունակութիւնը կազմում է մի դաշ-
տավայր։ Հորիզոնում լեռներ։ Արտի մէջտեղում մի ձողի վրայ
կանգնեցրած է խրտուիլակ՝ թռչուններին վախեցնելու համար։
Պառաւ Գիւնազը պպզած է կորելի մօտ և քաղան է ա-
նում որոնները։ Նա մարմնով խիստ վտիտ է, խիստ զունատ。
Քիթը և կղակը սուր և առաջ թեքուած։ Պէմքի վրայ անթիւ
Ապրիլ, 1905.

կնճիոների ծալքեր. մաղերը սպիտակ և դպրուած: Լաթէ լայն գոտու մէջ խրած է թեշիկը և մի գունդ բուրգ:

Խրճիթի առաջ զրան ծառ միակ ծառը մի հին ուռի է, խիստ ծուռ ու ծուռ աճած: Նրա տակ շուարում ընկած է մի հատ կոճղ, կեղեր բոլորովին մաշուած:

Գարնանային մի պայծառ առաւառ է: Այս ու այն կողմից լուռում են լորերի հատուկտոր հնչիւններ. աւելի հեռուից՝ հովանան սրսպի ձայն:

Դիւլնազ. Երնէկ իմանամ, էս փուճ խոտերը
Ինչի՞ համար է ըստեղծել Տէրը.

Քանդում ես քանդում, Էլի ճար չը կայ.
Խեղդեցին արտըս, Աստուած է վըկայ:
Չորանան, վըտեն ձեր արմատները.

Լաւ բան լինեիք, չէիք բազմանայ:

(Խրճիթի կիսաբաց գոնից դուրս են թափում հաւերը և մտնում են արտի մէջ: Դիւլնազը չարացած վեր է կենում և իր կորագլուխ գաւազանով սկսում է սրանց քշել ներս):

Հիմի էլ սրանք... իրար ետևից...

Աստուած, ազատիր ինձ սըրանց ձեռից:
Սըրանց ձեռին էլ ես գերի մընամ:

Դէ, ներս գընացէք, թէ չէ, այ, կը տամ...

Կորէք... քիշքիշքիշ... ջնւ-ջնւ-ջնւ... հայդէ...:

(Հաւերին ներս անելուց յետոյ՝ դուռը փակում է, գոտիկից հանում է թեշիկն ու բուրգը և նստելով կոճղի վրայ՝ ըստելում է մանել: Թթի տակ մրմուռն է մի անխօս եղանակ՝ մելամաղձոտ, միակերպ և նման ճախարակի ձայնին: Այդ ժամանակ Դաւիթը վաղեվազ մտնում է կորեկի մէջ և կոխսկրտելով արտը՝ կամենում է անյնել միւս կողմ):

Այ արդայ, արտըս հէք ես կոխսկրտառում,

Գետինը մըտած, դու չէս ամաչում...

Գըրնդը տանի, մահըս տանի քեզ,

Որ իմ ապրուստըս ինձնից չը կըտրես...

Խըզմըտանք չունի՞ս, ոչ ու փուճ էլած...

Դաւիթ/ Նանի, ինչի՞ ես այդպէս չարացած:

Դիւլ. Այ նանին հանի՞ քո ջուխտ աչքերը...

Դաւ. Նանի ջան, վայ ինձ, մյու է քո սէրը,
 Այդպէս կ'անիծե՞ն ինձ նըման որբին:
 Գիւլ. Բաս ի՞նչ գործ ունիս խո՞ կորկի միջին:
 Զեռ աեսնում որ ես
 Պահում եմ արարս աչքիս լրսի պէս:
 Զէ որ ստ է իմ սաղ տարուայ հացը,
 Սա է իմ բոլոր եղած-չեղածը...
 Բացւում է թէ չէ աղօթարանը,
 Մինչև իրիկուն արեի տակին,
 Պահապան շան պէս՝ կանդնած դըռանը
 իմ արարս հետ եմ, նայում իմ կորկին:
 Մի ըոսէ վըրից աչքս չեմ թեքում,
 Մի ըոսէ մօտից ես չեմ հեռանում.
 Կըտրել եմ քոնըս,
 Մոռացել տունըս
 Ծըտերին փախցնում, հաւերին քշում...
 Հիմի էլ միայն դու էիր պակաս,
 Որ իմ կորեկը ոտիդ տակը տաս...
 Ա՛խ, Մըհեր, Մըհեր, լուսհոգի Մըհեր,
 Միթէ քո որդին սա պիտի լինէր:
 Դաւ. Նանի, հօ Դաւթից, քեզ էլ է յայտնի,
 Մարդկանց չար մըտքով վընաս չի հասնի.
 Թէ անում էլ եմ մէկին վատութիւն,
 Դա ի՞նչ է—միայն մի անփորձութիւն,
 Կամ ջահիլութիւն, որ շուտով կ'անցնի:
 Այ, եթէ կ'ուզես, ես ասեմ, նանի,
 Ինչակս պատահեց, որ արտը մըտայ:
 Արտի ետևում
 Լոր էի որսում,
 Յանկարծ գառան չափ նապաստակ տեսայ:
 Զարնել ուզեցի, զէսի դէս փախաւ,
 Ես էլ քամակից: Նա արտը մըտաւ,
 Ու ես էլ հետք... ու յետոյ, երբ ես...
 Գիւլ. Էհ, Դաւեիթ, Դաւեիթ, ի՞նչ ասեմ ես քեզ:
 Խելքով իսկ և իսկ երեխայ ես դու:

Ի՞նչ կը վայելէ մի տըղամարդու
Աքտերըն ընկած՝ լոր ու ծիտ զարնել,
Նապաստակների քամակից վագել...

Ոչ թէ լոր ու ծիտ գու պիտի որսաս,
Այլ խոշոր եղնիկ, այծեամ ու վարագ:

Որս անել կ'ուզես, գընան էն սարեր,

Ուր օղորմածիկ հէրբդ որս կ'անէր:

Դաւ. Նանի, ի՞նչ սարեր... Ես չեմ իմանում:

Գիւլ. Այ, Որսի-սարը Մըսրայ սահմանում:

Դաւ. Այստեղ, ասում ես, լաւ երէներ կան:

Գիւլ. Ամեն տեսակի, ընտիր, պատուական:

Դաւ. (Սխուս ուրախ) Ուզի՞ղ ես ասում... թէ Աստուած
սիրես...

Գիւլ. Ի՞նչ հաշիւ ունիմ, որ սուտ խօսեմ ես:

Դաւ. (լուրջ, մտախոհ) Այս իմ հօրեղբայր, ախ, Զէնով-
Յոնան,

Ես քեզ ի՞նչ ասեմ... գըրաստի նըման,

ինձ կոյր ես պահել,

Բան չես սորվեցրել:

Վայ էն խեղճ որբին, որ մընաց անտէր.

Թըշնամիս էլ հեշ չթողնի որբեր:

Աստուած վեր կ'առնի: Մըհեր ունենայ

Սեղան-սազի մօտ հարուստ որսատեղ,

Ու նըրա որդին գառնարած դառնայ

Կամ ձեռըն առած մի նետ ու աղեղ՝

Պառաւի արտում լոր ու ծի՞տ որսայ:

Թէ գու խելք ունիս, Մըհերի աըդայ,

Քո հօր երկրին լաւ տէրութիւն արա,

Զէնով-Յոնանից մեզ օգուտ չկայ:

Ռւզիղ ես ասում, նանի ջան, ուզիղ.

Դաւիթը մենակ մարմնով է մի փիղ,

Բայց կարճ է խելքը, երեխայ է դեռ:

Ավանս անօգուտ անցած տարիներ...

Է՞ն, վընաս չ'ունի.

Վերջըն է բարի:

Դաւիթըն այսպէս անխելք չի մընայ.
 Կը բացուի միտքը, շատ բան կիմանայ:
 Հէնց այս օրուանից ես վերջ եմ տալիս
 Իմ փուռ մանկութեան, իմ ջահիլութեան.
 Երկինքը վըկայ, ես տէր եմ խօսքիս—
 Ես պէտք է լինեմ Մըհերի նման:
 Գո հօր արժանի զաւակ չըլինես,
 Եթէ դու նըրա ճամբիցը շեղուես:
 Հարամ լինի իմ կերած-խլմածը,
 Թէ չկատարեմ իմ խոստացածը:
 Այ, լըսիր, նամնի: Հէնց այսօր ևեթ
 Ես պիտի խօսեմ հօրեղբօրըս հետ:
 Պիտ ասեմ իրեն. ով էր Մըհերը.
 Գառնարած էր նա թէ Սասմոյ տէրը:
 Ու նա էլ կ'ասի. «Սասմայ թագաւոր.»
 Ու ես էլ կ'ասեմ. եթէ թագաւոր,
 Հասղա լ'նչպէս է, որ նըրա որդուն
 Թողիր, որ մընայ անտէր ու անտուն.
 Բաւական չէ, որ հէրութիւն չարիր,
 Դեռ գառնարած էլ նըրան կարգեցիր:
 Տեսնեմ թէ նա ինչ կը տայ պատասխան:
 Ու ես էլ կ'ասեմ. էյ, Զէնով-Յոնան,
 Հերիք է, ինչքան Մըհերի որբին
 Պահեցիր մըթան, խաւարի միջին...
 Իմ աչքը բացուեց, լուսացաւ աշխարհ:
 Մի ուրիշ հովիւ գըտէք ձեզ համար.
 Ձեր գառնուկներին ես ձեզ եմ թողնում.
 Ես որսկան եմ, և իմ հօրը երկրում,
 Սեղամ-սարի մօտ,
 Ուր արածում են եղնիկ ու այծեամ,
 Վաղըն առաւօտ
 Գընում եմ քեզ հետ երէներ որսամ:
 Մըհերի որդու արժանի խօսքեր:
 Իմ օրհնութիւնը լինի քեզ ընկեր:
 Հիմի խօսք չունիմ: Գընա, Տէրն ընդ քեզ:

Գիւլ.

Գաւ.

Գիւլ.

Դաւ. Գընում եմ, զընում, նանի ջան. բայց տես,
Ել ինձ չանիծես: (Գնում է:)

Պ Ա Տ Կ Ե Բ Ռ 2

Որսի-սարը: Տեսարանը ներկայացնում է բարձրաւանդակ տեղ, ուր երևում են նախկին անտառի հետքեր, կոճեր և մացառուտ: Մի բարձրութեան վրայ երևում են աւերակներ: Արել մայր է մտել, և կասայ-կամաց մութն ընկնում է: Գալիս է Զէնով-Յոնանը որսորդական շորով. նրա հետ երկու որսկաններ, որոնցից մէկի մատի վրայ թառած է բաղչ: Քիչ յետոյ գալիս է երրորդ որսկանը. նրա հետ երկու բարակներ: Զէնով-Յոնանը նստում է մի կոճղի վրայ՝ հանգստանալու. յոգնածութիւնից սաստիկ հնում է: Միւսները պառկում կամ թեք են ընկնում այս ու այն կողմ: Ամենքը գաղրած են երևում:

Զէն.-Յոն. Սաստիկ դաղրած եմ... Օ՛ֆ, Տէրիմ Աստուած...

Բոլոր մարմինը այնպէս է ջարդուած...

1-Որսկան Այս ամբողջ օրը մենք ման ենք գալիս,

Սար ու քար, ձորեր ոտի տակ տալիս:

Զէն.-Յոն. Լաւ է, եթէ ես չհիւանդանամ

Ու այստեղ մընամ:

Է՞հ, զուր լըսեցի ես Դաւթի խօսքին.

Ի՞նչ կը վայելէր ինձ նման ծերին

Բարձրանալ սարեր, երէներ որսալ...

Վերջին անգամն է. Ել այստեղ չեմ դալ:

2-Որսկ. Ափսոս, զուր անցան մեր բոլոր ջանքեր.

Այստեղ բընաւին չկան երէներ:

3-Որսկ. Ել ասե՞լ է պէտք: Ամեն տեղ եղանք.

Քարափ չմընաց, որ չբարձրանանք,

Խոռոչ չմընաց, որ չմըանէինք,

Հովիտ չմընաց, որ չնայէինք.

Ոտի տակ տըւինք ամբողջ Որսասար,

Բայց երէների հետքըն էլ չկար:

1-Որսկ. Զարմանալի է: Կարծես այս սարին

Աստուածային մի ցասում է զիակել,
Կամ զարհուրելի կըրակ է անցել
Եւ այրել բոլոր շընչաւորներին:

ԶԵՆ.-ՅՈՆ. Մութըն ընկնում է, Դաւիթը չկայ:

Տեսնես մեր խենթը որտեղ է հիմա:

Յ-ՌԱԿ. Նըրա հետ էի մի թեք ժայռի տակ.

Յանկարծ ինձ թողեց և արագ-արագ

Բարձրացաւ. կարծեմ, ինչ որ բան տեսաւ.

Ու այնուհետև տչքիցը կորաւ:

ԶԵՆ.-ՅՈՆ. Յանկարծ զլուխը փորձանք չըերի:

Հ-ՌԱԿ. Դաւիթը քաջ է, ումնից ահ քաշի:

Թող թէկուզ առիւծ պատահի նըրան,

Կը խեղճացընի, ինչպէս մի գառան:

ԶԵՆ.-ՅՈՆ. Հա, ասենք երկիւղ չկայ գարանից.

Ես վախենում եմ ուրիշ փորձանքից:

Սարոտ երկիր է, դարուփոս տեղեր.

Ամեն մի քայլում գահավէժ ժայռեր...

Հերիք է փոքրիկ անըզզուշութիւն,

Եւ մարդ կորած է, չկայ փըրկութիւն:

Անդունդի համար խըրութիւն չկայ.

Ել չի հարցընում թրզուկ ու հըսկայ:

Յ-ՌԱԿ. Նա կարող է և ճամբան կորցընել:

ԶԵՆ.-ՅՈՆ. Հապա ինչ—այդ էլ կարող է լինել:

Յ-ՌԱԿ. Կ'ուզէք ես զընամ ու նըրան փընդուեմ:

ԶԵՆ.-ՅՈՆ. Ո՛չ, թողէք առաջ ես նըրան կանչեմ.

Եթէ իր ճամբան կորցըրած լինի,

Իմ ձէնիս վըրայ ճամբան կը զըտնի:

(ԶԵՆՈՂ-ՅՈՆԱՆԸ կանգնած ձայն է տալիս: Նրա վիթխառ-
բի ձայնին դղրդալով արձագանք են տալիս բընակայ ձորերը):

Դաւիթ, Էյ Դաւիթ, որտեղ ես, որդիս:

Դաւիթի ձայ, Էյ-հԷյ, այստեղ եմ, գալիս եմ, գալիս:

1-ՌԱԿ. Ահա երեաց:

ԶԵՆ.-ՅՈՆ. Փառք Քեզ, Տէլ Աստուած:

(Գալիս է Դաւիթը շալակած մի սպանուած եղնիկ, որ
նա ձկում է նրանց առաջ: Բոլորեքեան հաւաքւում են սպան-

ուած երէի շուրջը. նոյնպէս և շները հետաքրքրուած հոտու-
տում են այս ու այն կողմից):

Դաւ. Տեսէք ինչ սիլուն եղնիկ եմ զարնել:
Խըճնւկ... ուղղակի սըրտին է դիպել:
Դեռ թըրպըրտում էր սա ճանապարհին.
Հէնց այստեղ էր, որ փըչեց իր հոգին:

Զէն.-Յոն. Շատ խոշորըն է և ինչքան գիրուկ:
Դաւ. Բա, տեսէք... Մինչև անգամ արտասուրք...
Անմեղ կենդանի...
Մի ասող լինի.

«Ի՞նչ վընաս Եիր դու արւել Դաւթին,
Որ քեզ նետահար գըլորեց զետին»:
Տեսէք, ինչպէս է իր վիզը ծըռել,
Բիբերը մարել, վերի են թըռել...
Բայց պէտք է ասեմ, ինձ լաւ չարչարեց:
Խըճնւկի օրը խիստ վատ տեղ մըթնեց.
Կամ ժայռի գըլխից պիտի վար նետուէր
Կամ էլ իր կեանգըն ինձ մատաղ անէր:

Զէն.-Յոն. Վաղուց է որսի միս կերած չէինք.
Ուրեմն էգուց մենք լաւ ճաշ ունենք:
Խորոված կ'անենք ու նըռան գինին
Անուշ անելով կ'օրհնենք Մըհերին:

(Որսկանները քաշուել են մի կողմ և պառկոտել, նոյնպէս
և շները: Զէսով-Յոնանը անթարին (վերնազգեստ) փոելով իր
տակը՝ թեք է ընկնում գետնի վրայ: Դաւիթը մի պահ լուռ-
թիւնից յետոյ՝ սկսում է խօսել):

Դաւ. Բայց մի բան ասեմ, հօրեղբայր Յոնան.
Միթէ սա է ձեր հարուստ, դովական
Եւ երևելի այն Որսասարը
Ու գըրախտի պէս կանաչ անտառը:
Առաջ էլ այստեղ գատարկ էր, տըխուր,
Այսպէս անապատ ու չորս կողմը լուռ:
Ինչու այս խեղճը մենակ էր շըրջում
Անընկեր, տըրտում... Միթէ այս սորում
Այս եղնիկըն էր միայն մընացել.
Իսկ ընկերները—մւր են գընացել:

Իջնում ես ձորը—ոչ մի շընչաւոր,
Բարձրանում ես սար—չկայ ոչ մի ձայն.
Ես չեմ հաւատում, թէ սա է իմ հօր
Այն Որսասարը՝ ընդարձակ ու լայն,
Ուր երեներին թիւհամար չկար:

ԶԵՆ. ՅԵՆ. Դաւիթ, սիրելիս, այդ ամենը կար:
Այծեամ ու եղնիկ, եղջերու, պախրայ
Խըռնուած խըմբերով թափառում էին
Գորգի պէս փըռուած մարգերի վըրայ
Եւ սարալանջի ժառերի գըլխին...
Այստեղ կար հընուց և մի եղեգնուտ,
Ուր լիք էին միշտ ահռելի կինձեր,
Որ լուսաբացից մինչ իրիկնամուտ
Սըրում և յղկում էին ժանիքներ՝
Հասուն եղէգներ փըռցնելով օդում,
Որոնց աղմուկըն համնում էր հեռուն:

Դաւ. Բայց ուր են նըրանք... ինչու չեմ տեսնում...
Հաւքեր էլ չը կան այս անտէր երկում.
Ոչ լոր, ոչ կաքաւ և ոչ վայրի բադ—
Չը կայ ոչ մի հատ
Այստեղ ամեն ինչ այնպէս է մեռած,
Որ կարծես թէ կեանք բընաւ չէ եղած:
Բայց ուր է ձեր այն սիրուն անտառը,
Եւ ուր վիթխարի այն սօսիները,
Որոնց գեղեցիկ, կանաչ կատարը
Բարձրանում էր վեր, մինչի աստղերը:

ԶԵՆ. ՅԵՆ. Դաւիթ, հաւատա, անապատի տեղ,
Մի հիանալի դըրախտ էր այստեղ,
Որի նըմանը ոչ մի տեղ չը կար.
Համբաւ ունէր, որ լըցրել էր աշխարհ:
Բայց ի՞նչ պատահեց, ի՞նչ հըրաշք եղաւ,
Որ այդ բոլորն յանկարծ չըքացաւ.
Ի՞նչ զարհուրելի ոյժ պիտի լինէր,
Որ շէն գըրախտըն անապատ լինէր:
Ասա, հրէշի անունը տնուր ինձ.

Այրւում է սիրտը կըրակ ու բոցից:
 Զէն.-Յոն. Անցած զընացած բաների վըրայ,
 Սիրելի որդի, շատ մի՛ բարկանա:
 Դաւ. Ա՛, կամենում ես ինձանից ծածկել...
 Զէ, պիտի ասես, ես կ'ուզեմ լըսել:
 Զէն.-Յոն. Մըսրամելիք է դըրա անունը:
 Դաւ. Մըսրամելիքը... Մըսրայ այն շունը...
 Զէն.-Յոն. Հէնց որ նա լըսեց էլ չը կայ Մըհեր,
 Ժողովեց անթիւ անհամար զօրքեր,
 Մըսրաւ մեր անտէր մընացած աշխարհ
 Սասում անելու գետնին հաւասար:
 Կըրակ էր ընկել, վառում էր Սասում,
 Բոցըն ու ծուխը երկինք էր համում...
 Դաւ. Բայց դու, հօրեղբայր, հօ մեռած չէլ՞ր.
 Դու այդ ամենը տեսար քո աչքով—
 Եւ համբերեցիր, տարար, լըուցիր,
 Վըրէժխընդրութեան բոցու կըրակով
 Չը լըցուեց հոգիդ...
 Զէն.-Յոն. Խոհեմութիւնը լաւ բան է, Դաւիթ:
 Ի՞նչ կարող էինք մենք անել, ասա.
 Թըշնամին մեզ շատ նեղըն էր գըցել.
 Սասմայ սարերի, դաշտերի վըրայ
 Մի սարսափելի բանակ էր դըրել,
 Կըրակ էր թափում խեղճ Սասմայ գըլխին,
 Չը կար վերջ անխիղճ կոտորածներին...
 Այդ օրով էր, որ և Ոլքասարը
 Այսպէս չորացաւ,
 Եւ պարըսպապատ կանաչ անտառը
 Անապատ դարձաւ:
 Դաւ. Մըսրամելիքի բախտիցըն է, որ
 Ես այդ ժամանակ փոքրիկ էի դեռ.
 Ես կը թողնէի, որ նա դար իմ հօր
 Ծաղկած երկիրը քարուքանդ անէր...
 Զէն.-Յոն. Դաւիթ, միամիտ մի խօսիր այդպէս.
 Նա սովորական մարդ չէ հասարակ,

Այլ մի աժդանա ահոելի և վէս,
Ինչպէս ամրոցի գոռող աշտարակ:
Երբ գուրզ է գըցում Մըսուր քաղաքից,
Սակաւ է մընում հասնի Զինմաշին.
Երբ ման է գալիս, կարծես թէ հիմքից
Սարեր փուլ եկան և կործանուեցին.
Տափը դողում է ոտների տալին:

Դաւ. Թող հիմա էլ նա մեր երկիրը գայ...
Մըսրամելիքից վախեցող չը կայ:
Հօրեղբայր Յոնան, քեզ մի բան տաեմ.
Իմ հօր երկիրը չը պիտի թողնեմ
Այս խեղճ զըրութեան, այսպէս անապատ.
Ծընուել ենք ազատ և լինենք ազատ:
Այստեղ նոր անտառ մենք պիտի գըցենք.
Անտառի չորս կողմ պարիսպներ քաշենք.
Նըրա մէջ նորից կեանք պիտի եռալ,
Երկիրը նորից պիտի շէնանայ:
Թոնդ առաջուայ պէս ուրախ խըմբերով
Անթիւ երէներ այստեղ թափառեն,
Թըշնամիներից իսպառ ապահով
Մարգերի վըրայ հանգիստ արածեն:
Թոնդ աճեն, ծաղկեն ծառեր, ծաղիկներ
Եւ օդը լըցնեն անուշ զովութեամբ,
Եւ հազար ու մէկ գեղգեղուն հաւքեր
Անտառ թընդացնեն երգեցողութեամբ...
Աշխ, նոր անտառն այնպէս պահեմ ես,
Նախշուն ծաղկի պէս...
Բայց ցընորք չէ սա և ոչ փուճ երազ.
Հէյ-վախ, հօրեղբայր, պարտական մընաս,
Թէ որ ինձ չօգնես
Ու մենակ թողնես:
Զէն.-Յոն.Աւելի լաւ է, Դաւիթ, որ հիմա
Մենք էլ սըրանց պէս պառկենք ու քընենք.
Իսկ առաւօտեան, երբ որ լուսանայ,
Այդ մասին քեզ հետ երկար կը խօսենք:

Դաւ. Քընիր, հօրեղբայր, ես էլ քո մօտին
Այստեղ կը պառկեմ: Բայց ամեննկին
Քընել չեմ ուզում:

(Զէնով-Յոնանն արգէն քնած է. նոյնպէս և միւս որոշ
կանոները: Դաւիթը թէք է ընկել հօրեղբօր մօտ և անշարժ
նայում է մի կէտի վրայ՝ մտքերով հեռու-հեռու տարուած: Նրա
աչքերի առաջն է Մարութայ սարի ստուերագիծը, որի գագա-
թին երեսում է Աստուածածնի աւելուած վանքը: Այն կողմում
Դաւիթը նշմարում է մի ճերմակ և մաքուր լոյս, որը բխում
է մարմարինի պատառուածքից և կաթնագոյն շողեր է
տարածում իր շուրջը: Լոյսը գնալով աւելի և աւելի պայծա-
ռանում է: Դաւիթը զարմացած և սրտայոյգ վեր է կենում իր
տեղից):

Արարիչ Աստուած, այն ի՞նչ է այնտեղ...
Սա ոչ ճըրադ է
Եւ ոչ կըրակ է,

Այլ աստղից պայծառ լոյս հըրաշագեղ:

(Դաւիթը գնում է լոյսի ուղղութեամբ և քիչ յետոյ վե-
րագառնում՝ սաստիկ այլայլուած՝ խորհրդաւոր երևոյթի տը-
պաւորութեան ներքոյ):

Հօրեղբայր Յոնան... ի՞նչ խոր քընած է...

Զարթեցնմէմ թէ ոչ... Քանի չէ մարած,

Թող սա էլ տեսնի... Հօրեղբայր, զարթիր,

Այնտեղ մի լոյս կայ... այն կողմը նոյիր:

Զէն-Յոն. (Զարթնելով) Դաւիթ, որթնուն ես, դու քը-
նած չես դեռ:

Դաւ. Ես էլ չեմ կարող քընել այս գիշեր:

Տես, այն ի՞նչ լոյս է Մարութայ սարում

Այնպէս անարատ և այնքան պայծառ...

Իր շուրջըն այնպէս է լուսաւորում,

Որ պարզ երեսում է ամեն մի քար:

Տես—քանի մութը թանձըրանում է,

Այնքան աւելի պայծառանում է...

Սա ի՞նչ է, ասա, հօրեղբայր Յոնան,

ի՞նչ խորհուրդ ունի, ինչի՞ է նըշան...

Զէն-Յոն. (Վեր է կենում եւ խաչ հանում երեսին)

Սա Աստուածային նըշան է, Դաւիթ.

Չոքի՛ր շուտ և խաչ հանի՛ր երեսիդ:

(Դաւիթը չոքում և խաչակնքում է երեսը):

Դաւ. Խօսի՛ր, հօրեղբայր, ինչ զիտես պատմի՛ր:

Զէն-Յոն. Դէ ինձ լաւ լըսի՛ր:

Այն բարձր տեղը, որ այնպէս պայծառ

Հըրեղէն լուսով լուսաւորուած է,

Կանգնած էր առաջ մի սիրուն տաճար,

Որ հիմա քանդուած և աւերուած է,

Անզուզական էր, հրաշալի՛ էր նա,

Նըմանը չը կար մեր ամբողջ երկրում.

Գըմբէթի խաչը, Դաւիթ, համարեա

Մինչև կապուտակ երկինք էր հասնում:

Եւ գուռ ունէր նա—մի ըսքանչելիք.

Այնքան նուրբ, շըքեղ, այնքան գեղեցիկ...

Ամենահմուտ վարպետի ձեռքով

Վերեկից ներքև ծածկուած զարդերով...

Իսկ ներսը, ներսը... ինչ պայծառութիւն...

Ուղիղ երկնային մի արքայութիւն:

Թէ կամարներում և թէ պատերին

Թանի՛ հատ ասեմ պատկերներ կային,

Այնքան գեղեցիկ և նուրբ նկարած,

Կարծես կենդանի առաջիդ կանգնած...

Բոլոր սիւները—սրբատաշ քարից,

Միաձոյլ, ասես՝ հալած ու թափած,

Եւ խարիսխներից ու խոյակներից

Բզմայլուում էր մարդ և մընում ապշած,

Թէ ուր կարող է հասնել մեր հոգին,

Երբ ձըգտում է նա վեհին ու բարձրին:

Եւ ինչ հիացք էր զանգակատունը

Ու վերև կախած նըրա զանգերը,

Որոնց քաղցրածայն, զօրեղ թընդիւնը

Լըցնում էր չորս կողմ բոլոր ձորերը...

Եւ չէր գաղարում այնտեղ օրն ի բուն

Զերմեռանդ աղօթք և ժումերգութիւն.

Հընչում էին միշտ և տիւ և զիշեր

Սաղմոս, շարական, հոգեոր տաղեր
 Քառսուն բարեպաշտ վարդապետների
 Եւ քառսուն խոնարհ սարկաւագների...
 Տիրամօր տօնին, ամրան վերջերում,
 Ամբողջ Սասումը այնտեղ էր լինում:
 Մարութայ սարը կենդանանում էր,
 Զարդարւում, կարծես գարնան ծաղկունքով,
 Եւ ծովի նըման ալեկոծւում էր
 Ուրախ ամբոխըն՝ իրար անցնելով...
 Չորս կողմը, բոլոր ճանապարհներում
 Ուխտաւորներ է որ կը խընուէին՝
 Մի ծայրը կորած Սասմայ կիրճերում
 Եւ միւս ծայրը՝ Մարութայ գըլխին...
 Ա՛խ, անդառնալին, երջանիկ օրեր...
 Այնտեղ տըխրութիւն ասածըդ չկար.
 Եւ ուրախ էին թէ մանուկ թէ ծեր
 Ժողովրդական այն տօնի համար:
 Այնտեղ ընդհանուր ուրախութեան մէջ
 Իւրաքանչիւր ոք թէ կին և թէ մարդ
 Թաղում էր բոլոր հոգսերըն անվերջ
 Եւ ինչքան սըրտում ունէր ցաւ ու գարդ—
 Ամենքըն ուրախ, ամենքը. զըւարթ:
 Դաւ. Ա՛խ, երնէկ ես էլ, հօրեղբայր Յոնան,
 Տեսած լինէի գոնէ մէկ անդամ:
 Զէն.-Յոն. Ի՞նչ խառն բազմութիւն, ի՞նչպիսի աղմուկ...
 Այստեղ աշուղի սազըն ու տաղը,
 Այնտեղ դափ-զուրնան կամ թէ մեզմ տուղուկ,
 Եւ չահէլ խըմբի պարըն ու խաղը:
 Մի տեղ, կը տեսնես, վըտանգի դիմաց,
 Անթիւ թըլիսմներ ուսերից կախած՝
 Լարախաղացը ճարպիկ ոստիւնով
 Անցնում է արագ ձըգուած պարանով,
 Նըստում, վեր ցատկում, ինչպէս սատանայ,
 Եւ յսնկարծ, կարծես թոկից ընկնելով,
 Գըլխիվայր կախւում մի ոտքի վըրայ:

Իսկ խենքը ներքեա նըրա ծաղբածուն
 Հետևում է իր հըմուտ վարպետին
 Եւ հարթ-հաւասար ու փափուկ գետնին
 Նըրա պէս ցատկում, վազում, գըլորւում
 Եւ հիանում իր հնարքի վըրան,
 Ի մեծ ցընծութիւն խըրուած բազմութեան:
 Մի կողմ' ըսկեսուր և հարս ու աղջիկ
 Մատաղի հսմար կրակ են անում,
 Միւս կողմ' նըստոտած են ծալապատիկ
 Ու եփած տաք-տաք մատաղըն ուտում,
 Իսկ վանքի առաջ ինչ գոռում-դոչում...
 Ճամբան կը դառնար մի վաճառանոց.
 Մըրգավաճառը՝ առաջը դըրած
 Պըտուղներով լի քանի մի կըթոց՝
 Գովում էր ձէնով իր հետը բերած
 Անուշ խաղողը, կարմիր, խընձորը,
 Շաքարի տանձը, մալաս-սալորը,
 Մեղրահամ սեխը և այն բոլորը,
 Ինչով որ մեր Տէր Աստուած Երկնային
 Լըցըել է առաս գեղջուկի այգին:
 Իսկ տաճարի մէջ հօ էլ տեղ չը կար.
 Սուրբ պատարագը տեսում էր երկար.
 Ոչ մէկը ժամից հէչ զուրկ չէր մընում.
 Մինը մըտնում էր, միւսը ելնում:
 Ալիսն Մարութայ սուրբ Աստուածածին,
 Ափսն, որ հասար այս խեղճ վիճակին...
 Բայց ինչ պատահեց:
 Երկի՞րը շարժուեց,
 Թէ գարձեալ Մըսրայ մոլի դագանը...
 Զէն-Յն. Այն, նա քանդեց այս մենաստանը.
 Եւ, մեր հոյակապ տաճարի տեղուկ,
 Թողեց մեզ համար մի խեղճ աւերակ:
 Բայց սըրբութիւնը սըրբութիւն մընաց.
 Ու նըրա մարմար սեղանի վըրան
 Պայծառ, հըրեղէն մի լոյս երևաց,

Իրբի Տիրամօր անարատ նըշան։
 Հօրեղբայր Յոնան, անս, էլ «Հէ» չը կայ,
 Մարութայ վանքը, Աստուած է վըկայ,
 Մենք շուտով պիտի վերանորոգենք.
 Իսկ Որսիսարը առ այժըմ թողնենք,
 Երդուում եմ, իմ հայր, քո գերեզմանով,
 Տաճարը ոտի կը կանգնի շուտառվ։
 Պիտի մոռանամ, թողնեմ այսուհետ
 Որսորդութիւնը իմ աղեղ և նետ,
 Բոլոր եռանդով և ամբողջովին
 Նըւիրուեմ պիտի ես իմ սուրբ գործին։
 Իսկ դու, հօրեղբայր, ինձ պէտք է օգնես։
 Հէնց որ կը ծագի վաղուան արեգակ,
 Մարութայ գըլլին պիտի ժողովիս
 Հարիւր հատ վարպետ, հազար հատ մըշակ։
 Որ սուրբ տաճարի նոր հիմքը դընեն։
 Աշխատանքներին կը հըսկեմ անձամբ
 Եւ միայն այն օր սարիցը կ'իջնեմ,
 Երբ վանքը նախկին իր գեղեցկութեամբ
 Մարութայ գըլլին կանգնած կը տեսնեմ։
 Մենք չենք խընայի ոչ փող և ոչ ջանք,
 Բայց փոխարէնը կը շինենք մի վանք,
 Այնքան փառաւոր և այնքան պայծառ,
 Որ իր համբաւը տարածուի աշխարհ։
 Արեւս վըկայ, թէ հընար լինէր,
 Զուկել կը տայի այնպիսի զանգեր,
 Որ, երբ վերհատեն, նըքանց զիւ ձայնից
 Զարթնէր թըշնամին իր քաղցր քընից։
 Զէն-Յոն. Դաւիթ, ձեռ վեր առ դու այդ քո մըտքից։
 Եօթը տարի է, որ Մըսրայ տէրը
 Մոռացել էր մեղ խարջ չէր՝ պահանջում.
 Եօթը տարի է, հարկահանները
 Սասմայ աշխարհում չէին երևում.
 Իսկ եթէ հիմա վերանորոգենք
 Աւերուած վանքը, առաջուայ նըման,

Նըրա սըրտումը կըրակ կը վառենք
 Մի զարհուրելի վըրէժխընդրութեան:
 Ասկարը կ'առնի, մեզ վրայ կը գայ
 Եւ ամբողջ Սասում ոտի տակ կը տայ:
 Դաւ. Թող գայ. նըրանից ես չեմ վախենում.
 Եւ խօսքիս վըրայ հաստատ եմ մընում:
 Զէն.-Յն. Մեր մեծ աղէտի սրատճառ կը դառնաս
 Ու յետոյ, Դաւիթ, սաստիկ կը զըղաս:
 Դաւ. Ինչ որ էլ ասես, վաղ առաւօտեան:
 Պիտի ձեռք դարկենք վանքի շինութեան:
 Եա, մեր Տիրամայր սուրբ Աստուածածին,
 Եղիշ օգնական նորելուկ Դաւթին:

Պ Ա Տ Կ Ե Բ Ր Յ

Մորամելիքի ապարանքը: Մի դահլիճ, որի պատերը և
 գմբեթածի առաստաղը զոյնզգոյն ապակիներից են, որոնց շնոր-
 հիւ սենեակը ստանում է մի տեսակ կախարդական բնաւոր-
 ութիւն: Յատակը մարմարեայ: Դահլիճի ճակատին դրուած է
 գահը: Պատի վրայ կախուած են զէնք ու զրահ՝ նետաղեղ,
 կապարձ, գուրզ, նիզակ, վահան, սրեր: Կան նաև զարդարանք-
 ներ՝ եղիւրներ, վագրի մորթի, անօթներ մարդկային գանգից՝
 արծաթապատ և քանդակագործ, վարադի ժանիքներ՝ թելի
 վրայ կախած:

Մորամելիքը՝ շքեղ, գոյնզգոյն զգեստով, գոտիով, կեռ
 սուրը կաղած և գլխին չալմա՝ ապամանդներով զարդարած՝
 առօք-փառօք բազմել է գահի վրայ և շինում է երկայն ալեխիսա-
 ռըն մօրուքը և մինչև ակաջները տարած բեխերը: Ինըը լսո-
 ժուաղէմ է, թխագոյն և աչքերը սև ու դաժան:

Մտնում է մի թիկնապահ և դսան մօտ կանգնում:
 Թիկն. Հըղօք խալիֆա, քո խոնարհ ծառան՝

Քաջ կոսբաղինը սպասում է դըռան:

Մորամել. Թող ներս գայ շուտով:

(Թիկնապահը գնում է: Մտնում է կոսբաղինը, մօտենում
 Ապրիլ, 1905.

է գահին և չոքելով պատուանդանի վրայ՝ համբուրում է Մըս-
րամելիքի փեշը):

- Կոսբաղին բարնվ։
 Կոս. Արեգակնակայլ անյաղթ իմ արքայ,
 Մի աղխուր համբաւ Սասմայ աշխարհից։
 Մսրամ. Լըսում եմ, ասա։
 Այդ երեսում է քո մըռայլ դէմքից։
 Կոս. Շըրջագայեցի, ըստ քո հըամանին,
 Քո մեծ տէրութեան բոլոր ծայրերը։
 Մսրամ. Եւ ի՞նչպէս զըտար։— Ամեն տեղ կարգին։
 Կոս. Այս, թող վըստահ լինի իմ տէրը.
 Ամեն տեղ հանգիստ և խաղաղութիւն,
 Եւ ժողովուրդը հազար բերանով
 Փառաբանում է քո օղնեալ անուն՝
 Երջանիկ, ուրախ և միշտ ապահով։
 Բայց միայն մի տեղ, միմիայն Սասում
 Ես նըկատեցի ինչ որ խըլլըտում...
 ' Մսրամ. Ի՞նչ տեսար այնտեղ, ի՞նչ գիտես, ասա։
 Կոս. Դեռ մի առանձին մեծ վըտանդ չը կայ.
 Չը կայ, բայց յետոյ կարող է լինել։
 Մըհերի որդին զլուխ է բարձրացրել։
 Մսրամ. Այն խելառ տըղան, այն խոզարածը...
 Կոս. Այս, տէր արքայ, այդ անիծուածը։
 Մսրամ. Ափանս, որ այդ չար օձի ձագուկին
 Ես չը սպանեցի իր ժամանակին,
 Երբ որ նա անխելք երեխայ էր դեռ...
 Հիմա նա վազուց փըտած կը լինէր։
 Կոս. Իր ժողովը զըլուխըն անշած՝
 Անում է, ինչ որ սիրտըն ուզում է,
 Ժողովուրդըն էլ, ուղիղըն ասած,
 Նըրան կուռքի տեղ երկըրապում է,
 Դաւթի անունով երդում է ուտում
 Եւ Սասմայ իշխան ու տէր համարում։
 Մսրամ. Օհօ, մոռացման Մսրամելիքին...
 Ես դըրանց խելքի կը բերեմ կըրկին։

- Կոս. Յիշնում ես, տէր իմ, Մարութայ վանքը,
Որ համարւում էր Սասմայ պարծանքը.
Եւ հըպարտ կանդնած սարի կատարին
Համնում էր կապոյտ երկնակամարին:
Երբ վերջին անգամ ասպատակեցինք
Սասմայ երկիրը սըրով և հըրով,
Այս վանքըն էլ մենք քարուքանդ արինք՝
Գրմբէթը գետնին հաւասարելով:
Մարամ. Եւ մընաց միայն մի խեղճ փըլատակ:
Կոս. Բայց հիմա արդէն փըլատակի տեղ
Կանգնած է մի նոր տաճար փառանեղ,
Որի զանդերի ուժգին ձայները
Համնում են մինչև Մըրայ սարերը:
Մարամ. Բայց ով յանդընեց, առանց իմ կամքի,
Չեռ զարկել մի նոր տաճարի շէնքի:
Կոս. Էլ ով կ'անէր այդ—միայն Դաւիթը,
Սասմայ պաշտելի և քաջ իգիթը:
Մարամ. Բայց նա չէր կարող, չէր համարձակուի...
Միթէ չէր լըսել Մըրամելիքի
Վիթխարի ոյժը, կարողութիւնը,
Միթէ չէր լըսել նա իմ անունը...
Կոս. Եթէ գըլխումը քիչ խելք ունենար,
Նա այդ չար գործից հեռու կը մընար:
Մարամ. Բայց ինչպէս է, որ մենք չենք իմացել:
Կոս. Կարճ միջոցում են տաճարը շինել:
Վըրան բանել են եօթն օր շարունակ
Հարիւր հատ վարպետ, հաղար հատ մըշակ:
Մարամ. Եւ հիմա պատրաստ է բոլորովին,
Կոս. Ինչպէս չէ, մինչև անգամ օծեցին.
Էն էլ ի՞նչ շըռով,
Ի՞նչ մեծ հանդիսով...
Ես հեռու կանգնած տեսայ բոլորը.
Դըրանց ծէսերը, գըրանց թափորը,
Խաչ ու խաչվառը,
Խունկ ու բուրվառ...

Լըսեցի դըրանց ժամերգութիւնը,

Վանքի զանգերի ուրախ թընդիւնը...

Մսրամ. Լըսիր, Կոսբաղին։ Նէնց վաղըն և եթ
Ճանապարհ կ'ընկէք Զարխաղինի հետ
Դուք գէպի Սասում։

Շատ կարճ միջոցում

Հարկատու երկրից պիտի ժողովէք

Եօթ տարուայ խարջը—քառասուն բեռ ոսկի։

Բայց չը լինի թէ դուք ականջ դընէք

Աղաչանքների կամ արտասուքի...

Կոս. Անհոգ կաց, իմ տէր, և վըստահ եղիր.

Քառասուն բեռ ոսկին պատրաստ համարիր։

Մսրամ. Ես ձեզնից կուգեմ և քառասուն աղջիկ
Ազապ, գեղեցիկ.

Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան

Եւ քառասուն երկայն, որ ուղտեր բառնան։

Բայց ահա ձեզ իմ խիստ հըրամանը.

Մինչև բոլորը պատրաստ չը լինի,

Սասումից ենել, անցնել սահմաննը

Ոչ ոք ձեղանից իրաւունք չունի։

Կոս. Հըզօր ալլահի օգնականութեամբ

Քո տըուած բոլոր պատուիրանները

Ես կը կատարեմ խստիւ, ճշշառութեամբ,

Եւ գոհ կը մընայ իմ բարի տէրը։

Մսրամ. Իսկ գալով Դաւթին, ձեռուուրն ամուր

Կապկապած՝ ձեզ հետ կը բերէք Մըսուր։

Կոս. Վաղ առաւօտեան կ'ելնենք անպատճառ։

Մսրամ. Բարին ճանապարհ։

Կոս. Բարով մընաս, տէրու Թոնդ մեծ ալլահը

Հաստատուն պահի քո ոսկի գահը։

(Կոսբաղինը գնում է)

Պ Ա Տ Կ Ե Ր 4

Գիւլնազի բանջարանոցը, ուր բուսել է շաղգամ: Աչ կողմում երեսում է խրճիթը՝ փակուած դռնով, գալիս են Մսրամելիքի հարկահանները՝ Բաղին և Սիւղին: Սրանց առաջնորդում է Զէնով-Յոնանի կողմից մի պահապան: Բոլորն էլ զինուած են: Պահապանը բաղխում է խրճիթի դուռը:

Պահ. Պառաւ, Էյ պառաւ, արի դուռը բաց:

Դիւլ. (դրան ետեւից) Աստուած տայ, Աստուած: Ո՛չ փող կայ ոչ հաց:

Պահ. Հաց ուզող չը կայ.
Դուռը բաց արա:

(Գիւլնազը կամենում է բաց անել դուռը, բայց նկատելով զինուած մարդիկ՝ ճշալով և վախեցած դուռն իսկոյն գոյցում է):

Բաղ. Ի՞նչ կայ վախեցար,
Այ յիմար քաւթան:

Սիւլ. Բաց արա, թէ չէ կը ըսկահան կ'անեմ,
Քացի կը տամ ու դուռըդ կը կոտրեմ:

Դիւլ. (զլուխը համելով) Սրանք ովքեր են:

Պահ. Մըրացիներ են:
Եօթ տարուայ խարջը եկել են տանեն:

Դիւլ. Ես ոչինչ չունիմ... Ի՞նչ պիտի առնեն...

Բաղ. Ոսկիքրդ հանիք բեր այստեղ շուտով,
Եթէ չես ուզում, որ խըլենք զոռով:

Դիւլ. Այ անաստուածներ, դուք ի՞նչ էք ուզում
Ես կերած-կորած անտէր պառաւից:

Ի՞նչի էք եկել դըռներըս կոտրում.

Ի՞նչ պահանջ ունիք, արէք հարըստից:

Ի՞նձ պէս աղքատին ով է փող տըւել,

Որ եկել էք իմ դըռանըս կանգնել:

Տունըս դատարկ է: Մի պղինձ չը կայ

Աղիկ օրերը կերակուր եփեմ:

Կայ մենակ մի հին, ժանգոտած կաթսայ,

Են էլ փող չունեմ գոնէ կըլեկեմ:
Մի խըսիր չունիմ, որ փըռեմ տակըս,
Զըմեռուայ ցըրտին գետնին եմ պառկում,
Մի փալաս է իմ վըրի վերմակըս—

Փաթաթւում եմ ու կըծիկ եմ դառնում:

Ալսը ի՞նչ անեմ, ինչի՞ս էք կարօտ,

Որ էդքան հոգով եկել էք ինձ մօտ:

Դու սնատ ես, լըռիր, զգուելի ջաղու.

Ես չեմ իմանում, թէ ով էիր դու:

Երբ որ Մըհերը կենդանի էր դեռ,

Մեզանից ամեն մէկըն էլ գիտէր,

Որ դու սիրականն էիր Մըհերի,

Որին դարձըրել էիր քեզ գերի:

Տունըդ շրքեղ էր պալատի նըման,

Զարդարւում էիր անդին քարերով,

Ապրուստ ունէիր թագաւորական,

Մընդուկներըդ լի ոսկով-արձաթով:

Հագածըդ էր միշտ բեհեզ ու դիպակ,

Կերած-խըմածըդ—մեղըր ու կարագ:

Բայց Մըհեր մեռաւ, ու Մըսըրայ տէրը

Ներս թափեց Սասում բոլոր զօրքերը.

Ինչ որ ունէի, յափշտակեցին,

Բեհեզ ու. դիպակ, ոսկի ու արձաթ,

Տունըս քանդեցին և կըրակ տըւին,

Ինձ էլ դարձըրին մի ետին աղքատ:

Դէ բերում ես, բեր, թէ չէ... հօ գիտես...

Անհաւածտ, անդնւթ, խըդճմըտանք չունես:

Եկէք ներս մըտնենք

Ու զոռով առնենք:

(Բաղինը կամենում է մանել խըճիթը, Գիւնազը՝ շէժ-քումը կանգնած՝ աշխատում է արգելել):

Գիւլ. Հեռո՛ւ էստեղից... չեմ թողնի մըտնէք...

Բաղ. Կորիր... Պառաւի ձայնը կըտրեցէք...

(Սիւղինը խփում է Գիւնազին, որը վայր է ընկնում գետին և ուշաթափ մնում է մի քանի ըոպէ: Սիւղին, Բաղին և

պահապանը մտնում են խրճիթը և դուռը ծածկում։ Գիւլնազը
կամաց կամաց ուշքի է գալի և վեր կենում։

Գիւլ. Յաւը տանէք դուք, գնդ աւազակներ,
Անաստուած, անխի՞ղճ, անհաւատ շըներ...
Զեր ոտը կոտրուէր ճամբին մընայիք,
Դնդք էիք պակաս ինձ կողովտէիք...
Աստուած, դու արա սրանց դիւանը,
Մի վերջ տուր սըրանց դազանութեանը...

(Դուրս են գալիս խրճիթից Բագին, Սիւդին և պահա-
պանը):

Բաղ. Վա, մենք կարծեցինք, որ էս քաւթառը
Արդէն զընացել է էն աշխարհը...

Ո՛չ, կենդանի է ու հաշում է դեռ։

Ուկին հօ առանք, դէ գընա ու կեր։

Գիւլ. Վայ ինձ... քոռանամ... դա իմ բալուկիս
Վըզի խաչըն է կընքահօր բերած...

Լոյս դառաւ, գընաց սիրուն աղաւնիս,

Էդ յիշատակըն ինձ միայն մընաց։

Տուր ինձ, ետ տուր ինձ իմ աչքիս լոյսը,
իմ ուրախութիւնն ու միակ յոյսը...

Լաւ է ինձ մորթես, կենդանի թաղես,

Թամն թէ գըրանից յաւիտեան զըրկես։

Սըրբեցէք տունըս, բոլորը տարէք,

Միայն թէ, ի սէր ձեր զաւակներին,

Էդ խաչը, մենակ էդ խաչը թողէք...

Խընայեցէք ինձ, իմ ծեր հասակին...

Տես, ոտքըդ ընկած ես աղաչում եմ,

Մի տանիք, ետ տուր, ոտքդ պագնում եմ...

Բաղ. (Իրելով) Հեր ես կոճղի պէս ընկել ոտի տակ...

Սիւդ. Բան ասաց սա էլ. «որդուս յիշատակ»։

(Ծիծաղելով գնում են։ Գիւլնազը չարանում է, վհուկի
պէս, և սկսում է անիծել նրանց յետկից)։

Գիւլ. Վայ ինձ, ինչ անեմ, հողըն իմ գըլիսին...

Գողացան, տարան, յափըշտակեցին...

Ալս, թող էդ խաչը քո աչքն հանի,

Էսքան էլ անգութ գազան կը լինի...

Տեսնեմ, որ աղիզ ձեր բալուկներին
Մի նաժում դրուած՝ մի օրում թաղէք,
Բուերի նըման վայ տաք ձեր գըլլսին,
Զեր կեանքում ուրախ մի օր չտեսնէք...
Սուգ ու շիւաննը, լաց ու կսկիծը
Անպակաս լինի ձեր օջախիցը...
Թըշնամիների սուր-սուր նետերը
Փըշերի նման ցըցուեն ձեր մարմնում,
Զեր միսը լափեն շուն ու գէլերը,
Ինչպէս որ դուք մեր միսըն էք ուտում...
Զեր յիշատակը ջընջուի՛ աշխարհից,
Որ մենք ազատուենք ձեզ պէս շըներից...

(Մասում է խրճիթը: Քալիս է Դաւիթը):

Դաւ. Սասմայ գիւղերը ծայրէ ծայր անցայ...
Եւ ի՞նչքան, ի՞նչքան նոր բան իմացայ...
Ի՞նչ որ ես լըսել էի ականջով,
Հիմա բոլորը տեսայ իմ աչքով:
Ի՞նչպէս է քանդել Մըսրայ գազանը
Իմ հօը երկիրը, իմ սուրբ վաթանը...
Եւ քանի՛ տարի դեռ պիտի անցնի,
Մինչև որ Սասում նոր մէկանց ծաղկի...
Եւ նա կը ծաղկի, կ'աճի օրէցօր
Իմ հայրենական երկիր փառաւոր:
Աստուած, զօրացըն իմ միտք ու հոգին,
Որ լաւ ծառայեմ իմ ժողովը դիմացին:

(Դաւիթը պոկում է մի շաղգամ և սկսում է ուտել: Խըր-
ճիթից դուրս է գալիս Գիւլնազը):

Գիւլ. Ապրւշ, հիմի էլ շաղգամից կըպար...
Արարիչ Աստուած, էսքան էլ խելառ...
Դաւ. Նանի՛ ջան, ների՛ր, քաղցած էի ես:
Գիւլ. Շաղգամի տեղակ դու զըխկուն ուտես,
Զոռ ու ցաւ ուտես:
Դաւ. Էս մի շաղգամով դու սովորացացար,
Որ էլի էղպէս սաստիկ չարացար:
Գիւլ. Աստուած, ազատիր ինձ սըրանց ձեռից,

Թալանում են ինձ, գըրփում չորս կողմից,
Սըրանց ո՞ր մէկին պատասխանը տամ.
Էսքան դարդերին ես ո՞նց դիմանամ...
Հերիք չէր ասես դըրսի թըջնամին,
Տանջւում ենք և մեր երկրացու ձեռին...
Ա՛խ, Մհըեր, Մըհեր, լուս հոգի Մըհեր...
Քո որդին մի՞թէ սա պիտի լինէր...

Ոչ ամօթ մընաց աշխարհում, ոչ գութ.
Ամեն տեղ ալան-թալան, կողոպուտ:
Լաւ, նանի, Դաւթին գու մի հաւանիր,
Եւ նըրան, ինչքան կուզես, հայհոյիր.
Բայց երբ գործերըս աչքով կը տեսնես,
Իմ մասին ուրիշ լեզուով կը խօսես:
Ո՞վ վերականգնեց այն գեղեցկաշէն
Մարութայ վանքը—Մասմայ ապաւէն.
Ո՞վ պիտի նորից կանաչացընի
Սեղան-սալի՛ մօտ իմ հօր անտառը,
Պարիսպներ քաշի, երէներ լըժնի,
Կենդանացընի հին Որսասարը...

Դիւլ.

Եթէ Մըհերի որդին լինէիր,
Դու կը թողնէի՛ր,
Որ էն անօրէն մըսրացիները
Գողերի նըման գան մեղ կողոպտեն,
Օքը ցերեկով մըտնեն տըները,
Մեր ունեցածը խըլեն ու տանեն...
Դաւ.
Հօրեղբօրըդ մօտ գլնա—կը տեսնես:
Մըսրամելիքի քաղցած գէլերը
Սուրութուր առած՝ մըտել են Մասում,
Կըրում տանում են մեր ոսկիները,
Մեր եօթը տարուայ խարջը ժողովում—

Քառսուն բեռ ոսկի, քառսուն կոյս աղջիկ,
 Քառսուն հատ երկայն, քառսուն կարճ կընկիկ:
 Դաւ. Այ քանդուի՛ Մըսուր... Ուզի՞ղ ես ասում:
 Գիւլ. Աղքատ ու հարուստ էլ չեն հարցընում:
 Ինձ մօտ էլ եկան... Մի քացի տըւին,
 Որ ես ուշագնաց՝ փըռուեցի գետին:
 Դաւ. Յետո՞յ, քեզանի՞ց էլ մի բան առան:
 Գիւլ. Աղջըկաս խաչը խըլեցին տարան:
 Դաւ. Հէյ-վայ... Իսկ ես դեռ ոչինչ չգիտեմ...
 Նանի ջան, դըրանց ես որտեղ գըտնեմ:
 Գիւլ. Հօրեղօրբէ մօտ: Նըստած են բակում
 Եւ կուտըն առած՝ ոսկի են չափում:
 Դաւ. Շնուտ արա, Դաւիթ, հասկիր օգնութեան.
 Եկել է ժամը վըրէժըրնդըռութեան...
 Առիւծ—Մըհերի որդի՞ն չը լինես,
 Եթէ դու դըրանց անպատիժ թողնես:
 (Դաւիթն արագ հեռանում է):

Պ Ա Տ Կ Ե Բ Բ 5.

Զէնով-Յոնանի տան բակը: Զախ կողմում տունն է, որի
 ստորին յարկը պատշգամբով: Տան հանդէպ մարագն է փա-
 կուած դոնով: Մէջտեղ ծառաստան: Հանդիպակաց կողմում
 բարձր պարիսպ՝ գոցուած դարպասով: Պատշգամբում դրուած
 են ոսկով լի տոպրակներ. մուտքի երկու կողմից կանգնած են
 մսրացի պահապաններ՝ զինուած նիզակներով: Մի ծառի տակ
 դրուած է նստարան, որի վրայ նստած է Զէնով-Յոնան՝ գլու-
 խը կոացըրած և ձեռքով բռնած ճակատը: Ծառերի ետևից գա-
 լիս է Զէնով-Յոնանի ծառան:

Ժառ. Գինին վերջացաւ: Գինի են ուզում:
 Զէն.-Յոն. Ինչքան կ'ուզեն, տար: Հէր ես հարցնում:
 Ժառ. Ո՞ր գինուց տանեմ՝ կարմիր թէ ձերմակ:
 Զէն.-Յոն. Իրենք չասացի՞ն քեզ, թէ ի՞նչ տեսակ:
 Ժառ. Ասացին միայն, թէ «ամենահին»:

ԶԷՆ.-ՅՈՆ. Կայ տասը տարուայ մի գինու կարաս.

Մառանում թաղուած. թէև այդ գինին

Դըրանց հարամ է, բայց, էն, ի՞նչ վընաս...

Վերցըրու կուժը, զընա մառանը

Լցըրու լիք-լիք մինչև բերանը

(Ծառան գնում է):

Աւելի լաւ է սըրտները շահեմ,

Որ մեր երկրիցը ուրախ հեռանան,

Քան թէ սըրանցից գինի խընայեմ,

Թողար իրենց աեսած յարդ ու պատիւը

Մի առ մի պատմեն Մըսրամելիքին,

Իցէ թէ Սասմայ բաղդի անիւը

Զարիցըն անցնի, պըտըտի բարին:

(Փողոցում լսելի է աղմուկ):

Զայներ դըսից. Բաց արա դուռը... էյ... Զէնով-Յոն-նան...

(Խփում են դրան):

ԶԷՆ.-ՅՈՆ. (Դռնապանին) Այդ ի՞նչ աղմուկ է... Ո՞վ խըփեց դըռան...

Դռնապ. Ժողովուրդըն է խըմբուել փողոցում.

Որը լավիս է, որըն անիծում:

ԶԷՆ.-ՅՈՆ. Դուռը բաց չանես: Էյ, բարեկամներ,

Աւելի լաւ է, քաշուէք ձեր տըներ:

Իզուր էք լալիս, իզուր բառանչում,

Հորթերը կորցրած կովերի նման,

Իզուր էք «մայրիկ» ու «աղջիկ» կանչում.

Նըրանք ձեզ համար կորսն յաւիտեան:

(Փողոցում աղմուկը սաստկանում է: Կանանց աղաչանը կամ անէծը, մանկանց ճիչն ու լացը, տղամարդկանց սպառնալիքը—բոլորը միախառնուել են և մի սարսափելի, դժոխային ժխոր առաջացել):

Ոչինչ չեմ կարող անել, սիրելիք.

Իզուր են և լաց և ըսպառնալիք:

(Ճաշից վեր կացած՝ գալիս են կոսբաղին, Զարիսաղին, Բաղին և Սիւղին. բոլորն էլ գինու ազդեցութեան տակ են):

Կոս. Յոնան, մաշալլա, լաւ պատուեցիր մեզ:

Շընորհակալ եմ, կեցցես դու, կեցցես:
 Զարիս. Ի՞նչ տեսակ տեսակ համեղ խորտիկներ,
 Ի՞նչ հիանալի, անուշ գիճիներ:
 Զէն.-Յոն. Զեղ պէս թանկագին հիւրերի համար
 Զէնով-Յոնանը ծառայ է խոնարհ:
 Կոս. Դէհ, բարեկամներ, հիմա ըսկըսենք:
 Մընաց չը չափուած երեք բեռ ոսկին.
 Այդ էլ մենք այսօր կը վերջացընենք
 Եւ վաղ առաւօտ արևածագին
 Մեր մեծ քարվանով ճանապարհ կ'ընկնենք:
 (Վերցնում է կուտը):
 Զարխաղին, պահիր: (Զափում է): Մէկ, եր-
 կու, երեք...

(Փողոցում աղմուկը աւելի և տւելի սաստկանում է: Ամ-
 բոխի միջից լսելի է Դաւթի ձայնը):

Դաւթի ձայնը. Հեռացէք, ճամբա՛, ինձ ճամբա՛ տրուէք:
 (Դուռը սկսում են չարչարել):

Դաւթի ձայնը. Դուռը բաց արա, հօրեղբայր Յոնան:

Կոս. Պինդ պահիր դուռը, էյ դու, դըռնապան:
 Էյ պահապաններ, զգանստ, պատրաստ կացէք:

Դաւթի ձայնը. Կոտրեցի դուռը—դմուռ բաց արեք.

Զէն.-Յոն. Դաւթի, քեզ մատաղ, գընա, հեռացիր:

Զայներ դրսից. Տըւէք դըռանը... դէ խըփիր... ջար-
 դիր...

(Ուժգին հալուածներից դուռը վայր է ընկնում: Մտնում
 է Դաւթը՝ ահոելի իր դէմքի արտայայտութեամբ: Նրա ետե-
 սից ներս է խուժում ամբոխը-խառնիճաղանձ բազմութիւն՝
 ծեր, մանուկներ, կանայք, աղջկերք, երիտասարդներ: Դիմա-
 զրող պահապաններին աջ ու ձախ հասցրած հարուածներով
 գլորում է գետին: Յետոյ Կոսբադինի ձեռքից խլում է կուտը):

Դաւ. Զափել չդիտէք... թողէք ես չափեմ...

Մէկ, երկու, երեք, չորս—և վերջ արդէն:

(Ամեն անգամ կուտով խփում է Կոսբադինի և միւս երեք
 մարացիների երեսներին և արնոտում նրանց դէմքերը: Զէնով-
 Յոնանը սարսափած բռնում է Դաւթի ձեռքից և աշխատում է
 նրան պահել):

Զէն.-Յոն. Դաւթի, խելքի եկ, այդ ի՞նչ ես անում...

Դաւ. Միթէ չես տեսնում... Ոսկի եմ չափում...

Զէն.-Յոն. Վայ մեզ, կորած ենք...

Զայներ. Ո՞չ, մենք փըրկուած ենք...

Զայներ. Փըրկուած ենք, փըրկուած...

Զէն.-Յոն. Կորած ենք, կորած...

Դաւ. Դէ, անկոչ հիւրեր, ձեր հկած ճամբով

Դուք ձեր երկիրը կը դառնաք կըրկին

Եւ ինչ որ այստեղ տեսաք ձեր աշքով,

Մէկ-մէկ կը պատմէք ձեզ ուզարկողին:

Թող նա իմանայ, որ այսուհետեւ

Սասմայ երկընքում փայլեց նոր արև,

Եւ, թէև չկայ գիւցազըն Մըհեր,

Նըրա զաւակը կենդանի է դեռ:

Կոս. Վայ ձեզ... ճըշմարիտ մի խօսք եմ ասում:

Երեք օր չանցած՝ կորած է Սասում...

Զէն.-Յոն (ծնկաչն) Ախ, ներում արէք, տարէք ձեր
ոսկին,

Մի յայտնէք ոչինչ Մըրտամելիքին...

Դաւ. (վեր կացնելով) Վէր կաց, ամօթ է, այդ ինչ ես
անում...

Դու ինձ սըրանց մօտ դետին ես կոխում...

Միթէ Մըհերի եղբայրն ես դու...

Միթէ դու նըրա անվեհեր հոգու

Կէսըն էլ չունիս... Ախ, Մըհեր, Մըհեր...

(Մարագից լսում են կանացի աղաղակներ և լաց ու կոծի
աղիողորմ ձայներ):

Այս ինչ ձայներ են... ինչ աղաղակներ...

(Մօտենում է մարագի զրան):

Նըրանք ուրեմըն այստեղ են փակուած...

Ժողովնւրդ, եկէք, մի ականչ գըրէք:

Ինչ հեկեկանքներ... ինչ ողբեր ու լաց...

Այս տեսակ ձայներ լըսած չեմ երբէք...

Այս աղիողորմ հառաչանքներից

Քար սիրտը նոյն խալ կը պատռուէր միջից,

Իսկ դու, օ Յոնան, քարից էլ վասթար...

Ասա ինձ, լինչպէս դու կարողացար
Սյս գըժովսային տանջանքը տեսնել,
Սյս կըսկըծալի վայունը լսել,
Եւ էլի մընալ այդչափ անըզգայ...
Յոնան, քո սըրառում խըղճմըտանք չը կայ...
Զան, իմ քոյրիկներ, ջան, ազիզ մայրեր,
Լըռեցէք, թողէք ձեր սուդ ու շիւան,
Ահա—կոտրում եմ ձեր բանտի դըռներ,
Եւ հասաւ ժամը ձեր ազատութեան...

(Դաւիթիթը բաց է անում մարագի դուռը, որտեղից դուրս
են թափում կանայք և աղջկերք: Ամբոխը խոնսում է նրանց
հետ, և խառնիճաղանձ աղմուկ է բարձրանում: Ամենքն իրար
են փնտուում և միմեանց գտնելով՝ գրկախառնուում, համբուր-
ւում են ուրախ բացագանչութիւններով. «Մայրիկ ջան», «աղ-
ջիկ», «ազիզ», «բալէս»...)

Դաւ. Դէ, ժամանակ է, ձիերն հեծէք
Եւ դէսլի Մըսուր թըռէք գընացէք:
Բայց մի՛ գուցէ թէ մի ուրիշ անզամ
Սասմայ աշխարհում ձեր շողքը տեսնեմ:—
Գիտցած եղէք, որ ես փոշու նըման
Չեղ իսկոյն և եթ կ'անհետացընեմ:
(Կոսքադինը իր ընկերների հետ հեռանում է):
Զայներ. Փըրկուած է Սասում... Գընաց թըշնամին...
Կեցցէ Մըհերի արժանի որդին...

ՀԱՄՆ ՄԱՆՈՒԵԼԻԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

Դ Ե Պ Ի Ա Ն Ի

Անին է հեռում...

Վերջալոյսի ոսկէփայլ մշուշի միջից ազօտ ուրուագծերով
յեղյեղում են ինչոր անորոշ ձևեր հարթութեան ու բլուրների
վրայ և արեի մեռնող շողերի հետ ամենքը միասին կարծես
հեռում են հոգեարքի մունջ տագնապով:

Դարեւի հոգեարքը...

Եւ գեռ չի մեռել նա, այդ վիրաւոր ու լալան Անին,
հին օրերից իմ անձկութեան ու երազների առարկան, որի սը-
գաւոր ողին քայլ առ քայլ ուղեկցել է ինձ բոլոր իմ թափա-
ռումների ժամանակ օտար հորիզոնների տակ, փափացել է իմ
ականջին իր հսկայ վիշտը. երբ աստանդական կեանքից յոգ-
նած իմ ճակատը դնում էի օտար աւերակների մամուապատ
քարերի վրայ տիեզերական ցաւը երազելով: Նրա գունատ
պատկերը ինձ հետ սգում էր Պոմպէի աւերակների մէջ և հե-
ռուից վշտու հայեացքով թարթում էր ինձ, երբ ես դանդաղում
էի ֆորումի հսկայ կամարների տակ: Եւ ամեն տեղ իմ երևա-
կայութիւնը վերստեղծում էր նրան խենթ քմահաճոյքով, փա-
րում էր նրա վէրքերին աւերակների բաղեղի պէս, իսկ հոգիս
միում ու ծունկ էր իջնում նրա առաջ պաշտամունքի լոռ-
թեամբ:

Բոլոր անցած փառքերի լուս բեկորների մէջ ես միշտ
Անին եմ տեսել, Անին երազել և սիրել: Եւ նրա կարօտի թա-
խիծը ինչպէս մի մորմոքացող վէրք, երկրէ երկիր ման եմ ա-
ծել ինձ հետ:

Այժմ Անին է հեռում... բոլոր միւս մտքերս լոռում են
ինչպէս խոնջած թոշուններ, որոնք երեկոյեան հանդչում են
ոստերի վրայ. հոգիս անհամբեր ու խանդավառ՝ թափ է առ-
նում վայրկեան առաջ ապրելու նրա մահաշունչ լոռութիւնը,

*.) Տես «Մուլճ» №, 2—3

Նրա համը ցաւերը, որոնք գալարւում են աւեր կամարների տակ:

Անեն է իմ առաջը, այդ պառաւ ու հիւանդ մայրը, որի չորացած կրծքի վրայ փնում հմ սպալու այնքան թանկագին կորուստները և անցնող մեծութիւնների սկ վախճանը:

Մօտենում ենք:

Պարիսպների երկար կարաւանն է մեր առաջը, մի յոգնած կարաւան՝ որ կարծես հեռուից, շատ հեռուից եկել է հասել այստեղ, բայց վիրաւոր ու կողոպտուած ծունկ է չոքել հարթութեան վրայ այլևս երրէք չրալձրանալու համար: Զգիտես ինչ կայ ներառւմ, այդ պարիսպների յետեռում, ինչ են ծածկում նրանք իրանց ծոմուած, չարչարուած թիկունքների տակ, կ'ուզէիր թե առնել սլանալ և մի ակնթարթում դիտել այդ խորհրդաւոր շէնքերը, բայց առաջդ է Հովուի եկեղեցին, աւերակների սեւաւոր կարապետը, որ հասկանում է քո հետաքրքրութիւնը և շտապում է քեզ ասեւ թէ ինչ կայ այնուեղ, այն պարիսպներից այն կողմը:

Հովուի եկեղեցին աւերակ Անիի պատկերն է:

Մենակ, անտէր ու վիրաւոր:

Սարսափի և մահերի մի անիծուած օրում, երբ ամեն ինչ պղծում էր ու կործանւում, այդ խղճուկ եկեղեցին մոռացուած որբի պէս, կարծես փախել է քաղաքից գրսում փրկութիւն որոնելով և այստեղ հարթութեան վրայ ընկել է թշնամիների հարուածների տակ: Կանգ ենք, առնում նրա առաջը: Ժողովը դական երեակայութիւնը, որ միշտ սիրում է ոսկեզօծել գունատ իրականութիւնը և անփայլ պատմութիւնը, այս եկեղեցու հիմնարկութեան հետ կապել է մի սիրուն աւանդութիւն: Հաւատացնում են, թէ Բագրատունիների մայրաբաղաքն այնքան հարուստ է եղել, որ մինչև իսկ հովիւը կարողացել է մենամենակ իր ծախքով կառուցանել այս եկեղեցին իր կնոջ սիրուն որին մի համդիսաւոր օր Մայր եկեղեցում տեղ չեն տուել գոռող տիկինները: «Հազար» եկեղեցոց յետոյ այսպէս է շինուել մի եկեղեցին: Իրօք եկեղեցի չէ սա, այլ մի մատուռ, ճիշտ այնքան մեծ՝ որքան հարկաւոր է պերճ քաղաքի հովուին և իր հպարտ կնոջ աղօթելու համար: Բազմանկիւնի ու գողարիկ այս շէնքը այնքան թեթև ոճ ունի, որ անգամ իր այս անփառունակ վիճակում յիշեցնում է զեղանի մի կոյս, ճկուն, բարեձև իրանով, համաչափ ու նուրբ կազմուածքով: Առանձին մասերի ներբաշնակութիւնը ամբողջի հետ այն աստիճան կատարեալ է, որ մարդ ճաշակում է շէնքի ճարտարապետական

պոէզիան և սրտի կոկիծով դիտում գեղեցկութեան այս անշարժ աւելակը:

Եւ կանգնած է նա՝ այդ չովուի եկեղեցին մի ամայի խոզանի մէջ, որպէս մի քուած սգաւոր, որ իր բախտակից ըոյցը բերի հետ իր մեծ վիշտը միասին լալու միսիթարութիւնն էլ չունի: Անողորմ կերպով աւերուած էնա... աւերել են և ճամբորդները, և հովիւներն ու հօտաղները, և չարամիտներն ու ժամանակը՝ իր հողմ ու փոթորիկներով. ով ինչպէս կարողացել է, ինչպէս կամեցել, նախկին փառաւոր շէնքից մնացել է միայն կմախքը, չանգուած, կրծոտուած ու անարգուած:

Հովուի եկեղեցին մեզ երկար պահել չի կարողանում: Պարիսպները մօտ են, բոլորովին մօտ, նրանք կանչում, թարթում են մեզ: Աւերակ են, այդ երևում է նաև հեռուից, բայց և այնպէս մեզ թւում է, թէ նրանց յետևում շինութիւն ու բնակութիւն, կեանք ու շարժում կայ: Ներդաշնակութեան հետամուս ու ծարաւ մարդկային հոգին հրաժարում է հաւատաւալ, թէ այդ գոռող բուրգերը հսկայ քաղաքի գամբարանի յուշարձաններն են, որոնք կանգուն են միայն նրա համար, որ աշխարհն իմանայ, թէ այնտեղ անդարձ կերպով թաղուած է մի փառաւոր կեանք, մի ամբողջ ազգի մեծութիւն:

Եւ շտապում ենք...

Պարիսպների մայր գոնից բացւում է զարհուրելի իրականութիւնը... մահուան, ոչնչութեան մի մուայլ հեռանկար, որի վրայ սաւաննում է սոսկումը անգամ օրը ցերեկով: Քարեր ու քարեր կոյտ-կոյտ. անկարգ ու այլանգակ թմբեր, փոքրիկ բլուրներ, տեղ-տեղ կիսաւեր, կանգուն շէնքեր, որոնք ջարդուած բանակի վերջին սազմիկների պէս կարծես գերագոյն պայքարն են մղում անդարձ անկումից առաջ: Կառքը ներս է մտնում պարսպի լայն, խրոխտ կամարի տակից, մի սառն, մեռելային շունչ է փշում մարդու երեսին և սարսուցնում մարմինը. աւերակների հերն է այն, որ խուսափում է մեռած քաղաքի վրայից: Զիերը քայլում են դանգաղութեամբ և նրանց ոտների տակ գետինը դղրդում է խուլ կերպով. թաղուած կեանքն է այն, որ տնքում է ցաւով, ամեն անգամ, երբ մի նոր ոտք գալիս է նրան ճխլելու:

Անիումն ենք...

Սկսում են այն մերթ խենթ, մերթ մոլոր թափառում-ները, որոնք այնպէս յատուկ են աւերակներ այցելութիւններին: Առաջնորդս է մեր սիրելի բանաստեղծ՝ Աւետիք Խսահակեան, Ախուրեանի, աւերակների և Արագածի երգիչը. նա որ վախլուկ եղնիկների յետեկից թափառել է Շիրակի բոլոր Ապրիլ, 1905.

մոլար ճամբաներով, մանկութիւնից լացել է Ասիի ամեն մի աւերակի մէջ, ամեն մի քարի վրայ: Այստեղ նու իր տանն է կարծես, իր ստացուածքում, ճանաչում է բոլոր խորշերը, պրապտել է բոլոր անկիւնները, գիտէ աւերակների մունջ լեզուն:

Դժուար էր աւելի լաւ առաջնորդ ունենալ Անիում: Երբ տարիներ առաջ Աղրիատիկիլի ափերում Վենետիկի կոնգուների վրայ, հինաւուրց պալատների աւերակների տակ մենք միասին երազում էինք հայրենի աւերակները, ես երեակայել չէի կարող, թէ միասին ոլիտի ուխտ երթանք այս յիշատակարաններին: Սա մի երջանիկ զուգագիպութիւն է:

Վերջալոյսի յետին շողերը դեռ գողգում են Ալաճայի կատարների վրայ: մինչև գիշեր դեռ ժամանակ կայ, շտապում ենք դէպի միջնարերովք: Սրբատաշ քարերի շեղակոյտի տակ ծածկուած մի բարձր բլուր է այն՝ ուր հին շնորերից լոկ յիշողութիւններն են մնացել: Երեսում են միայն բազմաթիւ շինութիւնների հիմքեր, փշրուած, քանդակագարդ քարեր ցաք ու ցրիւ փոռուած՝ ինչպէս մըրկի թափով և այդ բոլոր աւերածի վրայ դեռ կանգուն է հոյակալ պալատի մի մակիւնը, որ արթուն պահապանի ոլէս այս բարձրութիւնից նայում է առաջը փոռուած աւել քաղաքին: Այստեղ կայ նաև մի փոքրիկ եկեղեցի, պատերի կէսը ներքեցի ու և վերը՝ կարմիր քարերով շինուած մի սիրուն շէնք, որ սեղանի կողմի այլանդակ բացուածքով նայում է Ախուրեանին: Ահա բոլորն՝ ինչ մնացել է Բագրատուննեաց մայրաքաղաքի Ակրոպոլսից: Ո՛չ պալատներ, ոչ գամբարաններ, ոչ զօրանոցներ, ոչ տաճարներ, այս բոլորի փոխարէն միայն քարեր, քարեր: Ամբողջ գարերի քաղաքական կեանքը հայ տրքաների և բիւզանդական կիւրապաղատների՝ ծածկուած է այս վլուածքների տակ և առ այժմ խուսափում է մեղանից, ինչպէս անցեալի մշուշի մէջ կորսած մի հին աւանդութիւն:

Միջնարերզը բնականից անմնման դիրք ունի. մի կողմից Ախուրեանն է հոսում անդնդախոսը ձորի մէջ, միւս կողմից նրան զըկում է Ծաղկաձորը, որի մէջ հեծեծում է մի փոքրիկ վտակ: Ամբողջ քաղաքը իր շրջակայթով, որքան աչքը կարող է կտրել, բացւում է հայեացը առաջ: Ալեղարդ Մասիսը և պառաւ Արագածը նայում են այստեղ. Ալաճայի բարձունքները և կողբայ սարերը եթերային համբոյը են ուղարկում այս աւերակներին: Լայն, ալինապարար հորիզոն, տեսարանը վեհ է և տիսուը:

Այստեղից երեսում են նաև աջ ու ձախ ընեած ձորերի

կրծքին բազմաթիւ արհեստական երկյարկանի կամ եռայարկ քարայրներ շարանշարան: Ինչի՞ են ծառայել դրանք, արդիոք տրհեստանոցներ են, խանութներ, թէ բնակարաններ, ուր ապաստան է գտնել բազմամարդ քաղաքի սլողետարեան... ովկիտէ, գոնէ մեր հնագէտներից և ոչ մէկը վճռական ձևով՝ մինչև այժմ, այդ չասաց: Շուկայ, արհեստանոց, թէ բնակութեան տեղ, այդ մինոյն է, մի բան հաստատ է, որ այդ այրերը՝ մի օր, մի ամբողջ կախուած քաղաք են կազմել, ուր եռացել է աշխատաւորների կամ առետարականների կեանքը: Չորս թնդացել է նրանց աղաղակներից և ուրախ քրքիջներից, քարեայ կամ այլ սանդուխները անշուշտ կախուած են են եղել այրերի շրթունքներից, և օձապտոյտ, սիրուն շաւիդները դալարուել են ժայռերի կրծքին՝ դէպի վեր, դէպի վեր: Դիւթական քաղաք, որ ապրել է օգեղէն բարձունքում, անդունդների վրայ, արծիւների բոյնի պէս: Փամանակը՝ գանդաղ ու յամառ աւերել է ամեն ինչ, սրբել է ձորերի կուրծքը, հեղեղները լուացել են ու լիզել ճանապարհները, այժմ մնացել են միայն քարայրների բերանները, այլանդակ ու անձեռ, որոնք կոյց աչքերի ու խոսոչների պէս նայում են աւեր քաղաքին ոչինչ չտեսնելու համար:

Խորածոր Ախուրեանն ու Ծաղկաձորը բնական ամրութիւններ են քաղաքին, բայց այդքանը բաւական չի համարուել, այս կողմից էլ պարիսպներ են քաշուած հաստաբեստ ու կուռ: Հիացմունքի և զարմանքի արժանի տեսարան են ներկայացնում այդ պարիսպները: Գոյնզգոյն քարերով ճարտարօրէն կերտուած այդ ամրութիւնները, ժայռերի կատարները գրկած՝ խօլ պարով կախուած են իրարից, ձգտում են դէպի ձորը, վազում են անդունդների վրայից, գալարում են Ախուրեանի ափերով, նայում են ալիքներին լուութեամբ և ապա կրկին բարձրանում վեր, վեր: Տեղաւեղ նրանք այնպէս են կախուել խորխորածների վրայ, որ կարծես մի խենթ քմահաճոյքով ուզում են գետը նետուել, կամ փսխում են նրա ականջին աւերակների յաւիտենական եղերերգը:

Միջնարերդի գէմ ու գէմ, մի այլ բլրի վրայ կանգնել է Աղջլկարերը (*Ղըղղալա*), գոսող աղաստանը գեղեցիկ արքայադստեր, որ, ինչպէս ասում է աւանդութիւնը, խոյս է տուել քաղաքի ժիորից ու աղմուկից և իր ճոխ ապարանքը քաշուել՝ այն ժայռոտ դժուարամատչելի բարձունքների վրայ միայնութեան հանգիստը վայելու համար: Ո՞վ էր այն արքայագուատրը, ի՞նչեր են անցել դարձել այն խրոխտ դղեակում, մենաւոր ժայռը Յըրը է ամայի դարձել, ո՞ւմ ձեռքով, այդ բոլորը չգիտէ ժողովուրդը,

և նրա ի՞նչ փոյթն է։ Ապրում է հէքիաթը, երևակայութեան այդ գոյնզգոյն թիթեռը, որ պաշտում է գեղեցկութիւնը և ոյժը, և չքնաղ կոյսը դրել է վիշապ—գետի պաշտպանութեան տակ։ Ախուրեանը մի լայն պտոյտով դրկել է քարաժայուն ու դղեակը, ինչպէս մի հսկայական վիշապ, որ օր ու գիշեր հսկում է այնտեղ ապրող գեղանի աղջկայ վրայ։ Հինաւուրց ապարան-քըն ու բերդը վաղուց են խորտակուել, մոխիր դարձել եկեղեցու միայն կէմն է կանգուն երկում հեռուից, բայց հնագանդ գետը դեռ շարունակում է ծեծել քարաժայոի հիմքը, հինաւուրց վիշապը դեռ հսկում է։

Եւ լեզենդան ապրում է...

Վար ենք իջնում Միջնարերդից և դանդաղ ու մոլար քայլերով, դիմում ենք դէպի ձորափը, հստում հնք քարերի վրայ աւելի մօտիկից տեսնելու Ախուրեանն իր ձորում։ Մի լուս-թիւն է իջնում մեր վրայ, ոչ որի շրթունք չի շարժւում, անգամ թեթև բացականչութեան համար. ստեղծուում է հոգեկան այն կացութիւններից մէկը, երբ մարդ առանց խօսքի կարդում է ընկերոջ ներքին աշխարհը, երբ կեղծիքը դառնում է անկարելի և բոլորի յոյզերը բղխում են մի հասոիկ աղբիւրից։ Զէ որ մենք Ախուրեանի ափին ենք նստած.

«Ի գետո Բարեկացւոց անդ նստէաք և լայաք»։

Ես իմ բոլոր թափառումների ժամանակ ոչինչ չեմ յիշում, բնութեան և ոչ մի տեսարան, որի գեղեցկութիւնը այնքան անյոյս թափիծ ունենար, լացի, վշտի այն աստիճանն հզօր հաճոյք յարուցանէր մարգու հոգում, որքան Ախուրեանի ձորը, Անիի մօտ՝ աշնանային պայծառ երեկոյին։ Բնութեան իւրաքանչիւր գեղեցկութիւն, որքան և կենսալից ու սրտապարար, որքան և անմասն լինի տիտուր յուշերից, ինքն ըստ ինքեան միշտ անուշ, դուրեկան վշտի աղբիւր է։ Բայց Ախուրեանը իր ժայռու ձորի մէջ, աւելակների ոտքի տակ, երեկոյեան մշուշով սքօղուած՝ ամբողջապէս ցաւ է ու արցունք։ Այդպէս է լինում մատաղ ու գեղեցիկ կոյսը սկ դագաղի մէջ, մահուան դալկութիւնը դէմքին, որին նայում ես անթարթ ու յափշտակուած՝ մոռանալով, որ այս զունատ գեղեցկութիւնը վերջալոյսի վաղանցուկ վայլ է միայն և որը շուտով լուծուելու է անյայտի ծոցում։ Ուրիշ ի՞նչ է յիշեցնում Ախուրեանը, պուցէ ստոր կին, ջահիլ ու գեղեցիկ, որ մինամենակ լալիս է անապատի ամայութեան մէջ կորած մի շիրմի վրայ և նրա հեծլլտանքը լոկ քամիներն են լսում։

Ո՞ւս այս վշտոտ Ախուրեան...

Մշտականաչ ափերի մէջ, խնրը, խորը, համարեա ան-

դունդներում, բարձրաբերձ ու խոժոռ ժայռերի տակ՝ հոսում է. Նա հնագանդ ու յոգնած՝ անվերջ, ծանր պայքարից՝ հոսում է, գալարւում է յաւագինօրէն, այնպէս որ մարդ ապրում է նրա դաժան կեանքի ճիզզ, եւ նրա ձայնը ոչ վիրաւոր գազանի մանչիւն է, այլ մեղմ, թախծոտ վշվշոց, ինչպէս սոյլերը մուրուած հովերի, ինչպէս սոսափիմը լալկան ուսիների. Նա հեծկտում է այն սգաւորի պէս, որ կորուսի անդառնալիութեան առաջ հնագանդ է, չի ճշում, չի աղմկում, վայնասուն չի բարձրացնում, քանի որ գիտէ, թէ այդ բոլորն անօգուտ է:

Դժբախտութեան մէջ գոռող Ախուրեան:

Բարձրից նրա վրայ սաւառնում են գիշակերները և սիրտ չեն անում ալիկին իջնել, ամպերն են սուրալով անցնում, խոյս տալով նրա ահագին վշաից, զիշերները աստղերն են թարթում և ոչ մէկը նրա յատակին չի հասնում: Արցունքի պղտորութիւն ունի նա, չի ուզում, որ իր մէջ երևան աշխարհի իրերը, որ աստղերը ժապան, կամ թռչունները զուարծանան իրայ փայլով: Աւերակների և ժայռերի այլանդակ ստուերներով գոհ է, մնացածի համար անէծք ու արցունք միայն ունի:

Եւ այս ժայռերը... այն լեռների խենթ զաւակներն են սրանք. վիթխարի հօմանիների պէս կրքոտ ու յասկոտ՝ իրար յետևից գրոհ են տուել գէպի գետը, գէտի այս սգաւոր գեղեկուհին: Անեղ ու անհեթեթ հսկաների մի խուժան... Նրանք իրար թիկունքից, զիլի վրայից աշխատում են նայել վար, գէպի անդնդախոր ձորք՝ այն տեղ պառկած գեղեցկուհու չըքնազ մերկութիւնը տեմնելու. և իրաքանչիւրը գժկոհ իր ընկերից, որ իրանից առաջ է անցել, լաւ տեղը գրաւել, լուռ զայրոյթով նոթերը կիտել, յօնքերը կախել է: Առաջին շարքերը, որոնք տէր են ձորին ու գեղեցկուհուն, իրանց անշարժութեամբ ու մուայլով սարսափելի են, պայքարող գետի անզօր ճիղերի համար քարացած ու թունոտ հեգնութիւն ունին: Նրանք մի խօլ պարով ըրջապատել են նրան, զուարծանում են, վայելում են նրա հմացքը, գնում են հետոն անվերջ, որպէս յաւիտենական բանտապահներ, որոնք ուխտել են երբէք չբաժնուել, երբէք մենակ չձգել գեղանի գերուհուն:

Ախուրեանն իր ձորում... Դա մի Նիօբէ է, որ ահագին վշտից քարանալու փոխարէն, դատապարտուած է անվերջ սգաւոր իր նետախոց դաւակները, մի կաօկօօն է, որ օձերի կծիկների մէջ չի մեռնում, այլ գալարւում է ու հեռում յաւիտենական հոգեւարքով:

Ախուրեանն իր ձորում... Դա մի անյոյս վշտի սքանչելի

մարմնացումն է, անհուն ցաւի գեղարուեստական հրաշակերու, որի վարպետը, ինքը բնութիւնն է:

Գնացէք տեսնելու Ախուրեանն իր ձորում:

Եւ երբ որ գնաք, անպատճառ բարձրացէք Աղջկաբերդի կատարը: Մի նեղ ու վտանգաւոր արահետ է առաջնորդում այնտեղ, զգնյշ, որ չսայթաքէք, դէպի աջ, անդունդը ահաւոր է, տեղ-տեղ բռնեցէք ժայռերից, յենուեցէք քարերին, սողացէք թէկուզ, բայց բարձրացէք: Այնտեղ՝ կատարին գեղեցիկ, քանդակուած քարերի մի դէզ է, աւերակ եկեղեցու և ապարանքի բեկորներն են դրանք. կանգուն է մի եկեղեցու պատը: Անցէք նրա յետել, մի փոքրիկ տերրաս կայ, մշտականաչ ու հարթ, կանգնեցէք այնտեղ, բայց վար չսայէք, ներքեմ անդունդը ահնելի է, զլուխ է պտաւում, շունչ է բռնուում: Եւ այն անդունդի մէջ գարձեալ Ախուրեանն է, որ գալիս է, կորչում ոտքերիդ տակ: Այստեղից բացուող տեսարանի վրայ բնութիւնը գործել է կանխամտածած կերպով, զեղեցկաւթիւնը խառնել է խորհրդաւոր սարսափին, և ով կամենում է ճաշակել մէկը, ստիպուած է նաև դողալ մի մութ ուժից, որ թագաւորում է այս անդունդների, այս ժայռերի վրայ: Աղլրելու գօրեղ բնադրը զարթնում է թափով, բռնում է ամբողջ էութիւնդ, և ակամայ յետ-յետ ես քաշուում անդունդի շուրթից, թիկունքդ դէմ տալիս պատին, պինդ քարին ծեփուելու, նրա հետ լուծուելու համար:

Եւ հեռուն... ին գնացէք տեսնելու Ախուրեանն իր ձորում, բայց անպատճառ Աղջկաբերդի ահաւոր, հրաշակի բարձրունքից:

Երեկոյ է, արեւ ծածկում է հորիզոնի յետևում. լեռներից իջնում են այլանդակ ստուերներ. ինչպէս դարան մտած հրէշներ, սողում են դանդաղութեամբ, պրպառում են ձորերն ու կիրճերը, համնում, փարում են մոայլ աւերակներին, որպէս սպի զգեստներ: Փորշ մառախուզը ժայռերի կատարներից պոկուելով իջնում է դէպի ձորը, յեղյեղում է ափերի մէջ և նրա մուգ քօղի տակից գետը հոսում է, ինչպէս կապարի մութ զանգուած՝ անփայլ ու խիստ: Մի խումբ կաքաներ հապճեալ ու աղմկալի թսիչքով բարձրանում են ժայռերի վրայ, վայրկենապէս խոռվում երեկոյեան խաղաղութիւնը և ապա կարծես հոգի լուծուում են սև հողի հետ:

Գիշեր է, աւերակների մոայլ գիշեր, որ սև թևերով իջնում է ու թուխս նստում, այնքան գամբարանների վրայ կիսաւեր շէնքերի հազիւ նշմարելի ուրուագծերը դաժան ու հրէշաւոր՝ դողդողում են թանձր խաւարի մէջ և նրանց հետ մարդու հոգին է գալարուում ու ցաւում: Վրայ է համնում մի այն-

պիսի լոռոթիւն, որ մարդ ակամայ փսփսուկով է խօսում իր ընկերոջ հետ, ինչպէս մեռելատանը՝ դագաղի առաջ: Եւ ընկերոս դարձեալ բանաստեղծն է, որի հետ գիշերային սև խաւարի մէջ քայլում ենք դէպի պարիստները: Մեր շուրջը կարծես ողջ դագաղներ են այս շարան-շարան տւերակները, մէկը մէկից ահազին, զարհուրեկի. դագաղներ մի կեանքի, որ անցել է անդարձ: Բոլորի վրայ տատեղաղարդ գիշերը թարթում է իր բիւրաւոր աչքերը անկարեկից ու անյոյզ: Արտասուելի է մըտածել, որ մի օր կեանքի, ինդութեան, փառքի վրայ փայլիը-լող աստղերը այժմ էլ ժպտում են գերեզմաններին ու աւելածին, նոյնքան անհոգ, նոյնքան անգիտակից, որքան դարեր առաջ: Երկինքն ու երկիրը կապուած չեն իրար հետ ցաւի և ցնծութեան գիւթական շղթայով. մարդն է լցրել տիեզերքի անհունութիւնը սփոփիչ պատրանքներով:

Խեղճ մարդ...

Քայլում ենք առաջ. մեր մտքերը սև են, ինչպէս մեր գըլուխների վրայ ծանրացած գիշերը: Մենք էլ մեր պատրանքներն ունենք, որով տարւում ենք այս խաւարի մէջ:

Անին գիշեր ժամանակ... ո՞վ է թափառել գերեզմաններում և ականջ գրել լացող խաւարի հեծկլատանքներին: Մէկը խօսում է, փսփսում, տնքում. մի մութ խոռոչում ճանկեր կան, որոնք քարն են չանգուսում. մեռել է արդեօք, որ փորձում է գուրս սողալ դամրաբանից: Մի վլուածքի տակ մի ուրիշը մըմնջում է ցաւով ու տանջանքով, ո՞վ, ումն է խեղդում, ո՞վքեր են կրծոտում իրար խաւարի մէջ: Ահա մի ոտնաձայն, էլի մէկը, էլի մէկը, քայլում են շտապ-շտապ, փախչում են զանազան կողմեր, կանգ առան. ականջ են դնում արդեօք, մեզանից փախան... նայում ես շուրջդ, դէպի յետ, հեռուն, և... ոչինչ, ոչինչ, այդ բոլորը քամին է, աւերակների խենթ քամին և խաւարից շփոթուած երևակայութիւնդ:

Պարիսպների մօտ ենք: Գիշերով սրանք էլ դարհուրելի են: Թեսաւարծ ու վիրաւոր հսկաններ, որոնք անիծում են և կատաղաբար բոռւնցք ցոյց տալիս երկնքին նրա անզթութեան, անկարեկից հայեացքի համար: Բացուածքներ՝ ունին նրանք, որոնց միջից մի հատիկ ասող կաթեցնում է իր գունատ շողերը, առանց փայլ տալու մոայլ պատկերին: Քամին հեծեծում է նրանց խոցերի մէջ և մութ տեղերում կարծես վիրաւոր զաղաններ են կաղկանձում:

Ուս այս քամին. ո՞րտեղից է փչում նա միշտ մեղմ, միշտ լալկան. չոր խոռուն և թփերը խշխշում են, քարերը տնքում են, կամարները հնում, և ամենքը միասին լալիս են, լալիս:

իմ ձեռնափայտը զարկւում է գետնին, հողն էլ արձագանգ է տալիս, որ խառնւում է քամու հետ: Խաւարը թանձր է, ոչինչ չի երևում հեռուից, քայլում ես և յանկարծ առաջդ է ցցւում մի ահազին շնչորի մութ զանգուածը, յետոյ էլի մի ուրիշը. ու թւում է թէ նրանք անթիւ են, երկրի արգանդից են գուրս վիժում, ուր թաղուած էին զարերից ի վեր, բարձրանում են իրար յետուից և նոյնպէս գողղողում են, ուժգին հեծկւտանքից ցնցւում իրանց ամբողջ կազմով և միանում քամու մշտական ողբ ու կոծին:

Աննկատելի կերպով պտոյտ ենք գործում, քայլում գէպի հարաւ: Վերստին մեր առաջն է Ախուրեանը: Նրա վրայ խաւարն ասես աւելի թանձր է, աւելի սե, ու սողում է զաղտապողի կերպով, հրէշի պէս, սողում է անճայն, իսկ նրա տակ ալիքներն են հեծեծում: Այժմ նրանց ձայնն աւելի ուժգին է և աւելի յուղիչ: Շրջակայքում ամեն ինչ կարծես այդ վշշացող գետին է ականջ դնում և նա պատմում է, պատմում: Ի՞նչ ես հեկեկում լալկան ու հիւանդ երեխայի պէս, որբացած գետ, ինչեր ես տեսել հին օրերում, արդեօք ի՞նչու ես այդպէս գիշեր ցերեկ մռմուռ քամում:

Հեռու, հեռու շներ, են հաշում, խաւարը գողղողում է, գետը վշշացում, և լեռները նիրհում անդորր ու լուս: Մի թըռչուն ճշաց ձորի մէջ ու լուց: Քամին սաստկացաւ և իր հետ ըերեց հազար ու մի ձայներ: Շների ոռնոցը, չդիտես ինչո՞ւ, աւելի բարձր, աւելի կատաղի զարձաւ: Քամո՞ւց են արդեօք գժկոն նրանք. թէ գետի շառաչից, կամ գուցէ լուս աւերակ-ների վրայ են հաջում, որոնք կանգնած են, սարսափելի են և չեն խօսում:

Կըկին լոռւթիւն, գետն է վշշացում միակերպ, անվերջ, և նրա ձայնը, որպէս անդուլ օրօր՝ քաղցրացնում է աւերակների քունը: «Բարե՛ գիշեր, հանդիստ քուն» մրմնջում են մեր շըռ-թունքները:

Եւ գետը բողոքում է, դետը վշշացում է... չէ որ դարեր է, ի՞նչ նրա համար չկայ ոչ «բարե՛ գիշեր» և ոչ «հանդիստ քուն»:

Աւ. Ահարոննեան

*
* *

Ես կուզէի արևավառ
Անապատը ամայի, —
Ուր մեն-մենակ և վշտահար
Թափառէի ու լայի:

Աշխարհից դուրս ու սրտաբաց —
Անապատում ամայի
Տաք ժայռերը ամուր գրկած՝
Համբուրէի ու լայի...

*
* *

Հիմա հեռաւո՞ր, վեհ հիմալայեան
Այն սոսկավիթխար, վէս բարձունքներին
Յախուռն, ինչպէս ալէկոծ ովկիան,
Ամպերն խոնւում մոայլ, մթագին:

Եւ մըրկայոյզ ամպրոպն է պայթում
Ժայռերին խոժնո, ահեղադղորդ,
Բնուռն, խօլական կայծակն է ճայթում...
—Եւ Հիմալայը կանդնած է խրնիս:

Եւ սլայքարի մէջ այդ որոտընդոստ
Այնտեղ է այժմ և Ռդիս ըմբռստ:

* * *

«Մի գնա մարդկանց մօտ—գնա անապատ՝
զաղանների մօտ»:

Ֆր. Նիշեէ:

Բաղերը վայրի թուան շուարած.—
Ո՞վ է արշտում մռայլ գիշերով.
Մըսրկի նման նժոյգին հեծած՝
Ո՞վ է սլանում նիրհած դաշտերով:

Թռնիմ խնր երկինք, դէս առաղերն անշէջ
Եւ սիրտս բանամ անհունութեան դէմ.
Ա՛խ, սուզուել կուզեմ գոռ ամպերի մէջ
Եւ կայծակներով դարնուիլ կուզեմ:

Գծուծ ու նանիր մարդկանցից հեռու,
Վախկնտ, նենգամիտ, կեղծ ու դաւաճան.
Ստոր ու ստրուկ աշխարհից հեռու,
Նիւթին միշտ գերի, ափան ստութեան:

Աշխարհը չարժէ քու արտասունքին
Եւ կինս ու ընկեր՝ գգուանքիոդ այդ ծով.—
Անապատ գնա—սիրիր վագրերին,
Եւ այրուիր անմահ արևի սիրով...

Աւ. Խասհակնան

ԸՆԿԵՐՆԵՐԱ...

(Դիմղական կեանքից)

Մեր գիւղը վաղուց թշնամի էր հարևան Ս... գիւղի թուրքերի հետ: Եթէ ձեռքերիցս գար ու մէկս մէկից չվախենայինք, իրար արիւն կը խմէինք... Մեր վէճը կրօնական չէր: Թէս թշնամիներս թուրք էին, բայց նրանք մեզանից սոված, մենք նրանցից քաղցած, ով ժամանակ ունէր անօթի փորով «հոգու գրկութեան» կամ «լոյս հաւատը տարածելու» մասին մտածելու:

Մեր վէճը հողային էր, և հողը գիւղացիներիս համար հոգուց շատ թանգ է: Ի՞նչպէս էլ թանգ չը լինի, երբ մի կտոր ուժասպաս դարձած հող ունես, չորս կողմից հարիւրաւոր գայլի աչքեր են տնկած վրան: Տանը մանր ու խոշոր՝ կին ու երեխաներ բերանները հարամու պէս բացած հաց են ուղում այդ արտից, պարտատէրդ աչքերը չորս արած քաղուելուն է նայում, որ դեռ ուտելլվաբնաղոնդ ներս չլցրած, փողի տոկոսի տեղ քաշէ տանի, խանթւորն այդ արտի յուսով է «նիսիա» *) նաւթ ու սապոն առնել ու այժմ դեռ աբտդ չհնձած, կոտ **) ու կիմոնց կոտը ձեռքին առաւօտ, երեկոյ գուռ է կտրում, որ չլինի արտի հընձես ու բերքն ուրիշի բերանն ընկնի... տէրտէլն ամեն օր անուշը, անուշը «ողջոյն, որդիք» ասելով «տարեհախն» *) է յիշեցնում, իւղբաշին առասպելական բեղմնաւոր դաւթարը ձեռին վլխիդ տալով «հարկն ու մախտին» պահանջում... Ես ի՞նչ գիտեմ, էլ զղիր ու հովիւ, էլ նախըրչի ու չարչի, **) էլ զորուխչի *) ու դարբին, էլ մուրացիկ ու անցորդ բոլորն աչքերը անկած իրանց արդար ու անարդար բաժինն են պահանջում, էլ ի՞նչպէս արտը հոգուց թանգ չմինի իւեղճ գիւղացիներիս համար...

*) Ապառիկ **) չափ հացի *) տարեվարձ **) շրջիկ մանրավաճառ
**) հանդապահ:

Հոգին ի՞նչ է, մի հոգէառ հրեշտակ կայ ուզող այն էլ մի անգամ կ'առնէ կը պրծնես ձեռքից, խոմ ամեն օր, ամեն տարի գլխիդ վերև չի կանգնի ու հարիւր անգամ վճարած պարտքը նորից պահանջի...»

Հողը թանգ է մեղ համար, շատ թանգ... և Ս...եցիք խըլել էին մեղանից երկու հարիւր օրավարձից աւել հող: Դեռ այդ ոչինչ, այսպէս թէ այսպէս մարդիկն յաջողեցրին, գործին որոշ օրինական ձև տուին, թէև ողջ գաւառն էլ գիտէր, որ այդ օրինականութիւնը լոկ 70 րուբլու մէջ էր կայանում, որ երեք սպիտակ բեխ-մորուքով ծերունիներ, նոյնիսկ մէկը մեր գիւղից, վերցրին ու առանց ամաչելու գնացին դատարանի առաջ երդուեցին, թէ վիճելի տեղը Ս...եցիներին է...»

Մեր մէջ կան, շատ կան կարմրելու ընդունակութիւնը կորցրած մարդիկ...»

Ասում եմ դեռ այդ ոչինչ, եթէ Ս...եցիների ոչխարի ահագին հօտերը սանատակ չտային մեր արտ ու արօտը, արմատահան չանէին հարիւրաւոր խեղճ մարդոց վերջին յոյսը:

Յունիսի վերջերն էր, գիւղի քաղոցն ու գութնոցը: Մի կողմից հաւար-հաւար քաղում են ու դեռ խոտը չվերցրած, միւս կողմից քաղուորի յետակից գութանն օձի պէս ձգում, սողում է վարից-վեր, վերից-վար ու ու ակոսներն տետրակի գրած տողերի պէս կողքե-կողք շարում մոխրագոյն արտի երկարութեամբ: Յան արտերն էլ փոտւած, որը կծղել, քիստ է քշում, որն էլ դեռ կապոյտ ծովի պէս ծփծփալով գնում, գալիս, քամու հետ շընգ-շընգալով, ինչ որ գաղտուկ բաներ է փափսում...

Եւ որքան անո՞ւշ, դիւրելան է այդ շընգ-շընգոցն ու փսփսոցը... կարծես կեանքն ինքն է փսփսում այնտեղ, խեղճ գիւղացու վախկոտ, ամեն քամուց տատանուող, երիրուն, թոյլ կեան քը... Վերը մի փոքր ամպ բարձրանայ, բաց կապոյտը մթագընի-վարն այդ «կեանքը» կը զողայ, կը սարսափի՝ չինի յանկարծ կարկուտ գայ... Իրիկնազէմ, թէ ամպերը չքանան ու երկինքը հայելու պէս պապղայ... թոյլ ու երկչոտ «կեանքը» դարձեալ կը սոսկայ՝ չինի՞ յանկարծ լուսաղէմին եղեամ գայ... Է՞ն, այդ կեանքը թշնամիներ շատ ունի՝ կարկուտ, եղեամ, ցուրտ ու երաշտ, մուկ ու մորեխ, որդ ու բոչզ հոգէառըն են այդ կեանքի... Բայց ի՞նչ արած, այդ դեռ ոչինչ, ինչ երկնքից է գալիս՝ ուզես-չուզես համբերութեամբ պիտի տանես... Երկինքը շատ ուժով է... Երկնքի գէմ խեղճ գիւղացին ի՞նչ անէ... Սակայն, երբ թոյլ, ամեն քամուց երերացող այդ կեանքի թելն է կտրում քեզ նման «խեղճ» գիւղացին... մարդ կատաղում, գաղան դարձած էլ ինքն իրան մուանում է... Դէ-

մըդ հարազատ եղբայրդ որ կանգնած լինի, տաք արիւնը կը խմես... էլ ուր մնաց Ս...եցիք, որ ազգով էլ թուրք էին...

Կեանքն այդպէս է. սեփական կեանքն անուշ է...

Յունիսին էր. ցորեկ գեռ նոր էր անցել: Վարի չայիրներըն էինք քաղում: Ալ ու խաշխաշ քաղուորից ու փոցզուորից ասեղ զցելու տեղ չկայ: Կին ու տղամարդ թափել՝ հայ-հաւարքաղում էինք, հաւաքում, որ ազատենք մալ-ոչխարի բերանից: Էլ հանաք ու չանաք, էլ խինդ ու ծիծաղ խառնել էինք իրար: Մար ու ծոր զգրդում էր, հարսնիք էր կարծես:

—Ծծո...օօ... Ս...եցոց ոչխարին նայեցէք, ո՞ւր եկաւ... Յանկարծ գոռաց մէկը:

Նայեցինք. յիրաւի լեռան լանջը մշուշի պէս փաթթած ահագին սպիտակ հօտն իջնում է ցած: Սահմանը վաղուց անցել էր, սարը մերն էր, բայց դարձեալ ցած էր զալիս:

—Հէ, հէյ... ուր քշում, անհողի, անստուածներ... գոռացինք, կանչեցինք, լսող չկայ... հօտն արածելով իջնում է ցած: Մօտեցաւ ցան արտերին: Մի երկու հօտ էլ լերան միւս կռղմից ելան:

—Ի՞նչ անենք, տղէք...

Հաւաքուեցինք միմեանց մօտ: Մէկն ասում էր զնանք գլաւային բերենք, գանգատ անենք. միայն ասում էր զիւղի մեծերին իմաց տամիք, երրորդն առաջարկում էր ոչխարը քշել զիւղ տանել: չորրորդն, ով արտ չունէր այդ կողմը, խորհուրդ էր տալիս «նալլաթ տալ չարին», «թնդ արձեն, չքուին, չար կը հոտի էր շներից»...

Մինչդեռ ամեն մէկը տաք-տաք իր առաջարկութիւնն էր պաշտպանում ու մեծամանութիւնն արդէն ոչխարը զիւղ քշելու կողմն էին, յանկարծ կարծես գետնից գլմներիս վերև բուսան չորս-հինգ ձիւաւոր մեր զիւղի մեծերից:

—Թաղեմ ձեզի պէս ջահէլը, թաղեմ... ծօ ի՞նչ իշի պէս բերաներդ լաց կանգնել նայում էք... չէք տեսնում շան ոչխարն ուր եկաւ, արտ ու արօտ աւրեց...

—Ի՞նչ անենք, Բաղարամ աղա... բոլորս կարմրած հալցրինք:

—Ի՞նչ անէք. գետինը մտիք, ի՞նչ պիտի անէք... Ամօթ չէ մեր զիւղի անուանը, որ էսքան ջահէլ-ջիւան կտրիճներ կանգնել էք ու աչքերուդ առաջ Ս...եցոց ոչխարը ձեր մանը ու խոշորի «զիւղիկը» *) կը կտրէ... Թաղեցէք գերնադիներդ գնացէք էս սահաթիս դարկէք, ջարդեցէք էդ անսաւուած

*) Ապրուստ:

շուն-շան որդոց, մարդ ու ոչխար, քշեցէք գիւղ բերէք... Էդոնց
արունքն իմ ճտիս... ես պատասխան կուտամ... Ահան մնաք
էլ յետևներիցդ կուգանք... Միք վախենա, հասիք...

Ու մենք քաշեցինք գերանդիներս, մերկացրած որերի
ոլէս պապդացնելով օդի մէջ, վաղեցինք...

Խենթ, խելառ ջահէլ, մի վոքր քամի էր պէտք, որ
թռչէինք...

Ես վազում էի ամենից առաջ. յետևիցս հե-հետով կը ըն-
կոխ հետևում էր շունո՞ Զէմբէրը, որ միշտ հետո արտն էր
գալիս, որ երեկոյեան միասին զնանք գութնին մալը պահելու,
ապա 10—12 հատ «ջահէլ-ջիւան կտրիճներ» վազում էին բոլոր
ուժով, հեր հե... Արտի կոկիծ էր, հեշտ բան չէր...

Դեռ լերան լանջը չէինք հասել, որ գոզութեան մէջ փոր-
ձուած՝ խորամանկ հովիւները ոչխարի բերանը վեր դար-
ձուցին *): Շրմիսկ... բացուեց յանկարծ հրացանն ու ոչխարն
հեղեղի ոլէս տափնելով ծովի ոլէս ծփացող շարքով ցան ար-
տերը, խրտնեց լեռն ի վեր... Չի քշես չի հասնի խրտնած ոչ-
խարի յետևից...

Փախցրին... Վերջին ոյժերս հաւաքած, առանց յետ նա-
յելու, զոռ եմ տալիս ոտներիս... Սարն անցայ: Հօտերից երե-
քըն արողէն չկային, կորել էին, կարծես թե ունէին թուան: Մի
հօտ մենակ, սահմանի վրայ փուտած, հանգիստ արածում էր.
17—18 տարեկան հովիւն էլ գլուխը զրած չեչու քարին՝ անուշ
ընում էր... Խեղճն երկել բանից բէխարար էր...

—Անզգամ, մինչև հիմա արտերն էիր աւրում, հի-
մա սուտ քուն ես եղել... հարամզագաղաց... գոռացի գլխի վերի,
ու մինչդեռ խեղճը ընաթաթախ աչքերը ճմլելով առաջն արա-
ծող ոչխարն էր որոնում, որ քշի վեր, կարծելով, թէ յիրաւի
ցան արտի մէջ է, թրախկ... բոլոր ուժովս գերանդին վրայ
բերի գլխին...

Հովիւն ընկաւ... Ես անտէր հօտը կիսեցի ու կոռով դաշ-
տից յաղթական փառքով դարձող հերոսի ինքնարաւականու-
թեամբ, քշեցի ցած՝ դէսի մեր սահմանը:

Ես գիտէի, որ դա այն հօտերից չէ... բայց միւնոյն էր.
այսօր չէ երեկ աւրած կը մինէր մեր արտերը, վերջապէս բաւա-
կան էր, որ Ս...եցոց էր, էլ մեղաւոր ու անմեղ փնտուղն ովլ
էր...

Հեռուն՝ չայիրներում երեսում էր հաւաքուած կին ու տը-

*) «Ոչխարի բերանը դարձնել» նշանակում է արածելու ուղղու-
թիւնը փոխել:

զամարդոց բաղմութիւնն ու ես հրճուանքով պատկերացնում էի թէ ի՞նչպէս պիտի գովեն—գովարանեն ինձ գիւղի աղաներն ու քաղցր ժամանով նայեն ջահէլ հարս~աղջիկները...

Հնկերներս չկային... երեխ նրանք էլ միւս հօտերի յետեւց գնացած կը լինէին: Բայց ո՞քան ուրախ կը լինէի, եթէ նրանց չյաջողուէր... փառքի պապկը մենակ ինձ կը մնար...

Յիմա՛ր ջահելութիւն...

Անմրոդջապէս մտքերիս հետ տարուած, հաւար-հաւար քշում էի ոչխարը ցած՝ լեռն ի վայր, երբ յանկարծ մօտիկ ձուրից գէմս ելան 15—20 ձիաւոր Ս...եցի թուրքերը...

Միրոս գողաց, ոտներս թուլացան ու ակամայ աչքըս ընկաւ մեր չայիրները... Մօտ էին... նոյն բազմութիւնն արձանի պէս կանգնած դիտում էր իմ կողմու: Զիաւորները մօտեցան. միւս կողմից էլ զիւռաւով, ահազին կոպաներն ուսերին՝ լեռն ի վայր պրծաւ Ս...եցոց եայլաւորը... Վուանգն անխուսափելի էր... բայց ես զեռ քշում եմ, բաց չեմ թողնում ոչխարը... Ախր մերսնը էլ մօտ էին, օգնութեան կը հասնէին...

—Ո՞ւր ես քշում, հարամզադա...

Առաջս կարեցին ձիաւորներն ու ձիերի առաջ խառնած՝ սկսեցին ֆոփկ-ֆոփկ պատացներ...

Զեւիս պաշտպանուելու ոչինչ չունէի, միակ զէնքս՝ գերանդիս՝ հովուին խփելիս կոտորուել, մի կողմ՝ էր ընկել ու ձեռիս մնացել էր կոտիկ՝ կիսատ նաթը *): Միակ միջոցը—մնում էր փախչել... Արնկել թշնամու ոչխարը բերել հասցրել էի այդտեղ. գիւղի պատուաւոր աղաներն ու ջահէլ կարիճներն ահազին բազմութեամբ կանգնած կէս վերստ հեռու, և ես փախչէի..

Կատուի պէս ցատկուառում էի մի ձիու առաջից միւսի առաջ ու ամեն անգամ աչքս ակամայ մեր չայիրները ցցում...

Նոյն բազմութիւնն արձանի պէս կանգնած դիտում էր մեր կողմը...

Էլ ոչինչ չեմ յիշում: Երբ աչքս բացի, գիշեր էր արդէն: Քիթ-բերան արիւնկուիկ, բոլոր ոսկորներս ջարդ ու փշուր՝ լերթիս ընկած էի արտի մէջ... Բոլորած լուսինը հպարտ, յաղթանակը տարած հերոսի պէս ժպտալով, լիրան լանջից բարձրանում էր վեր ու խոշոր աչքերը յառած՝ կարծես ինձ էր հեգնում, ծալլում...

Մէնակ էի ամայի գաշտին մէջ, մեն-մենակ. ինձնից մի փոքր հեռու ընկած էր սատկած շունս՝ Զէմբէրը. երեխ անպի-

*) Ֆերանդու կոթ:

տաններն սպանել էին խեղճին. մինակ նա էր մնացել մօտս...

Ընկերներս տեսնելով վերահաս վտանգը՝ ձորը մտնող ձիւ-աւորներին, կէս ճանապարհից փախել էին, առանց նոյնիսկ ինձ իմաց տալու թշնամու գալուստը...

Մենակ էի ամայի դաշտնին մէջ, մեն-մենակ սատկած շառս հետ. ու այդ մենակութեան կսկիծն աւելի խիստ էր, քան փշրտուած մարմնիս հազար ու մի արիւնլուայ, պաղած վէրբերի մրմուռը...

Ա՛խ, Բ' նչ կը լինէր մարդիկ գոնէ շան կիսի չափ հաւատարիմ ու պարտաճանաչ լինէին ընկերութեան մէջ, մտածում էի ես:

Բայց ոչ, շան նման քեզ «քսի» կը տան, կը բշեն կրակի դէմ ու իրանք յետ կանգնած նոյնիսկ կը ծաղրեն, կը հոհոան վրադ... Թող պատուեն քեզ, բըզիկ-բըզիկ անեն. ում հոգն է... «ամեն մարդու իր շապիկն է մօտ իր ջանին»...

Զաւախեցի

ԲԱԽՏԻ ԽԱՂԼ

Բախտի խաղ էր—պատահեցանք,
Մըտերմացանք մենք շուտով.
Ե՛ւ սիրեցինք, և՛ հիացանք,
Ե՛ւ ապրեցինք մի՛ սըրտով...

Բախտի խաղ է—բաժանւում ենք,
Զնւը են քո վիշտն ու լալիք.
Է՛հ, սիրելիս, միայն մենք չենք
Բախտի ձեռքում խաղալիկ...

Ալ. ծատութեան

ԴԱՐԱՎԱԳԵԱԶ ԿԱՄ ՎԱՅՈՑ ԶՈՐ*)

Դոգլայու հասարակութիւն:—Դարավագեազի արևմտահարաւային կողմը, գլխաւորապէս Զիվայ չայի և Գնիշիկ չայի եղերքներին և նրանց ակունքները կազմող լեռների լանջերի վրայ, նաև Ուշգուրտ և Քեօմուրլու դադ (Ղարադուզէյ) լեռների շարունակութիւնների վրայ գտնւում են Ղողլայի հասարակութեան զիւղերը, որոնք Շարուրի հետ հաղորդակցութիւն ունին հիւսիսից դէպի հարաւ հոսող Արփաշայի տփերով Բաշնորաշէն գնացող խճուզով, որը ձմեռները բնաւ չէ փակւում, իսկ Երևանի գաւառի հետ Զանաղչիի և Բիրալուի գեատուկով, որը շատ անդամ ձմեռները փակւում է ձնով և նոր Բայազիտի գաւառի հետ երթևեկութիւնը կատարում է Ղարաեօնուշի և Զալդարի ճանապարհներով:

Ղողլայու հասարակութեան կենտրոնը Արգա զիւղն է, որտեղ զանւում է շինական կառավարութիւնը: Այդ հասարակութիւնը բաղկացած է 21 զիւղերից, որոնցից 3 զիւղերի բընակիչները հայեր են, 2 զիւղերինը քրդեր, իսկ 14 զիւղերինը — թուրքեր: Այստեղ դնում եմ թուրքերի և քրդերի զիւղերի անունները և նրանց ծուխ կազմող տների որբանութիւնը 1886 թուին և ներկայումս:

1886 թուին.	Այժմ.	1886 թուին.	Այժմ.
1. Աշաղա-Դանձիկ.	18 . . . 23	9. Դաշ-Խարման.	14 . . . 15
2. Խփարի-Դանձիկ.	52 . . . 61	10. Քեօմուրլու	20 . . . 25
3. Արդարաս	33 . . . 42	11. Ղողլայ.	50 . . . 57
4. Ալմալու	33 . . . 38	12. Նամազալի.	34 . . . 37
5. Աղ-Բլիսս	9 . . . 13	13. Զիվայ.	57 . . . 78
6. Վարդանիս	20 . . . 23	14. Ղորջայ.	4 . . . 10
7. Հէշին	28 . . . 33	15. Հէրթիչ.	29 . . . 43
8. Գենալու.	15 . . . 19	16. Ամազու.	29 . . . 38

Դիմենք հայկական գլուխի ըլին :

*) Տես «Մուլճ» № 2-3

Դարալագեազի հարաւային կողմում Գնիշիկ չայի աջ ա-
փին գտնուում է Գնիշիկ գիւղը:

Գնիշիկցիների մեծ մասը բնիկ հայեր են, այսինքն չեն
գաղթել Պարսկաստանից. դրա համար էլ կոչւում են հին հա-
յեր, ինչպէս Արգայ, Ռինդ, Աղաւնաձոր, Կուղչի և Գնդիվաղ
գիւղի բնակիչները: 1886 թուի ընտանեկան ցուցակով կազ-
մում էին 35 տուն, այժմ եղել են 55 տուն: Ունի 560 հոգի բը-
նակիչ, որոնցից 291 հոգին արական են՝ 269 հոգի իգական: Գիւղի հողերի կէս մասը կազմում է իրանց սեփականութիւնը,
իսկ կէս մասը Զիվայ գիւղի թուրք բէկիրի՝ վէլքիների կա-
լուածն է, որոնց գնիշիկցիները վճարում են $\frac{30}{2}$ բահրա: Այս-
տեղ ցանում են ցորեն, գարի, հաճար, վուշ և կարտոֆիլ: Եօ-
թըն բեռան տեղ տարածութեան վրայ ցանում են առևյոտ, որը
հնձւում է տարին մի անգամ: Արտերը բոլորն էլ անջրպի են:
Գնիշիկում ըսան տներ օրինաւոր երկրագործներ են, որոնք
ցանում են 10 քեռ սերմն, իւրաքանչիւր տունը: Այստեղ, ինչ-
պէս Դարալագեազի շատ գիւղերում, հողը 1—5 աւելի արգիւնք
չէ տալիս: Նոր հողաբաժնութիւններ սկզբից մինչև այժմ տե-
ղի չեն ունեցել. Ստան. գրամուկ, ինչ քանակութեամբ հող
ընկել է ամեն մէկի ձեռքն, այնպէս էլ անփոփոխ մնում է: Ա-
նասնապահութիւնը համեմատելով միւս գիւղերի հետ, աւելի
յաջող է: Ամեն մի տունը ունի 1—100 գլուխ ոչխար, 10—25
հատ տաւար, 1—3 ձի: Նաև 1—20 հատ մեղուներ ունին հա-
մարեա թէ $\frac{2}{3}$ մասը: Գնիշիկում կայ մի զասեան արքունական
ուսումնարան: Այդ գիւղի բնակիչները խաղաղ և աշխատա-
սէր երկրագործներ են: Կլիմայի խոնաւութեան պատճա-
ռաւ շատերը հիւծուում, հիւանդանում են անգլիական ախտով:
Գնիշիկցիք ունին կարծ և լիբ կազմուածք: Ապրում են այդ
բարձր լեռների մէջ, կարելի է ասել, բոլորովին կղզիացած, ո-
րովհետև ձմեռները ճանապարհներն ամեն կողմից փակում են
ու մնում է բաց միայն Ամազուի Նորավանքի ճանապարհը, ո-
րը տանում է դէպի Արփա, այն էլ այնքան քարքարոս է ու
ժայռոտ, որը պէտք է կուզէ կուզ անցնել ու հետևակ: Այդ գիւ-
ղը՝ շնորհիւ իր համփաների, որոնք իշխան տիտղոսն են կրում,
առ հասարակ Դարալագեազում, շինական պաշտօնակատարների
և ուսուիկանութեան երեսը չեն տեսնում, որովհետև իրանց մէջ
ծագած զանազան վէճերն ու հարցերը իրանք են վերջացնում,
նոյնպէս էլ արքունական հարկը իրանք, առանց ոչ ոքի միջա-
մտութեան, հաւաքում են ու յանձնում պետական գանձարա-
նին ու ապահովագիրը յանձնում ըստ պատկանելոյն: Այդ իշ-
խանից հոչակուած է մելիք Սարդիսը, որը մի օրինակելի և

անմահ անուն է թողել Դարալագեազում մովրովսերի ժամանակ, իր անկաշառ բնաւորութեամբ, գնիշիկցիներին պաշտպան ու բարերար հանդիսանալով: Մելիք Սարգիսն եղել է մի քաջ, աներկիւզ, վերին աստիճանի ճարտար, սրախօս, առակախօս, մի կարճահասակ մարդ, որի մասին կան զանազան անելդուներ: Մրանից յետոյ նշանաւոր է եղել Մելիք Սիմոնը, նոյնպէս մի զովելի և բարեյիշատակ գիւղական իշխան: Գնիշիկցիները յաճախ կրկնում են «Հոդն էլ Մելիք Սարգիս ու Սիմոն չի ծընիլ. ժողովրդի ոտքը փուշ մտնելիս, հէնց են դիտում թէ իշխանց աչքն ամտնում. էն ժամանակն մեր բերնին համու հոս կար, լաղաթ կար. հոգևորականը, ծառայողը, բագազը գիւղը մտնելիս, առաջնին կայնած, նրանց պատում էին, օրինական պահանձմունկները կատարում ու էնպէս էին ճանապարհ քցում. համ ժողովրդի գլուխը չէր ցաւում, համ էկողները օրհնելով հեռանում. Աստծու աչքն էլ բաղցրանում էր գիւղի վրայ, շընորհք ու բարաբեաթը լցւում էր գիւղը»:

Ուզուրտ լեռնից գէպի հարաւ, գէպի Արփաչայ տարածուող սարահարթի վրայ գտնուում է Աղաւնաձոր (այժմ Այնազուր) գիւղը:

Աղաւնաձորը Գնդեվազի, Մարտիրոսի, Աղատակի, Փոսի և Բաշքիանդի նման բացարձակ և ազատ տեսարան ունի, մասաւանդ արենելեան կողմից, որտեղից մինչև անգամ Դարալագեազը Զանգեզուրի և Նախիջևանու գաւառներից բաժանող սահմանագերը երեսում են. պակաս հիանալի չէ և արեմտեան կողմի տեսարանը, որտեղից նայողի աչքին թարմ կանաչով վառում ու շնչում են՝ խաղողի այգիներով ու պտղատու ծառերով զարդարուած ձորը և Բաղչաջղը *): Աղաւնաձորի կամ Այնազուրի սարահարթի վրայով, արենելքից գէպի արեմտուաք, Երևանի գաւառի ճանապարհն է անցնում, իսկ արեմտահարաւից գէպի արենելահիւսիս, Բաշնորաշէնայ—Նոր-Բայազիտի խճուղին, Աղաւնաձորից երկու վերոտ հեռաւորութեամբ: Ամրող սարահարթը բարբարոտ է, աւազոտ և համահաւասար Դարալագեազի միջակ լեռնային գիւղերին. սա է կազմում Աղաւնաձորին հաց մատակարարողը, որի վրայ գտնուում են գիւղի վարելահողերը: Այդ հողը կարող էր մեծ հարստութեան աղբիւր լինել նրա համար իր բաւարար տարածութեամբ, եթէ միայն չխանգարէր նրան ոռոգող ջուրը: Առանց ջրի դաշտերը այնքան էլ արդիւնաւէտ չեն, սեահող չինելու պատճառաւ, ըստ

*.) Բաղչաջղը Ուզուրդ լեռան կողն է, ծածկուած արհեստական թաւուտով:

որում՝ բնակիչներն այնքան աչքի ընկնող հարստութիւն չունին, միջակ կերպով տպրող հայ գիւղերից մէկն են կազմում։ այնպէս որ 97 տանից բաղկացած Աղաւնաձորը միայն մի տուն ունի 1000 բուրլի գրամակլիսի տէր, Վարելահողերը քարքարութիւննու պատճառաւ զութանի փոխանակ գիւղացիները հերկում են զաշտերը արօրով— (վեցկով)։ բոլոր ցանքերը աշնցան են այստեղու Երեք-չորս համայաց տներ ցանում են 9—10 բեռ սերմն ամեն մէկը, վերցնում են իւրաքանչյուրը 40—45 բեռ հաց, գիւղի մնացած մասը այս թուրից պակաս են ցանում։ Գիւղի վիճակը բարելաւացնելու համար հնարաւորութիւն կայ 1^{1/2} վերատ հեռաւորութիւն վրայ լիճ շինելու «Արանա» անուանուած տեղում, որը հին ժամանակը լիճ է եղել թէկ այդ կը նստէ նրանց վրայ մինչև 1200 բուրլի ծախս, բայց միանգամայն գիւղը կը փրկուի այդ զրութիւնից։ Գիւղացիք այդ զգում են, ցանկութիւն ունին և մի տեղ հաւաքուելիս միշտ մտմտում են իւրագործելու այդ, սակայն բանը զլուխ չէ զալիս, որովհետև աղքատները չեն կարողանում վեճարել այդ գումարը, հարուստներն էլ չեն կամենում նրանց համար ըստողութիւն անել, ուստի երկու կողմերն էլ դաշտերի ոսոգումը թողնում են Աստուծոյ կամքին ու բախտի բերմունքին։ Անամսապահութիւնը ևս նախանձելի զրութեան մէջ չէ, խոս ու դարձանի սակաւութեան պատճառաւ. այնպէս որ ամենաշատ խոտ հնձողը 2000 լիրձից աւելի խոտ չէ հնձում։ Գլխաւոր անամսատէրերը Երեք տուն են, որոնցից ամեն մէկն ունի 200 գրուխ ոչխարի Քաման աներ ոչ ոչխար ունին, ոչ կով և ոչ լծկան տաւարի։ Աղաւնաձորցիները պարապում են նաև այգեգործութեամբ։ Այստեղ այգիները բռնում են 300—350 վիթան տեղ տարածութիւն։ Փթան տեղից ստացում է 30—35 փութ խաղող, ձմենները տաք լինելու պատճառաւ խաղողի որթերը չեն թաղում այստեղ. թէկ խաղողը համուռն է և զինին ստացում է, բայց զինին այնպէս գովելի չէ, ինչպէս Մալիշկայի, Ղոյթուլի և Սրգայի զինիները։ Գիւղացիներից աղքատները խաղողը բեռներով տանում են նոր-Բայագետի գաւառը ու փոխանակում են այնտեղ ցորնի ու գարու հետ։ Իբրև լիռնային գիւղ և ծաղկաւէտ դաշտեր ունեցող, մեղուապահութիւնն ևս ունի այստեղ իր բաժինը. երկու տներ ունին 200-ից տեղի մեղուի փեթակներ, մնացածները պակաս այդ թուից։ Եկրամսապահութիւնը նոր է մուտ գործել այստեղ, բաւականին յաջող փորձեր են եղել, և յոյս կայ, որ բռլորն էլ վարակուին այդ օգտակար պարապմունքով։ Կանաչք լու և օրինակելի կապերաներ ու գորգեր են գործում։ Առ

հասարակ Աղաւանաձորի կանայքը սովորութիւն չունին գաշտեարում բանելու, հունձ անելու ինչպէս միւս լեռնացին գիւղերում, օրինակ, Մարտիրոս, Ենկիջայ, Գնիշիկ և այլ գիւղերում, սակայն կալի մէջն օդնում են տղամարդերին ցորեն, և զարի ծեծելու ժամանակ: Աղաւանաձորցիները բնիկներ են, խօսում են հին հայոց լեզուով, ուստի և կրում են «հին հայ» տիտղոսը: Բնակիչների թիւը ընդամենը 980 հոգի է, որոնցից 450 հոգին արական են 530 հոգին իգական: 1886 թուին կազմում էին 97 տուն: Սաստիկ ուսումնասէր մարդիկ են. երկու տարուայ ընթացքում վիճեցին գրացի Արփայ գիւղի բնակիչների հետ միութասեան արքունական ուսումնարանը այնտեղից այստեղ փոխադրելու և երր չյաջողուեց, վճռեցին իրանք իրանց ծախսով բաց անել ուսումնարանը: Վարչութիւնը գնահատենով նրանց ուսումնասիրութիւնը և միենոյն ժամանակ մտնելով նրանց նիւթական աննախանձելի դրութեան մէջ, որոշեց տարեկան 700 բուբլի նպաստ յատկացնել այդ ուսումնարանին: Գիւղի օգը և ջուրը հիմնալի է, թէև մոծակներից գերծ էլ չէ: Հիւանդութիւններ քիչ են պատահում այստեղ: Բնակիչները առողջ մարդիկ են: Կան մի քանի տներ, որոնց մէջ 20—30 հոգի ապրում են միասին հաշտ և միարան: Կոիւներ քիչ են պատահում այստեղ: մինչև այժմ մի սպանութիւն է տեղի ունեցել, այն էլ ոչ թէ գիտմամբ, այլ պատահմամբ և ոչ թէ սրի կամ գնդակի, այլ փայտի հարուածով: Աղաւանաձորցիներին մեծ վնաս են պատճառում նրանցից չորս վերստ հեռաւորութեան վրայ բնակած Նամազալի գիւղի քրգերը, իրանց գողութիւններով:

Աղաւանաձոր գիւղը Եգոր Թառումնացի կալուածն է, որը բաղկացած է չորս մասերից, այսինքն Աղաւանաձորից, Բաղչաջնջից, Ղղղղաղից և Նամազալիից: Սրանցից Աղաւանաձորը և Բաղչաջնջը աղաւանաձորցիների ձեռքումն է, որոնք Թառումնացին վճարում են $\frac{30}{4}$ բահրա: Նամազալիում ընակւում են մօտանի ցեղի քրգերը, որոնք այս տարի պարտաւորուել են բահրա վճարել Թառումնացին նահանգական դատարանի վրանով: Ղղղղաղը, գտնուում է Արփաչայի աջ ափին, Աղաւանաձորի սարահարթի արևելահարաւային անկիւնում և բլունում է ընդամենն 600 գեսեատին տարածութիւն. նրա կէսը գնել են Թառումնացի Եգորից գնիշիկցի Օհանսեանները և Ուլիա Նորաշէնցի Մելիք Նազարեանցները. իսկ միւս կէսը պատկանում է Շուշիի Սուրբ Աստուածածնայ Աղուեաց եկեղեցուն, որին կտակել է Սարգիս Թառումնացը:

Ղղղղաղի հարաւային կողմը, Արփաչայի ձախ ափին,

Հէրթիչ թրքաբնակ գիւղի գլխին դեռ ևս իր աւերակներով կանգնած է շաքարաձև լեսան գլխին մի աւերակ ամրոց, որը ինչպէս կարծում են շատերը, պէտք է Անապատ բերդը լինի:

Ուզուրտ լեռը հարաւային կողմից իր գագաթի ճեղքուածքի վրայ ունի մի տափարակ հրապարակ, երեսը գարձրած դէպի արևելահարաւ, 4—5 վերստ հնուու Աղաւնաձորից: Այդ հրապարակի վրայ դրած է Աստուածածնայ կիսաւեր վանքն իր արձանագրութիւններով:

Արփա գիւղից մի վերստ հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս, Արփաչայի աջ կողմից սկսում է Զիվաձորը ու գնում է հասնում Դիգիվան և Սիշանլու լեռների բարձրութիւններին, որտեղից սկիզբն առնելով հոսում է Զիվա չայը համանուն ձորի միջով ու խառնուում է Արփաչային: Ամառները Զիվա չայը այնքան բարակում է, որ ջուրը չէ հասնում Արփաչային: Արփաչայից մօտաւորապէս 10 վերստ հեռաւորութեան վրաւ, արևելքից դէպի արևեմուաք, կտրում անցնում է դողլաղցու հասարակութեան միջով դէպի Երևանի գաւառը գնացող Դարալագեազի ճանապարհը *): Այդ ճանապարհից մէկ վերստ ու կէս դէպի հիւսիս, ձորի մէջ, կաթսայաձև բլուրների ծոցում, Զիվա չայի աջ և ձախ ափերին գրած է Ելփին գիւղը: Նրա կողքի ճանապարհովն են անցնում գարնանը շարուցիների և թափառական բրդերի կոչերը դէպի Այրիջայի արօտատեղիները:

Գիւղի տեսարանը թէն փակ է, բայց ընդարձակ է, կենապանատեսիլ, զարդարուած խաղողի այգիներով, բարդի և ուսի ծառերով, որոնք հիանալի կերպով աճում են այստեղ: Ելփինը գտնուում է Դարալագեազի և Երևանի գաւառի սահմանագծի մօտ: Այստեղից օր ու կէսուայ մէջ կարող է հասնել Երևան քաղաքը թէ ձիաւորը և թէ հետևակը:

Ելփինի բնակիչները գաղթել են Պարսկաստանի Սալմաստ և Սոմի գաւառներից. խօսում են սալմաստցիների լեզուով: 1886 թուի ընտանական ցուցակով կազմում էին 68 տուն, այժմ եղել են 110 տուն: Բնակիչների թիւն է 785, որոնցից 425 հոգի արական են 360 հոգի իգական: Պարապում են երկրագործութեամբ, անասնապահութեամբ, այգեգործու-

*). Այդ ճանապարհի վրայ, Ելփինի հարաւային կողմը գտնուում է այն վայրի տանձի ծառը՝ որը անուանուում է «Զնթռ աղաջի» Ամեն մի անցորդ, եթէ այդ ծառի ճիւղերից չկտրէ ու չփաթաթէ իր ցնցոտին Նրա վրայ, զանագան հիւսնդութիւններ և անյաջողութիւն կը գտնէ բնակիչների կարծիքով:

թեամբ, մասամբ ևս մեղուապահութեամբ։ Վարելահողերը բաւ-
ւարար չեն, ամեն մի հոգուն հասնում է 2 սոմար *) հող, մէկ
սոմարը ջրային, իսկ միւսն անջրդի։ Վարելահողերի պակասու-
թեան պատճառաւ հարկադրուած են ցանել Քեօմուրլու, Ար-
դարաս, Ալմալու և Հէշին գիւղի բնակիչների հողերը կիսա-
րար։ Համփայ գիւղացիներն այսուեղ 4—7 րես սերմ են ցա-
նում։ Ամառները արտերը ոռոգող ջուրը չէ բաւականանում,
ուստի ելփինցիները անընդհատ վիճում են ջրի համար Գենու-
լու գիւղի թուրքերի հետ։ Վարելահողերի կէսը ջրովի են,
կէսն անջրդի։ Հացահատիկներից ցանում են այստեղ, ցորեն,
գարի, մասամբ կորեկ, սիսեռ և ոսպ։ Տասն, տասն և հինգ բե-
ռան տեղ տարածութեան վրայ բռնում են խաղողի և այլ
պտղատու ծառերի անտառները. խաղողից լաւ գինի չէ ստաց-
ւում, ուստի նա միայն ուտելու համար է. Թէկ ամառուայ ա-
րօտատեղիները չեն բաւականացնում, սակայն անասնապահու-
թիւնը բաւականին յաջող է։ Մի տուն ունի միայն 200 հատ
ոչխար, իսկ մնացածները 60-ից աւելի ոչխար չունին։ Ել-
փինցիները գործում են ամուր խսիրից ջականեր։ Ջական
հնձում են Արփայ գիւղի մօտ գտնուած ճահճի սէղերից։ Այս
վերջին տարիները այդ սէզը չորանում է, որի հետ և կը սպաս-
ուի խսիր գործելը։ Խսիրը փոռում են թաղիքի կամ գորզի
տակ, որը պահպանում է նրանց խոնաւութիւնից ու վշանալ-
ուց։ Մի խսիրը գիմանում է մինչեւ տասն տարի։ Խսիրի հատը
ծախուում է 2—3 րուբլի։

Համարեա ամեն մի տուն ունի իր ջուհակի գործարանը,
որի մէջ ելփինցիները գարալագեացցիների հին սովորութեան
պէս կտաւ են գործում։ Ելփինցիների մնաւեսական դրութիւնը
բաւականին լաւ է և օրէցօր առաջ է գնում։ Տների մաքրու-
թիւնը, բարձրութիւնը և շքեղութիւնը՝ համեմատելով միւս
գիւղերի հետ՝ աչքի է ընկնում։ Ելփինցիները աշխատասէր, ա-
ռողջ և վայելչակաղդ մարդիկ են, ունին հինգ աղբիւր, ո-
րոնցից խմելու ջուր են վերցնում։ Շըջապատուած լինելով
քրդաբնակ Դաշ-Խարման և թրքալմակ Արդարաս, Ալմալու,
Գերալու, Վարդանիս, Հէշին և Քեօմուրլու գիւղերով, չէ ա-
ղատուու նրանց գողութիւններից, որոնց ելփինցիները ար-
քունական հարկերից աւելի գումար են վճարում։ Հարա-եօղու-
շի ճանապարհով անցնելիս՝ գալնանը քրդերը նոյնպէս նրանց
անպատճի. չեն թողնում։

Ելփինցիները գես ևս գերծ չեն իրանց՝ Պարսկաստանից

*) Սոմարն ունի 4 փութ 14 փունտ.

գտղթած հայրերի ոխակալութիւնից, Երկպառակութիւնից ու կուսակցական ոգուց, որի պատճառով շատ անգամ քծնում են շինական պաշտօնակատարի առաջ և մինչև անգամ նրա ստոր պահանջները կատարում, որպէս զի նրանց միջոցաւ ճշնշումն զործեն իրանց հակառակորդի վրայ:

Աղաւնաձորից հինգ վերստ հեռաւորութեամբ դէպի արեամուհարաւ գտնուում է Ռինստ գլուղը: Գիւղից մի վերստ ներքեւ հարաւային կողմից անցնում է արևելքից դէպի արևմուտ Դարալագեազի Երևան գնացող ճանապարհը:

Ռնտեցիները 1886 թուին 36 տուն էին, այժմ 50 տուն են եղել: Բնակլիչների թիւն է ընդամենը 501, որոնցից 283 հոգին արական են, 218 իգական: Այդ գիւղի բնակիչներն էլ հին հայեր են ու խօսում են հին հայոց լեզուով: Ղողջայու շինական հասարակութեան մէջ Ռինտը հայ գիւղերից ամենաաղքատ գիւղն է և այդ աղքատութեան պատճառը զլիսաւորապէս ջրի պակասութիւնն է:

Քանի Ռւլգուրտ լեռան բարձրութիւնների վրայ ձիւնը չէ սպառուել, բաւականաչափ ուսոգելու ջուր գալիս ու մատակարարում է Ռնտի գաշտերին երկու առուներով, իսկ երբ ձիւնը հալուում, վերջանում է, ջուրը խիստ նուազում է: Սրանից յետոյ Ռնտեցիներն օգտուում են երեք լճերով, որոնցից մէկը գտնուում է գիւղից վերև երկու վերստ հեռաւորութեան վրայ, իսկ միւս երկուսը գիւղի մօս: Հին ժամանակն ունեցել են մի ջրամբար, որը կարող էր փրկել նրանց այդ թշուառ գրութիւնից, բայց գժրախտարար այդ ջրամբարը խլել են նրանցից Ղողջայ գիւղի թուրքերը, որոնք ոչ իրանք են օգտըուում և ոչ Ռնտեցիներին են թոյլ տալիս օգտուելու: Հողը թէև յարմար է չալթուկ և բամբակ ցանելու համար, բայց ջրի սակաւութեան պատճառուա չեն կարողանում ցանել: Մօտաւորապէս վեց բեռան տեղ տարածութեան վրայ Ռնտեցիներն ունեն խաղողի այգիներ և այլքան էլ տեղ պտղատու ծառեր, զլիսաւորապէս ծիրանի, խնձորի և սալորի: Անձրեային տարիները հողը 1—6 հաց է տալիս: Գիւղի կէս մասը հաց ծախ են առնում: Վեց տներ լծկան տաւար չունեն, ուստի չեն կարողանում իրանց գաշտերը հերկել ցանել: Հարուստ անառնաէր չորս տներ կան, որոնք ունեն 50—60 դլուխ ոչխար և 6—7 տաւար. մնացածները պակաս այդ թուերից: Մեղուապահութիւնն ունի իր սակաւ բաժինն այստեղ նոյնպէս:

Աղքատութիւն, պանդխտութիւն, մօտաւորապէս տասն հոգի գնում են Բագու և Տփխիս մշակութեամբ փող վաստակելու Ռուսաստան գնացողներ չկամ: Առ հասարակ այս գիւղին մեծ վնաս են պատճառում Ղողջայ գիւղի հարուստ և զօրեղ թուրքերը, օրինակ հողերը խլում են, ցանքերն ու խոտանոցներն արածացնում, հնձած արտերից ցորենները գողանում ու տանում: Գողանում են նաև ինչ որ ճանկելն ընկնում է նոյնապէս էլ տիրում են Ռնտեցիների առուների ջրերին: Մի խոռովով ճնշուած Ռնտեցիների ու Ղողջացիների վէճն անվերջ է և միշտ գործը վճռում է զատաստանատներում վերջինների օգտին, որովհետև զօրեղը միշտ արդար է...

Արփաչայի ափին զետեղուած է Արփայ կամ Արափեայ գիւղը հին Արփայից *) ^{1/3} վերստ հեռաւորութեամբ դէպի հարաւ: Արփայի արևելեան կողմից գտնուած հեղեղատի ուղղութեամբ բարձրանալով գէպի վեր, Յ վերստ հեռաւորութեան վրայ կը հասնէք Հրաշկայ կամ Հրատեկայ բերդին, որն արփեցիները ճգնաւորի բերդ են անուանում:

Արփան 1836 թուի ընտանեկան ցուցակով կազմում էր 55 տուն, այժմ եղել են 80 տուն: Բնակիչների մի մասը գաղթել են այստեղ Երևանից, Բայազետից և Ղարաբաղից, իսկ մուացած մասը բնիկներ են, այսինքն «հին հայեր». խօսում են հին հայերի լեզուով: Ունի 554 հոգի բնակիչ, որոնցից 295 հոգին արական են 259 հոգին՝ իգական: Պարագում են՝ կրթագործութեամբ, անամնապահութեամբ, այգեգործութեամբ ու շերամապահութեամբ: Վարելահողերը սակաւ են այստեղ, այնպէս որ ամենից շատ ցանողը 4 բենից աւելի հացահատիկ չէ ցանում: Հողաբամբնութիւն տեղի չէ ունեցել այստեղ և չի էլ կարող ունենալ, որովհետև գիւղը կալուածական գիւղ է, հողերը ՍԵ-ՏԱՅԻ. ԻՐԱՄՈՒ-ՆՎ ինչպէս առաջոց ստացուած են, այնպէս էլ անփոփոխ մնում են, մինչդեռ կան բազմացած ընտանիքներ, որոնք կամ հող չունեն կամ եթէ ունեն էլ, շատ սակաւ: Օրինակ 10 հոգուց բաղկացած մի ընտանիք ունի 2 փթան տեղ, իսկ դրա հակառակ 2 հոգուց բաղկացած ընտանիքն ունի 15 փթան տեղ, կամ աւելի: Տասը տուն ունին բաւականաչափ հող, հինգ տներ ունին իրանց ընտանեաց հասնելիք հողից աւելի հողեր. մնացած բոլորն էլ հողի կարօտութիւն ունին: Արփայում գրեթէ բոլորն էլ հացը ծախու են առնում: Զրային հողերում հացը 1—7, իսկ անջրդի հողերում 1—5 արգիւնը է տալիս: 25 խա-

*) Արփան Դարալագեազի երկրորդ պատմական գիւղն է, Հողոցիմից յետոյ:

լուար տարածութեան վրայ ցանում են բամբակ և չալթուկ հերթով, այսինքն մի տարի ցանում են չալթուկ, իսկ հինգ տարի բամբակ, որը հնձում է տարին երեք անգամ։ Մէկ փութ տեղից ստացում է երեք փութ բամբակ, իսկ մէկ փութանոց տեղից քանի փութ չալթուկ։ Արփեցիք ստանում են տարեկան 1000—1500 փութ բամբակ ու վաճառում են 10,000—15,000 ըուբով։ Քոսան բեռան տեղ տարածութեան վրայ ունին խաղողի այգիներ, որոնցից ստացում է պատուական խաղող և գինի, որը գերազանցում է ամրող Դարալագեաղի գինիներից։ 10—15 տներ վերցնում են մինչև 40 փութ գինի։ 30 տներ սկսել են պարապել ջերմեռանդ կերպով շերամապահութեամբ. շերամը վաճառում են Նախիջևան քաղաքում։ Այդ տները 1—24 մսխալ սերմ են գնում։ 30 տներ ունին 100—150 հատ ոչխար և 15—20 հատ տաւար։ Արփեցիները ձեռք են բերել երեք տեղերում ամառուայ արօտահղիներից։ Քիչ տներ այստեղ պարտք ունեն, մնացողներն ապրում են ապահով զրութեան մէջ, ստկայն մեծ զրամագլխի տէրեր էլ չկան. 7—8 տներ ունին 200—400 ըուբի գումարներ։

Արփան պատկանում է Վերին Դանձիկ գիւղում և Զիվագիւղի թուրք բէկերին, վէրիներին, որոնց արփեցիները բաղերի տեղերի համար սոմարի տեղին վճարում են 1 ր. 20 կոպ. իսկ մնացած հողերից ստացուած բերքից $\frac{30}{4}$ բահրա են տալիս։ Վաղուց է որ քահանայ չունին ու չեն էլ հոգ տանում այդ մասին. հոգեոր տէտքերը կատարում են մերձակայ գիւղի քահանաները։ Գիւղի մօտ, գետի ափին ունեն մի պատուական աղբիւր, որից խմելու ջուր են վերցնում, բայց ըլժրաղղաբար այդ աղբիւրը երեք ամսուայ ընթացքում ծածկում է Արփաչայի հոսանքով։ Արփան Դարալագեաղի ամենաշոք գիւղերից մէկն է, որտեղ ամառը մոծակներն են թագաւորում, իսկ ձմեռը ցուրտը։ Բնակիչների $\frac{2}{3}$ մասի տներում գործում են գորգեր և կապերտները, որոնք ծախում են 10—50 ըուբրով. սրանց լայնութիւնը լինում է սովորաբար $2-2\frac{1}{2}$ արշին իսկ երկարութիւնը $4-4\frac{1}{2}$ արշին։ Այստեղ գործում են նաև բամբակից կապերտ, որոնք այն գերազանցութիւնն ունին, որ ամառները ցեցը չէ ուտում։ Արփեցիները ապրում են աւելի ճոխ և մաքուր, քան թէ Ղողջայու շինական հասարակութեան միւս հայ գիւղերը։ Բացի երկու երեք տներից, միւսները ամբողջովին առաջինն են Դարալագեաղում. իրանց անհիւրասիրութեամբ։ Արփեցիների անհիւրասիրութիւնն առած է գառել Դարալագեաղում, որի մասին զանազան անեկտովներ են անգիր գառել, օրինակ. մէկը իրիկուան դէմ նեղուած ցըր-

տից, գիշերից ու սովից դիմում է մի ջահիլ արվեցու, ինդրելով որ տեղ տայ իրան գիշերելու նրա տանը։ Արվեցին մերժում է. հիւրն այնքան թախանձում է, որ տան տիրոջ հայրը զիջանելով վերջապէս հիւրի թախանձանքին, հրամայում է որդուն նրա ծին քաշել գոմը. որդին կստարում է հօր հրաման ու փնթիւնթում. «Տէր Աստուած, տէր Աստուած. ախր տեսայ ոչ էլ էս գիշեր շունը մեր տաշտից մին հաց տարաւ; զու ասիլ մի էդ զոնաղը պիտմա գայ հացն ուտէ, էլլի»։ Այդ դրութիւնիցն է յառաջացել այն առածը, որ կրկնում են. «Արփիայ գէթզն չորսակ գեօթու, Արփադան չըխդն այադ գեօթու», այսինքն, որ Արփիայ գնացիր, հաց վերցրու հետդ, Արփիայից գուրս եկար, շտապիր համնել տունդ:

Պոանիկութիւնը նոյնպէս տարածում է այստեղ. քիչ տներ կան, որ ամեն մէկը մի բըգուհի հարճ չունենան. պատահում է այսպէս. ամեն մէկը քրդին վարձում են մշակ, իսկ կնոջը հարճ. Այդ պոռնկութեան պատճառով 1900 թուին գիշերը որախողսող եղաւ արփեցի մի ընտանիք։

Դոզլայու շինական հասարակութեան կառավարութիւնը և միուսնեան արքունական ուսումնարանը գտնում են Արփայում։ Հակառակ Թարլազեազի միւս հայ գիւղերի սովորութեան, այփեցիները զարմանալի համամիտ և միախորհուրդ են հանգիստանում գիւղի չարի ու բարու, ֆսասի և օգտի համար գործելու մասին։ Շնորհիւ այդ սիութեան՝ արփեցիները գրաւեցին օրինական կարգով Խաչիկ, Գնիշիկ, Հորբադդ և Այսասի գիւղերից ամառուան արօտատեղերից, որոնց գրկեցին իրանց՝ ամառուայ շոգի ու կրակի մէջ տապակուող իրանց մատաղ սերունդը իրանց տաւարն ու ոչխարը։ Արփեցիները իրանց զիւանազիտութեամբ մաքառելով իրանց կալուածատէր թուրք բէկերի Նէքիլովների և միւս հարևան գիւղերի հետ, միշտ յաղթել են նրանց դատաստանական կարգով և ահ են տարածել բուլորի վրայ։ Դրա համար բոլորն էլ այն համոզմունքն են գոյացրել, որ նրանց հետ վիճելն անօգուտ է։

Միքայէլ Տէր-Աւետիքեան

ԴԱՇՍՈՒՄ

Ամրան տօթ օր է: Օդն անշարժ, խեղդուկ.
Վերից անխնայ արեն է կիզում.
Եռում է հունձը: Գեղջկուհի, գեղջուկ
Ռսկի արտերում խուրձեր են գիզում:

Դիզում են անխոնջ, զուարթ, յուսալից,
Խընդում, քըրքըջում, հանաքներ անում.
Վտակի նման, այրուած գէմքերից
Քըրտինքն է թորում ու շոգիանում:

Եւ խորթ է նրանց թուլամորթ տըրտունջ,
Ոյժն է անըսպառ բանուկ ձեռքերում.
Այնտեղ վասակն է արդար, սիրաշունչ
Մարդկանց սիրտ տալիս ու ոգերում...

Գըթառատ երկինք, որ լոյս—հայեացքով
Նայում ես երկրի մըշակի կեանքին,—
Այդ կեանքը լի է հազար զըրկանքով,
Մի թող դու նրան կարօտ քո ինսամքին...

ԱԼ. ԺԱՄՈՒՐԵԱՆ

ՈԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԵՐԸ *)

Քանանեան:

Եթէ Նալբանդեանին յանձնած նամակս ստացել ես՝ի
հարկէ որ զարմացմունքից զարմացմունք պիտի մտնես. մէ՛
որ Նալբանդեանին նամակ եմ հաւատացել, երկրորդ՝ քու եր-
կու զուգամա նամակներուդ մի ծիկլօ պատասխան եմ գրում.
Վերջինը հասկանալի է առաջինով. Նալբանդեանի անհամես-
տութեանը նայելով՝ վախեցայ տալ նորա ձեռ նաև այնպիսի
նամակ, որ չէր այնքան ծանրակշիռ. բայց խնդրեմ, որքան
կարելի է շուտ ուղղես իմ սխալը, ես միանդամայն մոլորուե-
ցայ, երբ որ տուր նորան իսկանդէրի նամակը դէպի այժմուայ
թագաւորին, որ նա ձեզ հասցնէ. խնդրեմ հէնց այս զիրս
ստանալու բոպէդ երթաս նորա մօտ (թէկուզ ջահաննամի մէ-
ջը) որպէսկիցէ հնարքով առնուս այն վտանգաւոր ձեռագիրը.
թէ չէ նորա ձեռին այն չար գործի է. և ինձ միամտացնես: Նալ-
բանդեանի այստեղ գալու պատճառը ըստ ամենայնի ինձ յայտ-
նի չէ: Բայց ինչպէս որ ինքն է ասում՝ իբր թէ թէվիլիօնից
մայրեր առնելու համար է եկել. ինչ և իցէ, բայց դու աչքերդ
բաց պահիր. այդ թէկ ազգասիրական խնդիր է, բայց մեր
կորստեան գուան է. լաւ էր, եթէ մի ուրիշ մարդ, և ոչ Նալ-
բանդեանը ձեռնարկէր այդ սրբազն ձեռնարկութեանը, բայց
վերջինի համար... ի՞նչ պահեմ. մնացածը կը հասկանաս. առելս
այն է, որ չի քննէք:

Սանասարովի խոստմունքը խոստմունք մընաց, կարծես
թէ կատարումն չի ստացաւ. իդմիրեանցը եկաւ այդտեղ, բայց
չիմացանք, արդեօք ի՞նչ խօսեցաք նորա հետ կամ ի՞նչ պա-
տասխան ստացաք նորանից: Նորան մի ասէք, բայց մեր մէջ
մնա. այս թշուառ 40 մանէթը ինձ 60 մանէթի վնաս արտ. պատճառ որ այբբենարանը ինձ նստում է իւրաքանչիւրը 22^{1/2}-
կոպէկ, ուր մնաց որ նորա պէս հարուստ մարդը ինձանից

*) Տես «Մուբա» № 2—3.

այդպէս արժան գնէր, ի հարկէ որ ևս ստիպուած չեղայ այդպէս ցած գնի. չարաս ի՞նչ էր. Գ. Բ. 2 թուահամարից 9 երես շարուած կեցած է, ույս ո մօրք, յանու պօդը կամ որէցօր աւել սաստիկ պահանջում է կամ ծառայութեան մտնեմ, կամ դուրս գամ համալսարանից կամ ուսանող լինեմ. ասավիճին պատասխանս այն է, որ գտատարկ տեղ կամ պաշտօն չի կայ. երկրորդին՝ որ ուզում եմ օգտական քաղաքացի լինել, երրորդին՝ չբաւոր եմ, շորեր կարելու միջոց չունիմ. թէն ամեն չքմեզութիւններս էլ արգարացի են, բայց կամայ ակամայ պէտք է մի հնար գտնուի. միտքս ծառայութեան մտնել է: Աստուած չուզէ որ մինի բանը ծոռւի՝ հաւատացնում եմ, ոժուար կարելի է այնուհետեւ ուղղել:

Եթէ պր. իզմիրեանցը համոզվում է տալու այն 150 մանէթը—խիստ լաւ, թէ չէ, միտը ձկէ, որ 200 հատ օրինակը ևս չեմ կարող իմ ծախսով ուրեիցէ ուզարկել. ուրեմն—ճամբու ծախս (?). երկրորդ՝ նա ստորագրուել էր 30 հատ տաղարանի —18 մանէթը գեռ ևս չի տուել:

Անցեալ նամակումս, որ ես քեզ համալսարանումն էի գրել՝ մի հարեանցի բան ակնարկեցի, որ բաւական մութ ասացի. այն մասին գուցէ գուք երկմտութեան մէջ լինիք այժմ. այժմ ժամանակն է, որ բացայացտեմ. Նիկոլեան զանազան առունին համնգամանքների պատճառով՝ չի ուզում միանգամայն տպարան ունենալ և այս մօտ 600 մանէթի տառերը և ուրիշ տպարանի հարկաւոր գործիքները քառորդ գնով ուզած ժամանակ որպէս եիցէ տպարանապետի վաճառել, որ ես այնուհետեւ այս մարդու հետ գործ ունենամ: Ես տեսնելով որ նորա պահանջած գումարը համեմատելով արժէքին՝ միանգամայն չնշին է, և չուզելով կորցնել այն աշխատանքը, որ ունեցել եմ 5 ամիս նորա վրայ՝ անպատճ թողնել՝ հազար ու մէկ համոզմունքներով կարողացայ յորդորել, որ ինձ 3 շաբաթ ժամանակ տայ, գուցէ ես կարողանամ այդ գումարը նորան հատուցանել և տպարանը իր ամեն յարմարութիւններով մեզ սեպհականացնել. յոյսս, ի հարկէ որ, դարձեալ գուք էիք: Այս մասին լաւ միտք արէք. Աստուած զգալի կերպով մեզ օգնում է. եթէ այս գիւրին հանգամանքից էլ չի կարողացանք օգուտ քաղել, և եթէ մեր ձեռից թուչի գնայ մեր տարեկան illusia-ն, այն ժամանակ ոչ ոք մեղաւոր չէ մեր անյաջողութիւնումը, եթէ ոչ զարձեալ մենք: Եթէ այս թեթև պայմանը յայտնուի ում և իցէ՝ իմացէք որ ամեն մարդ էլ կ'յօժարի ձեռք բերել մեր տառերը, մենք կ'մնանք դատարկ և աշխարհի առաջ խայտառակած: Էլի պլոտի ընկնինք

դրնէ գուռ, որ մեզ ինչպէս ողորմութիւն ծանր գնով տպեն մեր չորս հինգ տող բանը հազար մուննաթով։ Տեսնում ես, նամակս սկսեցի և վերջացնում եմ, ինչպէս որ ուզում ես, առանց առաջաբանութեան, հասկացիք ուրեմն, իմ եթէ ուզես, նաև ձեր նեղ զրութիւնը. ամեն հնար գործ ածեցէք օգնելու հասարակաց օգտին. Խ ՀԱ ԽԵՏԻ և ԶԱԿՈՆԻ ԽԵՏԻ։ Ահա ձեզ դիպուած ցոյց տալու սէրը, զոհը, հակամիառութիւն ազգին, ինձ և բարի գործը. Ես չեմ գրում այժմ ձեր առ ձեռն պատրաստ հնարները. Եթէ չօգնէք, եթէ իմ $\frac{1}{2}$ տարուայ վաստակը ունայն կորչի, եթէ ես մնամ ամենից անօգնական, այն ժամանակ կասեմ, մտերդ կը բերեմ՝ ի՞նչ կարող էիք անել եւ չարիք, որքան դիւրին էր ձեզ հասցնել ձեր օգնականութեան ձեռը բաղդի նախապաշարմնեց նետ քաջ կորող բարեկամին ու դուք մնացիք անզգայ հանդիսատես նորա անկմանը եւ վերջի շունչին. ժամադրած Յ շաբաթից 5 օրը անցել է. գորանով կտրում ես խօսքա:

Մնամ ձեզ միշտ սիրող խոնարհ Ռափայէլ

Յ. Գ. Ես էգուց փոխում եմ բնակաբանս. նամակը ուղղեց Ձեք вольнослушателю Բ. Պ. Յնի Ս. Պ. Յնի պատճառ։

5 Մարտի 1856 թ. Ա. Պ. Բ.

Սիրելի Գէորգ,

Յուսամ, որ Նալբանդեանի ձեռքով ուղարկած նամակս ստացած լինիս. նորանից յետոյ՝ երեկուայ գրած նամակս. վրաստահ եմ, որ քեզանից կախած հոգացողութիւնը արիք և ինչ որ պէտք է այլես կատարել անյապաղ կ'կատարես և ինձ կը միամտացնես. ասել եմ, այժմ ասածս էլ գրեթէ աւելորդ է, որ դու ես միայն իմ յոյսը. քու չէ՞դ ինձ կ'չորացնի, կ'ոչնչացնի. ասէմ աւել. բայց չէ. գու լաւ գիտես, որ միայն անձուկ և յուսահատ զրութիւնը կարող էր թելազրել ինձ գրելու իմ վերջընթեր նամակը. թէ չէ մի՞թէ ես քեզ կուզէի մտատանչութեան և անյուսութեան մէջ ձգել. Ստացա՞ր Նալբանդեանցից իսքանդէրի նամակը դէպի կայսը. թէ չես առել տակաւին՝ գտիր մի հնար անշուշտ առնելու, որ միամտանամ. Դու վտար մանաց մէջ ընկել ես սպոտիմներու մասին, որ ինձ կարի հարկաւոր է. այսպէս արա. գնա Գոտիննայ դար որ ծախում

են ներկեր, վրձիններ և այլ հարկաւոր առարկաներ նկարչութեան, հարցուր այնտեղ հիմի. տաք կամ շերիլա. կտորը 40—60 կոպէկ արժէ (այն, որ ես քեզ տուել էի կարծում եմ որ փշացած լինի) այդ տաք-ը հասարակ ներկի պէս տրորել տուր գրողին. յետոյ քիմիական թղթի դեղին երեսին թող գրէ որոված. 1) ա. բ. գ. և այլն խոշոր ա. բ. գ. այսպէս (ի հարկէ աւել գեղեցիկ) յետոյ 2 երեսումը իսկ այդպէս տառերով միավանկ բառեր ազգ, բան, զործ, գուան, երգ, զօրք, էջ և այլն. 3 երեսումը նոյնպէս այդ տառերով Հայր մեր կամ մի ուրիշ հոգեւոր իմաստ. 4 երեսումը խոշոր (բայց ոչ առաջներու պէս) տառերով աւետարանական խրատ. հինգերորդումը նոյնը փոքր ինչ, եթէ կարելի է մանր և բարակ, վեց և եօթներորդումը ձեռագիր կամ արագագիր, ութներորդումը գլխատառեր Ա. Բ. Գ. և այլն ձեսագիր և տպած ձեի և սիրուն տառեր, եթէ տեղ կ'մնայ. այս է բոլոր պոադիսը. բայց ինչ որ անելու ես շուտ արա. ժամանակը զնում է առաջ, զու գիտես որ ես միայն արագ շարժելով կարող եմ ուղղել իմ գործը, որ հապար ու մէկ վայրահաջաների խօսքով և գործով անմիկնելի կերպով յետ ընկաւ. Ասսուած հաւատա, որ գլխումս մի բան ուղիղ, ճշտիւ չի մնացել, ինչ որ կայ՝ բոլորը շփոթուած, խառնուած է. զրիչը առի ձեռս, որ քիչ մի ազգու նամակ գրեմ, տեսնում ես իո ինչպէս ազգու է նամակս. ոչ այլ ինչ, եթէ ոչ կրկնութիւն առաջուայ գրածներուն. բայց համալսարանից գալիս. ինչե՛ր չէին անցնում մոքից. բոլորը կորան գնացին ինչպէս մի երազ. Զարմանալու բան էլ չէ. մի կողմից համալսարանի զըլշացաւութիւնը. հա, ես քիչ մնաց որ մոռացայ քեզ ասել. Մուսինը հրամայել է թղթերս յետ տալ և այլս ինձանից աղերսագիր չընդունել. ես դէս-դէն ընկայ. նորից գնացի իրա մօտ, չէր ռւզում ինձ ներս ընդունել. բայց չգիտեմ ո՞ր խաչից՝ ողորմաց և ըարեհանցաւ լսել իմ արդարութիւնը: Ես սրտանց յօժար եմ, առացի, կամ ծառայել կամ ուսանող գառնալ, բայց մի հասկացէք իմ նեղ զրութիւնը է. աւելի ընդարձակ պատմեցի, ինչու չեմ կարող ուսանող լինել՝ փողի կարօտութիւն կրելով: Մինչեւ այժմ ինչնիվ էիք ապրում, ասաց: Թղթեր դուրս դրելով, սուտ ասացի նորան: Հիմնուց դէնը ինչնիվ մոռագրել ես ապրել աւելցուց: Կարծեմ նմանապէս ասացի: Լաւ, գնա. կ'տեսնինը էր նորա լակոնիկական պատասխանը: Սիրտս լցուած դուրս գնացի. յանկարծ վաղեց քամակից նորա ատենադպիրը. մի վհաւտէք, պարոնն ասաց. զուցէ լաւ վախճան ունենայ ձեր գնալզալը, այսօր նորա քէֆ տեղը չէ. որդու մասին էլի մի վատ համբաւ. է լսել երկի, որ այդպէս անարկու է: Միւս կողմից՝

մի քանի առտնին անրաւականութիւններ. հազար ու մէկ ցիցի փիցի գործեր, խօսքեր, որոնցմէ իւրաքանչիւր մինը կարող էր ամենահաստատ մարդու հսնգատութիւնը վրդովիլ: Է՛հ, Է՛ս, թողնենք այս կենաց սև կողմերը. Ք՞ո. վկայ կեանքս մաշուեցաւ գոցանից:

Նալբանդեանին ես այստեղ խոստացայ վախլոպոտած օրագիր «Հիւսիսայդ» անունով. գորա տրիտուրը նա ինձ խոստացաւ 300 մանէթ. բայց վայց թէ ես բանը սկսեմ, նա ինձ կամ գլուխութեամբ կամ անգիտութեամբ, չուզենալով խարէ և կասկածելի գրութեան մէջ ձգէ: Ես վախլոպոտած ասելով՝ ոչ թէ շատ պիտի քաշ գամ դէս դէս, և գրա վարձը ստանամ, աչ այլ ունիմ այստեղ Մին. Նарод. պրօ. չինովնիկներ, որոնք կ'անէին ինձ համար այդ բանը. բայց եթէ գուրս համեն այդ դըժուար գործը՝ անկարելի բան է որ մի կերպով չի վարձատրուին նոքա գոնէ կողմնակի, զոր օր քեզ յայտնի Դօքօվօլքին. նա այնտեղ ստուօնաչալինիք է. նորա ձեռից շատ բան կ'գայ. ես նորա ատագոված անում եմ նորա կնկանով և մաղամ կօսելով. կայ հնար, որ այս երկու սիրունների վրայ բանը պրծնելից յետ մի 100 մանէթ չի միսսեմ comme un galant cavalier. բայց նալբանդեանի բարեխողճութեան վրայ յուսալը դժուար է. նա իրաւունք ստանալը կը ստանայ. բայց խոստմունքը կատարելու ժամանակ... Այս մասին խօսիր զու աւելի պարզ կերպով առաջ նորա հետ, յետոյ նազարեանցի, եթէ լաւ կը համարես. և մինչև զու մի բան չի գրես՝ ես տեղիցս չեմ շարժիլ:

Սպասում եմ իմ ամեն ինսիրներու վճիռը և պատասխանը:

1856 թ. մարտի 10-ին:

Սիրելի եղբայր Գէորգ.

5-ին մարտի ուղարկած նամակի ստացայ ն. ամ. 11-ին. ստացայ նմանապիս 30 արծաթը, անչափ ջնորհակալ եմ, որ ազդու խօսելովդ հասար այն ոէզուլյտատին, որին չի հասաւ ազդու նամակդ. մեզ այդ էր պէտք. կ'նշանակէ այժմ տպարանը ապահովեցաւ. բայց ոչ խեղճ Դ. Ք. Բ. Ն կամ փոխադարձ: Ես քլ. լայտնել էի վերջընթեր (որեպութիւն) նամակումն Նիկոլեաի մտադրութիւնը. նա առտնին հանգամանքներէ բռնադատուած և անհանգստացած վճռականապէս ուզում էր երթալ ֆրիգրիֆսոնի մօտ և չնշին գումարով ծախել բոլոր Հայոց և Ռուսաց տառերը. բոլոր տպարանական կահ կարասիրը, ու Ապրիլ, 1905.

բոնց վրայ նա նշանաւոր գումար էր գրել և ես գրեթե կէս տարուայ ամէն օրուայ աշխատանք ու հոգացողութիւն. ես կարողացայ յապաղեցնել նորա կատարում՝ խնդրելով 3 շաբաթ ժամանակ, որից անցել է արդէն 11 օր. իսկոյն քեզ գրեցի, որ նորա պահանջած 150 մանէթը ժամանակ չկորցրած քարից էլ ինչի—հանես. ինչպէս էր իմ զարմանքը, որ դու այն նամակը չես ստացել, որ իմ հաշուով արդէն ստացած պիտի լինէիր, կամ թէ ստացել ես, եթք որ նամակդ ձգել ես նամակատուն. եթէ այդ գումարը չի հաստուցանենք ժամանիր օրուան, ես քաջ գիտեմ որ Նիկոլեան թէկ սիրաց տրորուած՝ բայց ասածը կ'անէ. այն էլ մեծ զոհ էր նորա համար, որ 3 շաբաթ ժամանակ տուեց. ուրեմն՝ այդ լուրը, որ դու ինձ տուիր՝ ի հարեկէ, ինքը ըստ ինքնան ուրախացուցել է, բայց ինչ պիտի լինեն մեր աշխատանքը և հոգացողութիւնը և յոյսերը, որ մենք ունինք Հայոց տպարանից, եթէ այն Հայոց տպարանը կորչի մեր ձեռից. համաձայն ես, որ 120 մանէթը, որ պիտի ստանք կտոր առանց այս մեր տառերուն՝ ոչինչ բան է, եթէ համեմատենք այն զրութեան հետ, եթէ ինչէր այն մեր ձեռը սեպհական տպարան ունեցած ժամանակներս. Ո՛չ խնդրել համարձակում եմ քեզանից (իմանալով քու թուրութիւնն ու չքաւորութիւնը) ոչ համողել և ոչ գանդատիլ, թէկ առաջի նամակումն փոքր ինչ տաք գրեցի գուցէ և վիրաւորեցի ձեզ (մեղայ). բանը մեկնում եմ պարզ կեցողով ու պաղ արիւն, 10 օր ժամանակ ունինք. 10 օրից եթէ օգնութիւն չի համի՞ ամեն բան կ'ցըուի, կ'փարատի, մենք կ'մնանք արամամերկ և խայտառակած. Ինքդ էլ տեսնում ես որ այստեղումը ոչով մեղաւոր չէ, եթէ ոչ մեր անփողութիւնը. այս նեղ գրութեան մէջ պէտք է ցոյց տանք մենք մեր խելքը և այն ոգույ ներկայութիւնը և անձնաղութիւնը, որ ուրիշների մէջ տեսնելով՝ մենք զարմանում և զովում ենք: Ինչպէս որ դու կարողացար աղղել իզմիրեանցին՝ ի հարկէ ևս չէի կարողանալ. նմանապէս եղբայր Մնացականի ձեռումը կայ մի քանի միջոցներ, որ ժամնանակն է արդէն՝ ի գործ դնել այս օրհասական ըոսէին. Աստուած չանէ որ բանը բանից անցնի՝ այն ժամանակ ախ ու վախը, ափսոսանքը, չքմեղութիւնները՝ ի զուր են. նա շուտով ընթացքը աւարտելու է. նորա քոէդիթը մերինից ընդարձակ է. միթէ ամսնարին բան է նորա համար դէսից դէնից այն 150 մանէթ փողը ժողուածել. վարձը (պարտք տուողը)՝ անշուշակ պատահայ Գ. Քաթիպայի, տպուելու այբբենարանի և տաղարանի ծախսից. եթէ Թիմուրեանցը ջերմեռանողութեամբ կաչի՝ բանը կ'ուղուի, թէ չէ ծոռած կ'մնայ, ինչպէս որ է ներկայ

լուպէիս. Ուրեմն՝ կայ յոյս, որ քեզանից կամ թիմուրեանից ստանամ 150 մանէթ. թէ ոչ, թուչ խօսքս երկարացնեմ՝ բանը յայտնի երևում է. եթէ միջոց ունիք, հասկանում էք գործի ընթացքը՝ լաւ, թէ չէ զուք իզմիրեանցը չեք, որ ձեր վրայ ներգործեմ ազգու նամակներով: Գ. Ք. երկրորդ տիպը շուտով (այսինքն մի շաբաթուայ միջոցումը) զուքս կ'գար, եթէ այրը բենարանը աւարառելու չինէր. այժմ վերջինից շարած կայ մօտ կրցլիմ ԿИСЛОМ 70 երես. ինչպէս թողնեմ այդ կիսակատար և ձեռքս խփեմ նոր գործի. մինչև քո պոոպիուը հուցներ՝ Աստծով պատրաստ կը լինի և այս (կարծում եմ 13—17 օրից): Զեղ յայտնի է որ ևս Ք. օգուտ չունիմ, որ կարողանալ աղանդովացնել ինձ մի կերպով. յոյս աւել նորանից անկախ գուքս գալու իմ աշխատութիւններս ևն զոր օրինակ այդ այրբենարանը, տաղարանը, մի Հայոց ոօման, կաւկասի ստորագրութիւնը, որոնք interval-ներումը միաբ ունեմ տպուել և գորանցով շահուել. ուստի՝ ևս չի պիտի քամահեմ այդ մանր (ըստ երեսութին) գործերը, որ իմ օրական հացն են: Համալսարանական վիճակս դեռ ևս անվճիռ է, թէև համարաբան վնում զալիս եմ. ախըր ինչպէս նորից հագնեմ ուսանողական զգեստ 24 տարեկան հասակումն և լյամկ տնայի այն ջահիլ տղերքի հետ, որոնց քնքուշ պոչներից գեռ ևս չի չորացել մօրը կամ աւել ճիշտ, ծիծմօրը ծծի կաթը: Չորրորդ շաբաթը մեծ պասին մենք ազատ ենք, կարելի՞ է որ այդ միջոցումը գտնեմ յանջողակ զիպուած գէպի ձեր կողմը գալու նիկոլեախ հետ, որ անցեալ և այս ամիս սաստիկ զբաղած է ճեմարանական ողարապամունքներով: Մեր մէջ մնայ՝ նա մի փոքր տարածայնութիւն ունեցաւ մօրքը հետ մի չնչին գործի համար, որի հետևանքը այն եղաւ որ անեցիք առ հասարակ թէ մօրքոյը, թէ փեսան և թէ քոյլը՝ բարկացել են գորա վրայ. ևս չի կարող այդ տեղումը անգործ հանդիսատես մնալ. պարտքս և ճշմարտութիւնը պահանջում էր ինձանից նիկոլեախ կողմը բանել. ուրեմն պէտք էր որ անհամածայն լինէի նոցա մանր և պետիլինայ պահանչմունքների դէմ. ահա 18 օր է նոցա տուն ոտս չեմ զնում, թէև քանիցս կանչեցին թէ բերանացի, թէ գրով: Քու բարել հասցնում եմ երկրորդի միջոցով կամ նիկոլեայով, կամ քրոջմով, եթէ գալիս է մեր մօտ: Փեսան ինչպէս նկատում եմ ինթրիգանթ է. բայց սաստիկ սխալում է՝ կարծելով որ տանը մէջ զլխառը պիտի լինի՝ մեզ երկուսիս երկրորդ կարգը ձգել ուղելով. անիրաւութիւն է նորա կողմնէ. իսկ մեր յիմարութիւն՝ եթէ այդ առանին պատերազմի դաշտումը առանց կոռեխ խոստովանենք նորա աւագութիւնը հէնց էնտուք համար, որ

նա գնդապետ է. երանի չէր այն ժամանակ, երբ որ նա չի կար, մենք վայելում էինք այս խօսքի բառական իմաստով խաղաղ եւ երանաւէտ առտնին կեսանը; Բարոյապէս՝ մեր անունը չի բացուելով և քոնը՝ և յիշատակը անրիծ և մաքուր է ամենի առաջ:

Քրիս ինդիրքդ Եւրէինովի համար:

Քու Ռամիայէլ:

Սիրելի եղբայր Թիմուրեան.

Ստացայ նամակդ, որ վերահաս քննութեանդ պտտաճառաւ սովորութեանդ հակառակ՝ խիստ կարճառօտ էիր գրել. իրաւունք չունիմ մեղադրելու, այդ էլ մեծ զոհ է այս նեղ և հարկաւոր ժամանակումդ. Աստծով որ գործդ կ'աւարտես (որ իմ միակ իղձն է) այն ժամանակ երկար կ'գրես, գորա համար էլ խիստ շնորհակալ եմ. յայտարարութիւն ես պահանջում, ահա քեզ այս. Քանանեանցը կ'աշխատէ ուսւերէն թարգմանելու, եթէ հարկաւորութիւնը կ'ստիպէ. բայց թէ ինձ հարցնեո՞ աւելորդ է. Գ. Քաթիպա ունենալ ցանկացողը՝ պիտի իմանայ հայերէն կարգալ, հայերէն չիմացողը՝ չի ուզենալ ստորագրուել մեր աշխատութեանը: Ինչոր պէտք էր՝ այս նամակումը գրեցի Գէորգին, քեզ կրկնելը աւելորդ եմ համարում. եթէ խղճատանքդ թելազրում է քեզ—անշուշտ կ'հասցնես ձեռքիցդ եկած օգնութիւնը և ինձ կասկածելի գրութեան մէջ չես թողնիլ. թէ չէ դարձեալ աւելորդ է խնդիրքը և համոզմունքը. բարեկամները կապուած պիտի լինին մի պինդ հանգոյցով. այդ հանգոյցն է—մի բարի նպատակ, մի սուրբ խորհուրդ. այդ նպատակը և խորհուրդը պիտի ճշմարիտ և արդար լինին. եթէ այդ արդար նպատակումը մեր կարծիքը համաձայն է՝ մեր բարեկամութիւնն էլ հաստատ կ'լինի: Պատճառ որ որեկիցէ գործումը երկու ճշմարտութիւն չեն կարող լինիլ, ինչպէս երկու կէտի մէջ երկու ուղիղ զիծ չեն քաշուիլ: Վանիւշը տողեց պրծաւ Գրիգոր Լուսաւորչի պատկերը. շուտով կ'ստանաք: Միթէ Անանիա Սուլթանշահի խոստմունքները միայն խոստմունք մնացին. ինչպէս որ նորա հօրեղօրը՝ այստեղումը. ասել և անել,—ինչ տարբերութիւն կայ ու և ն տառերու մէջ: Նորա մօտ իմ կարծիքով, պիտի լինին 50 օրինակ առաջի Գ. Ք. Ներից. նա այստեղ եղած ժամանակ ինձ ասաց, որ բոլորը ծախել է, միայն մի քանիսի փողը չի ստացել. թէ չեմ սխալում՝ նաև ուզում էլ փողի մի մասը ինձ այստեղ տալ, ես

Հառի, ասելով որ բոլորը միասին կ'հասցնէ: Մարդիկ, մարդիկ՝
Մինչև կըկին տեսութիւն.

Մնամ սիրելութեամբ միշտ սիրող և յարգող
Ուսիայէլ

1856. մարտի 11.

Յ. Գ. յայտարարութիւնը ուշանում է, յետոյ կ'ստանաք,
նորա փոխարէն ուղարկում եմ ձեզ իմ պատկերը լուսատիպով
հանած. չափազանց նման է, ասում են տեսնողները, թէև ե-
րեսս տիրագէմ է:

Յայտարարութիւն:

«Գամառ-Բաթիպայի աշխատութիւնների» առաջին թուա-
համարի յառաջաբանութեան մէջ ևս պարզօրէն յայտնեցի
պատճառը, որ ինձ ստիպեց լոյս ընծայել իմ գրաւոր աշխա-
տութիւնները: Երբ որ իմ ըանասէր Հայրենակիցները սիրով
ընդունեցին այդ թոյլ վաստակը՝ հարկը պահանջում է, որ ևս
ուշըս գարձնեմ դէպի այն, որ արդարանայ նոցա ակնկալու-
թիւնը: «Գամառ-Բաթիպայի» յառաջադիմութիւնը աւել պատիւ
է անում Հայոց ընթերցասիրութեան, քան թէ իմ քանքարին:
Հայը կարօտ է մատաւոր զրօսանքի, նա գիտէ, որ ինքը «ազգ»
է. ուրեմն՝ պիտի ունենայ ազգութեան ամենապլիսաւոր պայմա-
նը, առանց որին ազգը ազգ չէ, այլ խուժան, խաժամուժ, այդ
սլայմանը—մի ընդհանուր և ամենուն հասկանալի լեզուն է: Հի
մի օրէօր սակաւանում են «գրաբառամոլների» թիւը, որոնք
Եզիպտացւոց քուրմերի նման սեփականացրել էին իրանց բո-
լոր. գիտութիւնները և արուեստները՝ անմատչելի անելով
ժողովուրդի համար զիրը և տպազրութիւնը: Հիմի ամենն
էլ գիտեն, որ գիտութիւնը սեպհականութիւն չէ միայն
ընտրելոց, այլ համայն ազգի և մարդկութեան: Ժամանակն է,
որ Հայն ունենայ գիտութեան գլխաւոր միջոցը, որ ինչպէս ա-
սացինք՝ զիրը և տպազրութիւնն են:—Այս երկու թուահամա-
րը, որ մենք մեր զօրութիւնն չափ կարողացանք լոյս ընծայե-
լու՝ ինչպէս տեսնում ենք—զանազան անձանց վրայ զանազան
ներգործութիւն ունեցաւ. այն բարեմիտ մարդիկ, որոնք գի-
տեն զանազան լեզուներ, ուրեմն՝ ունին միջոց կարգալու զա-
նազան գրեանք՝ նորա ընդունեցին ներողամտութեամբ և վե-
հանձնութեամբ, որ պատիւ է անում նոցա ազնիւ հոգուն, ու-
րիշները, որոնք այնքան գիտակ չէին լեզուներու, և այդ պատ-

ճառաւ գրեթէ զրկուած էին այն վայելչութիւնից, որ տալիս
է մեղ ընթերքանութիւնը՝ այդպիսիները ընդունեցին ուրախու-
թեամբ, բարի և մեծ յոյսերով. բայց կային կամ տարաբախ-
տաբար—գտնուեցան նաև այնպիսիները, որոնց համար աշ-
խարքում չի կայ մի սրբազն բան, մի վեհ զգացմունք, մի
բարի նպատակ կեանքումը՝ որոնք ամեն տեղ, ամեն զործումը
ընտրում են բանի վատ կողմը, մարդուս և նորա վարմանց,
ինչպէս ասում են սեւ կողմը, որ կարողանան իւրեանց անսանձ
բերանին և անդործունեայ կեանքին նիւթ դանել՝ այդպիսիները
իհարկէ դտան մեր սիստները, որ մենք արտաքոյ մեր բարի կա-
մաց արինք errare humanum est, ասած է մեղանից շատ առաջ.
Թող նա ձգէ մեր վրայ քարը, որ ինքը անբիծ է. ահա մեր
բարեխառն պատասխանը այսպիսիներուն:

Մեր բարեկամները թէ մօտի և թէ հեռաւոր՝ թախանձա-
րար ինպրում են որ մենք անզուլ շարունակենք այս բարի նը-
պատակով սկսած ձեռնարկութիւնը Յօժար ենք և պատրաստ
կատարելու նոցա աղնիւ ցանկութիւնը: Առաջի թուահամարու-
մը մենք յայտնել էինք, որ մեր գլխաւոր արգելքը շարունա-
կելու—մեր չքաւորութիւնն է: Բարեկամներս յանձն առին
հեռացնել այդ գժուարութիւնները խորհուրդ տալով մասնաւոր
ստորագրութիւն բանալ և յայտնել իմ պայմանները:

Այդ նպատակով ահա զրում ենք այս յայտարարութիւնը և
մտադիր ենք կանխիկ հաւաքած գումարով ստանալ միջոց ա-
ռանց գժուարութեան և անարգել հետզետէ լոյս ընծայելու
Գ. Ք.-ի թուահամարները, ընդարձակել նորա պարունակու-
թիւնը և զարգարել պատկերներով, ինչպէս խոստացել էի ա-
ռաջի թուահամարումը:

Իմ պայմանները դոքա են.

1) Գ. Ք. գուրս կը գայ տարին 16 թուահամար:

2) Իւրաքանչիւր թուահամարը բաղկացած կ'լինի 1—1^{1/4}
1^{1/2} և վերջապէս 2 թերթից՝ տեսնելով նորա գումարի միծա-
նալը:

3) Իւրաքանչիւր թուահամարի գինը 20 արծաթ է:

4) 16 հատի կանխիկ—3 մանէթ 80 կոպէկ արծաթ:

5) Կանխիկ վճարողը 16 թուահամարին միանգամայն մի-
տաբին՝ տարեպտուտին կ'ստանայ մի անակընկալ պարգե (օրոր-
բիզնէ) կամ զիրք, կամ պատկեր:

6) Գ. Ք. թաթիպսն կարելի է ստանալ յետագայ քաղաքնե-
րումը, յետագայ անձանցմէ Ն. Ն. Ն.

7) Ճամբու ճախսը ստացողը պէտք է վճարէ:

Հարկը և պարտքը ստիպում է մեղ՝ որ մենք մեր կարո-

զութեան չափ աշխատինք, որ քանի գնայ, այնքան աւելի լնատիր և օգտական նիւթեր զետեղենք Դ. Ք. թերթերու մէջ, որ մենք սիրով կ'կատարենք:

Զգիտեմ՝ ո՞ր կերպի լոռութեան առզրեմ ձեր երկուսի լըռութիւնը, սիրելի Մնացական և Գէորգ. բայց ո՞րը ուղէ իւլի անտեղի է, երբ որ ես ըս լիքորածունու հետքնիւմ ապաստամ ձեր համար համար գրել մի սպիտակ թղթի վերայ, ծրարել և նամակատուն հասցնել: Եթէ ձեր պատասխանին կամ նամակին ես անդորր ոգւով սպասում իլէի՝ ո՞վ էր գլուխս պատողը, որ ես նամակ նամակի վերայ գրէի ձեղ, կը նշանակէ, որ մի բան ստիպում է ինձ այդպէս շարժելու: Դիցուք թէ զուք ինձ այս կերպի ուղէք պատասխանել որովհետեւ գործը եւ մանաւանդ ինողիրը ծանրակշխո էր՝ այդ պատճառով էլ չուզացինք վերիվերոյ, անհիմն վճիռ տալ եւ կիսակատար պատասխանել. ամենայն դիպուածի պէտք է փոքր ինչ խնայել իմ հոգւոյ հանգստութիւնը և դորա համար՝ պէտք էր մի կերպով միամտացնելու շտապէիք. որովհետեւ այս դրութիւնը (յոյսի և յուսահատութեան մէջ) ամենից անտանելին է. փորձեցէք— կ'լիմանաք: Վերջին նամակս գրել էի անցեալ շաբաթ օր, այսօր ուղիղ Շ օր է. իմ հաշուով պատասխանը չորեքշաբթի պէտք է գար. այդ է քու ակսրատու լինելը. չնորհաւորեմ. ցնծա Հայաստան: Բայց չէ. կատակը մի կողմ. ինչորեմ անյապաղ մի բան գրեցէք, որ ես էլ կարողանամ մի բան պատասխանելու խեղճ նիկուային, որ նմանապէս ինչպէս ես՝ վճռական պատասխանի է սպասում: Վերջին նամակումս ուղարկել էի ֆօտոգրաֆիով քաշած պատկերս. ստացաք:— Թերորը, Նիկոլեան Վանիւշը ձեղ բարե են անում: Թերորի հետ գրեթէ ամեն օր աեսնըւում եմ համալսարանումը. Վանիւշը աւարտեց Տրդատի մկրտութիւնը. հիմի միաք ունի սկսել Վարդանի մահը, որ համաձայն կը լինի իմին: Իմ յարաբերութիւնը Մ. Աստաֆիեվաի հետ աւել լաւ է. միւսների հետ խեթիւ աշաց ենք: Մուսինը ողորմեցաւ. այս խիստ պահանջմունքները թողեց. բայց լսել եմ, որ իբր թէ ուղարկել է Մոսկովի համալսարան՝ իմանալ իմ վարքը. իհարկէ եթէ Վեսելագօն ցիստի գործս—չափազանց կը վկասէ ինձ: Թերորը զարմանում է, որ զու (Թանամեան) նորա նամակը անսպատասխան ես թողնում. գրէ, եթէ մի առանձին հանգամանք չի արգելում քեզ. թէ չէ՝ գրէ ինչ է պատճառը այդ տարածայնութեանը: Ահա ձեղյայտարարութիւնը. աշխատեցէք թարգմանելու դուք ինքներդ. ես տեղ-տեղ սխալ արի. երբեմն յողնակի է Դ. Թաթիալաի լեզուն երբեմն եղական. զուք մի-

աձև արէք: Խնդրեմ, խնդրեմ շուտ և հաստատ պատասխան գրեցէք. 21 թիւը մօտենում է. խնայեցէք մեր բարի գործը: Էլ ի՞նչ ասեմ:

Զեր հաւատարիմ Ռափայէլ Պատկանեան

17. մարտի 1856

Ա. Պետերքուրդ:

Յ. Գ. Յաջողակ գիպուտածին կ'ուղարկեմ ձեզ 150 հատ Գ. Ք. որ գուք ուղարկի կ'ուղարկէք Պետրոս Շանշիեվի վրայ Թիֆլիս. դարձեալ ուրիշ 50, որ կը յանձնէք մինչին Շամախիի կողմերը ցրուելու. որովհետև այնտեղ, ինչպէս ինձ յայտնի է չի ուղարկած: Ուղարկած 30 մանէթը տուի Թրիֆանովին:

'Ի հարկէ ես մեծ մեծ չնորհակալութիւններով կ'ուկսէի նամակս, եթէ ձեզ երկուսիդ գրելու չիլէի, սիրելի Գէորգ. ուր չնորհակալութեան խօսքերը աւել կարող են վիրաւորել ձեր ազնիւ զգացմունքը, և հոգին միանգամայն, քան թէ հաճութիւն և բերկրանք նիւթել. կ'ասեմ այսքան միայն. եթէ ես այսքան ժամանակ չեմ կարողացել արժանի լինել ձեր երկուսի իդէական բարեկամութեան՝ գոնէ միշտ աշխատել եմ և աշխատում եմ համսնել այն աստիճանին, որ գուք ինձ սիրէք իմ հոգեկան արժանաւորութեանց համար և ոչ, ինչպէս ցայժմ, իմ աննշան որակներիս համար: Թողնենք այս:

Դու քանի անգամ գրել էիր՝ թէ ինչպէս կարգի կանոնի պէտք է ձգել մեր նորածին ձեռնարկութիւնը—Գամառ Քամառ Քամիպայի համար եմ ասում. քու հոգացողութիւնը, քու խորհրդածութիւնը, (ուղէ ուղիղ, ուղէ սխալ) միշտ ինձ ուրախացըել է. շատ անգամ արտասուաց կաթիլներ քամել է աչքերիցս քու կարեկցութիւնը մեր անօգնական ազգին, ահա դորա համար ես անարժան և ամօթ չեմ համարում ինձ չնորհակալ լինել ձեզ. հաւատացէք որ Աստուած, որ ամեն բարի գործի լաւագոյն գնահատն է—ձեզ կ'վարձատրէ այդ ազնիւ զգացմանց համար. մի սպասէք ազգից չնորհակալութիւն. մնութիւն չեն շնորհակալ լինում մեղը վայելողները. ծախողն է, որ հազիւ երբէք քաջալերական խօսքեր է լսում. բայց կան այնպիսիները, որոնք հոգւով կ'զգան մեր բարի գործի աստիճանը. այդպիսիներու գնահատութիւնն է վարձը ձեր աղնիւ սխրագործութեանը. մի կասկածիլ—ասածս ուղիղ է: Ուրեմն հիմի յիշում եմ քու առաջարկութիւնները Գ. Ք. համար. դու ասում

ես որ նա պիտի մեծանայ. պարունակութիւնը ընտիր և ծանրակշիռ լինի՝ երկուսն էլ լաւ ես ասում. ուրիշ հնար չի կայ Գ. Ք. յարգելի տեղ ունենալու ամեն բանասէր Հայի առաջ, եթէ ոչ այդ երկու հնարով. երկու հնարն էլ այսուհետեւ մեղ չափազանց հեշտ է համեմատութեամբ այդ գըութեան և վիճակի հետ, ուր էր նա քիչ ժամանակ յառաջ՝ կախումն ունենալ հազար ու մէկ դիպուածն է, որոնցմէ այժմ միանգամայն ազատ է, դու ինձ չես գրում այն հնարները, որոնք պիտի 'ի գործ գրուին. չես ցոյց տալի հեշտ ճանապարհներ, կարծելով որ նոքա ինձ յայտնի են: Այն, ինձ յայտնի են ճանապարհները, և միջոցները, որով մենք պարտաւոր ենք համնելու մեր նպատակին. ես գիտեմ ում համար է նշանակած մեր աշխատութիւնը. ով պիտի լինին մեր գատաւորները. ինչպէս պէտք է կոռւել նախապաշարման և նախանձի դէմ միենոյն ժամանակ. և զիտեմ՝ բնչ փշեայ պսակ պիտի հիւսուի մեր ճակատի համար— վարձ մեր համարձակ ձեռնարկութեան: Ահա իմ ապագայ պլանը. արտաքին ձեմ համար՝ Գ. Ք. մեր գորութիւնը հասածի չափ պիտի մեծանայ մինչև 2 թերթ, զինը չի բարձրանալով, ինչպէս որ դու և ուրիշները խորհուրդ էք տալի. պատճառը յետոյ կ'ասեմ: Ներքին ուարունակութեանը համար՝ պէտք է այնպիսի նիւթեր տեղաւորել մէջը, որ հասկացուի և օգուտ ըերէ. ասելը հեշտ է, անեն է դժուար: Ուրեմն միանդամ և յաւէտ պիտի կանոն դնենք մեզ այսքան միջոց ժամանակի այսինչ ձե շարադրութիւն մշակել, յետոյ միւսը կամ երկու կամ երեք միասին. զոր օրինակ մենք հաստատ զիտաւորութիւն ունենանք այս տարի բայցի վէպական և պատմական առարկաներից ոչինչ չի գրել և չի տպել—մանաւանդ գորա օգուտը դժուար հասկանալի է առաջի անգամ անփորձներին. շատին տւել գուրական էր մեր Գ. Ք. տեսնել մի օր Բաղմակէպի աննպատակ ուզգութեան. dutti frutti. բայց ահա մօտ 12 տարի է որ նա գուրս է գալի. կան այնպիսիները, որոնք ծայրէ ծայր կարգացել են նորան. հարցնում եմ ի՞նչ օգուտ են ստացել. դու կ'ասես թէ շատ առարկաներու վրայ գաղափար են ստացել. վայ էն պղտոր և մութ անորոշ գաղափարին, որ ստացել են խեղճ ընթերցաւէրները խեղճ Բաղմակէպի. զիտեն որ մի նիւթով, որ ջրածին է ասվում, թէ լցնեն օգապարիկի գունդը՝ օդ կը բարձրանան. զիտեն որ Բոսսուէթ աղուոր մարդ է. զիտեն որ կարգացող մարդը ժամանակը աւել ուրախ է անցնում, բան թէ գրագուրէլ. զիտեն որ Ռաֆայէլեան վարժարանումը քննութեան կայ. բայց ի՞նչ օգուտ այդ ցիցի փիցի նորալուրներից. միթէ այդ նորալուրները պայծառապայուց նոցա միտքը,

սովորեցաց նոցա ուղիղ դատել, նոցա կարծիքով կիւտերը վը-
նասակար մարդ է, նոցա կարծիքով...

Յ օրից յետ, այս նամակը զանազան հանգամանքներով
չի կարողացայ աւարտել սկսած օրո, իրեք օրուայ մէջ բաւա-
կան բաներ՝ անցան. ինթուիւպանթներու ականջը ընկաւ իմ և
Ն. պայմանները և յարաբերութիւնը. տարածայնութիւնը
գնալով մեծացաւ ես առ ժամանակ աւելորդ համարեցի 150
մանէթը՝ և նամակդ տալ Նիկոլեախն մինչև այբբենարանի
տպուելը՝ տառերը եղան հականառութեան լինոր. պէտք է
սպասել. յաջողակ դիպուածի. պէտք է օրինաւոր ապահովագիր
ստանալ նորանից. թէ չէ մեր գումարը կ'կորչի:

Բէռոյեկը շուտով գնալու է հեռաւոր տեղ ամառը ան-
ցնելու. պէտք է 4—5 ամսուայ համար ստատեայներ պատրաս-
տել, որ տպարանը անգործ չի մնայ. ինդրեմ Վարդանի սկիզ-
բը ճարես և շուտով ուղարկես, որ դատաքննելու տամ նորան.
պոօպիսի համար էլ փոքր ինչ հոգացողութիւն անես, ինչպէս
ինդրել էի անհամար անգամ: Իմ քննութիւնս մնում է քա-
նի մի շաբաթ. Աստուած՝ տայ որ գուք ամենդ շուտով յա-
ջողութեամբ աւարտէք: Քերորը սպասում է նամակիդ:

Եղբայր և բարեկամ քո Ռափայէլ

1856. մարտի 26.

Ս. Պ. Բուրգ.

Հոգինարագատ եղբայր Գէորգ.

Ամենաին կատկած չունիմ, որ գու իմ նամակները մինը-
մինի քամակից ստացած լինիս, եթէ ոչ ամենը, գոնէ միքանի-
սը անշուշտ հասած պիտի լինին քու ձեռքը, բայց թէ ինչու
լոել ես այսքան ժամանակ—ահա այդ է, որ ինձ անմենինի
վտարանաց մէջ է ձգում. ինձ յայտնի վաւերական պատճառը
քու քննութիւններն են, աւել ոչինչ բան չեմ կարծում, որ կարո-
ղանային քեզ արգելելու նամակ գրել. հիւանդութիւնդ նմանապէս
ենթագրելի չէ, պատճառ որ եկուորները, որոնք քեզ լաւ ճա-
նաչում էին, ասացին ինձ, որ քեզ միշտ տեսնում են եղել ժա-
մումը. ես հեռու եմ այս մղքից, որ զու մի բանով ինձանից վի-
րաւորուած լինիս. նաև այդ դիպուածին աւել պատեհ էր նախա-
տական նամակը, քան թէ լուութիւնը. ինչ կ'ուզէ լինի ես
սաստիկ երկմտութեան մէջ էմ, որ ինձ սաստիկ չարչարում է
մանաւանդ այս կրիտիք ժամանակին: Նամակներիցս քեզ յայտ-
նի պիտի լինի, որ ես սպասում եմ քեզանից փող որ տպեմ

Գ. Ք. որ արդէն երկու շաբաթ առաջ պատրաստ է. նմանապէս սպասում եմ վարդանի սկիզբը, որ տամ ամենը միասին դատաքննելու, որովհետև միաք ունիմ մինչև յունիս տըպել և ուղարկել Մակարիայի տօնավաճառ։ Ես քեզ գրել էի որ հօրիցս գնեցի մի երկաթէ մամուլ, որ դու շուտով կըստանաս. Ես չեմ կարծում որ այդ ինընակամ արարմունքս ձեղ անհամ երեցած լինի, այն մասին որ վաղ կամ ուշ մենք պիտի ունենայինք սեպհական մամուլ, որ մեր նորածին գործարանը անկախութիւն և ինընազոյութիւն ստանար. թէ չէ՝ որքան դժուարութիւն է գոնիզուն ընկնել, իզուր անհամար փողեր միսել մի թերթ բան տպելու համար. և այդ ամենը միշտ կից է եղել յամի շարժմանց հետ. ուրեմն այդ չպիտի քեզ վիրաւորած լինի; Խնդրեմ, ինդրեմ շուտով տուր պատասխանը։ Ես քեզ մի ծածուկ բան ուզում եմ յայտնել, որ դու ինչպէս ազնիւ մարդ երկար ժամանակ՝ ոչ ոքի չի պիտի յայտնես, բացի Թիմուրեանցից. որպէս զի այդ գաղանիքէն մենք առաջինը քաշենք օգուտ, անուն և ամեն հաճելի քոֆիները; Թագաւորը թոյլ տուել է անարգել օրագիր կամ լրագիր կամ որեկից պարբերական գիրք լոյս ընծայելու առանց խնդիրքի և դժուարութեան. այս գեռ ևս ոչ ոքի յայտնի չէ, ինձ ասաց Գոնչառովը, որ այժմ գատաքննիչ է. և ինձ խորհուրդ տուեց Գ. Յ. օրագիր անուանելու. ուրեմն եթէ այն ստորագրութիւնը յաջողուի մեզ, մենք առաջի պարտաւորութիւններս պիտի համարենք Ռուսաստանի մէջ առաջի օրագիրը հրատարակելու. այս մասին լաւ միտք արէք. ձեր կարծիքը ինձ գրեցէք և պոտրամման, որով պիտի ընթանայ օրագիրը սիստեմատիք յօրինեցէք և ուղարկեցէք ինձ: Տրիֆանովը ամմարանիք գնաց. յոյս ունիմ որ յուլիսի մէջ մի քանի շաբաթուայ համար կը գաս այստեղ, որ միասին երթանք մադամ Աստաֆիեվայի մօտ, որ զնալու օրերը շատ խնդրեց ինձ քեզ բարե անել և հրաւիրել ամարանիք յուլիսի մէջ, երբ արդէն բարձր Պետերբուրգской дачной ժիշտնէ:

Նոր ոչինչ չի կայ, բաց' այն, որ Քերոբը քիթը մինչի երկինք է բարձրացել—ինչու, որ գասեր ունի. Ինձանից ամենին շատ բարե:

Մասմ միշտ բարեացակամ և հաւատարիմ եղբայր քու
Ծափայէլ

Հոգեհարազատ Եղբայր Գէորգ.

Ահա ուղարկում եմ քեզ մի օրինակ Գամառ Քաթիպախց պր. Աստուրովի ձեռքով. իսկ 227 հատ նորից և 150 հատ հինից ծրարած տուել էի Նալբանդեանին որ քեզ հասցնէ. այդ ծրարածը դու մի բանալ, այլ ուղղակի ուղարկէ Մակարեա. ես քեզ շուտով կ'ուղարկեմ այլ ևս 200 հատ, որ այդտեղ և ուրիշ քաղաքներ ցրուեմ:

Դու ինձ այսքան ժամանակ գիր չզրեցիր. նմանապէս Թիմուրեանը, այդ խիստ մեծ անողորմութիւն էր ձեր երկուսի կողմանէ. ինձ թողիք գուք ամեն դժուարութեանց մէջ. ես մինչև այսօր չեմ կարողանում հասկանալ. ինչ հրաշքով փրկուեցայ այդ փորձանքից: Թիմուրեանցը ինձանից 15 մանէթ առաւ, որով պիտի տպէի մեր աշխատութիւնը՝ խոստանալով, որ առաջի փոշտով յետ կը դարձնէ. բայց մինչև այսօր ոչ մի լուր չունիմ. լսեցի որ նա գնացել է. ասա, լսնդրեմ, ինչի՞ է նման այդ գործը, կարծեմ նա լաւ զիտէր, որ ես փող չունիմ տպելու. բայց անելուն արաւ և գնաց: Ինչու ես զարմանում, որ մեր գործը գանդաղ է առաջանում. զարմանալին այս կ'լինէր, եթէ մեր ձեռնարկութիւնը անարգել առաջ խաղար այն անյաջողակ պարագաներու մէջ. քու փողը ուշացնելը, Թիմուրեանի գալը, Աւելիքի թանարի պատմութիւնը, Թիմուրեանի փող առնելը և յետ չուղարկելը իմ ձեռքը Յ ամիս անթոկ կապեցին, բայց ես տպեցի, և տպեցի աւել կեղեցիկ քան թէ երը և իցէ. Միենդյն ժամանակ պատրաստեցի այբբենարանը, որ բացի պոապիսից գրեթէ պատրաստ է միանգամայն: Վարդանս այժմ գուրս եկաւ ցենզուրից և գրաշարի մօտ է. յոյս առ Աստուած՝ 15 օրից յետոյ կը բերեմ Մոսկով. միայն թէ, խնդրում եմ քեզանից ինձ շուտով հասցուը Յ-ի փողը, որ մինչև Մակարիայի տօնավաճառը չի պրծնելը տպեմ. շարուել սկսած է. Աստուրովին ասացի, ինչ որ միտքս եկաւ. նորա խօսքերից և այս նամակից դու կ'տեսնես, որ ես սաստիկ նեղութիւն կրում եմ անփողութիւնից. օգնէ, որքան ձեռումդ հնար ունիս: Ես կարծում եմ, որ այբբենարանս մեզ բաւականին միջոց կ'տայ գործերս ուղղելու. 2000 հատ եմ տպել. նոցանից 400-ը քեզ կ'ուղարկեմ, որ դու դիուեկտորի միջնորդութիւնով կարողանաս կաւկասի գալրոցներումը ցրուել. 200 հատ հզմիրեանցին պիտի տամ. 200 հարիւր մօրս օգտին. 300 պիտի Մակարեա ուղարկեմ. Թիֆլիզ—200 հատ, որ գորա փոխարէն էմֆիաճեանից հարկաւոր գրքեր ստանում. 400 կ'ուղարկեմ Թիմուրեանին, որ նա Հայաստանի կողմերումը տարածէ. մնացածը

պիտի ընծայեմ աղքատ երեխերանց. եթէ դորանով 200 մանէթ փող կարողանամ ժողովելու՝ արդէն ևս երկար ժամանակուայ համար ապահոված կ'լինիմ և իզմիրեանի առաջ պարզերես գուրս կ'գամ: Վարդանի համար գրեցի մի յառաջաբանութիւն, ուր խօսում եմ այն դարու Հայերի վիճակի վրայ. այդ և ինըը բանաստեղծութիւնը $2^{1/2}$ թերթ գուրս կ'գան. երկու պատկերով ինձ կ'նսատի 80 մանէթ, ինչպէս որ հաշուեցի, թէկ պատրաստի փող չունիմ, և յոյսերս երկար են ինձանից. բայց Աստուծոյ վրոյ ապաւինելով՝ շարելու տուի: Ի՞նչ երկարացնեմ խօսքս, այս մեր կրիտిచేకి և քննիչութեան ժամանակն է. եթէ միջոց ունինք, մեծ յառաջադիմութիւն կունենաք, թէ չե...

Մնաս բարով, խոնարհ Ուսիայէլ

Ես կ'գամ մինչև օգոստոսի 20ը. մւր իջնեմ, գրէ:
Եւրէինովներու շատ բարեւ:

Հոգեհարազատ եղբայր Քանանեան.

Անցեալ երկու նամակներս մին-մինի քամակից գրած՝
կարծեմ որ քեզ փոքր ինչ անհանդասացրած կ'լինէին ֆլան առանցարկութիւններիս համար. ես գիտես՝ զու ինձ չէիր մեղադրիլ, այլ կ'գանգատէիր մեր անձուկ զրութեանը վրայ, որ մեզ ստիպում է այլպիսի մտածողութիւններ անել, որոնք փոքր ինչ խլում են մեղանից մեր արժանաւորութիւնը և հպարտութիւնը. կարծեմ որ չեմ սիալում: Այդ միտքը ինձ ևս չաբշարում էր, բայց երբ որ այն ևս միտք էի անում, որ այդ հնաբա մի անգամով կազտոէ մեզ անընդհատ և յաճախ կրկնուելու ինպիրեներից, կարօտութիւնից ևայլն ևայլն, ևս լաւ համարեցի ցոյց տալ կամ աւել ուղիղ ասել՝ միտքդ բերել առաջիկայ նամակումս մեր կարիքը. մի անգամ էլ մտնել ցխի մէջ և իսկոյն և հանքէ լուացուել ազնութեան աւազանի մէջ. թէ չէ՝ ինքդ ասա ո՞ւր պիտի տանէ մեզ մեր անվերջ աղքատութիւնը և ուրիշից ակնկալութիւնը: Ասել չուզէ՝ որ մեր առաջարկութիւնը ու մտադրութիւնը վերին աստիճանի համարձակ և այլոց համար անհնարին բան է, 650 մանէթը մի այնպիսի գումար է քննծոսա Հայերու համար, որ նորա շուտով թոյլ կ'տան փորի աղիքները գուրս բերել քան թէ զրպանից՝ այդ գումարը. թէկ ամեն մինը նոցանից կեսանը բում 10 անգամ այգալիսի փողեր սպառել է պէսպէս շատ և զգուելի գործերու համար: Թէպէտ

և մեր ուխտի ձեռնարկութիւնը, նորա ակներեւ պտուղը և օգուտը նոքա բաջ ճանաչում լինին. պարզապէս սաելով՝ Հայը սիրում է լաւ գործ, լաւ աշխատանք, լաւ պատմութիւններ, անցքեր, անուշ խօսքեր, ունի շուրջնական գործում է առաջնում և չի ուղղում իմանալ՝ ինչ հնարյով պիտի կատարուին այդ բարի բաները. նա կարծում է որ, եթէ դաշտը բացնում է առանց մարդու աշխատանքին խոտ, ծաղիկ, սունկ և այլն, ուրեմն՝ նոյն կերպով էլ պիտի գրուեն նորա համար լաւ գրքեր, պիտի տպուեն, և մեր պատուելի հայը միայն պիտ կրամնայ, որ հաւաքէ ցանկացածը. Երբոր ես այսպէս եմ մտածում՝ շատ ուրիշ ներհակով մաքեր ևս գալիս են վրաս. Արդեօք ծիծաղելի չե՞մ մեր ձեռնարկութիւնը, արդեօք վաղ չե՞նք սկսել, արդեօք ծուռ չե՞նք բոնել մեր ճանապարհը, արդեօք սխալ չե՞նք հառկացել ազգի ովին և նորա կարիքը, եթէ այսպէս է՝ ուրեմն մեր բոլոր ճիշը ունայն է: ՚Ի՞նալիկ՝ մենք ունինք մի բանի կարեկից բարեկամներ, որոնք մեզ օգնում են, խրախուսում են. բայց միդ է արդեօք մեր խսդրածը. նորա ընտրեալքն են, նոքա ազգի յրօծեներն են. այնինչ մեր միակ իդաք է ազգի, քուլս-ի օրդանը լինել, նորամէն սիրուել, նորա բարեկամը լինել, նորա մտքին սուածնորդը լինել. և Բ՞նչ. լինում ենք արդեօք, կ'լինենք արդեօք, կայ արդեօք յոյս լինելու. ոչ և ոչ պատասխանում է անդադար ներքին ձայնը. ինչո՞ւ ոչ. ահա ինչու. Ազգը մեզ կը սիրէր, եթէ տեսնէր մեր գործը համաձայն մեր խօսքին և խոսումունքին և այն ակընկալութիւնը, որ նա կարող է ունենալ և պիտի ունենայ տեսնելով մեր գիտեցածը և զործ կատարելու հեանդը. մէկ խօսքով՝ եթէ նա վստահ էր, որ մենք ամենեին վայրահաջ և շառլատան մարդիկ չենք, որոնք այսօրուայ օրս լցուած են ամեն տեղ և իրանց ցնորական խօսքերով զգուացրել են ամենին. մեր տարաբախուութիւնը այն է, որ մենք ունինք ԿТО ՏՕ օնաց այն անպիտաներու հետ. և Հայք չեն կարողանում մեր և նոցա մէջ բարեկամնական խօսքի զգուացրել են ամենին. մեր գործը մոր ազգիւրից գուրս գալը. բայց ես վաղուց դիտէի, որ միստիցիզմը միշտ պէտք է կոպիտ ժողովրդի համար. Բայց այդպէս մենք չի կարողացանք սկսել մեր գործը, որովհետեւ հէնց էն գլխից աղքատ էինք և կարօտ էինք կողմնակի նըսպաստներու. Մենք ստիպուած էինք մեր բոլոր գաղանիքը, միտքերը, քամակի քոնց ները յայտնել մի բանի կոպէկի համար, որ մեր գործը հասկանալով մեզ օգնեն. բայց մենք սխալում

Էինը: Մեզ չեխ օգնում, այլ ողորմութիւն էին անում, ինչպէս
որ աղքատը ստիպուած է իւր փորը լցնելու համար մի ըստ
միոջէ յայտնել հարուստին՝ որ քանի օր է բերանը բան չի
զրել և հարուստը խղճարով նորա զզուելի դրութիւնը, քամա-
հանքով ձգում է մի կտոր հաց, այդպէս և մեր երեսին ձգեցին
մի բանի կոպէկ, ու առաջ առաջ անում է թարգմանում
նոյս եղեռնական (զլօդյան) ազգասիրութիւնը (?!). Ի՞նչ
դուրս եկաւ մեր գործից—զզուանք և յուսահատութիւն.
բայց այս պիտի լինէր մեր մտաց և ինչպիսի աղնիւ
մտաց պտուղը: Ես քեզ շատ անգամ ինպեցի Յօ շունի
ու դա անկախ դաւանանք, դու հասկացար գուցէ իմ՝
միտքս, բայց աղքաւը ցոյց չի տուիր. մենք ոչինչ
նորոգութիւն չէինք անում մեր զզուելի դրութեանը, մի-
այն թէ զանազան ձեւեր էինք տալիս մեր մուրացկանութեա-
նը. ինչպիրքով ստորագրութիւն էինք անում, ինչպիրքով դիրք
էինք ծախում, ինչպիրքով գիրք էինք ցրում, ինչպիրքով մեր
քրտնաշան վաստակի չնչին վարձն էինք ստանում. մենք մեր
СИМВОЛԵՐ բնտրել էինք ազնւութիւն, բայց իրօք մեր СИМВОЛԵՐ
ցածութիւն էր: Ով որ մեզ չի պատահէր՝ մենք նորան մեծ
նշանակութիւն էինք տալիս և ազգասիրութեան ամեն պայման-
բերը մեկնում էինք, ինչու, որ 20 կոպէկ տայ և առնու մի հատ
Գամառ: Հասկանման ես գու՞ ինչ ուզում եմ ասել: Մենք մինչեւ
այժմ խիստ ծուռ ճամբայով ենք յառաջ գնում. թէ մեր արա-
ծը մեր պարագաներով ոչ որ չէր կարող անել. այդ էլ շատ է,
ինչ որ մենք արինք. եմ զուբս եմ տալի՝ որ թէ ինքը նազա-
րեանցը, որի սվարագրութիւնը կախարդել է քնչ, ձեռնար-
կէր մեր հնարներով՝ չէ թէ տալարան ունենաւ, մի թերթ բան
չէր կարող տպել. բայց մենք մի թերթից տւել բան տպեցինք,
բայց այդ չի պիտի մեզ խարէ. այդ չի տանիլ մեր նպատա-
կին... այդ կերպի շարժմունքը մեծ ճիկն է պահանջում, որին
շատ չի դիմանալ նաև հանձնարի զօրութիւնը: Այժմ հասել է
այն ժամանակը, որ մենք պիտի ահազին կրիզիս տանք մեր
գործին. պիտի ձեռնարկենք կտրական, վճռական և օրհասական
նորոգութիւն, քերական մեր գործումը և մտածողութիւնումը.
Ժամանակը հասել է յու պահ յու պրոպալ: միջին ճանապարը
զզուելի է արդէն, գոնէ մեզ նման եռանգուսների համար: Մեզ
պէտք է տպարան. մեզ պէտք է մեծ զումար՝ 650 մանէթ խիստ
սակաւից. եթէ դտանք այդ գումարը—լաւ, բայց եթէ չի դտանք՝
ես կ'զանեմ, ինչպէս որ դտայ տառերը: Բայց այդ այնպիսի
լոտո է, ուր 100 բիլէթից 70 պրոպալ են, և 30 պահ: Այդ

դեռ մեծ բան չէ. մենք պիտի տպենք այնպիսի գիրը, որի վրայ պիտի ցոյց տանը կաէ ու կապիտալնա տրամադրութիւնը և կ'տպեմ բառարան, որի տիպը միայն կ'արժէ 2000 մանէթ. եթէ այս երկու գործը յաջողի՞ մենք կարող ենք գուրս գալ այն երեխայական կարգից, ուր մեզ զրել են ազգի տգէտութիւնը, նորա նախապաշտունքը, մեր երեխայական միամտութիւնը և մի քանիսի նախանձը: Եթէ հաւանում ես առաջարկութիւնս, և եթէ խոստանում ես ամեն հնարը ի գործ դնել օգնելու՝ լաւ. թէ չէ՝ ես միայն յանձն կ'առնում այդ ահագին բեռը վրաս, որին կամ անդ կ'հասցնեմ կամ կ'ընկնեմ, կը կորչեմ նորա ծանրութեանը ներքոյ. բարեկամութիւնը նեղ դրութեան մէջ է ճանաշում:

Հիմի մի քանի խօսք ասեմ բառարանի և մանր տառերի համար և յետոյ ցոյց կ'տամ իմ անկախ աղբիւները, որոնք հաւաստեաւ կ'տանեն նպատակիս, եթէ զու չաշխատես կամ եթէ աշխատես էլ՝ չկարողանսս օգնելու: Մանր տառերը տուփ գալվանոփլասրիկայով գուրս հնել պղնձէ մայրել, որ կ'նստի 110 մանէթ. երբ որ մայրերը կ'պատրաստուին՝ թափել կ'տամ 175 մանէթի արճճէ տառեր. այս գործը կ'տեսի մինչև մարտ կամ ապրիլ. այդ միջոցին ես կշարունակեմ բառարանը, որ արդէն սկսած է. բառարանը կ'ունենայ 15,000 բառ. թէն համառօտ, քան թէ իրիցփոխեանինը, բայց աւել ընտիր: Մինը պիտի ծախուի 2 մ. 50 կ. կամ 2 մանէթ. և կ'տպեմ 3,000 հատ: Ծախսը 2,000 մանէթ է, կամ փոքր ինչ սպակաս: Բառարանը մեղ մեծ օգուտ չի տալ նիւթական, որովհետև անհնարին բան է, որ 1,000 հատը կարճ միջոցումը ծախուի. ուրեմն մեր փողը երկար ժամանակ պիտի պանկի տուանց տոկոսի. բայց գոնէ մեր օգուտը այն կ'լինի, որ ժողովուրդը կ'տեսնէ, որ մենք կարող ենք նաև ծանրակշեռ գործերով ևս պարապել և հչ թէ Գամաւոխ պէս (նորա հասկացածով) երեխայական գործեր ցոյց տալ: Դու կ'հարցնես՝ ի՞նչ գումարից. նախ ես կարծում եմ, որ զու տպարանի համար փոքր ինչ գլխացաւութիւն կ'անես. գարձեալ՝ Թիմուրեանը ու գումարի առաջնական արդէն պատրաստ է. նորանից ստացած փողերով կ'թեթևանամ մի քանի պարաքերից, որ արել եմ հէնց նորա համար, և նոր պարտքերու, այսինքն կոպեչակ:

ներու մէջ կ'մտնեմ. ձեռագրով կ'առնում մամուլ, կ'բռնեմ բնաշարան ապարանի համար. թուղթ ևս կ'առնում, ինչպէս որ մինչև այժմ՝ առել եմ և երեսս խաչ հանած՝ կ'սկսեմ գործս: Ես քեզ Մոսկով եղած ժամանակս առել էի, որ մամուլը ինքը իրան փող վաստակում է. օրը 2—3—4— և 5 մանէթ. այդ կը լինի բանուրների վարձը: Թէս ևս Մոսկով եղած ժամանակս քեզ հաստատ խօսք էի տուել Յ ամսից ունենալ տպարան բայց յիմար զգուշութիւնս ինձ նորից խարեց, և առել պիտի հետեւէի յիմար ոռուի խելօք առածին՝ Ըմելամբ Եօր վլաճետի. ոչինչ գոնէ միւս անգամ չեմ սխալիլ: Ուրեմն, սիրականս, միտք արա, տուր եղբայրական, հիմնաւոր խորհուրդներդ: Ես քեզ յայտնեցի իմ անելուն, որ զոնէ մեկնէ ինձ քու ներկայ հայեցուածը այս մասին, եթէ քու կարծիքը միանգաւայն ներհակ է իմին՝ հաւասարի եղիր որ ես չեմ լիիլ քու աղաչանքէն. բայց թէ յօժար ես, բայց տատանում ես հնարներու մասին՝ բայց ու անուած լին մասին էր իզմիրեանցը. փոխանակ մխիթարելու ինձ՝ սաստիկ յուսահատեցուց: Սանասարեանը քեզ շատ բարեկ է անուած:

Եթէ կարող եմ՝ գտիր ինձ համար 1) դատաւոր անաշառ, 2) գնացէք տեսէք՝ ինչ կայր նաւին, որ նաև ուսմամբ կայր (ժամումը մի տպած հին տաղարան կայ, նորա մէջ կայ այս տողը) 3) ի կանխազէտ տուչութիւնէ անել էին սահմանի, 4) էյ մասալ ու ջէյրան, 5) Աւեր քզը. եղաւ անձն իմի թշնամեաց պատերազմէ: 3 շարաթից կ'ստանաս տաղարանը:

Եթէ տաղարանի անուամբ հաւաքած փող ունիս՝ ուղարկէ, պատճառ որ արդէն 9 երորդ թերթը հասել է, մնում է Յ կամ 4 այլնս, բայց ինձ առաջի նուռադ խիստ պէտք է 30 մանէթ նօթերու տպելու համար. բայց մի տանջուիր, եթէ չես կարող ինձ իմաց տուր, որ չի սպասեմ: Տաղարանից յետոյ իսկոյն Խոպէնզոնը պիտի սկսեմ, եթէ Հայոց գիւցագունքի համար դու հոգս չես անիլ կամ յառաջադիմութիւն չի ունենալ: Կարծեմ որ այս նամակը բերէ պր. Սարգագեանը, որի վրայ անցեալ անգամ խօսել էի: Ուղարկեցի՞ր Ղզար այբբենարանները, կամ Նոր-Նախիջևան, կամ Թիֆուրեանին կամ տուի՞ր Բաղչէ Խալաթովին, որի խանութը Գալիցինսկի գալլերեյ-ումն է:

Սիրելի եղբայր և բարեկամ Գէորգ:

Շատ ժամանակ է որ բեղանից ոչ լուր ունիմ և ոչ նամակ, պատճառը հասկանում եմ, բայց ուղղագէս չդիտեմ. կարելի, 1995.

ծում եմ որ դու այժմ ոռւս ծանօթներիդ ամարանիքումն ես. ուրիշ կարծիք, որ կարողանար քեզ արդարացնել, չեմ զտնում: Եթէ այդ ուղիղ է, ուրեմն այս գրիս պատասխանի համար ևս շատ պիտի սպասեմ մինչև որ դու գաս քաղաք և միտքդ 'ի մի գումարեն և գրես ինձ մի միջիթարական պատասխան. ձիաւը հետքին ընկեր չէ, ասում է առածը, այդպէս էլ դու ինձ հետ լինելով, ինձ չտեսնելով միայն իմ խօսքին ականջ անելով չես կարող հասկանալ թէ՝ որպիսի գժոխային տանջանք է սպասել այսպիսի ժամանակումը և ամիսներու ակնկալութիւնը 'ի գուր լինեն. ինչ և իցէ, թող այդպէս լինի: Քու վերջընթեր նամակը ինձ լաւ հասկացուց թէ՝ դու ի՞նչ աչքով մտիկ ես անում մեր յարաբերութեանը վրայ, ինձ ուրիշ բան չի մնում, բայց եթէ առ այժմս գլուխս ծուած լոել և լոել ասածներուդ. գործով, լաւ եմ համորում, ապացուցանել թէ՝ որքան սխալ է քու կարծիքը իմ մասին. պատճառ որ այսքան ժամանակ չեմ արժանացել աւել բարի կարծեաց: Թողում եմ այս ինձ համար վշտալի մտածմունքը: Իզմիրեանցի նամակը, Փարիզից գրած, բաւականին ուշ ստացայ. այնտեղ նա չքմեղվում է որ մամուլ չի կարողացել ուղարկել այն պատճառաւ որ՝ իմ տուած ձեփ նմանը չի գտել Բէոլինումը (?) և խոստանում է, երբ որ՝ ինձ հետ կ'աւեսնուի, այն ժամանակ միասին բերել կ'տանք: Երեխ որ հետը փող չի ունեցել: Բայց նա իւր տուած խօսքը կատարող մարդ է. այդ մասին կարող ենք յուսալ նորա վրայ: Ահա ուղարկում եմ քեզ տաղարանը, ինչպէս որ դու ցանկանում էիր. այս նոր ծախսը որ արի՝ յատկարար քեզ հանգստացնելու համար էր, աւել ոչինչ, ևս ուղարկեցի Մակարիա 500 հատ իզմիրեանցի վրայ, որ նա ցրուէ և մնացածը ուղարկէ զանազան քաղաքներ: Եթէ աւելորդ չես համարում՝ դու ևս աւելացներ քու խնդիրքը իմի վրայ: Եւ կարծեմ որ նա կարող է մի 300 մանէթի բան ծախել. Երբ որ կ'զայ Մոսկով ես ևս կ'զամ այն ժամանակ և հա սկօրու րոկ այդտեղ Կունիգանդ զօնածնութիւն կ'առնեմ մի մամուլ և եթէ հնար կայ՝ կ'վերանորոգեմ մեր այրուածը. Եթէ կ'ասես ի՞նչու ևս շտապում եմ, ահա դորա պատճառը ևս. Բէոլոյեկը խիստ հաւանեցաւ մեր մանր տառերուն և նորից խնդրեց որ մեր մօտ տպէ իւր բառարանը. ես յիմարութիւն կ'ըամարէի յետ կենալ այդպիսի օգտաւէտ դործից, որ մեզ մօտ 15,000 մաքուր օգուտ պիտի տայ. այս մէկ. երկրորդը՝ ես քեզ վաղուց գրել եմ որ Բոսսէն ուղում է 15 հատ հայոց նախնեաց շարագրութիւններ տառել, և այժմ ևս անդադար շտապեցնում է ինձ սեպհական տպարան բանալ, գորա օգուտն ևս 10,000ից անցնում է. այս երկու երրոր-

դը այն է որ՝ 1858ից Բուլաղեանը մտադիր է հայոց լրագիր (բազեր) հրատարակել շարաթական և անպատճառ մեր տառերով և մեր մօտ ցանկանում է տպել, դորա տարեկան մաքուր օգուտը կ'համնի մինչև 900 մասէթ, այս երեք. չորրորդը այն է որ՝ ձայն կայ իբր թէ Աստուաշունչի լնկերութիւնը կամենում է հայերէն Աստուածաշունչ տպել. ինձ խոստացաւ Բրոսսէն այդ աշխատութիւնը մեր տառերով և մեր մօտ տպել. դորա օգուտը իմ թեթև և արժան հաշվով պիտի համնի մինչև 25,000 մասէթ. թէ և առաջի երեքի պէս ճիշտ չէ այս, բայց միանգամայն կատկածելի ևս չէ. այս չորս. հինգերորդը այն է որ՝ մեր սեպհական աշխատութիւնը խիստ թանգ են նստում մեզ, այնպէս որ միայն այն օգուտով, որ տուինք այլոց արագաններուն մինչև այս օրուայ օրս, միայն նորանցից ասում եմ, կարող էինք մի փոքրիկ, բայց անկախ տպարան ձեռք բերել. բայց մենք մի անգամով չի ստացանք փոքրիկ գումար. ալդ է պատճառը որ մինք այսքան նեղութիւն կրեցինք. և այժմս ևս կ'կրենք և կ'զրկուենք այն մեծամեծ օգուտներից, որ ես քեզ յայտնեցի քանի մի տող գորանից յառաջ: Մի քանի անյաջողութիւնք ինձ սովորեցուցին փորձառու լինել առաջուայ սընթալները չեմ անիլ Աստուծոյ ողորմութեամք և ըու բարի խըրատաներովն: Բայց առաջուանից քեզ պիտի յայտնեմ ներկայ ժամանակուայ տպարանի հանգամանքը: Մենք ունինք չորս ձև տառ, 1) ցիցեռո, որով մինչև այժմ տպում էի, 5 թերթ տպելու, 30 փութ. 2) այս տասի նօտրները 1 փութ, որոնց մայութը ստացայ հօրիցս. 3) միտտել, հօրս մայրերով թափել տուի 3 փութ. 4) քու ուղարկած մանր կամ պտիտ ասած տառերը, որոնց մայրերը ես շինել տուի և արձճից թափել տուի իմ և հէռոյիվի բառարանի համար 10 փութ:

Կ'նշանակէ այժմ մեր տպարանը Ռուսաստանումը ոչ թէ ամենից հարուստն է, այլ և ամենից գեղեցիկն է. այս տաղարանը քեզ թեթև գաղափար կ'տայ նորա մասին, իսկ Ռուսազնը, որ իմաս շուտով կ'ստանու՝ քեզ չափից գուրս կ'ուրախայնէ՝ մանաւանդ այն ժամանակ, եթէ առնուս մի քանի գիրք Մուկով, Թիֆլիզ, Եջմիածին տպած և համեմատես միմեանց հետ. բայց առ յապայ միւս գրքերը միշտ և միշտ կ'զեղեցկանան. — ահա այն ժամանակ գու կ'տեսնես և կ'հասկանաս և կը հաւատաս թէ իմ ասելը և անելը միենթյնն է արդեօք, թէ ոչ: Բայց ինչ անեմ որ դու իմ բարի ցանկութիւնը չես ուզում տեսնել ինչպէս յաջողութեամբ աւարատած: Ես քեզ այս տպարանական հանգամանքը առաջ բերելով ուղում եմ յայտնել իմ կարիքը և յուսամ որ դու հարկաւոր կ'համարես ընդհանուր ոյժով դարձան տանել

նորան։ Տես, սիրականս, մեզ պէտք է անպատճառ փոքրիկ գումար, որ կարողանանք ազատ գործ բռնելու։ Ես ունիմ աըսվարանումը պարտք, նաև ձուլարանումը, այս նոր թափած տառերու համար. պէտք է այդ պարտքը շուտով տալ։ Բացի դորանէն մօտ 150 մանէթ պէտք է հա ուրած առաջ անպատճառ սպասել թիւմուրեանից, բայց իմ պարտքը, որ համում է մինչև 640 մանէթ, պէտք է ուրիշ աղբիւրից ճարել։ Դ' հարկէ, մեր աշխատութիւնք, Գամառ, այբբենարան, տաղարան, Ռօբինզօն թէ որ ծախուին՝ մեզ կ'տան աւելի քան թէ 3000 մանէթ (տաղարանը 1 մանէթով 1200 հատ, 1200 մանէթ, Ռօբինզօնը 2000 հատ 65 կոպէկով 1300 մանէթ, այբբենարանից էլ մի 300 մանէթ և Գամառից մօտ 800 մանէթ), բայց մեզ միծ վնաս է այդքան ժամանակ սպասելը, ես կարծում եմ որ մինչեւ Իզմիրեանցի խոստացած արտասահմանի մամուլ ստանալը ևս ոլէտք է մենք մի մամուլ ունենանք, որ Բոսսեին և Բենոյեվին ձեռքէ չի փախցնենք. ահա այգտեղ մեզ կ'օգնեն այն մանը մունը փողերը, որ մենք կ'ստանանք մեր ծախուած զրքերից, այսինքն իմ 500 հատ Մակարիսուղարկած տաղարանից և որ զու պիտի ուղարկես այբբենարաններ։ Հիմի զու ինձ կ'հարցնես թէ՝ որտեղուց ճարես այդ 640 մանէթն, ևս էլ եմ զժուարանում, բայց պէտք չէ շուտ միս, վախ քաշել, պէտք է արի և խելօք լինել։ Դու ինձ մի ժամանակ խիստ յուսացնում էիր մի Ֆիդահեանի մասին, որին նմանապէս շատ գովում էր Իզմիրեանցն. ես նորա համար քեզ մի առաջարկութիւն էի արել, որ զու չի պիտի մոռացած լինիս, բայց թէ մոռացել ևս, ահա քեզ այն։ Եթէ նա կ'տայ մեզ այդ 640 մանէթ գումարը, մենք նոյնապէս կը տանք 3000 հատ հայոց այբբենարան, որ ևս աւել գեղեցիկ և լիակատար տպելու եմ մեր սեպհական տպարանումը և հաստատ գիտեմ, որ նա այգտեղ ոչ թէ մի կոպէկ վնաս կունենայ, այլ ընդհակառակն, եթէ իւրաքանչիւրը 35 կոպէկով ծախէ մօտ 400 մանէթ օգուտ կունենայ, թեզ թէ միւնոյն ժամանակ մեզ բարերարութիւն ևս արած պիտի լինի. թէ չէ, մենք ուրիշ հարկաւոր դպրոցի գիրք կ'տպենք նորա համար, կամ վերջապէս ինչպէս նա կ'ցանկանայ։ Այս միտքը խիստ հաւանելի է նաև Իզմիրեանցին։ Իսկ թէ կամիս իմանալ ինչպէս պիտի գեղեցկացնեմ այբբենարանը, ահա մի՞ որ առաջուայ պէս մի ձեւ տառի տեղ այժմ կ'լինին չորս զանազան գործածութեանց համար. երկրորդ՝ ԿИСՏՈПԱՍԱՆԻՑ կ'լինի 8 հատ առաջուայ 4ի տեղ. բայց գեղեցիկ, մաքուր և օրինաւոր, ինչպէս որ քեզ կ'ապացուցանեն առաջուայ և այժմուայ տաղարանի նօթերը։ Մէջի օրինակները կ'լինին շատ

Բաց յայսմանէ մի բան ևս կ'լինի, որ առաջի տեսածից այնքան շատ ծանրակշիռ չէ, այլ փորձառ վարժապետը միայն դիմ կ'դնէ թէ՝ Թրքան հեղտայնում է երեխայոց համար առաջի անգամ այբբէն սովորելը, զոր օրինակ այր առաջի երեսումը փոխանակ սովորական ա, բ, գ և յ եւ կ'դնեմ պատկեր Աղաւնի կամ Այծ և տակը կ'գրեմ Ա. ա ա, բանալի, բաժակ կամ բազէ և գորա տակն կ'գրեմ Բ, բ, և այլն ըստ կարգին. այս ձեր մեր մէջ չէ եղել, այսինքն, մեր երեխայոց հետ երբէք չեն վարուել ինչպէս երեխայոց հետ, այլ միշտ խիստ և ծանր, որ է եղել պատճառը նոցա խելքի ուշ փթթելուն կամ միանգամայն փակ լինելու ՚ի հարկէ որ Գամառ Քաթիսպան չի կարող ազգի համար ամեն ինչ լինել և հեղինակներ, և գլուցներ, և քարոզիչներ, և բարերարներ, բայց իւր զօրութիւնը հասուածի չափ պիտի օգնէ նորա ցաւին. մի տարուայ մէջ անկարելի է ցոյց տալ իւր կարոզութիւնը, բայց երբ որ քանի մի տարիից մեր գրեանց ցուցակը կ'բազմանայ, այն ժամանակ աղջը ինքը կ'տեսնէ թէ՝ ի՞նչ արինք և ի՞նչ կարող էինք անել, եթէ մեր ամեն քայլափոխին անթիւ անհամար խութքեր չ'ունենայինք: Արդ՝ դանանաք մեր կարօտութեանը: Այս ծանօթութիւնը ես քեզ գրեցի այն մասին որ զու ևս, եթէ ինդրելու լինիս, կարողանաս համոզել այլոց ևս: Վերջապէս եթէ քու խօսքը թոյլ է նոցա սառած հոգին հալեցնելու, յորդորէ պր. Նեվերովին իւր նշանակութիւնով ներգործել նոցա վրայ և երաշխաւոր լինել մեր հաւատարմութեանը. կարծեմ որ այս վերջինը աւել ապահով է, իսկ Նեվերովին յայտնէ պարզ և մեկին մեր ամեն հանգամանքը, ՚ի հարկէ՝ տպարանական: Միաբ արա, ես քեզ արդէն յայտնեցի այն ամենալաւ հետևանքը, որ պիտի ծնին մեզ համար Բերոյելի, Բուզաղեանի և Բոսսէի աշխատութիւնից: Ինձ շատ ճարտարութիւն պէտք էր նոցա խելքը դէպի ինձ գրաւելու, այժմ փոքր ինչ էնեգրիա քու կողմէն և ահա մեր գործը ծլած և ծաղկած կ'տեսնես: Կարո՞ղ եմ յուսալ քու վրայ, կարող ենք սպասել այդ երկու օգնութիւնը Թիգանեանից և Թիմուրեանից: Դէորդ ջան, մի մոռանալ որ մեր մեանց ապսպրած խօսքը պիտի անհրաժեշտ օրէնք լինի իրերաց համար. մի մոռանալ որ գրած նամակը պատասխան է սպահանջում, ապա թէ ոչ զօրութիւնը ակնկալութեան մէջ ՚ի զուր կորցնում է իւր էներգիան, սխալում եմ: 2 շաբաթից կ'ուստանա մեր գեղեցիկ Խօրինոնը որի Խզահիւն հաղարապատիկ առաւել գերազանց է ոչ թէ ուսւից, այլ և գաղղիացից և գերմանացուց. կ'գարձնե՞ն արդեօք հայերը իւրեանց ուշքը զբքի գեղեցկութեան վրայ. ներքին պարունակութեան մասին

Ես դատաւոր լինել չեմ կարող, բայց այնքան միայն կ'ասեմ, որ
ես ամեն տողը գրելիս առաջին ունէի յասություն առաջանակ պատճենի մասին հայություն առաջանակ միամանակ առաջարարակ հայերէն շարագրելու ժամանակ մի գաղտնիք ունիմ կամ սպառաւ միամանակ միամանակ հայերէն շարագրելու այսինքն ես միշտ երևակայություն եմ առաջին մի թիֆլիզեցի, մի նախիջեանցի և մի յաժմարխանցի իբր թէ ամենս միասին մի հարկաւոր առարկայի վրայ խօսում ենք կամ թէ ես նոցա պատմում եմ, բոլոր գաղտնիքը ստուգում է այդ գույքի մասին առաջանակ լինէին այդ երեքին. Ի հարկէ որ այգպիսի գրութիւնը խիստ գանդաղ է առաջանում, բայց բարոյական օգուտը այն է որ ամենին հասկանալի է լինում: Այս օրէնքը ոչ ես եմ հնարին և ոչ ոք մեզանից. այդ վաղուցվայ օրէնք է, բայց մեր հայը, խստովանելով և բարոգելով ինչպէս և ինքը նաղարեանց, ամեններն չեն հետեւմ և... շատ կորցնում է: Նորա կարծիքով գրելը կ'նշանակէ բարձրաձայն աղաղակով ամենին յայտնել, յիմարներ, էշեր, լուցէր ինչպէս ես կուրքած հնարել գիտեմ եական գույքի մասին այն աղականից մինը չեմ, այդ պատճառաւ ինձ խիստ ամօթ է այնպէս խօսել, ինչպէս որ գուք էք խօսում. գուք ասում էք օի, ես կ'ասեմ նժոյզ, գուք կ'ասէք՝ ես զնացի տուն եւ կերայ ինձ համար պատրաստած ճաշը, ես կասեմ՝ ես ի կողմն իմ տան ոտնաշարժութիւն արարի, եւ իմ մարմինեղէն գործարանը լցուցի մարմնակազմութիւն նիւթով, և կարծում է թէ խիստ աղնիւ կերպով բանաստեղծեց: Ահա, եղբայր ոիրական հանդէս հայախօսութեան: Ի՞նչ է կարծում, կան խօ մարդիկ, որոնք իւրեանց ծունը կրկնում են այսպիսի ինքնակոչ և իրօք անքանքար բանաստեղծի առաջ: Բայց մենք, ճանաչելով մեր տկարութիւնը ման ենք գալի ցածից, բարեխաղութեամբ կմշում ենք այնպիսի գործի, որ ոչ ոքի չի վասակով պիտի տայ եթէ ոչ առատ պառուղ, գմնէ հաճելի ծաղիկներ, մեզ, կրկնում եմ, ոչ ոք չի հաւատալ, ոչ ոք չի գնահատիլ, բաւական չեն այդ, աշխատում են մարդիկ մեղ վնասել, մեր ճանապարհը, որ մենք ինքներս փուշից ու տատասկից մաքրեցինք, լցնել ցեխներով ու կեղտոտութիւններով:—Ի՞նչ ասեմ աւել, գու լաւ պիտես ամենը:

Գու հարազատ եղբայր և բարեկամ Ռափիայէլ

Սիրելի եղբայր Գէորգ.

Առանց մի նշանաւոր անցքի հասայ տեղս. վաճռք Աստըծոյ, վերատեսուչը չի բարկացաւ իմ ուշանալու մասին, եւ երբ որ ցոյց տուի նորան հիւանդութեան վկայագիրը՝ նենգութեամբ ժպտաց, իբր թէ զիտենք ձեզ պէսներու չքմեղութիւնը։ Աւել ոչինչ։ Ցեննուեցայ պր. Իզմիրեանցի հետ նեւսկից պրօսպեկտումը. բարով տուի առի. մին-մինի երեսին նայեցանք միայն մեզ յիմար ժպտացինք, մին մինի հասցէներս չասացինք միայն մեզ յայտնի պատճաններով և... բաժանուեցանք. Փլան բանի համար ոչ մի խօսք չըիշուեցաւ։ Ես ստացայ 50 մանէթ պր. Լազարեվսկից, որոնցմէ 24 տուի հին տանտիկնոջս, 8^я նորին, 17-ով առի թուր, գտակ, սրակալ, թաթպան և այժմ չգիտեմ՝ ի՞նչ փողով ճամբայ ձգեմ այս նամակը։ Վատ բան է, երբ մարդս կանոնաւոր արդիւնք չունի, ոչ կերածն է կերածի նըման և ոչ մի ուրիշ նորա շարժմունքն է բարեկարգ և կանոնաւոր. 3^½ ամիս էր որ սենեակի վարձ չէի տուել (որովհետեւ չունէի) բայց որքան հեշտ է կամաց կամաց, բայց անընդհատ տալը, այնքան էլ անտանելի է ուշ և մի անգամով նշանաւոր գումար վճարելը. կարծող ես հաւատակ արիւնլս ենաց և աշքից արցոնք թափեց, երբ որ իմ քրտնաշան վաստակիս անհնշան վարձը ստիպուեցայ տալու այն պատաւ. բաւթառ կնոջ, որ ամենեկին մտքից էլ չէր անցկացնիլ՝ թէ ինչ զնով ձեռքս ընկել են այդ 24 մանէթները. խողիւմ, հոգիս, անձանձիր պազատէ պր. Սանասարեանից գարսերու մասին, առանց որին, Աստուած է վկայ, որ անհնարին է խաղաղ և անկախ կեանք վայելել և ինձ կամ մեր գործին օգտաւէտ լինել, որքան որ ոյժու կարող էր համեմել, եթէ Թիմուլեանին չես զրել՝ գոնէ այժմ գրէ, որ ես նորա օգնութեան անհամբերութեամբ մնում եմ. ինդքեմ։ Զդիտեմ՝ իմ գնալից յետ արլիր յառաջաղիմութիւն ստորագրութեան համար, թէ ոչ. բայց մի մոռանալ իմ խրատը ոչ մի յաջողակ դիպուտած բաց չթողնել ծեղորից 4^½ մանէթ պուլկելու. եթէ գործում աշքաբաց գոտնուիս՝ հաւատացիր որ դիպուտածներ միշտ կունենաս. Խա լօվզա և ՅԵՔՐԵ ճեղական ասած է։ Ղղլարցիները այսօր գուրս եկան այստեղից. մի քնիլ։ Էզուց միտք ունիմ մէկ հնարով տեսնուել պր. Իզմիրեանցի հետ և 69 մանէթ ձեռք բերել, թէ չէ՝ նաև ամաչում եմ տպարան երթալու։ Հօրիցս ստացայ 1854 թուականի օրացոյցը, որի համար երկար ժամանակ խօսել եմ քեզ հետ. այդ մասին զու մի քանի նկատմունք արա, արդիօք երբ կ'սկսես տպել տիրացու Սրապիոնը, ես անպատճառ ուղում եմ տպել, որով-

հետև հայրս ցանկանում է այդ. ես գիտեմ, որ Սրապիոնին այդ մասս է, բայց մի մոռանալ, որ հայրս էլ բաւականին չըքաւորութեան մէջ է, գոնէ 100 մանէթ պիտի հասնի նորա օրացոյցի համար. այդ թէե նա չի ասում, բայց ես պիտի հասկանամ, և գու նմանապէս. ուրեմն զու ինձ խմացում տուր, ինչ և ինչ ուղղում է ձեռնարկել Սրապիոնը: Եթէ մաճուլը կ'ստանաս՝ ինձանից փող մի պահանջիլ, այլ անխարդախ միտքով յայտնէ կարօտութիւններս Սանասարեանին. ոուտ ամօթը զըրադ: Բայց թէ չի յաջողուիլ ձեռնարկութիւնդ՝ գլուխը քարը—կ'ուղարկեմ ինչպէս և իցէ 20 մանէթ բայց... բայց..., մեծ զոհերով: Սկսէ, խնդրեմ, հաւաքել ստորագրութեան փողը, հաշիւ արա և ուղարկէ. ինչպէս անդադար քեզ ասել եմ, նոյնը և այժըմ կրկնում եմ՝ արագութիւնը միայն կ'օգնէ մեղ. մի մոռանալ:

Ասա Քաւթարաձէին, որ նա կ'ընդունուի. բայց Աստուած մի արասցէ, որ առանց փողի ոտքը գուրս դնի Մոսկովից,—սաստիկ կ'սխալուի. բայց և այս աւելացրուի, որ մեր հոգարածուն այս օրերս շուտ օգուտ քաղէ. բաղդը չի սիրում երկար և շարունակ ժպտալու. պայծառ օրից յետ իսկոյն անձրեային եղանակ է հասնում, մանաւանդ Պետերբուրգումը: Նաև այս՝ խնդրեմ քու մօտումդ գտնուած «Հարդանի մահը» առժամանակ ուղարկէ Նախիջևան այս հասցէով. Ե. Բ. Նիկիտъ Марковичу Г-նу Попову, ա վաս՝ прошу передать свящ. женѣ Елизаветѣ Мелконовнѣ Патканянѣ. նա որ կ'կարդայ՝ իսկոյն քեզ յետ կուղարկէ: Շատ բարե կ'անես Սիմէօնին, Քաւթարաձէին, տէր-Յարութիւնին, Սրապիոնին, Մոերին, Գիւլելովին, Սուրենեանին, Թէյմուրազովին, ուսանող Գասպարեանին և ամեն ծանօթներուս: Քերորի հետ գեռ ևս չիմ տեսնուել, բայց մի քանի պատճառ ունիմ հաստատ կարծելու, որ շատ քիչ հոգս է տանում Աքիմեանցի կնկայ ստորագրել տալու համար. այս առ ժամանակ կարծիքս է, բայց յետոյ կը տեսնես որ չի սխալեցայ:

Մակայէլ

Поклонъ Екатеринъ и Ачиъ Иванов. Евреиновымъ и Колѣ; послѣд. 1000 поцалуевъ. Что такое время?

Դէն, մեաս բարե հոգիս. մի մոռանալ խնդրածներս:

Թէկ ևս քիչ ժամանակ առաջ էի գրել, սիրական Փէորդ,
բայց խիստ տանջվում եմ քու աննախանձելի զրութիւնով, ուր
ձգեց քեզ մամուլի կորուստը, վախենում եմ որ դու նախընթաց
նամակս սովորական միտթարութիւն կարծելով՝ չէիր հաւա-
տալ իմ անսուտ խօսքերուն, թէ և ինչ որ քեզ գրել էի, ոչ
մինը նոցանից չունէին մի փոքրիկ կաթիլ քաղաքավարական
միտթարութեան, բոլորը բոլորը ճշմարիտ էին (թէկ նոցանից
մեծ մասը յոյսեր—բայց կատարելի յոյսեր են). Նոյնը այժմ
կը կրկնեմ, որ դու միանգամայն միամտիս. բայց թէ կամու-
կորութեամբ շարունակես յուսահասուելուն հաւատացիր որ սիր-
ալս սաստիկ կ'ցաւեցնես: Երեքշարթի այստեղաց կ'ուղարկեմ
300ի մօտ զանազան դնով այբբենարաններ, որ դու իսկոյն
ճամբայ կ'զնես դէպի Ստաւրապօլ, —այս յատկաբար Ստաւրա-
պօլի և Արմաւիրի համար է. մի շարաթից 400 հատ կ'ստա-
նաս, որ յարգելի գիրեքտօրը քու խնդիրքը կատարելով կ'ան-
հանգստանայ բառօն Նիկոլեախն ուղարկել: Յետոյ կ'ստանաս
300 հատ, Ղղլարի և Մօգլոքի համար է, որի ցլուելու համար
նմանապէս հոգս կ'քաշէ (յոյս ունիմ) գիրեքտօրը: Եթէ (Աս-
տուած տայ) պլ. Շանշինքն էլ կառնէ 300 հատ՝ մնացեալ 550ը
մէնք մի կերպով ձեռաց կ'ծախենք և... և... տպարանը փիւնիկ
հաւի պէս ոտքի կ'կանգնի—աւել փառաւոր, աւել ապահով:
Աստուած հաւատան, որ, երբոր լսեցի այդ չար լուրը՝ ոչ թէ
վհատեցայ, այլ աւել ովերսիցայ, քան թէ որ առաջ. հազար
մէկ նոր նոր աղբիւրներ հսարեցի, որոնցից թէ մինը բղիսի—
մեր բանը զարմանալի կերպով պիտի յաջողի: Տպարանապետը
(Եօնսօնը) ոչ թէ տպարանի, այլ և թուղթի մասին հոգս է
քաշում, որ առ ժամանակ անփող կարողանամ ստանալ վաճա-
ռականից. ինձանից առաւել հետամուտ է, որ թէ Գամառը, թէ
տաղարանը, և թէ օրացոյցը շուտով տպուին: Ես հօրս գրել և
խնդրել էի, որ օրացոյցի համար զանազան գիտելիք գրէ. պլ.
Եօնսօնը ինձ խորհուրդ է տալի նորա մէջ տպել թուսաստանի
աշխարհացոյցը, որով մեր գրքի արժանաւորութիւնը կ'աւելա-
նայ, այնպէս, որ մեր գիրքը կարեոր ձեռաց գիրք կ'լինի.
օրացոյցը, ինչպէս քեզ ասել եմ Մոսկով եղած ժամանակս՝
այսպէս պիտի լինի, 1) տօնացոյց, 2) ամեն Ռուսաստանի մէջ
գտնուած հայաբնակ քաղաքները, 3) ամեն տօնավաճառներու
ստորագրութիւնը ամեն կողմանէ, 4) ցանկ այբուրենի կար-
գով աօն գտնելու, 5) փօշդի հանգամանքները, 6) գերբովոյ
թուղթի պարագաները, 7) Հայոց պատմութիւն համառօտ, 8)
թագաւորի, դշխոյի և ժառանգի վիմագրած պատկերները,
9) աշխարհացոյց: Ուրեմն մեր օրացոյցը ուրիշ օրացոյցների

հետ համեմատելով 7 բանով հարուստ կ'լինի, այն ինչ դինը փոքր ինչ բանով թանգ, այսինքն 40 կամ 45 կոպէկ, ոչ աւել չիմի ես ուզում եմ իմանալ՝ արդեօք ուղարկեցի՞ր հօրս Կաւեկասի և մի ուրիշ Ռուսաց օրացոյց, որ նա նոցա մէջից քաղէ հարկաւոր գիտելիք, ինչպէս ինպրել էլ նախընթաց նամակումը, թէ ոչ. թէ չես ուղարկել անպատճառ և շուտով ուղարկէ՛: Այս օրացոյցը, որ տակաւին միայն իմ գլխումս է տպուած՝ խիստ սիրուն բան պիտի լինի և մեծ յառաջադիմութիւն պիտի ունինայ, առաւել քան թէ Վենետիկինը, և կ'լինի ԿՈ-ՏՕ ՅՐՈՅՑ ԱԼՅԱՆԱԽԱ. և 3000 հատ անպատճառ առանց դժուարութեան կ'ծախուի:—Թիմուրեանցի այստեղ եղած ժամանակ՝ ես մի ոտանաւոր էի գրել, որի միտքը այս էր, «թէ որ ուզում է հեղինակը որ իր շարադրութիւնը ունենայ յառաջադիմութիւն՝ պիտի ջանայ իւր անձով սիրելի լինել ժողովրդին ևայլն» այս ճշմարտութիւնը միանդամայն մեղ է յարմար. պատճառ որ իմ բարեկամների թիւը օրէ օր աւելացնելով ես նկատում եմ որ գրքերս էլ օրէ օր առաւել և առաւել ծախում են, զոր օրինակ Ղուկանովը, իշխան Բէհրուդիանը և նոցա քարեկամները արդէն այնպէս կարեկից և օգնական են ինձ, որ արտաքոյ իմ յոյսերուն գտնում են միջոցներ ծախելու տպած գրքերս և ցոյց են տալի ցրուելու հասրներ, 'ի հարկէ՛ ոչ գրքի արժանաւորութիւնը հասկանալով: Միայն թէ... Քերոբը, փոխանակ օգնելու, որքան միջոց ունի ձեռքն, յայտնի տեսնում եմ, որ ներհակն է ներգործում. Փլան 30 կամ 50 մանէթի համար ոչ մի խօսք չի յիշվում, և նա աշխատում է հեռացնել ինձ Աքիմեանցի գերդաստունէն, գոնէ որքան նկատում եմ՝ չի մօտեցնում, վասահ գոլով, որ վերջի գիտուածից ես յայտնի ու մեծ օգուտ ունիմ. նման չէ խոտի վրայ պատկած շունին: Բայց վատութիւնը անպատիֆ չի մնալ աշխարիս երեսին. ես արդէն նկատում եմ այն ամպերը և կայծակները, որ հավաքվում են նորա գլխին 'ի հարկէ փոթորիկը սաստիկ պիտի լինի. ես ունիմ հնար հեռացնելու այդ, բայց չէ. թնդ նա էլ փորձով իմանայ, ինչպէս վատ բան է անյաջողութիւնը. այդ խրատը գուցէ նորան ուղղէ՛: Ես շատ սակաւ տեսել էլ այսպիսի կեղծաւոր, չարակամ և նախանձու մարդ, ինչպէս որ նա է՛ վեր ջին աստիճանի ապերախտ և ոխակալ, նենգ:

Պր. Իզմիրեանցը մի աննստուկ կեանք է վարում. մօտ 30 անգամ իւել եմ նորա մօտ և տանը չեմ գտել: Ինչպէս անցեալ անգամ էլ գրել՝ ես դարսեր ճարեցի, որ ինձ ամսական 18 մանէթ կ'տան. աշակերտներս երկու թիֆլիզցի մեծատուններու որդիք են. մինը Միքայէլ Բէհրուդեան, իշխան, միւսը

ազնիւ Դօրդանով. երկուսն էլ պատուական տղերք են, զգայուն, սիրտով և բացուած խելքով, ինչ պիտի տապաւորել նոցամատաղ հոգումը՝ ես արդէն շինել եմ իմ պլանը. այս դիպուածը ինձ խիստ ուրախացուց. տեղը մնայ նոցանից ստացած արդիւնքը՝ այդ երկու պատանիք փոխանակ կորչելու մեր ազգի համար, իմ աշխատութեամբ և համոզութիւնով կ'դառնան սատիկ հայրենասէրներ, ես վստահ եմ: Բայց... Արիմեանցի որդին, որ նմանապէս կարող էր մի բան դառնալ... նա այժմ խօսում է զինուորականներու փայլուն զգեստի վրայ. իսկ նուրա քոյլերը՝ հայերէն չեն խօսում և չեն խօսիլ, և հային չեն սիրիլ որովհետեւ հայատեացութիւնն Քերորի օճէ Տիեզ է: Ահա ժօմանայ զարած! բայց մենք չի պիտի վհատինք. ազնիւ նպատակ, հաստատ կամք, արիութիւն, գործակատարութիւն—թողինին մեր քայլութիւնը, որ արի Մոսկով ելած ժամանակս, նոքա քեզ փոքր ինչ անսովորական թուեցան, բայց մի մոռանալ, որ մենք կենում ենք այն ժամանակումը, երբ որ պէտք է Մակրիվէլիի քաղաքականութիւնը—ազնիւ նպատակը ամեն միջոց և հնար ներում է. ազգի օգտին ամեն մասնաւորը պիտի զոհուի. լաւ հասկացիր այս և յետոյ ՚ի գործ զիր. բայց կուրզկուրայն մի հետեիլ ասածիս: Այսօր ժամը 12 ինձ հրաւիրել է իր մօտ պր. Բուզաղովլ. կարծեմ որ ուզում է օգնել մեր ընդհանուր գործին. միւս նամակումս կ'գրեմ:

Քու կողմանէ աշխատէ շարունակել Գ. Թ. ստորագրութիւնը, որքան կարող ես շատ տարածէ մեր կարդացողների թիւը. ո՛չ մի անյաջողութիւնից մի՛ վախենալ. մեր բոլոր անյաջողութիւնը այն պիտի լինի, որ պիտի անձնային օգուտ չունենանք, բայց Գ. Թ. ծախքը միշտ գուրս կ'հանենք. այդ է գլխաւորը: Օգուաը կ'լինի, թէս ուշ: Հիմի մենք մամուլը կորցրինք. գուցէ քու կարծիքով կորաւ մեր բոլոր իլլիւզիան. բայց չէ. ինչպէս ես ասել էի քեզ՝ մենք անպատճառ կ'ունենանք տպարան, հէնց որ գուրս կ'գայ հրաման. մամուլ և ուրիշ հարկաւոր բաներ իսկոյն կ'երևին, հաւատացիր իմ բարեկամութեանս. գու կ'գաս այստեղ ձմեռը և կ'տեսնես մեր գործերը ծլած ծաղկած: Պարտք կ'լինի, խօսք չի կայ, բայց կ'ունենանք և գործարան. եթէ չորս այդպիսի անյաջողութիւններ էլ պատահելու լինէին՝ էլի մեզ մի զգալի մաս չեն հասցնիլ. մեր մասը կ'լինի այն ժամանակ՝ եթէ մինը մինը մեզանից մենի, եթէ հայերը թողնեն իրանց ազգութիւնը, եթէ տպարաբանական արուեստը բնաջինջ լինի Մուսաստանումը. բայց մանը կորուատներ մեղ աւել կ'բորբոքեն, ինչպէս որ մանրա-

շաղ անձրել փոխանակ հանգժնելու հրդեհը, ևս առաւել բորբոքյացնում է: Թագաւորին նուրբած ոտանաւորի համար ոչինչ լուր չունիմ տակաւին. տեսնենք ինչ կ'ասէ միւս շարաթը: Շատ բարեւ արա Թէյմուրաղեանին: Նմանապէս Սիմէօնին և այլոց: Եւրէյինովներուն և Նիկոլեային բարով:

Մնաս բարեւ, հոգիս, քու Ռասիայէլ
1856. Հոկտ. 9
Ս. Պ. Բուրդ,

Սրապիոնից ստացիր և ուղարկէ «Առաւօտ լուսաբեր»
տաղը:

Սիրելի եղբայր Գէորգ.

Նամակս կարճ եմ սկսում, կարճ էլ կ'վերջացնեմ: Իմ 4 հայ աշակերտները մտան զնդագետ Ռումելիի մասնաւոր գալուցը, և այնտեղ ես պիտի սովորացնեմ նոցա հայերէն և կրօն. առաջինի համար իրաւունք ստացայ համալսարանից, իսկ երկրորդի՝ չունիմ, որ կարող է տալ Եպիսկոպոսութ և Մսեր ճագիստրոսը. դու, ինպրեմ, հէնց նամակս ստացած օրդ և ըսպէդ գնա առաջինի մօտ և անպատճառ ստացիր վկայագիր կնքած, որ ես կարող եմ սովորացնել, ինչպէս ինքս սովորած այդ մասին և ունիմ կատարեալ իրաւունք. Եթէ դու միւս շաբաթ 3 շաբթի չես հասցըել՝ անտարակոյս ես պիտի զրկուիմ այդ աղբիւրից: Շատ աշխատէ, որ Եպիսկոպոսը տայ, բայց եթէ անհնար լինի՝ Մսերի վկայագիրն էլ կարծեմ, կարող է բանի տեղ անց կենալ: Բայց առաջինինը նախադասելի է: Բուդապովը 200 հատ այբբենարան խոստացաւ Հաշտարխանումը ցըռուել. Շանշինքը զեռ ես ոչ հա է ասում, ոչ չէ. Բերոբը չի աշխատում Արիմեանցի կնկայ փողի մասին. Բայց տպարանի գործը առաջանում է: Իղմիրենանցն էլ տանը չի գտնուում, որ կարողանայի 69 մանէթը առնել նորանից:

Անցեալ Շաբաթ ուղարկել էի քեզ ծանր շոգեկառքով 328 այբբենարան. ստացմո՞ր մամուլը Քնչպէս է. «Առաւօտ լուսաբերը» ինչու չես ուղարկում:

Եթէ Եպիսկոպոսին ինդիր պիտի տալ՝ դու գրէ իմ ստորագրութեամբ և իմ անուամբ տնկր:

Ռասիայէլ
1856. Հոկտ. 17.

Սիրելի եղբայր Գէորգ.

Հիմի ես տեսնում եմ որ շատ տեղ ոչ աշխատանքը, ոչ բարի ցանկութիւնը կարող է վարձատրուել, եթէ այդ երկու-

ու չունենան իրանց օգնական—ճշտութիւն։ Այդ իմ գլխիս պատահեցաւ, շարաթ ու կէս տաղած աւարտած էնք Գ. Ք. ները և ես յուսալով նիկոլեաի վրայ, և նա մի ուրիշի վրայ կարծում էինք որ դու արդէն ստացել ես. բայց բանից երեեցաւ, որ դու չես ստացել, սկսեցինք պատճառը խուզել և իմացանք որ դեռ ես Պետերբուրգից էլ չեն գուրս եկել, մնում էր մեղ ուղղել մեր և ուրիշի սխալը։ Այսուհետև թող այդ ինձ համար խրատ լինի, որ ուրիշի վրայ չապաւինիմ—եթէ ինքս կարող եմ կատարել։ Նիկոլեաի հետ չի կարողացայ զբել քեզ, այն ժամանակ ես զրադուած էի երկու թուահամարով, որի համար էլ այժմ գիշեր ցերեկ աշխատում եմ. բայց դորանից տպում եմ այն այբբենարանը, որ քեզ ցոյց տուի. պր. Իզմիրեանցը ինձ խոստացաւ փոքր ինչ օգնել—30 մանէթով. այդ էլ լաւ է, եթէ աւել յոյս չի կայ ստանալու։ Վանիւշի Գ. Լուսաւորիչը սրծաւ. խիստ գեղեցիկ է քարի վրայ. Լուսաւորիչի և Տրգատի երեսների տիպարը հրաշալի են. Սանգուխատի և Աշխէնի երեսները և շորերը նմանապէս գերազանց են—եթէ միայն պատմական ճշմարտութեան նիկրհակ չեն. լինդհանուրը sua generis աննման են. մնում է զրել և տապել, գորա համար պէտք փող։ Եթէ իմ 8-ը նորա 7 և առաջի թուահամարի փողերը համնի ժամանակին՝ յոյս կայ որ երկուշաբթի կսահնատ։ Բայց եթէ առ ձեռն պտարաստ փողերը ուղարկես հէնց այս նամակը ստանալով, և մնացեալը անյապազ յետոյ ուղարկես՝ այդ ամենից լաւն է։ Մեր Մուկով գտլը կամ չի գալը զեսկս վճռած չէ. աւել ցանկանում ենք գալ, քանի թէ չի գտլ։ Վարդանու խիստ ուշացրիր. ես կարծում եմ, որ դու կորցրել ես. այդ ինձ շատ ցաւալի է, եթէ արդարանայ կասկածանքս։ Քերորը քեզ զրել է նամակ (ինչպէս ասաց ինձ)։ Քեզ, Թիմուրեանին, Սիմէօնին շատ բարեկ իզմիրովից, Վանիւշից, Նիկոլեաից, աղքասէրները նմանապէս բարեկ են անում քեզ։ Քու վերջի նամակը ցոյց տուի պր. Իզմիրեանին. նա փոքր ինչ վիլաւորուեցաւ մեղանից, կարծելով որ նորան էլ դասում ենք մենք աղքասէրների թիւը, որ մենք ամենենին չէինք կարծում. աղքասէր խօսքը մենք հասկանարով շառլատան—ամենենին այդ անունով չէինք վիրաւորիլ իզմիրովի պէ։ բարեսիրու և բարեացակամ անձին։

Ուրեմն՝ զրէ այն աղղու նամակը... ին, ուղարկէ փողը և զրէ պատասխանը անյապազ։ Ինձանից շատ բարեկ ամենին։

Մնամ հոգեհարազատ եղբայր քու Ուախյէլ

ԹԻՒՐՓԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ *)

Թիւրանաների մինիստրութիւնը ներկայումն

Նախ և առաջ մենք կանգ կ'առնենք թուրք ֆինանսների այն մասի վրայ, որի մէջ եւրոպան չի խառնում և որը կախուած է անմիջապէս իրան, թուրք կառավարութիւնից, և որը «Մալիէ-նազիրի» ամօրինութեան տակ է գտնուում:

«Մալիէ-նազիրի» (ֆինանսների մինիստր) պաշտօնը մի երկուում, ուր չկան պարլամենտական վերստուգող մարմիններ, ուր ժողովուրդը, զուրկ որ և է իրաւունքից պարտաւորուած է ընդունել կառավարութեան ներկայացուցած բոլոր ծախքերը՝ առաջի անգամից կարող է երևալ շատ հանգիստ ու ցանկալի՝ բարձր պաշտօնեայի տեսակէտից: Աւելացրէք դրա վրայ և այն, որ Թիւրքիայում բոլորովին գոյութիւն չունի հասարակական կարծիքը և պետական ելքի ու մուտքի նախահաշիւը մինչև իսկ չի հրատարակւում: Եւ սակայն հազիւ թէ Թիւրքիայում դանուի մի այլ պաշտօն նոյնքան պատասխանատու, որքան և դժուար, ինչպիսին է ֆինանսների մինիստրի պաշտօնը:

Մալիէ նազիրիի առաջին և գլխաւոր հոգու պէտք է լինի ժամանակին գտնել և հասցնել փողի որոշ գումար իլլիզ-թիոսկ, այսինքն սուլթանի և նրա շըջապատողների անձնական ծախքերի համար: Մնացեալը, ինչպէս օր. զօրքի, պետական պաշտօնեաների սոճիկը, առօրեայ ընթացիկ պետական ծախսերը և այլն, գրանք երկրորդական դեր են խաղում մինիստրի համար, յամննայն գէպս միւս բոլոր ծախքերը կարող են «սպասել»: Զէնքի կամ այլ պետական անհրաժեշտ մթերքների մատակարարողները քաջ գիտնալով որ պէտք է երկար «սպասեն», ապրանքները մատակարարում են աւելի թանգ գնով և որակի կողմից աւելի վատ. այդ մասին ամեն ոք գիտէ բայց ամենքը նայում են իրքեւ անհրաժեշտ չարիքի վրայ:

*) Տես «Մուրճ» № 2—3.

Այն փաստը, որ պետական թէ բարձր և թէ մանր պաշտօնեաների իրաւունքները և պարտականութիւնները բոլորովին մութ և անորոշ են, մանաւանդ աչքի է ընկնում ֆինանսների մինխատրութեան վերաբերմամբ։ Այդպէս 1890 թ. սուլթանը հաստատում է մի յատուկ ֆինանսական յանձնաժողով, որ կոչուեց, թոփխանէ (ժողովները թոփխանէ պալատումն էին տեղի ունենում), որի նպատակն էր մանրամասնորէն ծանօթացնել իրան՝ սուլթանին ամեն ահեսակ ֆինանսական ծրագիրների ու ու առաջարկութիւնների հետ։ Այդ յանձնաժողովով բոլորովին անկախ էր ֆինանսների մինխատրից և շատ անգամ մինչեւ իսկ առանց նրան հարցնելու՝ խառնուում էր մինխատրի կարգադրութիւնների մէջ։ Եւ որովհետեւ սուլթանի համար էր հաստատուած այդ յանձնաժողովը, ուստի և սա դարձաւ բոլոր ֆինանսական հարցերի համար ամենարարձրագոյն ինստանցիան, թէև այդ հարցերի ամբողջ բարոյական պատասխանատութիւնը մնում էր առաջուայ պէս ֆինանսների մինխատրի վրայ։

Թրքաց ֆինանսների մինխատրութեան մէջ ամրող օրերով զբաղուած են հարկեր մեծացնելու նորանոր ծրագիրներով (հայ, յոյն, հրէայ և եւլուպացի՝ միջնորդների կողմից տուաջարկուած)։ Հասկանալի է ինարկէ, որ այդ բոլոր առաջարկութիւնները ոչ մի կատ չունին երկրի անտեսական բարենորոգման հետ։ Թրքաց մինխատրների մեծամասնութեան համար մի որևէ նոր փոխատութիւն—միևնույն է թէ մի պետական եկամուտի մեծանալը։

Ֆինանսների մինխատրը չէ կարող որ և է եկամուտի նոր աղբիւր բանալ առանց պատահելու այն կամ այս եւրոպական տէրութեան շահերին։

Այդպէս՝ Թիւրքիայում շատ են սիրում ամեն ինչ մոնուպուիսի ենթարկել ուզում են օր. ծխախոտի թղթի մենաշնորհում—ըայց Աւստրիայի և Թրանսխայի ներկայացուցիչները իսկոյն իրանց բողոքն են յայտնում, որովհետեւ այդ ապրանքը ներմուծում է գլխաւորապէս Ֆրանսիայից և Աւստրիայից։ Կառ թէ խօսք կար, օր. կերոսինի մասին, բայց այստեղ արգէն Ռուսաստանը բողոքն է հարցը փակուեց։ Ի՞նչպէս երևում է, ֆինանսների մինխատրի որաշտօնը այնքան էլ հեշտ չէ...

Գալու ֆինանսական վարչութեան կազմակերպութեան, այս մասին պէտք է ասել հետեւալը։ Կաղմակերպութեան տեսակէսից և առած թղթի վրայ, նա իր մէջ կրում է առողջ սողմեր։ Այդպէս կ. Պոլիսը և գաւանները, ինչպէս և գաւանները միմեանց վերաբերմամբ բոլորովին անկախ են։ Նրանք ունեն իրանց սեփական նախաճաշիւր, իրանք պէտք է ծախ-

սեն եկամուտի որոշ մասը տեղական պէտքերի վրայ, մնացած մասն էլ ուղարկելու են ֆինանսների մինիստրութեանը: Այս բոլորը իհարկէ հիանալի կը լինէր, եթէ միայն իրագործուէր: Իրողութիւնը սակայն այլ բան է ասում: Հէնց որ կենդրոնական վարչութիւնը (կ. Պոլսում) փողի պէտք է զգամ, իսկոյն իր անունից տալիս է չէկեր այս ինչ գաւառի վարչական գանձարանի վրայ, որը և պարտական է փող տալ այդ չէկերը ներկայացողներին: Պատահում է և այնպէս, որ միենոյն գաւառական գանձարանի վրայ զրուած է լինում մի քանի անանդամ այդ չէկերը, առանց ուշադրութիւն դարձնելու, թէ այնտեղ այնքան պատրաստի փող կայ, թէ ոչ:

Աւելացնելու է սրա վրայ և վերջերս ընդունուած սովորութիւնը, այն է՝ Խղիզ-Քեօսկը հետազով հրամայում է ուղղակի իրան հասցնել այս ինչ գաւառական զումարը առանց նախօրոք ֆինանսների մինիստրութեանը իմաց տալու կամ փողը նրա մատեանից անցկացնելու:

Այդ չէկերը, կամ ինչպէս անուանում են «հավալէ»-ներ այնքան են տարածուած, որ մի քանի գաւառներում ուղղակի չեն ընդունում, որովհետեւ զրանց փոխարէն երբէք ոչ ոք փող չի ստացել:

Ներկայումս, ինչպէս սրանից և 15—20 տարի առաջ ֆինանսների մինիստրը, ամեն երկու տարին մի անգամ «յիշողութեան համար» պատրաստում է «նախահաշիւ», որը իհարկէ երբէք չի հրատարակում լրագրներում, ինչպէս այդ ընդունուած է քաղաքակիրթ երկրներում: 1901 թ. նախահաշիւը ենթակարում է շուրջ 200 միլիոն բուբլու մուտք, նոյնքան էլ ելք: Բացի այդ ըստ սովորութեան ցոյց էր տրուած և այն, որ առաջիկայ տարուայ մուտքը աւելի է սպասում, քան թէ ելք...

Այդ 200 միլիոն բուբլիից 110 միլիոն ը. կազմում են հողային հարկերը, տասանորդները, տուրք անսասուններից:

50 միլիոնի ը. անուղակի հարկեր (մաքս, աղ, դրոշմաթուղթ), 30 միլիոն ը. զանազան վարչական հարկեր և մնացեալը տուրքեր վասարական ձևի տակ:

Գալով ելքին՝ յիշենք այստեղ Թիւրքիայի, այն ընորոշ կողմը, որ սուլթանի անձնական ծախքերի համար նոյնքան է յատկացրած, որքան և հետեւալ մինիստրութիւններին վլասին առած: 1) Պօստ և հեռագիր, 2) Արտաքին գործերի, 3) Լուսաւորութեան, 4) Առեւտրի, հողագործական և լեռնային վարչութեան 5) Արդարադատութեան մինիստրութեան: Սրանք բուրք, ասում ենք, միասին առած նոյնքան են ծախսում, որ-

բան մենակ հլլիզ-Շիոսկը և նրա հերոսը: Բացի սրանից մոտ 50 միլիոն ժախսում է պատերազմական մինիստրութիւնը, 15 միլիոն ներքին գործ. և ժանդարմները—և 70 միլիոն պարտքերի վճարման համար է ժախսում. այդ 70 միլ. համապատասխան ստացուելիք տուրքերի իրաւունքը տրուած է «Հանրային պարտքերի վարչութեանը» որի մասին կը խօսենք առանձին:

Ցոնկցիօնարիզմը, այսինքն պետական պաշտօն որոնելու տեսնջը այնքան զարգացած է Թիւրքիայում, որ ով ասես Թիւրքիայում չի ուզում աստիճանաւոր դառնալ: Այդ երևոյթը մանաւանդ զարմանալի է երեւում, երբ աչքի առաջ առնենք այն, որ պետական պաշտօնեաները ամբողջ ամիսներ չեն ստանում իրանց ոռճիկները: Ամեն մի պաշտօնեայ տարրուայ սկզբում ստանում է մի թերթ՝ «սուրէթ», որտեղ նշանակուած է պաշտօնեայի ստանալիք տարեկան ոռճիկը: Ռոճիկը ստանալիս՝ ամեն անգամ այդ «սուրէթ»ի վրայ նշանակուում է և այն, թէ որքան է մնացել ստանալու: Բայց համարեա միշտ պետական ծառայողները ամիսներով չեն ստանում իրանց ոռճիկը, ուստի նրանք ստիպուած են տանել ծախել իրանց «սուրէթները» Կ. Պոլսի սարրաֆներին: Այս վերջիններս գնելով սուրէթի ամբողջ արժէքի միայն քառորդ գնով, իրանց կողմից վերածախում են (ի հարկէ ոչ պաշտօնապէս) զանազան մինիստրութիւնների վարչութեան կառավարիչներին անուանական արժէքի $\frac{1}{3}$ կամ $\frac{1}{2}$ գնով: Իսկ այդ կառավարիչները արդէն ունենալով իրանց կարգադրութեան տակ ծառայողներին պատկանած ոռճիկներ, նախ և առաջ վճարում են նաղդ փողով այդ սուրէթները, այլ խօսրով դրանց վրայ իրանք շահում են 40—50 տոկոս: Պարզ է, որ վաղ թէ ուշ կառավարութիւնը տալիս է պաշտօնեաների ոռճիկները, բայց ոչ թէ այն մանր ծառայողներին, որոնք ամենից շուտ և ամենից շատ կարիք ունին ոռճիկը կանոնաւորապէս ստանալու: Այս բոլորը գաղտնիք չեն. բայց ինքը կառավարութիւնն այնպէս է ձևանում, թէ կան, «այլ կողմանակի միջոցներ»—ծառայողի կեանքը հայթայթելու: Բայց ով չգիտէ, որ արևելքում կեանքը այնքան էլ հարուստ չէ այս «կողմանակի» միջոցներով. միակը կայ և նրա անունն է հոչակաւոր «բաքշիշը»: Բաքշիշ վերևից մինչև ցածը. բաքշիշ ամեն տեղ և ամեն դէպքում: Ի՞նչ ասես չի կարելի արևելքում ձեռք բերել բաքշիշով. «բայլին ոտքերն են կերակրում» ասում է առածը, թուրք պաշտօնեային կերակրում է բաքշիշը, այլապէս նա ստիպուած է կամ քաղցից մտնել և կամ... կողոպտել: Եւ այն դէպքում, երբ բաքշիշը

չի յաջողւում կամ անկարելի է դառնում—զոյութիւն ունի կեղերումը: Մի խօսքով Թիւրքիայում ժողովուրդը տալիս է կառավարչական պաշտօնեաներին և ուղղակի և անուղղակի: Անուղղակի՝ տալով պետական հարկեր, որոնց մեծ մասը ծախսում է այլ պաշտօնեաների վրայ, ուղղակի՝ տալով բարեհշահեր և վճարելով ստիպողական միջոցներով, որպէսզի այս կամ այն օրինական խնդիրը անցնի, և կամ արհեստական խոչընդուների չհանդիպի:

Ֆինանսների մինիստրութեան հոկոպութեան տակ է գըտնըլում մաքսային տուրքը: Վերջինս գոյութիւն ունի Թիւրքիայում, ոչ թէ արդիւնաբերութեան մի որևէ ճիւղը. զարգացնելու նպատակով, այլ լոկ պետական եկամուտը մեծացնելու համար: Արտասահմանեան ապրանքների համար Թիւրքիայում որևէ տարիք գոյութիւն չունի. այլ մաքս վերցում է ապրանքի արժողութիւնից (ad valorem) ութ տոկոս: Ինչ որ ներմուծում է, թէկուզ հում նիւթ թէ արդիւնագործուած ապրանք, վերցում է արժեքից 8 տոկոս. իսկ ինչ որ արտահանուում է Թիւրքիայից, վերցում է թիւրք կառավարութեան կողմից ապրանքի ընդհանուր արժեքից—մի տոկոս:

Թիւրքիայի ներմուծման ու արտահանման ստատիստիկան հետևեալ թուերն է մեղ տալիս:

1898—99 թ.

Ներմուծ	Եւրոպ.	ապր.	արց.	Ստահան	թրք.	ապր.
Անգլիայից	8,567,740	Թրք.	ոսկի.	6,313,160	թ.	ոսկի
Աւստրիայից	4,202,990	»	»	1,496,760	»	»
Ֆրանսիայից	2,100,940	»	»	4,606,650	»	»
Ռուսաստանից	1,752,300	»	»	382,770	»	»
Իտալիայից	698,830	»	»	469,160	»	»
Բուլգարիայից	672,680	»	»	369,280	»	»
Ռումինիայից	675,540	»	»	220,930	»	»
Պարսկաստանից	581,720	»	»	25,030	»	»
Բելգիայից	493,570	»	»	229,030	»	»
Յունաստանից	293,020	»	»	329,300	»	»
Դերմանիայից	209,140	»	»	269,640	»	»
Հոլանդիայից	175,640	»	»	374,620	»	»
Ամեր. Մ.-Ն.-ից	24,360	»	»	289,220	»	»
24,070,000 թրք. ոսկի						
13,750,000 թրք. ոս.						

Այս թուերը ի հարկէ կարող են լինել միայն մօտաւորապէս ճիշտ, որովհետև Թիւրքիայի վերաբերեալ ստատիստիկան առ հասարակ կենսորոնացած չէ և գիտական մեթոդով չէ կատա-

րուած: Օր. Գերմանիայից Թիւրքիա ներմուծուած ապրանքի մասին Handelsarchiv-ը այլ թուեր է տալիս, որից երեսում է, որ գերմանական ապրանքները վերջին տարիներս շատ աւելի են ներմուծում Թիւրքիա, քան թէ այդ տեսնում ենք պաշտօնական սատարտիկայից: Գերմանական աղբիւրներից երեսում է նոյնպէս, որ վերջին տաս տարուայ մէջ, մանաւանդ 1896 թ. զէպրերից յետոյ՝ Թիւրքիայի արտահանութիւնը քանի գնում ընկնում է. իսկ արտահանուում են գլխաւորապէս ցորեն, գարի, չոր խաղող, մետաքս և ծխախոտ:

Թիւրքական ֆինանսների մինիստրութեան հովանաւուրութեան տակ է գտնուում գործարանական արդիւնաբերութիւնը: Պաշտօնապէս Թիւրքիայում համարւում են մօտ 1500 հատ զանազան գործարաններ, բայց այդ թուից հաղիւ 50-ը կարող են այդ անունը կրել, մնացածը փոքրիկ արհեստանոցներ են, ուր գլխաւորապէս պատրաստում են անային անհրաժեշտ իրեր. բացի գրանից այդ ապրանքները ծախուում են այն գիւղում, կամ այն բաղաքում, ուր և արտադրուում են: Գոյութիւն ունեցող մանր թէ խոշոր արդիւնաբերութիւնը քանի գնում նուազում ու փոխարինուում է արտասահմանում արդիւնաբերուած և Թիւրքիա ներմուծուած ապրանքներով: Այսպէս՝ Զմիւնիայի նշանաւոր գորգերը, որ առաջ խիստ շատ էին արտահանուում, ներկայումս ամեն տեղ «ծեծուում են» Թունիսում պատրաստուած գորգերից և այդ արդիւնաբերութիւնը շատ է ընկել վերջին տարիներս:

Մենք գետ ներքե կը խօսինք այն գլխաւոր պատճառների մասին, որոնք խոցնուում են Թիւրքիայում խոշոր արդիւնաբերութեան զարգացման: Յիշում ենք այստեղ միայն ամենախոշոր գործարանները, որոնք են մետաքսի, ապակիի, գարեջըրի, արհեստական սառոցի, կաշուի: Ալդ գործարաններից մի քանիսում, որպէս շարժիչ ոյժ, գործածուում է գոլորշի, միւսներուամ—ջրվէժները, գետերը, և ինչպէս միշտ, նախնական միջոցներով: Աւելորդ է ասելն էլ որ այս «խոշոր արդիւնաբերութիւնը» ոչ թէ մահմեդականների ձեռքութիւնն է, այլ կամ եւրոպացիների և կամ հայ բողոքականների, կաթոլիկների, յոյների և մասամբ հայ լուսաւորչականների: Բայց կան և պետական գործարաններ, այդպէս՝ վասողի գործարան, մահուտի գործարան (պատերազմական մինիստրութեան պէտքերի համար, որտեղ մօտ 2000 բանուոր է բանում), կօշկի պետական գործարան—500 բանուորով. սա արդէն խոշոր արդիւնաբերութիւն է, բայց գրանց թիւը 4—5-ից գէնը չի անցնում:

Անտառների, ինչպէս և հանքերի շահագործման գործը

նոյնպէս շատ թոյլ է դրուած Թիւրքիայում։ Երբեմն հարուստ դարաւոր անտառներով, ներկայումս Թիւրքիայի շատ գաւառներում փայտը սպառուել է և շատ է թանգացել։ Գալով հանքերին՝ պէտք է ասել, որ հարուստ ամեն տեսակ հանքերով Թիւրքիան ոչինչ կամ համարեա ոչինչ չի շահագործում իր հանքերից։ Ինքը կառավարութիւնը շահագործում է պղնձի հանքեր Արդնում (Դիարբէքիրի մօտ), ինչպէս և Տաւրոսի լեռներում — արծաթ ու արծիճ։ Հանքային կոնցիսսիաները շատ դժուարութեամբ են տրուում եւրոպական ակցիօներական ընկերութիւններին։ ամենափոքր քանակութեամբ շահագործում է մանգանէզ, ածուխ, պղինձ, խոօմ, գրանցից ամենանշանաւորն է Հերաքլէի ածխահանքը։ Այս բոլորից պետական գանձարանը համեմատաբար շատ քիչ է շահաւում։

Թուրք կառավարութեան բազմաթիւ հիւանդ կողմերից մէկն էլ այն է, որ միենոյն փողը Թիւրքիայի զանազան գաւառներում զանազան արժէք է ներկայացնում։ Օրինակ՝ Բէյրութում և Բաղդադում միենոյն փողի գները զանազան են, կամ թէ Դամասկոսում այն չեն տալիս, ինչ տալիս են Տրապիզոնում։ Թրքաց ոսկին կ. Պոլսում արժէ օր. 100 պիաստր, և նոյն ոսկին Զմիւռնիայում արժէ 127 պիաստր։ Իսկ Երուսաղէմում 140։ Բացի այդ՝ Թիւրքիայում գործածում են օտար տէրութիւնների փողերն էլ. օր. Բաղդադում և Բասսորայում գործածում են գլխաւորապէս պարսկական դրանները, Հեջազում և Եմենում—աբխազիական փողերը, Մեքքայում գերադասում են արծաթը և ամեն ոք շտապում է ոսկին փոխարինել արծաթ փողով... միւս տեղերը ընդհակառակը Այդ փողայինքասական դրութիւնը քանից ուղեցել են կանոնաւորել, բայց թէ Փինանսների մինիստրութիւնը և թէ Բանկ-Օտառմանը ոչինչ չեն կարողացել անել։ Զալէտք է մոռանալ, որ մեծ թէ փոքր քաղաքներում կան ահազին բանակութեամբ «արրաֆներ», որ ապրում են փող մանրացնելով, ու փող փոխելով։ Ամեն տեղ, բացի 4—5 քաղաքներից՝ մեծ կարիք է զգացւում կանոնաւոր բանկերի, որոնց պակասը շատ է ազդում առևտորի ու տընտեսական կեանքի վրայ։ Բացի մի քանի եւրոպական բանկերից, ինչպէս ասացինք գոյութիւն ունի և պետական «Բանկ-Օտառմանը»։ Բայց վերջինս մեծ դեր է խաղում ոչ թէ երկրի առևտրական-արդիւնաբերական յարաբերութիւններում, այլ պետական ֆինանսական կեանքում։

Այլպէս՝ առևտրական մուրհակների զեղջ, կամ այդ տեսակ յատուկ բանկային գործունէութիւն շատ քիչ է զարգացնում Բանկ-Օտառմանը։ Նա զբաղուած է գլխաւորապէս պետա-

կան պարտքերի և արժէթղթերի գեղջման և փոխարինութիւն-ների հարցերով։ Բանկ-Օտտոմանը հիմնուած եւրոպական կա-պիտալներով և միջնոյն ժամանակ լինելով պետական հաստա-տութիւն—մի տեսակ միջնորդ է, թրբաց ֆինանսների մի-նիստրութեան ու եւրոպական կապիտալիստների մէջ։ Ահա թէ ի՞նչու 1895-96 թ. դէպքերը սաստիկ ազդեցին եւրոպա-ցիների վրայ։ Պէտք է ասած, որ 1896 թ. Բանկ-Օտտոմանը այնպիսի արկածի հանդիպեց, որ միակն է բանկերի պատմու-թեան մէջ։ Մի խումբ հայ յեղափօխականներ յարձակուեցին Բանկ-Օտտոմանի վրայ, որը գտնւում է Կ., Պոլսի կենտրօնական փողոցներից մէկում, մտան ներս, գոցեցին գոները և դգալով ի-րանց անառիկ բերդի մէջ, սկսեցին պատուհաններից ոմբեր ար-ձակել փողոցում խմբուած ժանդարմների և զինւորների վրայ։ Անվախ հայ երիտասարդների նպատակն էր այդ-պիտով գրաւել եւրոպայի ուշադրութիւնը Թրքահայաստա-նում տեղի ունեցող կոտորածների վրայ։ Նրանց հաշիւը— զարնել եւրոպացիների գրավանին ի դէմս նրա Բանկ-Օտտոմա-նի, և միայն այդպիսով ստիպել նրա ուշադրութիւնը դարձնել հայ տարրի վրայ, ունեցաւ միայն իր գուտ պատմական նշանա-կութիւնը։ Եւ յիրաւի՝ դիպլոմատիան ցնցուեց, մինչև իսկ սոս-կաց, բայց կարճ ժամանակից յետոյ զանազան կեղծ խոստ-մունքներով յեղափօխականներին հեռացրեց բանկից։ Այդպի-սով «բանկային դէպքը» որևէ պրակտիկ նշանակութիւն չունե-ցաւ. բայց անուրանալի էր փաստը, որ Կ.-Պոլսի եւրոպական ներկայացուցիչները ցնցուեցին միայն այն ժամանակ, երբ եւրոպայի կապիտալը բիսկի էր ենթարկւում։

Թէև թիւրքաց արտաքին փոխառութիւնների և պարտ-քերի մասին միայն կը խօսենք յատկապէս հետեւալ գլխում, բայց այստեղ պէտք է յիշենք Թիւրքիայի այն պարտքերի մա-սին, որոնք ֆինանսների մինիստրութեան տնօրինութեան տակ են գտնւում և ուր եւրոպան (Հանրային պարտքերի վարչու-թիւնը) չէ խառնւում։

Այդ տեսակ պարտքերից ամենազլիաւորն է՝ ոռու-թրքա-կան պատերազմից մնացած թուրք պարտքը։ Ս. Ստեֆանոի պայմանների հիման վրայ, Թիւրքիան պարտաւորուեցաւ վճա-րել Ռուսաստանին 300 հազար բուրքի. սակայն դրանից իս-կոյն և եթ յետոյ, Բերլինի համաժողովը վճռեց հետևելը՝ համաձայն լինելով սկզբունքով այդ գումարի հետ. որոշեց, որ այդ պարտքը պէտք է բոլորովին առանձին տեղ ըննէ և չպէտք է խառնուի Թիւրքիայի մնացեալ և դրանից ա-ռաջ գոյացած միւս պարտքերի հետ։ Այդպէս Թիւրքիայի պա-

տերազմական պարտքը չէր մտնում «Հանրային պարտքերի վարչութեան» տնօրինութեան տակ, այլ կախուած էր լոկ թուրք կառավարութիւնից, որը իրբե իր պարտքի երաշխառութիւն, ներկայացնում է Ռուսաստանին Աղանայի, Սիվասի և այլ երկու վիլայէթի տասանորդ հարկերը:

Այդ օրից ի վեր, փոխանակ ամեն տարի իր պարտքի տասերորդ մասը տալու՝ Թիւրքիան ոչինչ չէր վճարում Ռուսաստանին. և միայն 1898 թուականից ոռւս գեսպանը ըսկըսում է պահանջել նախօլին տարիների չվճարուած գումարը: Տեսնելով, թէ ինչ եռանգ է գործածում Ռուսաստանը իր պարտքը պահանջելիս՝ թուրք կառավարութիւնը դիմեց Բանկ-Օտտոմանին և վերջինս վճարեց Ռուսաստանին ապասիկ գումարները, առնելով միենոյն ժամանակ իր կարգադրութեան տակ չորս վիլայէթների հարկերը, որ առաջ ֆինանսների մինիստրութեան ձեռքումն էր գոնուում:

Ռուսաց գեսպանի այդ անակնկալ պահանջները իր ժամանակին զանազան տեսակ էր բացատրուում Եւրոպայում, բայց դժանց վրայ կանգ առնելը—մեր յօդուածի սահանից գուրս է:

Ռուբէն Բնըներնան

(Պը շաբոնակուի)

Մ Ո Ա Յ Լ Օ Ր Ե Ր

Երկաթուղու կայարանում ահագին ամբոխ էր խմբուած։
Թէև ամեն աեղ տիրում էր կենդանութիւն, լսում էր խօսակ-
ցութիւն, ծիծաղ, բայց՝ վրալովուած, կասկածու հայեացքներից,
գունատ՝ կարծես մահճակալից նոր վերկացած՝ հիւանդու դէմ-
քերից երկում էր, որ մի ինչոր գաղանի շփոթութիւն է տի-
րել այդ մարդկանցը, մի ինչ որ չզային ալիք է տարածուել
և աներեւոյթ թելերով փաթաթել նրանց։ Թէթև շարժում, փոքր
աղմուկ և նրանք պատրաստ էին զլսակոր փախչել։ Այդ տեսակ
արտայատութիւն երկի թէ լինում է նրանց մօա, որոնք
մանում են զազանների որչը...

Գնացքը դանդաղ շարժուեց...

Այստեղ էլ նոյն բազմատեսակ հասարակութիւնը։

Ասեղ եթէ վայր ընկնէր, գետին չէր հասնի...

Մի կերպ, դժուարութեամբ՝ տեղ բռնեցի։

—Մայրիկ, եկէք այս կողմը, ձեզ համար աւելի յարմար
կը լինի, —ասում էր ընքարար ինձ մօա կանգնած մի սեա-
զգեստ զեղեցկուհի՝ վայելչակազմ, նուրբ։

—Ինձ համար ամենայարմարը միայն զերեզմանն է, —
հանդարտ, ցածր ձայնով պատասխանեց մի հասակաւոր կին՝
սև, խոր սգի հագուստում։

Անկարելի է մոռանալ նրա գէմքը, որի վրայ վիշտն և կսկի-
ծը գրել էին իրանց կնիքը։ Նա լուռ նայում էր շուրջը. կար-
ծես ոչինչ չէր հասկանում. հայեացքը ուղղում էր դէպի ամեն-
քը մի ինչ որ հարցով, որը ինքը չէր կարող լուծել...

Ինձ համար պարզ էր, որ այս կնոջ կեանքում կատար-
ուել էր մի աղիտալի իրողութիւն։ Իմ ենթադրութիւնը սխալ
չէր...

—Զեր մայրն է, —դիմեցի հարցով զեզանի տիկնոջը, ո-
րի աչքերում փայլում էին արտասունքի կաթիներ։

—Ո՛չ, —պատասխանեց նա ուսւերէն, —միթէ չգիտէք՝ ով
է նա... Ողորմելի կին... Փեսան, աղջիկը՝ երկու երեխաներով

զոհ գնացին այդ սարսափելի ողբերգութեան ժամանակ։ Առ-
բողջ ընտանիքը այրուեց... Օ՛հ, մարդու մազեր են կանգնում...
Երեակայացէք... մայրը և աղջիկը ապրում էին քաղաքի զա-
նազան ծայրերում։ Երբ կոտորածը սկսուեց, նրանց միացնում
էր միայն հեռախօսը, միակ կապը, հազորդակցութիւնը նրանց
մէջ։ Նա անդադար հանգստացնում էր մօրը, որ ամուսինը
հերոսաբար ընդդիմադրութիւն է ցոյց տալիս. իսկ... յետոյ... երբ
կատաղած ամբոխը կրակ տուեց տունը, կտրուեց այդ վեր-
ջին թելն էր, Վերջին խօսքերը, որ մայրը լսում է աղջկայ բե-
րանից, սրանք էին. «Կրակը կպել է, հազիւ թէ փրկուենք...
դուռը... սև դեեր են, հրացանները ուղղած... կը թափնուենք
մառանում, աշխատեցէք շուտով օգնութիւն հասցնել... գու-
ցէ...» Յանկարծ ձայնը կտրում է։

Գլուխը կորցրած մայրը՝ խելագարութեան հասած՝ դուրս
է թռչում։ Յետ են բերում։ Յետոյ—ինչպէս և առաջ—հե-
ռախօսով դիմում են օգնութիւն... օգնութիւն աղերսում...
Եւ խոստանում են և մերժում... Հետևանքը։ Երկու օրից յե-
ոյ, երբ ալեկոծուած ամբոխը սթափում է այդ ծանր մղձա-
ւանջից, այրուած տան մոխրի միջից դուրս են բերում ածխա-
ցած դիակներ, որոնց ճանաչելը անհնարին է լինում։ Այդ կի-
նը զրկուած է վերջին միխթարութիւնից, չգիտէ որտեղ են.
թաղուած իր սիրելիների ուկորները... ինչ դաժանելի օրեր
էին, անիծուած օրեր... գլխաւորը՝ անմիտ, տրամարանութեան
օրէնքներին հակասող...»

Լուսամուտի մօտ կանգնած, մենք կիսաձայն խօսում
էինք, փոխանակում մեր մտքերը...»

—Ասում են, դուք, հայերդ էր մեղաւոր,—խառնուեց խօ-
սակցութեանը մի ոռւսուհի,—մի ինչ որ աւազակապետի որդու
սպանելով, առիթ էք տուել...»

—Որ աւազակները՝ իրանց գաղանային հակումների մէջ
ազատ թողնուին...—կծու կտրեց նրա խօսքը մի նիհար և ջղային
շիկահեր ոռւս, յայտնի ֆիրմայի կառավարիչ, —այն ժամանակ
կովկասը միշտ արեան ասպարէզ կը լինի. մեղաւորը տղիտու-
թիւնն է, որի վրայ, որպէս պատրաստ լարերի, հմուտ ձեռքեր
են նուագում...»

—Տգիտութիւնն է մեղաւոր,—յանդիմանեց ոռւսուհին,—
ապա ինչ է այն կազմակերպուած սովանութիւնը, որը
կատարում է Հեռաւոր Արևելքում, քաղաքակրթուած ազգերի
մէջ...»

—Նոյն է... Նոյն վարակիչ խելագարութիւնը... Նոյն
արիւնոտ մէկը, որը մարդկանց աչքերը կուրացնում է...»

—Ասացէք... Դուք տեսել էք, թէ ի՞նչ տեսակ են մորթում մանուկներին... Ես այդ տեսել եմ... սըս... սըս... կը լսեն... այն երեխան էլ կը կենդանանայ և... կը տեսնէ... իհարկէ կտեսնէ, թէ ի՞նչպէս են մաշկում իր կաշին, և զինուորը... և զինուորը... այն... համ... համ... համ... ծիծաղում էր... սըս... սըս... կը լսեն... պատերն էլ ականջ ունին...

Դժուար է նկարագրել այն տպաւորութիւնը, որ ներգործեցին այդ գունատ, կուշ եկած, պղտորուած աչքերով երիտասարդի տեսքն ու խօսքերը: Մենք լուս նայեցինք իրար և մի սոսկալի միտք միաժամանակ անցաւ մեր գլխով:

Նա դողում էր ամբողջ մարմնով, գլուխը ցած ձգում, կարծես խուսափելու ինչ որ հարուածից... Աչքերը անսահման սարսափ էին արտայայտում:

Գեղեցկուհու դէմքը այլայլուեց, նա մեքենայաբար բռնեց ձեռքերս:

—Այդ ի՞նչ է... միթէ այդ ևս կայ... խեղճ... խեղճ... շշնչում էր նա:

Ռուս կառավարչի մռայլ և կարեկից աչքերը հակասում էին ոռուսունու սառը, անստարբեր դէմքին...

—Դու էլ ինձ նման գլուխդ ծիծում ես... մազերդ քանդում,—ասում էր սպաւոր կնոջ մի ուրիշը՝ գլուխը կապած վրացնակ, համեստ, համարեա աղքատ հազնուած: —Տուն ունէի, տեղ ունէի, քարուքանդ արին, մարդուս սպանեցին... քարը գլխները... ջահէլ տղաս աչքիս առաջ վէր գցեցին... եղած չեղած թալանեցին... խանութ ունէինը, գլուխներս պահում էինք... թողեցին ձեռներս խաչ արած, հինգ որբերով... քեզ մատաղ, ես ի՞նչ անեմ, ուր գնամ... դարդիս դարման արէք... Երեխայքս հաւաքել եմ մօրը մօտ, բայց նա էլ եղու չէ... ի՞նչ անեմ... մնում է հաւաքեմ տանեմ, ծովում թաղեմ իմ վիշտըս... իմ ցաւը...

—Ո՞վ է դա, ի՞նչ է պատմում, —հարցնում էին մեր շուրջը, նկատելով թէ ի՞նչ ցաւակցութեամբ էինք լսում նրա պատմութիւնը:

Վրազ, կցկուուր թարգմանեցինք:

—Ա՛հ, Տէր Աստուած, ի՞նչ արհաւիրք է, բացականչում էր ֆրանսուհին, մի փոքրիկ, քնքոյշ արարած՝ կարմիր գլխարկով և վերարկուով: Ի՞նչ բարբարոս երկիր... Դուք վայրենի էք, Հասան, —շրջեց նա երեսը դէսի մի գեղեցիկ՝ բայց վաւաշոտ դէմքով պարսիկի, —դուք վայրենի էք, և ես այլ ևս այստեղ չեմ մնալու...

Պարսիկը դատապարտեալի նման գլուխը խոնարհեց:

—Դու ինձանից երջանիկ ես, ընկճուած ձայնով շարունակեց սպաւոր կինը, դու երջանիկ ես... քեզ մնացել են հինգ երեխայ... իսկ ինձ... ամբողջ տունս փչացաւ, մնաց միայն ահմա...»

Նա կրծքից հանեց մի սպիտակ լան, զգուշութեամբ բաց արաւ... Դա մի սպիտակ, նուրբ քաթանից թաշկինակ էր, տառանշանով:

—Ահա սա, —ցոյց տուաւ նա, ապա երկու ձեռքերով մօտեցրեց երեսին ու անուր սեղմեց... Արտասուր չկար. աչքերը չոր էին. միայն ներքին վրդովմոնքից աղաւաղուել էին նրա գէմքի գծագրութիւնները. լսում էր միայն, թէ ինչպէս կրճը տում էին ատամները:

Տիրեց ծանր, խեղդող լուռթիւն...

Մեսելային գունատութիւն սլատեց բոլորի գէմքերը:

—Դու էլ որդի չունի՞ս, —մեղաւորի պէս շնչաց զլուխը կապած կինը:

—Լեզուդ չորանայ, ի՞նչ ես ասում... թշնամուն էլ այդ խօսքը չեն ասիլ... Աղջկաս տունը բանդուեց ջնջուեց... բայց որդի ունիմ... նրա արկեն մատաղ... աֆիցեր է... այն տեղ էր պատերազմում... նրան էլ խլեցին... տարան ինձնից... դեռ առաջ: Մուկդէն է... նամակ ստացայ... զրում է. «հանգիստ կաց, կուրը շուտով կը վերջանայ»... Զգիտեմ, ճշմարիտ է, — հարց տուաւ նա: Դա հարց չէր, այլ աղերսանք՝ որ իր յոյսը չխորտակեն...

—Այն, այն, անկասկած, —արագօրէն պատասխանեց գեղեցիկ տիկինը, շոյելով դժբաղդ կնոջ կնճիռներով ծածկուած ձեռները, —համգիստ կացէք, դա ճշմարիտ է. ես այդ զիտեմ մօտ աղբիւրից: Ահա այս պարոնը —ուուս է. նա հէնց այդ էր պատմում... այնպէս չէ, —զիմեց նա իս վկայութեանը, արտասուքը կուլ տալով:

—Օ՛հ, անտարակոյս, —ստիպեցի ինձ ստել:

—Մօրաքոյը, շուտով կը հասնենք, քեզ քաջ պահիր... խեղճ քեռին մնաց միայնակ, հիւանդ... մօտեցաւ միջին հասակով մի մարդ և կանգնեց սպաւոր կնոջ մօտ:

—Նրանից թանկագինը կորցրի...

—Անշուշտ, բայց ի՞նչ օգուտ որ... էն. ի՞նչ ուզում ես արա, —աւելացրեց նա՝ յուսահատ շարժում դորձելով, յետոյ դարձաւ դէպի մեզ. —Ժամերով վերեկմանատանն է մնում. անհնարին է լինում հեռայնել...

—Ա՛հ, Տէր իմ, ի՞նչ սոսկալի է այս ամենը, —շարժում էր իր փոքրիկ գլուխը քրանսուհին:

—Ես ձեզ եմ հարցնում,—նորից խօսեց տեհնդային ձայշնով գունատ երիտասարդը,—դուք տեսել եք... մի մարդու կէսը այրում էք... աչքերը ցցուել էին ակնակապիճներից... յանկարծ դեերը մօտեցան... նորից նաւիթ ածեցին գլխին և կրակ տուին... հուրը պլազաց...

—Օ՞հ, լսեցէք... մի շարունակէք...—աղաղակում էին բուլութ:

—Սը՞ս... սը՞ս... լսեցի՞ք տրաքոցը... նորից մարդ սպանեցին... նա թրաքում է՝ գլուխը կորած հաւի նման...

—Ոչի՞նչ չկայ, հանգիստ կացէք... գա երկաթուղու սուլոցն է...

Սարսուռ էր անցնում մարդու մարմնով. սարսափը թափանցում էր մինչև ոսկորների ծուծը...

—Իսկ ձեր քրոջը չե՞ն առևանգել... դուք այդ չի՞ք տեսել... ձեր ձեռքերը չե՞ն կապել, որ դուք նայէք...

—Սա ուղղակի դժոխք է... անկարելի է այդպէս շարուկել, —բացազանչում էր սուսը:

Ես պատրաստ էի երկաթուղու պատուհանից ընկնել յածը, միայն թէ չլսէի, ոչի՞նչ չլսէի... Գնացըը դանդաղ սողաց, ճռնչեցին շղթաները, ապա կանգ առաւ:

—Հեռագի՞ր... Նոր հեռագի՞ր... տիխուր լներիր... մելամաղձոս կանչում էր ծախողը:

—Ի՞նչ է պատահել... ի՞նչ կայ... վեր թռանք բոլորը:

Ժողովուրդը գուրս էր թափւում, դէպի կայարանը:

Յանկարծ ամբոխը պատուիով՝ մտաւ ընկերս և կայծակի արագութեամբ սկսեց պատմել.

—Նորութիւն... ճապոնացիք վերցրել են Մուկդէնը... ոռւսաց զօրքը նահանջում է... ահագի՞ն կոտորած...

Ոչ մի կերպ հնարաւորութիւն չկար նրա խօսքերի հոսանքը կանգնեցնել: Հետեւապէս՝ մեր ամբողջ ուշադրութիւնը լարեցինը սպաւոր կնոջ վրայ: Առաջին վայրկեան նա կարծես չհասկացաւ, շարունակ նայում էր մեր երեսին՝ փրկութիւն էր սպասում. յետոյ արձակեց մի անբնական ճիչ, բռնեց գլուխը և սկսեց բղաւել՝ ուղղակի կենդանու ձայնով:

—Օ՞հ... վերցրին ասում էք... որդիս էլ սպանեցին... նրան էլ գիւլախորով արին... ի՞նչու համար... ասացէք... ի՞նչ մեղք ունեմ... Աստհւած... Թրտեղ ես դու... դմ է բո արդարութիւնը... բալամ... բալամ...

Ապա ուշքից գնաց:

Անկարելի է նկարագրել ընդհանուր շփոթութիւնը:

Երիտասարդ կինը՝ երեսը շրջած դէպի պատը՝ բարձրա-

ձայն հեկեկում էր, զլուխը բռնած: Թրանսուհին ծունկ չուքած կեղտոտ յատակի վրայ՝ փայփայում, համբուրում էր ուշադնաց կնոջ ձեռքերը: Խուսը մնացել էր քարացած բուռն, յուզմունքից: Պարսիկը դուրս թռաւ ջրի յետևից... Դլուխը կապած կինը ծեծում էր ծնկները, կրծոտում շրթունքները:

—ՄՌ քո օրին... վայ քեզ, վայ, ա կնիկ... եղ ի՞նչ չար խաբար էր, որ քեզ բերին... ողբում էր նա՝ հնֆադրութիւնը եղելութիւն դարձնելով:

Պարսիկը վերադառաւ, ջուր բերելով, և աւելացրեց.

—Օրիորդ Ժան, կառքը պատրմաստ է, երթանք...

—Ո՛չ, ո՛չ... գնա... յետոյ, յետոյ... աղաղակեց Փրանսուհին բարկացած:

Պարսիկը անյայտացաւ...

—Ես այլևս չեմ մնալու այս բարբարոս երկրումը,—կըրկնում էր փոքրիկ արարածը:

—Ի՞նչ է պատահել... ի՞նչ աղմուկ է այստեղ:

Դուան միջում երեւաց ոստիկանի հանդիսաւոր դէմքը:

Նրան բացատրեցին, որ այդ կինը յուզուել է ստացած լուրից:

—Ասա, միայն իրա որդին չէ... շատերը զոհ գնացին... չպէտք է վրդովել հասարակական խաղաղութիւնը... մարդիկ...

Կինը երեսը շրջեց և հազիւ իրան զսպելով՝ կծու արտասանեց:

—Բայց այս կինը՝ մի տասը օր սրանից առաջ, կրակի մէջ է թաղել մի ամրող լնտանիք... զուք այդ գիտէք... կարող էր հասկանալ...

—Ա՛մ... բայց հասարակական համաստութիւնը... Պարհնայք, վռաղեցէք... յետոյ կառք չէք զտնելու, պատասխանեց ոստիկանը սառը և հրամայողական ձեռվ և անհետացաւ...

—Ա՛հ, զնուք, հաստակաշիներ, որպէս ողբ դուրս թռաւ գեղեցկունու բերանից, որը յուսահատութիւնից և վշտից պատերն էր զարկում իր քնարոյշ ձեռները:

—Ես տեսայ... դաշոյնը խրեցին յդի կնոջ որովայնը... արիւնը ցայտեց... Երեխան զեռ չծնուած, հնֆարկուեց զարհուրելի տանջանքի... դեռ չծնուած... Դուք տեսնում էք, իմ մազերը սպիտակել են... Դուք այդպէս արիւն խմել կարող էք... խուլ ձայնով հարցրեց մի պատանի:

—Լոեցէք... բաւական է... լոեցէք...

—Մը ս... սը ս... հանդարտ... էլի կը զան... Երբ նա կինդանի այրում էր... մազեր պար էին զալիս... իսկ մարդիկը՝ գաղանի նման ոռնում էին... հա... հա... հա...

—Ձեզ մատաղ... ում աչք հանեցի... աչքիս լոյսը կանաչեց, մինչև մեծացրի... վերջին յոյս նա էր... բալան... բարձած... տուէր ինձ—հաղիւ հազ շնչում էր թուլացած կինը, ծամածուելով դէմքը՝ կարծես մուլալով մեզանից իր զաւակը:

Ժողովուրդը հաւաքւում էր: Տիրում էր շփոթութիւն: Գրեթէ գրկելով տարաբաղդ կնոջը, հասցըինք մինչև կառը:

Ես նոյնպէս շտապեցի վերալանալ տուն, շփոթուած, գլխիկոր:

Հազարաւոր մտքեր անցնում էին գլխովս, իրար հրհրում, իրար խառնուում՝ կարծես կատաղի պար լինէին պարում: Ես մտածում էի այն բիւրաւոր չարիքների վրայ, որոնք այսպէս արագ և անընդհատ թափուում էին իմ չարատանջ ազգի գլխին...

Անցան մի քանի կառքեր: Երեկոյեան աղջամուղջի մէջ փայլեցին ֆրանսունու կարմիր վերարկուն և պարսկի խոշոր աչքերը... Իսկ յետոյ... չղիտեմ... Տեսնում էի այրուող տներ, սարսափահար դէմքեր... խելազար աչքեր... վարդագոյն օդի մէջ՝ արիւնահոս վէրքեր: Լսում էի վայրենի ծիծաղ... աղաղակ... հրացանի տրաքոց... Ես հոտառում էի մարդկային այրուող մաի զարշահոտութիւնը... Եւ սարսուը, սարսափը, ցաւը, որպէս օձ՝ պտտուում էին շուրջս, սեղմում կուրծքս, կոկորդս. սարսուը, սարսափը ցաւը՝ այն գաղանի համար, որը դեռ մոնչում է, աւաղ, մարդու մէջ...

Տիկ. Եկ. Բահաթուր

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

I

Յակոբ Պարոնեանը մեր ազգային գրականութեան երգիծարանական տեսակին զարկ տուող հեղինակութիւնն է։ Երգիծարանութեան ծագումը մեր գրականութեան պատմութեան մէջ հին չէ։ մեր յետևում մի գար ունինք միայն, որի մէջ հայ ազգը քիչ թէ շատ ազատ շունչ է քաշել, ապահով և խաղաղ կեանք վարել, կեանք՝ որի արդիւնքն է ներկայ գրականութիւնը, որի զարգացնողները եղել են առաւելապէս արևելահայերը և մասնաւորապէս արևմտահայերից, կ. Պոլսեցիք։ Սակայն առաջինները չեն ունեցել մինչև այժմ էլ երգիծարանական որոշ, աչքի ընկնող հեղինակութիւն և ըստ այնու էլ դպրոց, ուստի արևմտահայ գրականութեան պատմութիւնը քրքրենք, ուր Պարոնեանը և իր նախորդ սկզբակ երգիծարանները իրաւացի կերպով մեր հետաքրքրութիւնը պիտի գրաւեն իրանց արտագրած արդիւնքներով և առաջացրած գրական դպրոցով։

Ի՞նչն էր առիթ տուել արևմտահայ հեղինակներին այդքան շուտ՝ մեր գրականութեան վեռ մանուկ հասակում՝ զրադարձու գրական մի այնպիսի տեսակով, որը եւրոպական ազգերի գրականութեան պատմութեան մէջ այնքան ուշ, գրական բոլոր աչքի ընկնող տեսակներից զրեթէ յետոյ է ծագել և զարգացման աստիճանին հասնել։ Հարցը պարզեցու համար պատմութեան նայենք։

19-երորդ գարու սկզբներին, և դեռ էլ աւելի առաջ, երբ ամբողջ Տաճկահայաստանը սուր ու կրակի մէջ էր, գաւառացի հայերից շատերը զգուելով կեանքի տարուրելուումից, կեանքի անապահովութիւնից, զիմում են դէպի կ. Պոլիս, Զմիւռնիա, Բրուսա, Սէլանիկ, Միջերկրականի և Սև ծովի ափերին զբանուող այն բոլոր նաւահանգստային քաղաքներում, ուր կեանքը այնքան էլ անտանելի և անապահով չէր. կեանքի և ինչքի անձեռնմխելիութեան գրգող այդ գաղթականութիւնը՝ վերո-

յիշեալ բազաքներում շուտով բազմացնում է հայ տարրը, որը հաստատուն հիմքեր է դնում հայրենիքից հեռու, այդ օտար հողերում և նոյնիսկ մի ժամանակից յետոյ մոռանում է, որ ինքը գաղթական է, իր սրտին նուիրական յուշարձաններ ունի հեռաւոր մի երկրում, հայրենիք վերադառնալու միտքը բոլոր լին ջնջում է նրա մաքից:

Գաղթական հայը այժմ դժուուելով եւրոպայի դռան, Վոսփորի գեղածիծաղ ափերի վրայ, ձեռք է բերում բազմատեսակ յարմարութիւններ քաղաքակիրթ երկրներ դնալու, աշխարհներ տեսնելու, և շուտով ծրանսիան, որը եւրոպական միւս աղջութիւնների կրթարանն էր եղել, լցւում է հայ երիտասարդներով: Կ. Պոլիսը նոյնպէս, որ ֆրանսական կուլտուրայի զօրեղ աղղեցութեան տակն էր այն ժամանակ, նպաստաւոր մի կենտրոն էր հային, այն էլ վաճառական հային՝ ֆրանսական քաղաքակրթութեան հետ շփուելու: Թրքական գաւառական գժոխիքից աղատուած հայը իրան մի անգամից գրախոտումն է երևակայում, և այն, ինչ որ ֆրանսացու, եւրոպացու համար առօրեայ չնչին մի իր, առարկայ է, հայի աչքին իր փայլունութիւնը կրկնապատկում, տասնապատկում է, արեւելքը՝ գաւառը, իր ամբողջ գրաւչութեամբ նրա մտքի և սրտի հետ չի խօսում, արեւելքը, որի անունը միայն գիտութեան դափնիներով պատած եւրոպացու գլուխը անթիւ ֆանտազիաներով է լիցնում, յափշտակուելու և եղիմային անուրջներ յօրինելու արլշիո մտածմունքը ներջնչում: Հոգեբանօրէն էր հայի վարմունքը, որովհետեւ հեռուից իրերը գեղեցիկ են երեսում, վասնզի մարդը սիրում է միշտ անծանօթը. թշուառ հայը իրաւոնք ունէր, երբ հեռաւոր, օտար աշխարհով, և նրա բազաքակիրթութեամբ էր ոգեսրում, նրա գիրկն ընկնում, որովհետեւ մյուտեղը ընչքի աղատութիւն և կեանքի լոյս կար: Հոգեբանական այս պատճառները պարզօրէն ցոյց են տալիս արեմըտահայի՝ իր ազգայնական կեանքից խուսափելու. և ֆրանսական կուլտուրային յարելու իրաւացիութիւնը. սակայն զրահնետեանքը այն է լինում, որ նա իր ունեցած հիմնաքարից՝ ազգայնական ինքնուրոյնութիւնից զրկվում է, որից նա արդէն վաղուց զգուել էր և որից նա այլևս ոչ մի լաւ բան չէր տպասում: Այսուհետև գաղթական հայը աշխատում է իւրացնել պատուաստել իր մէջ այն, ինչ որ իր ցեղական ոգուն համապատասխան չէր և իրան համար անմարս էր:

Ուրեմն մի կողմից արևմտահայը՝ կորցնում է իր աղքայնական անհատականութիւնը, իսկ միւս կողմից չկարողանալով ուրիշի ունեցածը սեփականացնել՝ մնում է երկու ալիքների

մէջ տեղը. այժմ նա հայ չէ, որովհետև հեռացել է նրանից. և ոչ էլ Փրանսացի, որովհետև չի մօտեցել և շաղկապուել նրա հետ. կիսազարդացման այս աստիճանը պատճառ պիտի գառնար այն բանի, որ նա այնուհետև չկարողանար իրեն այնպէս ճանաչել, ինչպէս նորմալ, իսկական վիճակում եղած մարդը. այն, ինչ որ Փրանսացին օրինաւոր և բնական է համարում, հայը օտար և անսովոր է տեսնում. ուրեմն արևմտահայը ո՞րը ընտրէր. ի հարկէ ոչ մէկը հիմնովին. ուստի կեանքի մասին նրա ունեցած հասկացողութիւնները, բարոյական սկզբունքները պիտի տատանուէին և կործանուէին, բարքերը պիտի ապականուէին, բնաւորութիւնները այլասեռուէին: Այդպէս էլ լինում է:

Բայց կեանքը կանգ չի առնում: Մի երեսոյթից ծնունդ է առնում մի ուրիշը. և բարքերի ապականութիւնը իր գէմ դուրս է բերում այնպիսի մարդիկ, որոնք հասկանալով կեանքի ապականութիւնը, ազգայնութեան բնաջնջումը, նրա բարոյական անկումը՝ ձեռք են զարնում գրականութեան միջոցաւ արմատախիլ անել այդ հազարագլխեան աղէտը: Կեանքը այլասեռող այդ օտարամոլութիւնից և բաղաբակըթութեան սխալ ըմբռնումից ծագումն է առնում երգիծաբանութիւնը, մարդիկը և նրանց աղտեղի բարքերը ծաղրող գրականութեան այն տեսակը, որի նպատակը պիտի լինէր ժողովրդի պակասութիւնները հեզնել, և հարուածել անիմայ կերպով նրա յիմարութիւնները:

Դրագէտի այդ վեհ կոչումը արևմտահայերից Ռշտունին է լինում՝ որ նախ իբրև կերասան, և յետոյ իբրև կատակերգակ՝ իր վրայ է առնում. առաջին անգամ նա է մեծ զարկ տալիս երգիծաբանութեան իր մի քանի գրուածներով, որոնք կատակերգական են և ոչ երգիծաբանական. նրա յաջող գրուածներից և 90-ական թուականներին գրած «Հայր Զոհրաբ Կարկատնաբեան» կատակերգութիւնը, Այնուհետև Խորէն Նարբէյը, Վահան Վարդապետ Պարտիզակցին, առաջինը իր «Աւաֆրանկա» և երկրորդը իր «Ֆագիկ Բ.» գրուածներով յայտնի են իբրև կատակերգակներ. նոյնպէս այդ գրուածները այնքան էլ յաջողութիւն չեն գտնում. դրանց մէջ գործող անձինք բոլորն էլ տղամարդիկ են, և ոչ մի կին գործող անձ, որով նրանց գրուածները կիսով չափ իրանց արժէքը կորցնում են: Կատակերգութիւն փորձել են գրել նոյնպէս Մատթէոս Մամուրեան, Պէտիկթաշլեան, որի «Երեք քաջերը» և «Աւագակները» այնքան էլ յաջողուած պիէսներ չեն. փորձեր են արել նոյնպէս Թէրզեան, Տիրան Փափազեան և այլք, բայց դրանք բոլորն էլ արուեստագէտից պահանջուելիք բարձրութեան աստիճանը չունին:

ի միջի այլոց կարելի է յիշել սուսահայ մի քանի ճեղինակների, որոնց շատ քիչ է յաջողուել երգիծարանական մի երկ արտադրիլ և կրական որոշ զպրոց հիմնել։ Գամառնաթիվան ստանաւորի ձևով մի քանի յաջողուած կտորները ունի. Սունկուեկանը նոյնիսկ, որ սուսահայերի մէջ՝ իրրկ դրամատուրգ աշքի է ընկնում, մինչև հիմա չի տուել երգիծարանական մի կատարեալ աշխատութիւն. փորձեր են արել նոյնալէս ուրիշներ, բայց Պարոնեանն է, որ իրրկ արեամտահայ հեղինակ՝ իրաւացի կերպով իր վրայ դարձնում՝ իբրև իսկական երգիծարանի, նրա դրուածները կարդացող կամ նրա պիեսներին հանդիսատես եղող, հասկացող հասարակութեան ուշադրութիւնը։

II

Հայ գրականութեան մէջ Յ. Պարոնեանի կատարած դերը հասկանալու համար, անհրաժեշտ է համառօտակի նկարագրել նրա կեանքը, ծանօթանալ այն շրջանին և միջավայրին, որի մէջ ապրեցաւ նա: Որովհետեւ շատ քիչ զրագէտների վրայ կեանքն ու միջավայրը այնքան խորունկ ազդեցութիւն են թողել, որքան Պարոնեանի վրայ. ինչպէս որ այդ մասին վկայում են նրա անձնական ծանօթները և ինչքան որ նրա դրուածներից կարելի է եղբակացնել: Այդ կեանքից նա ազդուած է եղել, իւրացիւել այդ կեանքից թէ լաւ յատկութիւններ և թէ շատ թերութիւններ: (Տես «Ծաղիկ» 1895 թ. յուն. 3 համար, 466 էրես):

Պարոնեանը շատ օրիգինալ անձնաւորութիւն է եղել *). Նրա կեանքը իր գործի նման զուարթ չի եղել. տիսուր և սովորական մի կեանք է վարել: Բնիկ աղրիանապուտեցի՝ ծընուած 1840 թուին՝ սկզբնական կրթութիւնը ստանում է տանը. 1865 թուին 15 տարեկան պատանին մտնում է տեղական «Արշակունեան» ուսումնարանը, ուր Ներսէս Վարժապետականի խնամակալութեան և հովանու տակ երեք տարի մնում

*) Գրուածքիս համար օգտուել եմ հետեւալ աղբիւրներից. Ա) 1893 թ. «Մասիս», Յունուարի № 2, 3, Արշակ Զօպանեանի յոդուածը՝ կատակերգութեան ծագման մասին: Բ) «Մասիս» 1893 թ. № 7, Տիգրան Արդիիարեանի՝ Յիշողութիւններ Յ. Պարոնեանի մասին: Գ) «Ծաղիկ» 1895 թ. յունիս, Ա. Զօպանեանի յոդուածը՝ Պարոնեանի կենսագրութիւնը: Դ) Արմ. беллетристы стр. 413. А. Паронянъ. биографический очеркъ. А. Хотисовъ:

է: Դատելով «Աղքային Զոջերի» մէջ իր մասին տուած կենսագրականից (335 եր. Ազգ. Զոջ.) այդ ուսումնարանը կանոնաւորներից չէր. ուսուցչական խմբից և գպրոցական դրազմունքներից մեծ բան չէր կարելի յուսալ. այսպէս որ Պարոնեանը այդտեղից շատ բան հետը տանել չէր կարող. միայն լաւ, կանոնաւոր հայերէն գրելու չափ լեզու է սովորում, տեղեկանում ֆրանսերէն, իտալերէն և բուլղարերէն լեզուներին (Ազգ. Զոջ. 280 եր.): Վերջացնելով Ադրիանապոլսի հայկական ուսումնարանը, այնտեղը ուսուցիչ է կարգւում. բայց շուտով թողնելով այդ պաշտօնը, ներսէս Վարժապետեանի միջոցաւ մտնում է տեղական յոյն վարժարանը, ուր յունական լեզուի գժուարութիւները միայն սովորելով, ինչպէս յիշում է ինքը, այնքան է առաջ գնում այդ լեզուի մէջ, որ կարողանում է հին յոյն կլասիկ հեղինակներից ազատ օգտուել. մի աարուց յետոյ գուրս է գալիս այդ ուսումնարանից և մասնաւոր դասերով է զբաղւում:

Բնութիւնից ուսումնածարաւ մէկը լինելով՝ իր դպրոցական դասերի գծում կրկնութեամբ միայն չի բաւականում, այլ իր ինքնազիտութիւնը լրացնում է ինքնաշխատութեամբ և ընթերցանութեամբ: Իր զրուածներից տեմնում ենք, որ նա բաւական ծանօթ է ընդհանուր պատմութեան, ազգային պատմութեան, բնական գիտութիւններին և զիշաւորապէս գրականութեան: Մասաւորապէս օտար հեղինակներին, յունարէնի միջոցաւ տեղեակ է յոյն զասական արուեստագէտների աշխառութիւններին. Հոսերոսի, Էսքիլի, Սոփոլի, Եւրիպիդի և Արիստոֆանի գրուածները նրան շատ ծանօթ են: Միւս կողմից էլ բաւականաչափ ֆրանսերէն և մասամբ էլ լատիներէն իմանալով՝ նա ծանօթանում է լատին հին հեղինակների բնագրերին և թարգմանութիւններին. Լիւցիան, Վիրգիլիոս, Ովբատիոս, Խվենալ, Ովիտիոս, Թեսաւրոս և ուրիշներ անձանօթ չեն Պարոնեանին: Նա կարգացել է նոյնպէս սպանական գրուածների ֆրանսական թարգմանութիւնները. իսկ որ զիսաւորն է՝ ֆրանսական բուն ազգային հեղինակները նրա համար ամենից սիրելի են եղել քան թէ միւսները. Բուալօյի, Ժան-Ժակ-Ռուսոյի, Ալեքսանդր Դիւմայի և մասնաւորապէս Մոլէրի գրուածները նրա առօրեայ զբաղմունքի նիւթն են կազմել:

Յիշեալ օտարազգի հեղինակներից ամենից շատ նրա վրայ ազգել են Արիստոֆանը և Մոլէրը. այդ ազգեցութիւնը ինչպէս կը տեսնենք, շատ մեծ է եղել նրա վրայ:

Կեանքի հոսանքը Պարոնեանին շուտով կ. Պոլիս է նետում. մի քաղաք, որը, իրաւամբ կարելի է ասել, Պարոնեա-

նին երգիծաբան դարձրեց։ Դեռ մանուկ հասակից, ուսումնաբանում եղած ժամանակ, աշակերտական նոտարաբանի վրայից գրում էր ծիծաղաշարժ ոտանաւորներ, դեռ վաղ մանկութիւնից սկսած, իմանալով իր խսկական կոչումը, իր գործունէութեան խսկական ճանապարհի վրայ է ընկնում, դա երգիծաբան զրագէտի ուղին էր։

1860 թուականին պատանի իւմորիստը յայտնի է դառնում իր «Արևելեան Ատամնաբոյժ» անդրանիկ գրուածքով, որը՝ չունենալով առանձին գրական արժանիք՝ թէև որոշ յաջողութիւն չի գտնում, բայց այդ գրուածքը այն կողմից է կարևոր, որ գրանով Պարոնեանը երեւան է գալիս վերջնականապէս իրրե երգիծաբան գրական ասպարէղի վրայ. (տես Արմ. Բելլ.): Այդ ժամանակից սկսած Պարոնեանը տալիս է գրական երգիծաբանական իր առաջին «Բողբոջները», որոնք յետոյ աւելի զարգացած ձևակերպութեամբ հանդէս են գալիս նբանագային Զոջերի» և «Խիկարի» մէջ։ «Արևելեան Ատամնաբոյժի» երևալուց յետոյ, մի ժամանակ աշխատակցում է «Եֆրատ» շարաթաթերթին և շուտով խմբագիր է դառնում նոյն թերթին. նա անցնում է մի այնպիսի թերթի գլուխը, որի նիւթը երգիծաբանութիւնն էր, ժողովրդին սիրելի, նրան հետաքրքրող և գուարճացնող գրական տեսակը. բայց այդ զբաղմունքը Պարոնեանին ապրելու չնչին միջոց անդամ չտուաւ. նրան, որ իր կեանքի մէջ—ինչպէս պիտի տեսնենք—աշխատած էր մի դիրք, մի «գիւրակեցութիւն ստեղծել», մի անկախութիւն ձեռք բերել, և թէև նրա զրուածները, մանաւանդ «Խիկարի» համարները, Կ. Պոլոյ հայ ազգաբնակութեան համար «ամենօրեայ կեանքի պէտք» էին զարձել, բայց քչերն էին որ փողով կնում էին և շատերը, որոնք ձրի օգուում էին նրա զրուածներից. պատճառը այն պարզ իրողութիւնն էր, որ ժողովրդի համար զրգի, լրագրի փող տալը շատ ծանր էր թւում։ Եւ երբ Պարոնեանը «Եֆրատի» խմբագրութիւնից յետոյ և միաժամանակ էլ «Մեղուի» խմբագրի օգնական լինելոց յետոյ, յանձն է առնում այս վերջին թերթի խմբագրութիւնը. ահա թէ «Մեղուի» նախկին խմբագիր-հրատարակիչը՝ Սվաճեանը՝ ինչպիսի ազդ է հրատարակում այդ առթիւ. «Գրելու կարող և «Մեղուի» արգիւնքով անօթի մնալը յանձն առնող անձ մը գանելը զժուար էր, բայց գտնուեցաւ։ Եւ Սվաճեանը իրաւունք ունէր ուրախանալու իր արած գիւտով։ Պարոնեանը անձնազո՞նութեամբ յանձն է առնում «Մեղուի» խմբագրութիւնը 1872 թուին. մի թերթ էր այդ, որը իր լամանորդների քչութեան պատճառով մի խմբագրի անդամ չէր կարող պահել։

Հետարքիր և կարևոր է Պարոնեանի գործունէութիւնը այդ շրջանում. նրա սուր, աշխայժ, գիտող խելքը՝ նրա աշքին բաց է անուն շուտով տձեւ, ծիծաղելի ամբոխի ներքին էութիւնը. ոչ մի մանրամամութիւն նրա աչքից խուսափել չէ կարող. այդ պատճառով, երբ նա իր ձեռքն է առնում խլմբագրական պաշտօնը, մի անգամից ընդհանուրի ուշադրութիւնը զարձնում է իր վրայ՝ իր մերկացնող նկատումներով. նրան ճանաչում և նրա մասին խօսում են իրեւ վտանգաւոր մարդու մասին:

Այժմ արժէ հարցնել թէ ինչ գեր էր կատարում «Մեղուն» տաճկահայոց և կամ մասնաւորապէս ասած՝ պոլսահայ գրական ասպարիզում:

«Մեղուն» պատուաւոր լրագիր էր, Խրիմեանին կողմնակից, յառաջդիմական ուղղութեան պատկանող մի օրգան: Ռւրեմն «Մեղուն» նշանակութիւնը շատ մեծ էր այդ ժամանակ. իբրև «անդրանիկ» հայ զաւշտական թերթ» անխնայ խայթում էր ժամանակակից բարքերը, հասարակական ընտանեկան աշուգեղ երեսյթները. այդ կոչումը իրանց վրայ էին առել «Մեղուն» աշխատակիցները «իրականի գիտակցութեամբ ըմբռնուած»: այդ դերն էր պատճառը, որ թերթը նիւթական անապահով վիճակի մէջ էր, այն հասարակ պատճառով, որ ժամանակի հարուստ աղաները չէին կարող հարկաւ իրանց անդրանիկ որդու ոտնաձգութիւնները տանել:

Ահա հէսց այդ ժամանակ Պարոնեանը իր վրայ առնելով մի այլպիսի պատասխանատու պաշտօն, ինքն էլ արդէն նիւթապէս անապահով մի մարդ, պարզ է որ շատ զժուարութիւնների պիտի պատահէր. սակայն նա—առանց վհատելու և լրագրի մերթ առ մերթ գագարման վրայ ուշադրութիւն գարձնելու՝ իր կոչմանն է ծառայում անվնատ, և իրան միայն յատուկ հանճարով՝ տալիս է ժամանակակից եկեղեցականների կեանքին, աղքային վարչութեան, լրագրութեան, գրականութեաս, թատրոնին, ընտանեկան կենցաղին համայնապատկերը. մի պատկեր է այդ, որը նրա աղքայաց գրուածներում հետզհետէ տևելի երփններանգ և գունագեղ է գաւնում, իւրաքանչիւր տեսարանում աւելի է պարզւում, և ուղեծք կերպով ներկայանում կեանքը իր բազմակողմանի այլանդակութիւններով. և հէնց «Մեղուն» խմբագրութեան ժամանակից սկսած նրա խիստ, որոշ և յաջող նկատումները «գիեթակէն թուշող վաղվազկոտ մեղուների նման կերթսն խայթելու ջոջն ու բարեկեցիկը, եկեղեցականն ու թաղականը, դերասանն ու խմբագիրը»: «Մեղուն» Պարոնեանը ամենից աւելի անխնայ և վոտահ հար-

ուածում է մամնաւորապէս հոգեորական գառակարգը. թէԿ այդ մասին յետոյ էլ չի մոռանում, բայց այդ ժամանակում աւելի զրգութած և կատաղած է երևում նրանց դէմ. կծու ակնարկներով քննադատում է մի եկեղեցականի վարժունքը. մի եկեղեցականի, որը մայրաքաղաքից երկար տարիներ չէր ուզեցել հետանալ, և երբ նա կ, Պոլսին մերձակայ մի կարևոր թեմի առաջնորդութիւնից էլ հրաժարում է, Պարոնեանի նրբաճիտ հեղնութեանն է առարկայ զառնում, «Մեղուի» հետեւալ ազգաւրախուան առիթ է տալիս. «Կը լսեաք թէ պատրիարքարանը իր անշարժ կալուածներուն տետրակին մէջն է անցուցեր այդ եկեղեցականը»: Այդպիսի յարձակումները սիրելի են միայն արուեստագէտներին, մանաւանդ երբ նրանք իրանց եսական գծուծ հաշվաներով չեն առաջնորդուած:

Միւս կողմից «Մեղուի» միջոցաւ Պարոնեանը քննադատում է ժամանակակից լրագրութեան վիճակը, հսուարակական և զրական գործիչների և այլոց զործունէութիւնը. վերջնականապէս իր դէմ զրգուելով ամբողջ հասարակական կազմը և զրա հետ միասին զրկուելով նիւթական առանց այն էլ սակաւ վարձատրութիւնից. Պարոնեանը «Մեղուի» մէջ տուել է 30-ի չափ ծաղրապատկերներ, օրինակ, ուսումնական խորհուրդը 12 տարուայ անդամալոյժի ձեռլ է պատկերացրած. լաւ են մտածուած կանանց արուեստական կուրծքերը և մազերի բրգածն արդուզարդերը ծաղրող ծաղրապատկերները:

Սակայն այդ ժամանակ բազդի անիւը այլ կերպ է տնօրինում Պարոնեանի ճակատագիրը: Մինչ մարդկանց մի ահապին բաղմութիւն արհամարհանքով և թշնամութեամբ էր վարձատրում նրա արժանիքը, միայն մի թոյլ և երկշուա արարած համարձակում է յայտնել նրան իր համակրանքն ու սէրը: Ահա թէ Պարոնեանի անձին մօտիկ մի ժամանակակից ինչ յիշողութիւններ է տալիս այդ մասին: (Տես, «Մասիս» 1893 թ. համար 7, Տիգրան Արփիարեանի յօդուածը):

1873 թուին Պարոնեանը Օրթա գիւղում ծանօթանում է մի աղջլայ հետ, Սաթենիկ անուամբ. «Չուարթ և ցնծուն մի աղջլիկ էր նա, կապոյտ սիրուն աչքերով, մութ-խարտեաշ, գանգուր մազերով, որի ներկայութիւնը ուրախութիւն կը պատճառէր ամենքին. ինքն էր, որ խաղեր կը ստեղծէր, երգեր կ'յօրինէր, ծաղկի փունջեր կը կապէր»: Իսկ էղիրնեցին (Աղրիանուալուեցին), ինչպէս որ Պարոնեանին անուանում էին, այդ ժամանակում թողած տպաւորութեանը նայելով «շատ լուրջ դէմք մը ունէր, լուրջ խօսուածք մը, սակայն տեսակ մը իրարանցում առաջ բերած էր լնտանեկան շրջանակներու մէջ. կիները կը փսփը-

սային իրարու՝ «շարիվարի կը գրէ» և կը զգուշանային իրմէ. շատ կը կարդար և քիչ կը գրէր, սովորաբար Մոլիէրի կամ Բոււայի հատոր մ'ունէր ձեռքը, պատուհանին քովը, ուր կ'առանձնանալ երեկոները»; Եւ ահա այդ տուանձնակեաց և մելամաղձութեան անձնատուր եղած Պարոնեանը, երբ երեք տարի յետոյ կրկին պատահում է Սաթենիկին, նրան աւելի գեղեցկացած և դգալապէս զարկացած է գտնում. իրան համակրող այդ էակը ծանրախոհ մի երեոյթ էր ստացել, առաջին տարիների զուարթութիւնը նրանից խոյս էր տուել, նրա ժողովի մէջ մի ստուեր և նայուածրի մէջ մի երազուն բան էր նշամարուում. սիրոյ անձանօթ յուղմունքը և այդ ծաղկատի էակի անդրանիկ համակրանքն ու սէրը արձագանք են գտնում «Մեղուի» խմբագրի վհատած և լքուած սրտում. նա, որ հանրութիւնը սկիստիկաբար ծաղրել էր, նա, որի գրչի տակը «Մեղուի» սուր խայթոցներով ծաղրուած և արհամարհուած էր» սիրոյ խանդավառ պաշտամունքը, նա, կեանքի յոռետես մեկնիչը, այլ կերպ է բացատրում իր սեփական զգացմունքը և ուրիշ տեսակ է արձագանք տալիս մարդկային սրտի այդ կախարդիչ ակկորդին: Թէ այնուհետև Պարոնեանին սիրոյ սումանը ինչ վերջաւորութիւն է ունենում, այդ մասին կտրելի է չհամաձայնել նրա այս կենսագրութիւնը տուողի հետ. ձեռքի տակ ունենալով և ուրիշ ականատես, ծանօթ անձերի տուած տեղեկութիւնները, կարող ենիք այսքանն ասել, որ Պարոնեանի կեանքի վերջարյաց նրա ընտանեկան օջախը այնքան պայծառ չի լուսաւորում, այլ աւելի մոայլ, ցաւալի և տխուր է դարձնում. և դրա պատճառը ինքը Պարոնեան էր:

Անցած այդ երջանիկ օրից մի փոքր ժամանակ, Պարոնեանը ունեցյաւ իր առանձին օրգանը «Թատրոն» անուամբ: Այդ մի գաւեշտական թերթ էր կարիկատուրաներով զարգարուած, որի ծրագիրը նոյնպէս այն էր, ինչ որ «Մեղու»-ինը՝ ձաղկել, մտրակել կեղծն ու ծիծաղելին. ուրեմն կրկին նա իր կոչման գլուխն է անցնում. ունենալով այժմ իր սեփական օրգանը, նա այլս ոչ մէկից չէր քաշւում և ոչ ոքին չէր ինսառում. ազնուականութիւնը կամ աղայականութիւնը, հոգևորականութիւնը և վաճառական գասակարգը կրկին ու կրկին անվերջ ծաղրի և խայտառակութեան են ենթարկւում. այդ մըտրակումները նորէն վրգովում են Կ. Պոլսոյ իմաստակ գրագէտրերին և երես առած մեծամեծներին, որի հետեանքը այն է լինում, որ «Թատրոն»ը չորս տարուայ ընթացքում ութն անգամ դադարեցնուում է, և չորրորդ տարուայ վերջում ընդ միշտ խափանուում է: Ինքը հեղինակը այսպէս է ասում լրագրի խա-

փանման առթիւ՝ «իմ հանդէսը դադարեցրին, ինչու նրանք ինձ թշնամի էին համարում, որովհետև ես յարձակուեցայ պատրիարքարանի սափրիչի վրայ»:

Չունենալով այլևս իր սեփական օրգանը, նա սկսում է աշխատակցել շատ թերթերի. Կ. Պոլում՝ «Հայընիքին», «Արարատին», «Լոյսին». իսկ Կովկասում՝ «Փորձին»՝ «Հոսհոս» կեղծ ստորագրութեամբ. «Փարոսին», «Արձագանքին»՝ «լուսարար» կեղծ ստորագրութեամբ. Յօդուածները գրում էին աշխոյժ, գործնական և որամիտ. հետաքրքրիր է գրանց նիւթը. մեծ մասամբ նրան զբաղեցնում են այդ ժամանակուայ հաստարակական կեանքը, ժամանակակից հարցերի բննազատութիւնը և զրական ու մահկավարժական ասպարիզում գործող անձանց գործունէութեան դատավինուումը. այդ ժամանակից սկսած միայն արևելահայերը ծանօթանում են Պարոնեանի անձի և գրուածների հետ:

1878 թուին Պարոնեանը հաւաքեց զանազան մարդկանց մասին գրած իր սարկաստիկական կենսագրականները և հրատարակեց «Ազգային Զոջել» վերնագրի տակ առանձին գրքով, որի մէջ գտնուում են քսան և վեց կենսագրութիւններ. իւրաքանչիւրի կենսագրութիւնը սկսում է մանկութիւնից և հասնուում մինչև կեանքի վերջին օրերը. լաւ կենսագրականներիցն մէկն է «Խորէն Գալֆայեան»-ը, որը Պարոնեանի այդ գրքի միակ իսկական սարկաստիկ հատուածն է. միւս կենսագրութիւններից յայտնի յաջողուածներն են «Գրիգոր Արծրուն»-ու, «Յովեէլ Շիշմանեան»-ի և «Ստեփան Ասլանեան»-ի կենսագրականները:

«Ազգային Զոջերով» Պարոնեանը իր արժանի տեղն է գրաւում հայ գրագէտների շարքում. սակայն մերկացնող ոճը, ազատ մտքերն ու համարձակութիւնը նրա թշնամիների թիւը առանց այն էլ բազմացնում է: Հետաքրքիր է նրա վիճակը այդ ժամանակ. հալածուելով և անարգուելով ամենքից, նա չի լուսում սակայն. համարձակ և յանդուդն նա առաջ է զնում խայթելով աջ ու ձախ և բազմաթիւ արատներ մերկացնելով, երբէք ի նկատի չունենալով իր նիւթական անապահով դրութիւնը: Նրա բարեկամները պատմում են, որ նա առաւօտեան իր ուտելիքի մասին ոչինչ հաստատ բան չէր կարող ասել: (Տես Արմ. Բել. 413 եր.:) Գրական գործունէութիւնը, ինչպէս մեզանում ամեն տեղ, նոյնպէս և Կ. Պոլում հայ գրագէտին իր աշխատանքով ապրելու հնարաւորութիւն չէր տալիս: Ուստի Պարոնեանը ստիպուած է լինում առ այժմ թողնել իր իսկական վեհ կոչումը, մանել սովորական, առօրեայ սկ աշխատանքի մոայլ աշխարհը: Այդտեղ նա շիւում, աւելի ևս մօտից ծանօթանում է մարդ:

կոչուած արարածի հազար ու մի այլանդակութիւնների, անթիւ թերութիւնների հետ, որի ալիքներից ինքն էլ յաճախ ստիպուած էր տաքուքերուել և տատանուիլ, բայց որոնց դէմ նա կռուել էր և պիտի կռուէր մինչև կեանքի վերջը:

Թերայի հեռագրատանը նա բաւական ժամանակ պաշտօնավարութիւն է յանձն առնում, յետոյ իրբե հաշուապահ այս այն վաճառականի մօս տեղ է վնսդում, աղդային պաշտօնների էլ ձեռնամուխ է լինում, պատրիարքարանի և երրեմն էլ միացեալ ընկերութեան քարտուշար գառնում, յետոյ «Աղդային ժողովների» ատենապալիր և ապա Աղդիանապոլսի կողմից երեսփոխան է ընտրւում: Այսպիսի խառն կեանքի մէջ ապրելով՝ նա թէև մանրամասն ծանօթացել է կեանքի բազմազան երեւոյթների և կողմերի հետ, բայց միւս կողմից էլ քիչ ժամանակ է ունեցել զբականութեամբ զբազուելու և իր գրուածները շուապ գրչի արդիւնք լինելով ի հարկէ պիտի ունենային թերութիւններ, անհարժութիւններ, որոնք գեղարուեստական երկի փայլն ու աղնուութիւնը նսեմացնել կարող են միայն:

«Աղդային Զոջերին» հետեւում են «Պտոյտ մը կ. Պոլսոյ թաղերուն մէջ» և «Մեծապատիւ մուրացկանները», առաջինում նկարագրուած են կ. Պոլսի հայկական թաղերը, իրանց բնուրոշ կողմերով, բնակիչների նիստն ու կացը և զոլրոցները, որոնք «փոշի ցանելու հաստատութիւններ» են անուանուած: Իսկ «Մեծապատիւ մուրացկանների» մէջ դուրս են բերուած հայ տիպեր՝ հանճար չունեցող գրագէալ, լիրք, բուլվարային խըմբագիրը, անյայտ զբազմունքի տէր մարդիկ, որոնք ինչոք ագռաւներ հետևում են որսին, և ագահօրէն յարձակւում են նրա վրայ՝ նրանց կողոպտելու նպատակով:

Այդ գրուածքներին հետևում է նրա «Ծիծաղը», ուր այլաբանական ձևով—կենդանիների ընդանով—ծաղրւում են կ. Պոլսի գրական գործիչներից շատերը:

Գալիս են ութսունական թուականները, Պարսնեանի նիւթական գրութիւնը սարսափելի է դաւնում, նրա գրական աշխատանքը կարծես միտք չունէր երլէք նրա վիճակը ապահովացնելու, ուստի նա սկսում է մտածել ապրելու մի միջոց հնարելու համար, աղդային և մասնաւոր հաստատութեանց մէջ այլևս նրան պաշտօն չէին տալիս, իւրաքանչիւր տեղում նրանցից մի որևէ մէկը խայթուած, անարգուած էր, շուտով նա սկսում է ուսելիդիչն նիւթերի մի ասուտուր, և երբ նա այնքան փող է հաւաքում, որով հնարաւոր էր մի լրագիր հրատարակել, սկսում է իր «Խիկար» նշանաւոր լրագիրը, միւս կողմից, խնայելով իր նիւթական միջոցները, և թերթի ցրուիչն էլ ինքը լինելով այդ

թերթում Պարոնեանի գրիչն աջ ու ձախ իր թոյնն է թափում։ «Քաղաքավարութեան վասներ» վերնազրի տակ լոյս են տեսնում մի շաբթ յօդուածներ, որոնց մէջ առեն դասակարգի մարդկիկ Պարոնեանի ծաղրից և երդիծանքից իրանց որոշ բաժինն են ստանում։ Սակայն ուտեսատի վերաբերեալ առևտուրը յաջող չէր, միւս կողմից «Խիկարի» համարձակ ճայնը նորից հալածանքներ է առաջ բերում սրամիտ խմբագրի գէմ։ Նա այնքան նեղ գրութեան մէջ է ընկնում, որ 1890 թուին 29 ապրիլին, Կովկասի թերթից մէկն գրում է. «Ես պատրաստ եմ ձեռ թերթին աշխատակցելու, միայն խնդրում եմ ինձ հաղորդեք նախ՝ թերթը ի՞նչ ուղղութեան է պատկանում և երկրորդը՝ ո՞րքան թերթ հարկաւոր է գրել, որպէսզի ամսական քսան բուրլի ստանալը կարելի լինի»։ այդպիսի մի նամակ կարող էր գրել Պարոնեանը, երր քաղցից մեռնելու երկիւղ կար. իսկ այդ գրութեան մէջ իր բերնից կորելով սիմֆական օրգանը պահպանելու յետելից էր ընկել։ Կեանքի գաղափարական կըռուից ունեցած վաստակաբեկութիւնը; հոգեկան լրումը և միւս կողմից էլ ծառայութեան և գրականութեան մէջ ունեցած լարուած աշխատանքը, վերջնականապէս սպառում են նրա ոյժերը. հին ցաւը երեան է գալիս, իսկ բժշկուելու ոչ մի միջոց. և 1891 թուի մայիսի 27-ին երկուշաբթի օրը մեռնում է Պարոնեանը, մաշուած թոքախոտից, աղքատութեան և մինակութեան մէջ։

Պարոնեանի մահուանից յետոյ միայն, ինչպէս միշտ պատահում է մեր մէջ, ամենքը հասկացած գրագէտի մեծ արժանիքը և նշանակութիւնը, գրագէտ՝ որ ցաւել էր ազգի բարոյականութեան անկման վրայ, տալիս են նրան իր թաղման ժամանակ այն պատշաճաւոր յարգանքը, որին արժանի էր հայ մեծ հեղինակը իր կենդանութեան ժամանակ. ի զուր չէ որ հայի առաջանակը մէջ կայ հետեւեալ տասցուածը որ հայ ազգի բնաւորութիւններից մէկն է որոշում.—«Գնա մեսիր, արի սիրեմ»: Թաղմանը ներկայ էին երկու արքեալիսկոպոսներ, չորս եպիսկոպոսներ, հոգևորականների մի մեծ բազմութիւն. Ժողովուրդը խոնուած հետեւում էր հանգուցեալ հեղինակի սե և մոայլ գագաղին և զլիսիկոր ուղեկցում յուղարկաւորութեան հանդէսին։ Խորէն Նար-ըէյը, որը ենթարկուած էր տաղանդաւոր հեղինակի սուրբ երդիծանքին, յիշելով Պարոնեանի տխուր և միայնակ կեանքը, ուղղակի ասաց, որ Պարոնեանի գրուածները անմահ են։ Այնուհետև յուղուած և վրդովուած՝ վերջին հրաժեշտը տուեց հանգուցեալ գրագէտին, իր մտերիմ ընկեր Յովհաննէս էֆ. Սէթեանը, իր խօսրը վերջացնելով հետեւեալ խօս-

քերով. «Ո՞վ առանց խղճի խայթի կը համարձակուի ասել, որ Պարոնեանը իր կեանքի ամենազժուար բոպէներին չի ունեցել բաւականաշափ անվեհերութիւն և հաստատակամութիւն»։ (տես Արմ. Եռլ.։) Իսկ այդ մասին ինքը Պարոնեանը ասել էր. «տաղանդը, հանճարը առանց քաջալերութեան կը մեռնին»։ (տես, «Մեծապատիւ Մուրացկաններ», 113 երես):

Բայց վերոյիշեալ երկերից, Պարոնեանը ունի նաև անտիպ գրուածներ. մի քանիսը կիսատ թողած, օրինակ «Պոոյզ»։ Նա զրադւում էր թարգմանութիւններով. օր. հին գրականութիւնից՝ իրան սիրելի գրուածներից, հայերէն է թարգմանել կիցիանի երկերից «Աստուածների խօսակցութիւնը» և «Մեռեանների թագաւորութեան մէջ խօսակցութիւն»-ը։ 1892 թուին Պարոնեանի գործերը Թիֆլիսում հրատարակուում են. «Խիկորից» վերջնելով «Քաղաքավարութեան վասաները» վերնագրով յօդուածները հրատարակուում են առանձին գրքոյկով. «Ազգային Զոյները» երկրորդ անգամ տպագրուում. է (Ա. տպագրութիւնը եղել էր Կ. Պոլսում). իսկ «Մեծապատիւ մուրացկաններն» էլ թատերգութեան փոխուելով ներկայացնուում է Թիֆլիսի բեմի վրայ. Կ. Պոլսում և Թիֆլիսի թերթերում «հոսհոս» ստորագրութիւն կրող նրա մի շարք յօդուածներն էլ հրատարակուում են «Հոսոսի Զեռազրերը» վերնագրով, առանձին գրքոյկով. նրա գրուածներից արևելահայերին ամենից աւելի գուր է գալիս «Մեծապատիւ մուրացկանները» որը մինչև հիմա երեք տպագրութիւն է ունեցել և սպառուել է. Սակայն այդ երկերի հլորատարակութիւնից չօգտուեցան երբէք ոչ Պարոնեանի այրին, և ոչ էլ նրա որրը. թէև արժ. Գիւտ քահանայ Ազանեանը Պարոնեանի գրուածքի հրատարակութիւնը ստանձել, և մի ժամանակ հետաքրքրուել էր Պարոնեանի թշուառ ընտանիքին օգնել այդ հրատարակութիւնների օգտով, բայց չիմացուեց որոշ, թէ արդեօք խեղճերը մի բան ստացան թէ ոչ:

III

Ահաւասիկ, համառօտակի յիշելով Պարոնեանի կեանքը: Այժմ՝ նայելով նրա գրուածներին, տեսնենք թէ Պարոնեանի նկարադրած կեանքը ի՞նչպիսի բովանդակութիւն ունի և ի՞նչաղդեցութիւն է թողել նրա վրայ այդ կեանքը:

1850-70 նոյնիսկ 80-ական թուականներում Պարոնեանը գրադուել է լրագրական գործունէութեամբ: Գործունէութեան մի ասպարէզ էր դա, ուր կեանքը այնքան էլ բազմակողմանիութիւն չունէր, համեմատած ուամիկի կենցաղին հետ, ուր ան-

հատական մանր մունք հաշիւներն էին միայն մարդկանց ղեկավարում. խմբագրերը և յօդուածագրերը չէին ողերուած բարձր և վեհ սկզբունքներով և չէին ծգտում լրագրութիւնը բարձրացնել և կատարեալ աստիճանի հասցնել. Խմբագրի համար գոյութիւն ունէին երկու սկզբունք. ա) լրագիրը իրանց ձեռքում մի գէնք դարձնել. բ) այդ գէնքով պաշտպանել միմիայն իրանց անհատականութիւնը. անհատականութիւնը կուղէք հասկացեք բարոյական, իսկ եթէ կատենում էք, նիւթական մաքով. լրագիրը՝ հասարակական կարծիքի այդ շտեմարանը իրանց համար դարձնելով արհեստանոց, դարբնի սալ, որի վրայ կռում կոփում, ողորկում, ազնուացնում են ոչ թէ հասարակաց կարծիքը, այլ մեկուսացած խմբագրերը անմտօրէն ջուր են ծեծում: Միւս կողմից լրագրութեան էջերը լցում են շողոքորթութեան անվերջ շարքերով, հարուստ բաժանորդներ ճարհելու խսկական աշխատանքով, մուրացկանութեամբ զբազուելու գեղեցիկ գործունէութեամբ, որին իրրև ճշգրիտ պատկեր կարող ենք ի նկատի ունենալ «Մեծապ. Մուրացկանների» մէջ եղած խմբագրի տիպարը. (տես. Մ. Մուրաց. 11—20 եր.) այդ մի ինքնուրոյն շողոքորթութիւն է, որի գործածութեանը ձևերի մէջ ոչ մի խարութիւն չեն գնում. շողոքորթում են պատրիարքարանը և պատրիարքին, քանի վերջինս ղեռ պաշտօնանկ չի եղել. շողոքորթում են մի որևէ է ազգային հաստատութեան վերաբերմամբ, որպէսզի այդ հաստատութեան ի նպաստ եղած հանգանակութիւնը իրանց թերթերի միջոցաւ լինի և իրանք էլ օգտուեն: Շողոքորթութեան սովորութիւնը յատուկ է ոչ միայն լրագրութեան, այլ ինչպէս յետոյ կը տեսնենք, հասարակութեան ամբողջ փչացած, անբարոյականացած մասը այդ գէնըը գործ է գնում գոյութեան ահեղ կռում. պիտի շողոքորթես, ուրովհետև այլպէս է պահանջում «Քաղաքավարութիւնը» և որ գլխաւորն է, քո սեփական շահը. ահա թէ հասարակութեան որ գլխաւոր թերութիւնն է առիթ տուել Պարտեանին գրելու «Քաղաքավարութեան վասներ» անուն կը ող տեսարանները:

Միւս կողմից լրագրութիւնը ասպարէղ էր գարձել իրարհայոյելու, սառը անուններով իրար պատուելու. ասածներիս իրար յարմար օրինակ կարող է ծառայել «Աղպային Զոջերի» մէջ (76 եր.). Իւթիւնեանի կենսագրութիւնը, որի մէջ պատկերացըրած տեսարանների վրայ կարելի է նայել ծիծաղով և միենոյն ժամանակ խոր վիշտ զգալով: «Փունչ» և «Մասիս» լրագիրները իրար գէմ դատ են բաց անում, այն պատճառով, որ «Փունչի» խմբագիրը «Մասիսի խմբագրին անուանել է «կենողա-

Նի», այդ գատի մէջ կարծես կատակերգութիւն են խաղում. գատողները սովիետօրէն վիճում են, թէ կենդանի բառը «անասուննի» իմաստ ունի, թէ ուրիշ մաքով է գործածուած. «Փունչի» խմբագիրը պատճառաբանում է թէ «կենդանի» բառը այդ խմասոր չունի. որովհետև ո. գրի մէջ Աստուծոյ համար ասուած է թէ «կենդանի է Տէր»: Ահա այսպիսի երեխայական և անօգուտ բանակումների ասպարէզ էր գարձել Կ. Պոլսի հայ լրագրութիւնը, շատ լրագրեր իրանց այդ թերութեան պատճառով իրօք արժանի էին Պարոնեանի թունալից ծաղրին և երգիծանքի սուր խայթոցներին. յիշենք այդպիսի լրագրներից մի քանիսը. «Երևակ» լրագիրը (1857 թուին) լիքն էր հին նախապաշարումներով և գեերի հաւատալիքներով. տպում էր բաղմաթիւ անմիտ յօդուածներ, որոնք պատպականութիւնը և կաթողիկութիւնը անմիտ գովասաններով և անհեթեթ մտածողութեամբ աշխատում էին մինչև երկինքը հասցնել: «Մասսիս» շաբաթաթերթը թողնելով մի կողմ լրագրութեան հիմքը կազմող ազնիւ սկզբունքները և գաղափարները, միշտ աշխատել է ունենալ այն արամագրութիւնը, որ ժողովրդի սրտին մօտիկ է. մի լրագիր էր դա, որը առանց մտածելու կարող էր հակասական նամակները մէկը միւսից յետոյ տպագրել. իսկ այդպիսի հակասութիւններից խոյս տալու համար թերթի խըմբագիրը ստիպուած էր իր մատին դերձան կապել: «Մանզումէի եֆքեար», որի խմբագիրը (Կ. Փանոսեան) ինը ժամուայ մէջ ինը հազար հայնոյութիւններ կարող էր անել: «Մէճմուաթիհավատիս», որը եզենսագործութեան պաշտպան է հանդիսանում: «Մէճմուա», «Թէրջիման-ի-էֆքեար», «Լրագիր» և այլ բաղմաթիւ թերթել, ի թիւս որոց և կովկասի թերթերից «Մշակ» իր յարձակումների պատճառով, Պարոնեանի կողմից ծաղր ու ծանակի առարկայ են գառնում:

Սակայն չպիտի շեշտել միայն թէ Պարոնեանը լրագրերի մէջ միայն թերի կողմեր է տեսնում. ոչ նա իր պարսաւած «Մասսիս» և «Մանզումէի-էֆքեար» թերթերի մէջ էլ նոյնիսկ նկատում է դրական յատկութիւններ կամ կողմեր. բայց աւելացնում է. «Բակայն լինչ օդուա, ճշմարտութենէ աւելի հայնոյութիւն եայլն եայլն կայ». (տես, «Աղք. Զոջեր» եր. 141). թերթեր, որոնց խմբագրերը «շաբաթն անգամ մը իրենց կարծիքը կը փոխեն» (նոյն գիրքը—82 եր.): Պարոնեանը աւելի համակրում և դրական կողմեր է տեսնում «Մեզու» և «Ազեելեան Մամուլ» լրագրերի մէջ. «Միւնատիի-էրջիառը» նրա գովասանքին է արժանանում: Նա էր որ առաջին անգամ յարձակուեցաւ ամիրայի և արհեստաւորի, կաթողիկո-

սի և փոքրաւորի, հարուստի և աղքատի վրայ. իր բոնած այդ ուղղութեան պատճառով, նա ժողովրդի սիրելին է դառնում. որովհետեւ մինչև այն ժամանակ «ամիրայի մը թաշկինակին գէմ խօսիլը երկնից զէմ ապստամբիլ կը նշանակէր. այն աշտենները գերագոյն ժողովոյ մէջ անիրաւութիւնը ճշմարտութեան ներկայացուցիչն էր, բոնութիւնը գաւազանն ի ձեռին կը նախագահէր, արդարութեան աթոռին վրայ ամիրաներուն կամքը բազմած էր, իրաւունքը ֆալախս կ'անուանուէր». (տես, «Ազգ. Զոջ.» 133 էր.), և երբ այդ լրագիրը Զէյթունի ինողրին պաշտպան է հանգիսանում (1853 թ.) դադարում է:

Այժմ, տեսնելով վերոյիշեալ լուրջ, բայց վարկարեկ թերթերի զբաղմունքի որպիսութիւնը, հարցնենք, ի՞նչ պիտի անէին երկիծաբանական թերթերը: Պարոնեանը, որ «Մեղու»-ի խմբագրի պաշտօն էր ստանձնել շատ լուր իւրացրել է ժամանակի սրտամութիւնը, երգիծական այդ կարևոր յատկութիւնը, ինչպէս միւս զաւեշտական թերթերի խմբագրերը՝ նոյնպէս և Պարոնեան չն զարգացրել և բարգմակողմանի գարձրել. Պարոնեանի մտաւոր զարգացման հետ նրա երգիծանքը սակայն ժամանակի ընթացքում կատարելագործութեան հասած չինք տեսնում, նրա ծաղրի տեսակը աւելի ազնուացած և մաքրուած չի հանդէս գալիս, այլ ընդհակառակն ենթարկուելով իր շրջապատի ազդեցութեան, աւելի կոպտանում է. «Խիկարի» մէջ նա իր մի պաշտօնակցին «իշու» է նմանեցնում և այդ նմանութիւնը մի քանի անգամ կրկնում է և ընդլայնում. (տես, «Ծաղիկ» 270 էր.) այնպէս որ Պարոնեանն էլ նեղ ընկած ըստէին երբեմն հայհոյանքի օգնութեանն էր զիմում: Սակայն լրագրական երկրորդ յատկութիւնը՝ շողոքորթութիւնը, Պարոնեանի համար բոլորովին օտար մնաց:

Պարոնեանը լրագրական մթնոլորտի աղտեղի հորիզոնի վրայ ունեցել է յատուկ վեհութիւն և բարոյական բարձրութիւն. անօթութեան վախը, առօրեայ պարէնը հայթհայթելու դժուարութիւնը նրան չին ստիպել երբէք շողոքորթութեան դիմելու, հարուստներին փայփայելու միջոցին ապաւինելու, ոչ միայն իր նիւթական զրութիւնը ապահովելու համար, այլ նոյնիսկ իր սեփական օրգանի յարաւեռութիւնը գոնէ պահպանելու:

Այժմ տեսնենք, թէ կրթական դործը և կամ մասնաւորապէս դպրոցական աշխարհը աւելի մխիթարական վիճակի մէջ էր քանի լրագրութիւնը: Ազգային գործիչներից գասառուների կամ ուսուցիչների վիճակը ամենախղճալի է: Պարոնեանը իբրև ուսուցիչ, իր անձնական փորձով խրատուած, իրաւունք ունէր

ասելու. «Դասատութեամբ ապրել... հրաշքի դարերը անցել են». դասատութեամբ մեռնիլ, այս է իրականութիւնը. մի ուրիշ տեղ նա ասում է. «քաղաքագէտները մեծ գործ մը ըրած կ'ըլլան, եթէ կախուելու անձերը Թիւրքիա զրկն դասատութիւն անելու». (տես, «Ազգ. Զոջ.» 305 եր.), մի այլ տեղ կեղծ փող ստացող մի մուրացկան անիծելով փող տուող անցորդին՝ կանչում է նրա յետեից—«վարժապետ ըլլաս... վարժապետէն աւելի բան մը, վարժապետացու ըլլաս»: Զկարծենք թէ ուսուցչի վիճակի նկարագրութիւնը, անցնելով Պարոնեանի երգիծական պրիդմայից՝ իր էութեամբ չենք տեսնում մենք. ոչ, Տաճկաստանում ուսուցիչ եղողներից եթէ հարցնելու լինենք, նրանք նոյնիսկ հիմա նոյնը կը նկարագրեն մեզ, ինչ որ էր սրանից 20—25 տարի առաջ: Եւ իսկապէս ինչո՞վ պէտք է ապահովուած լինի ուսուցչի նիւթականը, եթէ ոչ ժողովրդի նախածենութեամբ. ի՞նչպէս էր վերաբերում ժողովուրդը գէպի գպրոցը, այդ մասին շատ նպաստաւոր տեղեկութիւններ չենք գտնում Պարոնեանի գրուածներում. անհոգութիւնն է այն միակ թշնամին, որի աւերածութեան է ենթարկուած ամբողջ ուսումնական գործը. ժողովուրդը չէ, որ հետաքրքրուած է իր գպրոցներով, այլ մի քանի հարուստներն են կամ ամիրաները, էֆէնդիները, բէյերը, որոնք, իրարից վրէժ լուծելու համար, հակառակորդի հովանաւորութեան տակ գտնուող ուսումնարանը աշխատում են փակել և կամ հակառակորդին համակիր ուսուցիչներին փոփոխել և հալածանքի ենթարկել: Ի՞նչ անէր զժբախտ ուսուցիչը. նա ի հարկէ շողոքորթութեան պիտի դիմէր՝ անօթի մեռնելու և ամսական չստանալու ահաւոր և սպանալից վիճակին չենթարկուելու համար. ուստի ուսուցիչը հոգաբարձուի ահաւոր ստուերի տակ պիտի նիհարանար և աւելի «ճաշու ուտէր, քան հաց» (տես «Ծաղիկ»):

Վարժապետի պատիւը ընկել էր մի կողմից ուրիշների եսական հաշխներից բղխած ընդհարումների պատճառով, իսկ միւս կողմից էլ իր, ուսուցչի, ստորաքարշութեան համար: Բայց արդեօք իրանք ուսուցիչները, անձնական բարձր առաքելնութիւններով օժտուած մարզիկ էին, արժանի՞ էին սերունդ զարգացնելու և դաստիարակելու բարձր կոչման, թէ ոչ. այս հարցի պարզաբանութեան համար արժէ զիմել «Կ, իւթիւննեանի կենսագրութեան». (տես, «Ազգ. Զոջ.» 82 եր.)—«Կ, իւթիւննեան, զերձակի խանութում բաւական ժամանակ վերաբեռներ արդուկելէ զիմի, 1833 թուին կ. Պոլսոյ ճեմարանում քիչ մը ճարտասանութիւն, տրամաբանութիւն և քերականութիւն կը սովորի և Փարիզում երկուքն երեք տարի ժա-

մանակ անցնելէն յիտոյ, երբ խանութ մը բանալու համար ստակ չունենալուն վրայ կը վճատի, և զի մեր ազգին մէջ վհատութիւնը մարդս կամ գիրեզման կը տանի և կամ խմբագրութեան ասպարէզը կը նետէ, ուստի այս վերջինիս մէջ ձգուելու գժբախտութիւնն ունեցաւ և անկէ վերջը ուսուցչական ասպարէզը՝ որով հայոց լեզուն պիտի կոկէր, գրաբառը մերժէր և աշխարհաբառն ընդունէր»: Տէրոյեանի կենսագրութիւնը նոյնական բաւական փաստեր է տալիս ուսուցչի հոգեկան զարգացման աստիճանի մասին: Գաւառական մի գիւղում ծնուած և կրթութիւն ստացած Տէրոյեանը՝ բախտի բերմամբ Կ. Պոլիս է ընկնում, և խալիքաների օգնութեամբ մեն մենակ յանձն է առնում մի ամբողջ ուսումնարանի ուսուցչութիւնը. այդ ուսումնարանում նա գործ է զնում յայտնի Տէր-Թողիկեան մեթուրը. մաշւում են աշակերտների ծնկները, բարանում նրանց սրունքները ֆալախայի ուժեղ հարուածների ամենօրեայ կրկնութիւններից, բայց նըրանք դեռ չեն ճանաչել գրի մեն ու սպիտակը, դեռ մարդ չեն դարձել. ի՞նչ էր ուսումնարանի ծրագիրը և ի՞նչ մեթոսով էին աւանդուում առարկաները, որ աշակերտները ի՞նչ հասկանային: Տասից տասներկու տարուայ ընթացքում կեանք մաշեցնելով քերականութեան, ճարտասանութեան, տրամարանութեան վրայ, քերական, սաղմոս և Գործք Առաքելոց անգիր անելով, թութակի նման կրկնելով այդ անթիւ առարկաներից աւանդուած դաշտերը, առարկաներ՝ որոնք իրանց անվերջ «ութիւն» ներովը ուսուցչն անգամ կը շշմեցնէին, ուր մնաց անմեղ մանուկներին, աշակերտները գուրս էին գալիս ուսումնարանից աւելի տգէտ և բթացած, քան ուսումնարան մտնելիս: Իսկ ի՞նչ էին անում ծընողները:

Ուսման վրայ և՛ էր ուշագրութիւն դարձնողը, հետաքըրքուողը. բաւական էր, որ մի ծնող կարողանար իր որուն բաւականաչափ վաճառականական հաշիւներ՝ և գիտելիքներ սովորացնել և մի վաճառականի մօտ տեղաւորելով՝ ճարպիկ կերպով իրացնել տար առևտրականի մեքենայութիւնները. ահա սա էր այն գլխաւոր սկզբունքը, որի մէջ մնում էր մանուկ սերունդը. այդ պատճառով օտար լեզուների ուսումը ամենից գերազան էր համարւում և բազմաթիւ ընտանիքներ օտարագով դասաւու էին հրաւիրում իրանց տները. այդ էր պատճառը, որ այն ծնողները, որոնք աղջային վարժարանին անկարող էին մի համեստ զումար վճարելու, իրանց զաւակները օտար ուսումնարաններ ուղարկելիս, կամ դասաւուներ հրաւիրելիս՝ անմըմունջ բաց էին անում իրանց լիքը քսակները:

Քննութիւնները և պարզեարաշխութեան հանդէսները կատակերգական բնաւորութիւն էին կրում: Այսպիսի անմիտար պատկեր ունէր կրթական գործը, որի մէջ գժրադրաբար առենքթէ բարեբախտաբար, ինքը Պարոննեանն էլ միջամուխ է եղել. թէն պէտք է շեշտել, որ նա իր պաշտօնակիցներից աւելի զարգացուծ և պարտաճանաչներիցն էր. ունէր այն առաւելութիւնը, այն քանքարը, որը պահանջուում է ազգին կամ հասարակութեան ծառայող բոլոր անհատներից և որի օգնութեամբ միայն կարելի է կառուցանել համայնական երջանկութեան շինքը:

Անհատից պահանջուելիք պարտաճանաչութեան այդ զգացմունքը տեսնենք նկատում է նոյնպէս Կ. Պոլիսոյ պղկացին հաստատութիւններում գործող ղեկավար անձանց մէջ: Ազգային ժողովները, ուր նոյնպէս գործել է Պարոննեանը, աւելի յուսալից և արդիւնալից ասպարէկներ էին գործունէութեան համար, քան լրադրական և ուսուցչական կողմները. այստեղ էլ մենք լսում ենք, ի հարկէ օդի մէջ ցնդող և ոչ թղթի վրայ յարատեռող, անմիտ վիճարանութիւնները, նոյն անձնական մանր-մունր հաշիւնները և խծրծանքները, փռուն նախագերը մի որևէ գործ սկսելուց առաջայդ առթիւ առաջացած անհամ և անմիտ, վերջ չունեցող հականառութիւնները: «Ծիծաղի» մէջ «կենդանիներու ժողովը» շատ յաջող կերպով բնորոշում է ազգային ժողովների էութիւնը: Ժողովական անդամների թերութիւնների մէջ ամենաաչքի ընկնող թերութիւնը անպարտաճանաշութիւնն է. ժողովներին չեն յաճախում, ինչո՞ւ համար, անձնական տկարութեան, գլխի և սրա նման ցաւերի (ի հարկէ շինծու), «ազգականի մը մեռնելուն» և այլն, և այն պատճաններով: Միւս կողմից «ազգային գործիչ», «ժողովի անդամ» և այլն սրանց նման անունները իրանց վրայ առնելով՝ աւելացրել են միայն ազգի և պատրիարքի պարաքերը և կամ գուրս են եկել իրու կաշառակեր, անբարեխիղ մարդիկ, օգառելով անխնայ կերպով՝ առանց այն էլ աղդային դատարկ ոնդուկից:

Բաղդի բերմամբ համայնական գործում բարձր պաշտօնաներ ձեռք ձգող կամ գծուծ, իսկական հաշիւններով առաջնորդուող ազգայականութիւնն է, որ հասարակութեան ղեկավարն է հանդիսանում. եթէ, օրինակ, այդ աղայականութիւնը դատաւոր է մի որևէ ամբաստանուածի, այդ ժամանակ դատապարտելի վերաբերմամբ նրա անձնական հաշիւնները անսահման կրքի են փոխում, անարդարութիւնն է որ տիրում է այդ մարմնին. լուկ այդպիսի անձինք միայն ատենապետ չեն. ազգի մէջ ի՞նչքան հաստատութիւններ կան, որ դրանց վճռական վեօտի են առաջնորդուում: Պարոննեանը, որ Աղրիանապուլսի կողմից

իբրև երեսփոխան ջերմ մասնակցութիւն է ունեցել երեսփոխանական ժողովներում, և իբրև սուր դիտող մեզ տալիս է պատկերներ այդ կեանքից, որոնք ակնյայտնի կերպով ցոյց են տալիս այն կարծիքի ճշտութիւնը, թէ ազգային այդ հաստատութիւններն ու ժողովները և կամ՝ մի խօսքով ասած՝ սահմանադրութիւնը, որը հաստատուեցաւ 1862 թուին, և որը այնքան բուռն ոգևորութեամբ տօնուեցաւ արևմտահայերից, բոլորովին անժամանակ մի պահանջ էր արևմտահայերի համար և ամբողջովին անիրազործելի մի առաջարկ առ բարձրագոյն դուռը։ Այդ գաղափարը առաջ եկաւ, ծնուեցաւ կ. Պոլսի և կամ տաճկահայ այն ուսանող սելնդի ուղեղում, որը տարուած էր Փրանսական մեծ յեղափոխութիւն առաջացրած արգասիքով։ յեղափոխութիւն, որի արձագանքն էր կ. Պոլսում թութակաբար կրկնուող սահմանադրութիւնը. և իսկապէս ի՞նչ էին այն բազմազան ժողովները, եթէ ոչ Փրանսական գունաւորութեամբ կ. Պոլիս տեղափոխուած դատարկ սրահներ, լցուած դատարկագուռի ժողովականներով. վերջապէս ի՞նչ էին այն կուսակցութիւնները, որոնք յայտնի էին հայ երեսփոխանական ժողովում «Ճախակողմեաններ» և «Ճախակողմեաններ» անունով, եթէ ոչ փայտի ձիով ոգեսրուած երեխայի ասպատակութիւնները. ի՞նչ կարող էր անել ձեռքն ու ոտքը կապուած «գործադիր ժողովը» բարձրագոյն գուան աշալուրջ հսկողութեան տակը, մի ժողով, որ անցեալ դարում եւրոպայում այնքան մեծ գործեր էր տեսել:

Օտարի յառաջադիմութեան կամ դարգացման այդ սխալ ըմբռնումը և տեղափոխութիւնը հայ հողի վրայ, աւելի աչքի է ընկնում ընդհանուր գրական ասպարիգում. լրագրութիւնը, ինչպէս տեսանք, այս կողմից բազմաթիւ պակասաւոր կողմեր ուներ. այժմ տեսնենք թէ գեղագիտական գրականութիւնը հիմնուած էր լուրջ հիմքերի վրայ, թէ ոչ:

Բանաստեղծները և գրագէտները այնքան բազմացել են, որ սափրիչները նոյնիսկ կարող են բանաստեղծ կամ գրագէտ դառնալ. և բելլետրիստների այդ բազմութիւնն է, որ գնահատում է գեղարուեստը. չկայ հասկացող մասսա, չկայ արուեստի լուրջ քննութիւն. և մի որևէ միջակութիւն կամ աւելի ցած միջակութիւնից՝ «ազգային քերթող» և այլ մականուններ է ստանում ազգային համբակ վարպետներից։ Բանաստեղծական գրուածները կամ թարգմանութիւնները շատ անգամ այնքան անհասկանալի են լինում, որ, օրինակ, «Խորէն Նար-բէյի «Դաշնակը Լամարթինի» թարգմանութիւնը հասկանալու համար

չորս հոգիէ կազմուած մասնաժողով մը ընտրուեցաւ և երբ ասոնք ալ անկարող եղան հասկնալու, այն ժամանակ դիմեցին թարգմանչին, սակայն, վրայէն բաւական ժամանակ անցած լինելուն համար, ինքն ալ չէր կրնար հասկնալ իր թարգմանութիւնը» (տես, «Աղք. Զոջ.» 9 եր.), Այստեղ դեռ ևս խօսքս մի աչքի ընկնող բանաստեղծի մասին է, ուր մնացին այն բազմաթիւ միջակութիւնները, որոնք առանց մուսայի մի տող անգամ գրել չեն կարող, իսկ այդ մուսան էլ ով վկանէ քանի՞ ոսկով կը բարեհաճի այցելել իր գործազրուի բանաստեղծին: Արտադրելու, ստեղծագործելու գործում դրանց խղճութեանը չափ չկայ. բանաստեղծութիւնը՝ այդ թերուաների ձեռքում իբրև գործիք կամ մի արհեստ է, որից նրանք օգտառում են իրանց դատարկ որովայնի համար օրապահիկ հայթայթելու, կամ եթէ կան բարեկեցիկ պօչտներ, դրանք էլ բանաստեղծական ներշնչման են ենթարկեռում միայն պարապրոպէներին, այն մարդու նման, որը ծխում է միայն ֆանտազիայի համար. իսկ ի հարկէ երբ մարդուն միայն յատուկ այդ գոհարը, մտքի աստուածային այդ պարգևը գործադրուում է առօրեայ չնշին առաջկաների ձևով, նա կորցնում է իր վեհութիւնը. դառնալով ընդհանուրին մատչելի սեփականութիւն, որին տիրանալու համար այնքան էլ թանկ գին չէ պահանջուում, դրանով զնահատութեան իմաստը նսեմանում է և պատահած մարդը, «որ ասդիէն անդիէն խօսքեր հաւաքելով, զանոնք կը սանդրէ, կը կոկէ, անուշաբոյր իւզերով կ'օծէ և հրապարակ կը հանէ, երկու տողով հասկանալի բան մը—իւր գլորիչին տակ երկու էջի մէջ անհասկանալի կ'ըլլայ» («Աղք. Զոջեր» 211 եր.) բանաստեղծ կ'անուանուի: Ի՞նչ ենք տեսնում այդ տողերից. որ բանաստեղծութիւնը ոչ թէ մտքի և ձեր գեղարուեստականութեան մէջ էր փնտուում, այլ միայն բանաստեղծական բառերը և ճարտասանական ձեերը բաւական էին գոհացնելու բանաստեղծութեամբ թէ զբաղուողների և թէ հետաքրքրողների գեղարուեստական ճաշակը: Գրութեան ոճը կարող էր երբէք մտքին չհամապատասխանել, այդ նշանակութիւն չունէր, բաւական էր, որ մի բանաստեղծութեան մէջ չափ, յանդ և ընտրովի բառեր լինէին:

Միւս կողմից բանաստեղծութիւնը լցւում է Հոմերի, Ովիդիոսի և այլ բազմաթիւ կլասիկ հեղինակների աստուածութեանց անուններով. օտար տեղերի անուններ նոյնպէս հայ բանաստեղծութեանց մէջ իրանց փառաւոր տեղն են գրաւում: Լեզուական արտայայտութեանց մէջ խիստ աչքի է ընկնում մի տեսակ թեթևութիւն, որը ակնյայտնի կերպով ֆրանսական

լեզուի ազգեցութիւնն է ցոյց տալիս. ազգայնական նիւթերը նոյնպէս բոլորովին չեն զբաղեցնում ազգային գրչակներին: Իմաստակ բանաստեղծի իբրև յաջող տիպ՝ կարելի է գտնել «Մեծապատիւ Մուրացկանների» մէջ:

Պարոնեանը հետևեալ կերպով է գնահատում հայ հանճարը. «Մենք հանճարահանդէսին մէջ՝ ի տես աշխարհի գնելու համար քանի՞ քերթուած ունինք. մենք դժբախտաբար ուկի կ'անուանենք այն, ինչ որ պղինձ է, և որը սակայն ուկի պէս կը նչէ ժողովրդի ականջին»: (տես, «Ազգ. Զոջեր» 205 էր.). և Պարոնեանի կարծիքով մի որևէ բանաստեղծութիւն կամ «ըլլալու է և կամ բնաւ ըլլալու չէ». ուռտի նա խորհուրդ է տալիս.—«Ազգը քիչ մը խոհեմութիւն բանեցնէր և երկաթադրծը ժամագործութեան պաշտօնին չ'հրաւիրէր, իսկ հաշուապահն ալ բանաստեղծութման ընտրելի չ'ներկայացնէր. (տես, «Ազգ. Զոջ.» 156 էր.):

Աւելի բարձր փորձառութեան և գիտութեան տէր չեն հասարակութեան բժիշկներն ու փաստարանները. բժիշկներ, որոնք ոչ մի հմտութիւն չունին իրանց արհեստի մէջ և որոնք, կարելի է ասել, ամենայն համարձակութեամբ ի չարն են գործ գնում իրանց արհեստը և հիւանդների յոյսը, իրանց վայրի վերոյ մտածողութեան և աննպատակ փորձերի պատճառով բազմաթիւ հիւանդների մեծամեծ զանազան ենթարկուելու և նոյնիսկ մահուան պատճառ են զանում: Նրանք իրանց տգիտութեամբ հանդերձ՝ մեծ գումարով միայն՝ աղքատի կարողութեան անհամապատասխան այցելավարձով, համաձայնւում են այցելել և օգնել, եթէ ձեռներից գալիս է: Նոյն և փաստաբանները, որոնք պետական օրէնքներին, օտար և ազգային սովորութիւններին բոլորովին անտեղեակ են՝ և որոնց գործունէութիւնը ազգային և պետական պաշտօնատներում կատակերպական բնաւորութիւն է կրում: Ի՞նչ զեղեցիկ տիպար է այդպիսի փաստաբանների «Բազգասար Աղբար»ի մէջ երևող օրէնսդէտը:

Վերհիշեալ զբաղմունքները ունեցող դասակարգերը մայրաքաղաքի հայ բնակչութեան ընտրելիներն են. մտաւոր զարգացման դեկավար հանդիսացողները երիտասարդական այն շարքերն են, որոնք կոչուած են տգիտութեան դէմ մարտընչելու. և սակայն սրանց գործունէութիւնը ազգի զարգացման և լուսաւորութեան գործում՝ ոչ մի գրական արդինք չառաջացնելուց զատ՝ ընդհակառակն հասարակութեան ցեցել են եղել, անխնայ սպառելով և փչացնելով

Նրա թարմ ոյժերը, իրանց մուրացկանութեամբ ոչնչացնելով նրանից խլած լուման. բայց նրանք արժանապէս ծաղրի և խայտառակութեան հն հնթարկուած Պարոնեանի «Մեծ. Մուշացկաններ», «Բաղդասար աղբար», «Ազգային Զոջեր» և միւս գրուածներում:

Պարոնեան, նկարագրելով անգործների և մուրացկանների այդ հսկայ բազմութեան ողորմելի դրութիւնը, կարծես խղճահարուում է դրանց վրայ և «Ազգային Զոջերի» (296 եր.) մէջ նրանց խորհուրդ է տալիս, որ փոխանակ սրանից նրանից ողորմութիւն ինսդրելու, այստեղում, այնտեղում պաշտօն մուշ բալու, զբաղուին մի որևէ արհեստով և աւելի ազատ, անկախ և ապահով ապրեն. բայց միւս կողմից էլ նա աւելացնում է — «այսօր անգործ պտտողներուն և ոչ մին կրնայ մսավաճառ ըլւլալ, ոչ ալ նպարավաճառ. թող որ զրամագլուխ չունին, այլ և գրականութենէ մսավաճառութեան երթալը քիչ մը դժուար է, վասնզի ամեն գործ՝ որչափ ալ դիւրին երենայ դուրսէն, գաղտնիք մ'ունի իր մէջ»: Ահա այդ գաղտնիքն է, որ չեն կարողանում լուծել «Մեծապատիւ մուրացկանները» և աւելի լաւ են համարում երևսի մրով ապրելը, քան հաստատուն կամք և նիւթական ու բարոյական անկախութիւն ունենալը. և որովհետեւ քառասուն տարի զրագրութեամբ կամ ուրիշ պաշտօնով զրաղուած մէկու մը խիստ դժուար է կօշիկի, գինիի և ալ արհեստ սովորիլը», ուստի մանկութիւնից ուղիղ և ճիշտ պիտի հասկացուի ուսման, գիտութեան ու արհեստների նշանակութիւնը և ըստ այնմ էլ զրանց գործագրութիւնը: Պարոնեանը արմատական փոփոխութիւն է պահանջում, և նրա գրուածները այդ պահանջն են գնում հասկացող հասարակութեան առաջ:

Հասարակութեան միւս խաւերը՝ հոգևորականութիւնն և ժողովուրիը, աւելի թերի կողմերով են երևան գալիս Պարոնեանի գրուածներում, քան վերոյիշեալ կարգերը:

Հոգաբարձութիւնը՝ ինչ աստիճանի կամ կարգի էլ պատկանելիս լինի, լինի դա կաթողիկոս թէ պատրիարք, եպիսկոպոս թէ քահանայ, վարդապետ թէ սարկաւագ, իր աչքի ընկնող թերութիւններով առատ նիւթ է մատակարարել առանց այն էլ կեանքի մէջ բազմաթիւ արատներ նկատող հայ երգիծաբանն. կաթողիկոսը կամ պատրիարքը աչքի է ընկնում իր անհոգութեամբ, ծուլութեամբ, և որ գլխաւորն է՝ անվճուականութեամբ. մանաւանդ վերջինս ամեն մի նեղ ընկած ըռպէին իր հրաժարականը պատրաստ ունի. նա իր պաշտօնի մէջ ձեռներէցութիւն չի ցոյց տալիս, ազգային և կրօնական ինսդիրնե-

բը երեսի վրայ են մնում ամիսներով. իր գործունէութեան այդ եղանակի շնորհիւ նա չի ներկայացնում ժողովրդի աչքին իրեւ մի բարձր հեղինակութիւն, թէև ժողովուրդը մի նոր «պատրիարք ունենալու վսիմ փառամոլութիւնն ունի»:

Վարդապետներն և եպիսկոպոսները հաստատ պաշտօն չունին, որ նրանով զրադուեն և իրանց գործունէութեան արդիւնքը ցոյց տան. այլ մի ամիս այսաեղը իրեւ քարոզիչ, մի ամիս մի այլ տեղ իրեւ տեսուչ որևէ ուսումնարանի, կէս տարի մի ուրիշ տեղ իրեւ առաջնորդ, երկու տարի մի երրորդ տեղ իրեւ նույրակ՝ անց են կայնում աննպատակ կերպով իրանց կեանքը. և կամ զանազան կուսակցութիւնների յարուելով՝ այս կամ այն հոգեոր կարգակցին իր պաշտօնից վար քցելով, պատժել և աքսորելով տալով են զբաղուած: Ուրիշները, անարժանաբար քահանայ կամ վարդապետ ձեռնազրուելով, կաշառքի և բոնութեան օգնութեամբ, ազգի իրաւունքները իշխանաբար իրանց ձեռքն են առնում. և երբ այդպիսի տգէտ հոգեորականները մի պաշտօնի վլումն են անցնում, առաջնորդ գաւնում, աշխատում են զանազան պատրուակներով իրանց գրպանը պարարտացնել. օրինակ՝ մի դպրոցի օգտին հանգանակութիւն են բաց անում, մի մուրացկի համար գանձանակ են պտտեցնել տալիս եկեղեցիներում և ուրիշ բազմաթիւ խայտառակ միջոցներով՝ տեսնում էք մի տարում ահազին գումար կազմեցին և այլև պաշտօնանկ լինելուց չեն վախենում. եթէ նոյն իսկ մի որևէ համայնքի յաջողուի այդպիսիներից մէկին հեռացնել իրանց թեմից, արդէն հասկանալի է, թէ նրանց ծանր գրպանները ըրքան հրաշքներ պիտի գործեն. «Ազգային ջոջեր»-ում Մկրտիչ Տիգրանեանի կենսագրութեան մէջ ճիշտ այդպիսի մի հոգեորականների ոչլիէֆ և գունաւոր պատկերն է, որ կամնում է ընթերցողի առաջ, երբ նա այդ յօդուածը խորագնին կերպով կարգում է. վերջապէս դա մի պատկեր է, մարմանացրած իր մէջ թէ փիզիքական և թէ բարոյական արատների բազմազանութիւնը. կազ, կոյր, խուլ, համք անձնաւորութիւններ են զրանք, որոնց փոքրաւորները իգական սեռից են, որոնք իրանց պարզութիւնը մէկ կողմը թողած «հագուել, սըգուել և կոտրտուել» գիտեն. իրանց աշակերտներին սովորեցընում են կանանց յետեկից ման գալ, խօսում են պերճաբանօրէն, փայլուն քարոզներ են տալիս, ի հարկէ առանց էական իմաստ դնելու դրանց մէջ. մի խօսքով՝ եթէ ազգը «կրօնական մը կը յարգէ, պատճառն այն է, որ նուազ չարութիւն կը տեսնէ անկէ»:

Աւելի բարձր աստիճանի վրայ չեն կանգնում նոյնպէս

այլադաւան հայ կրօնաւորները։ Կաթոլիկ հայ կղերի հանած աղմուկը «Հասունեան և հակահասունեան» խմբրի ժամանակ, Մխիթարեանների այն խոստովանութիւնը, որով նրանք՝ Հասունեանները՝ պատին արած ամբաստանութիւնից ուզում էին արդարանալ, նոյնպէս այն, որ նրանք Հռովմի աթոռին միշտ հնագանդ են եղել և հայ ազգին երբէք չեն համակրել, մի ազգ, որ հերձուածող և հերեատիկոս է եղել, նմանապէս կաթուիկների այն անմիտ ճիգերը, որով նրանք ձգտում էին մոլորեալ հայերին փրկել և պատի հողաթափները համբուրել տալ, այս բոլորը իրանց խղճալի էութեան մէջ մտրակումի և սուր խայթոցների առարկայ են գառնում, իր ազգի մէջ առանց այն էլ բազմաթիւ այլանդակութիւններ տեսնող՝ Պարոնեանից։

Պարոնեանին աւելի ծանօթ է բուն ժողովրդական տարրը. իր «Քաղաքավարութեան մասներ», «Մեծապատիւ մուրացկաններ», «Պտոյտ մը Կ. Պոլոյ թաղերուն մէջ» գրուածներով լրիւ գաղափար է տալիս պոլսահայ ժողովրդի առօրեայ կեանքի մասին՝ տանը, շուկայում, սրճարաններում ունեցած կենցաղավարութեան ժամանակ, այդ գրուածներից երեսում է, թէ մայրաքաղաքացի հայը Ի՞նչ տեսակ վարք ու բարք և աշխարհայեցողութիւն ունի, Ի՞նչպիսի հասկացողութիւն ունի կեանքի մասին։ Գլխաւոր թերութիւնը, որ աչքի է ընկնում այդ «էմնաֆ» դասակարգի մէջ (ինչպէս որ Պ. Ա. Զօպանեանը անոււանում է ժողովրդական այդ խաւը) այն է, որ նա՝ թէ արտաքինով և թէ ներքինով աշխատել է նմանուել, կամ աւելի ճիշտն ասած՝ յարմարուել նորածնութեան պահանջած օրէնքներին. կեանքին հաւասարակշուութիւն տուող մի չափ է դա, ըստ ժողովրդի մի տեսակ քաղաքակրթութիւն, իսկ ըստ Պարոնեանի քաղաքավարութիւն, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ օտար, ֆրանսական կուլտուրայի սխալ պատուաստումը կամ տեղափոխութիւնը հայ հողի վրայ. Պիտի սեղմես ոտներդ, անսանելի տամնջանքի ենթարկուես, որովհետև քաղաքավարական մոդան նեղ ձեի կօշիկներ է սիրում. պիտի խմես հարբելու չսիփ, Ի՞նչ անենք, որ կեանքում ոչ մի կաթիլ ոգելից ըմպելի չես գործածել, պիտի ենթարկուես հարբածի խայտառակ միջադէպերին, որովհետև քաղաքավարութիւնը պահանջում է, որ բարեկամիդ խօսքը գետին չնետես, նրան չվիրաւորես։ Ամբողջ գիշերը անկոչ հիւրի անվերջանալի պատմութիւն պիտի լսես, անտեղի հրամաններ ընդունես, քո սեփական տանը մէջ, նրա անհաճոյ ներկայութիւնը զգաս քո ընտանեկան ներքին անհամաձայնութիւնների և սրբնեղութիւնների ժամանակ. ապա թէ ոչ անքաղաքավարի կ'անուանուես, կոպիտ կը կոչուես, անհիւրընկալ մակա-

նունը կը ստանաս, տմարդ կը լինիս. հարուստ կին ունիս, նըրա և իր ծնողների կոպտութիւններին անմռունչ պիտի համբերես, ապա թէ ոչ անկիրթ կը համարուես: Վերջապէս երկար է մի առ մի թուել սովորական պարզ ըմբռնումների, տարրական հասկացողութիւնների ճնշման հնթարկուելու բազմաթիւ ձևերն և աղաւաղումները. մարդկանց և կանանց շորերն անգամ զերծ չեն այդ խեղաթիւրումներից ու այլանդակութիւնից. այն, ինչ որ հասկացողութիւնները և մտածողութեան ձևերը այլանդակութեան է հասցնում, այստեղ «ալաֆրանկա» անունն է առել իր վրայ—մի հրէշ, որ հազարաւոր ընտանիքների զրկել է նոյնիսկ առօրեայ մի համեստ ապրուստից.—տարուայ իւրաքանչիւր եղանակի, տօնի, հանդիսի, շարաթուայ, օրուայ, ժամուայ և նոյնիսկ բուլէի համապատասխան շոր պիտի ունենաս, քաղաքավարական ալաֆրանկան այդպէս է պահանջում:

Քանի բարեկեցիկ ընտանիքներ իրանց օտարամոլ զաւակների պատճառով ենթարկուել են մնանկանալու ամօթալի վիճակին:

Միւս կողմից շորը չէ միայն, որ օտարի քաղաքակրթութեան սիմալ ազգեցութեանն է ենթարկուում. լեզուն, որ ազգի յարատեռութեան հաստատուն հիմնաքարերից ամենաուժեղն է, խախտուել է. մի լեզու է դա, որ ոչ մի լեզուի նմանութիւն չունի, լեզու, որ ամեն ինչ է բացի լեզուից, որի մէջ ֆրանսական, լտալական, յունական, թրքական, հայ-գաւառական բառերն ու արտաւանութիւնները իրար են խառնուած ափեղցիկ կերպով:

Ժողովրդի կիսազարգացած, թերուս մասի մէջ արհամարդի է ենթարկուած այն, ինչ որ ազգայնական գրօշմ է կրում իր վրայ. հայ անունը, հայ լեզուն, հայ կրօնը, հայ գրականութիւնը այս ամենը բարբարիկութեան, կոպտութեան, գուեհկութեան նշանաբաններ են, որից՝ որքան կարելի է, խոյս է տալիս մայրաքաղաքացի ինտելիցիանունին, ինչպէս թուրքը՝ խոզի մսից:

Այսպէս ենք պատկերացնում մենք այն մի բուռն հայերի կեանքը իր բազմակողմանի էութեամբ, երբ Պարոնեանի գըրուածներն ենք թերթում. թէև Պարոնեանը խոշորացոյցով մեծացրած է դնում մեր առջև, բայց սոսկ իրականութիւնը իր բնական դիրքով տնկում է մեր աչքի առջև ցոյց տալու, որ մայրաքաղաքի յարգելի բնակչութիւնը փոխանակ իր սեփական օրինակով առաջնորդելու գաւառացուն, ընդհակառակն չար օսրինակ է զառնում նրանց համար. ուստի Պարոնեանի նման շատեր պէտք էին, մարակելու, ձաղկելու, անպատռելու եր-

գիծական խայթոցներով, և ուղիղ ճանապարհի վրայ բերելու, ինքնիրան կորցրած այդ ժողովրդին:

Պարոնեանը ահա թէ ինչպէս է բնորոշում իր ընտրած նիւթը «Ազգային Զոջերի» յառաջարանում. «Բանդել մարդկացին արատների փաթոթը՝ դուրս չգալով ծաղրի սահմանից»: «Օ՛, ինչպիսի՞ հաճոյք, աղաղակում է նա մի այլ տեղ—նկատել պարզամիտ մարդկանց պակասութիւնները, նկատել այն ամենը, ինչ որ ծիծաղելի է, անկազմ է, այն բոլորը, ինչ որ խանգարում է գեղեցկութեան և բարոյականութեան ներդաշնակութիւնը»: (Տես «Արմ. Բալլ.»:

Այս է այն հիմնական քարը, որի վրայ բարձրացնում է նա իր գրական շենքը, մի շենք, որի էութիւնը երևան է հանում Պարոնեանի հանճարը:

VI

Համառօտակի մէջ բերելով այն կեանքը, որի պակասաւոր կողմերին շատ ծանօթ է Պարոնեան, պիտի նկատել որ՝ մինչ Պարոնեանի օտարազգի ուսուցիչները իրանց զաւեշտական գրուածներում մեծ սկզբունքներ և փիլիսոփայութիւն են մտցնում, և ոչ միայն մասնաւոր ազգային երգիծարաններ են, այլ իրանց երկերի չնորդիւ՝ ընդհանուր, համամարդկային հեղինակութիւններ են, և երբեմն էլ այդ սահմանից աշխատում են դուրս գալ, Պարոնեանը ընդհակառակն չի կարողացել նոյն իսկ Կ. Պոլսոյ հասարակական շրջանից դուրս գալ և ընդհանուր աղգային բնաւորութիւն տալ իր գրուածներին, ուր մնաց համամարդկային հեղինակ համարել նրան և նշանաւոր սկզբունքներ որոնել նրա գրուածներում, փիլիսոփայական դատողութիւններ գտնել զրանց մէջ, յատկութիւններ, որոնք նրա աւելի բարձր հանճարի մասին վկաններ լինէին: Թէև նրա ծանօթները վկայում են, թէ նա մի ծանրագլուխ, խորհող, լուրջ մարդ է եղել, «բայց այդ լրջութիւնը գրեթէ միշտ թեթև ծաղր մը ունեցած է իր մէջ», ինչպէս ասում է նրա մասին պ. Զօպանեանը. և թէև ողջամիտ, տրամաբան հայեացք ունի դէպի կենսական երեսյթները, և «Ծիծաղի» մէջ երբեմն աշխատում է խորհողի տրամադրութեամբ գրել, բայց այդ տրամադրութիւնը իր գրուածքի բուն ոգուն չի ազդել:

Պարոնեանի գրուածներում չկայ նոյնպէս բանաստեղծութիւն. երևակայութիւնը պակասում է, քնարերգական զգացմունքը չի երևում նոյնպէս:

Պարոնեանը իրական (ոչալիստ) դպրոցի աշակերտ է,

իսկական կեանքի պատկերացնող. նրա բոլոր գրուածները հիմնուած են նկարագրած առարկայի լաւ ճանաչողութեան վրայ, առաջնորդող թելը նրա գրուածներում կեանքն է և ոչ զառանցանքները. նրա հանճարի այդ յատկութիւնը շատ թանկագին է, զնահատելու և որոշելու համար այն տեղը, որին արժանի պիտի համարէ նրան հայ գրականութեան ապագայ պատմիչը. այս տեսակէտից Պարոնեանին արժանօրէն յարգելու համար, արժէ միայն ծանօթանալ կ. Պոլում տիրող այն ժամանակուայ գեղարուեստի ճուռմ—ցնդարանական ուղղութեանը, որը գրադուած էր բարձր դասակարգին կամ բարձր գաղափարներին վերաբերեալ նիւթերով և կամ սիրոյ վերլուծութեամբ և այլ բազմաթիւ հնացած, մաշուած, չարչկուած նիւթերով, որոնց համար մի նշանաբան կար. «արուեստը արուեստի համար», կամ աւելի ճիշտն ասած, «արուեստը արուեստագէտի համար». իսկ Պարոնեանը միացած է իր նկարագրած իրականութեան հետ: Նա սենեակի մարդ չէ, բանաստեղծական երևակայութիւնն և քնարերգական զգացմունքը չեն, որ նրա հանճարին թե են տալիս. նա սրատես արծիւի նման դիտում է այն, ինչ որ իրանից ցած է, մի թափանցիկ հայեացքով ըմբռնում է, համեմատութեան է զնում կեանքի իսկական ամբողջութիւնը նրա արուեստական և շինծու մանրամասնութեանց հետ, բայց և միաժամանակ արծուի սրընթաց թոփչքը նրան չի հեռացնում իրականութեան սահմանից և եթերային անմերձենաւի անեղբութեան մէջ սաւատնել չի տալիս նրան: Պարոնեանը սուկ իրականութիւնից բարձր է կանգնած այն չափով, որ նըրան յարմարութիւններ է տալիս տեսնելու այն, ինչ որ հարարակ, գոենիկ մարդու աչքին անտեսանելի է. այս է ահա պատճառը, որ Պարոնեանի գրիչը թոփչքներ չի անում, աւելի ցնդարձակ և լայնատարած հորիզոն չունի և ըստ այնմ էլ փելիսոփայական դիտողութիւնների շարժառիթները և վեհ սկըզբունքների դրդիչները պակասում են նրան:

Իրականութեան հետ ունեցած այդպիսի սերտ մերձաւորութիւնը աղջում է այս պատճառով նրա գրուածքի ոգու և նկարագրական ձևի վրայ:

Կեանքը կամ միջավայրը կենդրուածիկ ոյժի նման աշխատում է դէպի իրան քաշել այն բոլոր տարրերին, որոնք նրա շուրջն են խմբուած. եթէ լաւ որակութիւններով է օժըտուած այդ ոյժը, ըստ այնմ էլ իրան ենթարկուած անհատը կ'անդրադարձնէ նոյնը, իսկ թէ հակառակը, դրա համաձայն էլ անդրադարձում կ'առաջանայ, բայց հանճարը այն կենդրուախոյս ոյժն ունի, որ մի կողմից աղջուելով իրան հակառի ոյ-

ժից, ինքն էլ ընդհակառակն աշխատում է այդ կեղրոնից խոյս տալ և նոյնիսկ այդ կեղրոնը դէպի ինքը քաշել. ուստի ինչքան որ հանճարը ուժեղ լինի, այնքան էլ նրա արած ազդեցութիւնը զգալի կը լինի: Պարոնեանի ապրած միջավայրը այնպիսին բից էր, որ սպանում էր ոչ միայն հասարակ և գուեհիկ մարդու բարոյականութիւնը, ագատ մտածողութիւնը և վեհ զգայութիւնը, այլ նոյնիսկ աչքի ընկնող հանճարներին բթացնում և այլասեռում էր: Պարոնեանն էլ՝ իբրև մարդ՝ հարկաւ նոյն աղղեցութեանը պիտի ենթարկուէր, բայց միւս կողմից էլ՝ իբրև հանճար՝ պիտի ծաղրէր նոյն կեանքի այլանդակ և անձունի կերպարանափոխութիւնը. մի. կողմից սրճարանումն ըստած ամբոխի կողքին պիտի խմէր գինովալու չափ, իսկ յաջորդ երեկոյեան սրճարանի տղեղ տեսարաններից մէկը վասկոյներով զարդարած՝ պիտի շպոտէր հասարակութեան երեսին. իբրև զաւակ համայնական մեծ, ընտանիքի՝ պիտի տեսնէր նրա ներքին պակասութիւնները, իր պակասութիւնները, իսկ միւս կողմից՝ իբրև սրտացաւ զաւակ նոյն հասարակութեան՝ մի օր, ի լուր աշխարհի պիտի պատմէր նրա թերութիւնները. մի խօսքով իբրև ժողովրդի իսկական որպի՛ նա իրան տալիս է քննադատութեան, ծաղրի է ենթարկում այն բոլորը, որ ուրիշների համար աննկատելի էր, և ինչ որ ուրիշները օրինական, և իբրի զասաւորութեան մէջ ընական էին համարում:

Պարոնեանը՝ գրուածքի ձեր համար չի նեղւում. նրա համար գրական հաստատուն և յաւիտենական ձևեր չկան. նակարիք չէ զգում իրականութիւնից օգտուելով մի քանի հատորների մէջ հասարակութեան առաջ դնելու խոշոր, աչքի ընկնող տիպեր, որոնք համամարդկային գոյն ունենան իրանց վըրայ, ընթերցողի խորհրդածութեան ներկայացնելու բարձր և վեհ սկզբունքներ. մի խօսքով Պարոնեանը չի արտադրել գեղարուեստական ամբողջական երկեր. այս մասին ահա թէ թէ նէ ասում ինք Պարոնեանը. «Իւրաքանչիւր բովանդակութիւնը առաջ է բերում որոշ ձեւ. կայ բովանդակութիւն, որ ստիպում է լաց լինել, կայ բովանդակութիւն, որ ստիպում է ցաւել, լինում է և այնպիսին՝ որ ստիպում է համոզում առաջ բերել, մի միտք ծագեցնել ընթերցողի մէջ: Ուստի բովանդակութիւնը առաջ է բերում որոշ համապատասխան եղանակ, իսկ եղանակն էլ ձեւ. հետեարար իւրաքանչիւր գրական նիւթ ստեղծում է իրան յարմար ձեւ և ոչ թէ բովանդակութիւնը պիտի սեղմուի առաջուց որոշուած յայտնի շրջանակի մէջ»: Այդ պատճառով «Մեծապատիւ մուրացկանների» մէջ պատկերների

միօրինակութիւնը, ըստ նրա բացատրութեան, նիւթի կամ բովանդակութեան էութիւնից է բղխում: Այսպէս են Պարոնեանի հիմնական հայեացըները ստեղծագործութեան ձևի մասին: Նրա նշանաբանն է, — տալ իսկական կեանքի նկարագրութիւնը, բայց ընդ սմին ունենալ գրական ձևերի ազատութիւնը:

Պարոնեանը չի տղւել գեղարուեստական էական յատկութիւններով օժտուած մի ամբողջական երկ, մի գրական վաստակ. այլ նա նկարչի նման վրձինը ձեռին մի թռուցիկ հայեացք է քցում կեանքի մերթ այս տեսարանի, մերթ այն պատկերի վրայ, և վերջիվերջոյ տալիս է այլազան, բազմատեսակ պատկերացումների մի հարուստ ժողովածու, որից ընթերցողը միայն կարող է մի ամբողջական տպաւորութիւն դուրս բերել այդ կեանքի ամբողջութեան մասին: Իսկ այժմ տեսնենք, թէ այդ գրական հատուածները ի՞նչ գեղարուեստականութիւն ունին իրանց մէջ, առանձին առանձին վերցրած:

Այդ կողմից աչքի են ըսկնում նրա «Աղային Զոշերը» և «Մեծապատիւ մուրացկանները», որոնց մէջ եղած տեսարանները և կենապրականները մի-մի փոքրիկ գեղարուեստական յաջողութեր են, օժտուած թէ ներքին իմաստով, պատկերների արտայայտութեամբ, և թէ ոճի սահուն և հանգիստ շարայարութեամբ. դրանց հետ համեմատած աւելի պակաս արժանաւորութիւն ունի նրա «Քաղաքավարութեան վնասները». իսկ «Բաղդասար Աղբար» և «Արևելեան ատամնաբոյժ» գրուածքները իրանց հիմնական իմաստով և գեղարուեստականութեան պակասութեամբ աւելի ցած աստիճանի վրայ են գտնւում:

Պարոնեանի այդ բոլոր երկերում չկան կրքերի, զգացմունքների, գաղափարների հակագրութիւն կամ մրցումն, չկան խոշոր եղեցութիւններ, ուր կարելի լինէր տեսնել, թէ ի՞նչպէս են շարժում գործող անձինք, ի՞նչպէս են ընորոշւում պատեհառիթ դէպքերում. չէ վերցրած նոյնիսկ յաջող վայրկեան. այստեղ միայն սովորական, ընթացիկ կեանքի նկարագրութիւնըն ենք տեսնում, արուած մեծ դիտութեամբ, խոր դիտութեամբ, հատ ու կտոր արտայայտութեամբ:

Պարոնեանը իբրև տաճկահայ գրող՝ իր գրուածքներում գործ է ածում արևմտահայ բարբառը, որի սեղմ, արտայայտիչ և սահուն ընաւորութիւնը աւելի է յարմարուում երգիծարանական ոճին, քան արմելահայ բարբառը. ժողովրդական պարզ և գործածական բառերն են, որոնցով պատկերները շարայարուած են. լեզուական արտայայտութեան մէջ հեղինակը երբեմն ռամկաբանութեանց մէջ է ընկնում, և երբեմն նոյնիսկ կոպտութեան է հասցնում. կոպտութիւններ, որոնք ցինիզմ կարող են՝ հա-

մարուել. «Բաղաքավարութեան վնասների» մէջ եղած վերջին հատուածը ցոյց է տալիս, որ գեղարուեստագէտը բարբերի այլանդակութիւնը վայրենի և ցինիկ խօսքերով արտայայտելիս, ընթերցողի մէջ զզուանք միայն կարող է առաջացնել դէպի իր գրուածքը. ապականութիւնը կոպիտ խօսքերով արտայայտելը վայել չէ արուեստին, որը բարբերի և հասկացողութիւնների լրիւ և ամբողջական պատկերացմամբ աւելի գեղարուեստականութիւն է պարունակում իր մէջ:

Այժմ տեսնենք թէ հեղինակի ծիծաղը կամ երգիծանքը ի՞նչ ձև ունի: Բարբերի և ընաւորութիւնների այլասեռումը մտրակելու այդ այն յատուկ եղանակն է, որը գործադրուել է Երգիծաբանութեան սկզբից, սկսած Արխտոփանի, Լիւցիանի, Բուալօի, Մոլիէրի և այլոց գրուածներում և սրանցից՝ իրեւ ճարպիկ աշակերտ՝ օգտուել է Պարոնեանը: Այսինքն, ընութեամբ դիտող հանճարները նկատելով, որ մարդիկ կեանքում սովորաբար չեն կարող իրականն ու անկայունը տարբերել միւմեանցից, մասնկութիւնից ստացած կրթութեան ազգեցութեամբ միշտ համակերպում են իրանց շրջապատին: Այնպէս որ բարբերի անկման շրջանում նոյնիսկ նրանք կարծես քարացած և անվրդով դիտում են ապականուած միջավայրը առանց մազաշափ անգամ դրանում մի անսովոր, խորթ բան նշմարելու, Ռուսի տաղանդաւոր և սրտացաւ անհատ-հանճարները, որպէսզի նկատելի դարձնեն այդ ամբոխի աչքին, և զգալի դարձնեն այդ հասարակ մարդկանց իրանց թերութիւնները, այդ ապականուած կեանքը աւելի մեծացրած դիրքով, խոշորացրած ձեռվ, ծայրայի շրջանակների մէջ գրած ներկայացնում են հասարակութեան. և կամ ընդհակառակն իրողութիւններին աւելի սեղմ, գծուծ կերպարանք են տալիս, որով ծիծաղելին աւելի շուտ է նկատելի դառնում: Օտար հեղինակների երգիծական այս միջոցը Պարոնեանը ինքնուրոյնաբար ընդօրինակելով գործ է գնում նոյնպէս իր երկերում. այդ երկու ձեերից առաջնն է միայն, որը Պարոնեանը գործ է ածել: Ծաղբելու մի ուրիշ եղանակ էլ նոյնպէս գործադրում է նա. դա այլաբանական երգիծանքն է, այսինքն կենդանիներին մարդկային ընաւորութեամբ պատկերացնել: Պարոնեանը այդ միջոցին դիմել է այն պատճառով, որ քաղաքավարութիւնը պահանջում էր մէկի գործած յանցանքը և կամ միւսի թերութիւնները բացարձակապէս իրան երեսին չտալ, այլաբանօրէն միայն զգացնել տալ մարդկութեան իր պակասութիւններն:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ նմանութիւն կայ Պարոնեանի և իր օտար ուսուցիչների արտադրած աշխատութիւնների մէջ:

Պարոնեանի վրայ առաւելապէս խիստ ազգեցութիւն են թողել օտար երկու մեծ հեղինակներ՝ Արիստոֆանը և Մոլիէրը. այդ երկումն էլ աղղիկ են նրա վրայ իրանց ծաղրի տեսակով. իսկ նրանց գրութեան ձեզ գրեթէ ոչ մի ազգեցութիւն չի թողել նրա վրայ. որովհետեւ, այն ինչ վկրոյշեալ երգիծաբանները կատակերգութեան (ուրեմն ոչ երգիծաբանութեան) միջոցով են իրանց գրուածքի նիւթ գարձնում ժամանակակից բարքերը, տիպարները և խոշոր եղելութիւնները, տալիս են միաժամանակ գեղարուեստական ամբողջութեամբ օժտուած գրուածներ, որոնց մէջ իդէաների, անհատական տիպերի, հոգեբանական գերլուծութիւնների, ժամանակակից հասկացողութիւնների, ինտրիգների և նրանց վերլուծումների շղթան է որ աչքի է ընկնում, Պարոնեան իր գրուածներում ընդհակառակն երգիծաբանական ձեռվ փոքրիկ պատկերների՝ հասարակական զատ զատ բարքերի նկարագրութեամբ է որ գրադեցնում է ընթերցողին. ամբողջական տիպերի հողեկան վերլուծութիւնները իդէաների արտայայտութիւնը պակասում են Պարոնեանի մէջ: Նիւթը նոյնպէս երեքի մէջ նոյնութիւն է կազմում, որից սակայն նրանք տարբեր ձեռվ են օգտուած. ծաղրելու և թերի կողմեր գտնելու, դիտելու նոյն սուր կարողութիւնը աչքի է ընկնում երեքի մէջ էլ. ի հարկէ Պարոնեանի մէջ համեմատաբար պակաս չափով:

Արիստոփանի և Պարոնեանի գրուածները առանձնապէս հետեւեալ նմանութիւնն ունին. հարուստ խօսակցութիւններ, որոց ծրագրի կատարեալ բացակայութիւն, որը նրանց առիթ է տալիս մի որևէ չ չնչին առթից գրդուած շեղումներ անել, սուր և յաջող նկատումների մէջ ընկնել: Ինչպէս Արիստոփանի նոյնպէս և Պարոնեանի մէջ գործողութիւն քիչ կայ. իսկ խօսակցութիւններն ընդհակառակն խիստ սուր են և կենդանի: Գործող անձինք, երկուսի գրուածներումն էլ, փորձառու և տարիքաւոր մարդիկ են. այլաբանութիւնը մեծ տեղ է բռնում Պարոնեանի գրուածներում. նոյնը տեսնում ենք և Արիստոփանի երկերում:

Իսկ Մոլիէրի հետ այն նմանութիւնն ունի, որ երկումն էլ ունենալով բազմակողմանի նիւթ, մարդկութիւնը առանձին-առանձին դասակարգերի բաժանած առարկայ են դարձնում իրանց դիտողութեանը, որը երկուսի մէջ էլ գրեթէ միատեսակ պայմաններում է զարգացել և սրուել, ապացոյց գրան այն է, որ երկուսի կեանքն էլ նոյնօրինակ սովորութիւններ է պարոնակում իր մէջ. ինչպէս որ Պարոնեանը սրճարանի մի անկիւնում նստած, օղիի բաժակը առաջին, սառն

մտախոհութեամբ յաճախորդների առօրեայ կեանքն ու կենցաղավարութիւնն էր գննում և քննադատութեան ենթարկում կտրուկ գատողութեամբ, նոյնը տեսնում ենք Մոլիէրի կենսագրութեան մէջ. (տես, Սօբր. սօնի. Մոլիէր. ստր. ՎI) «Պէզէնում՝ գաւառական մի փոքրիկ քաղաքում, մինչև հիմա էլ ցոյց են տալիս այն թիկնաթոռը, որի վրայ նստում էր Մոլիէր յաճախ պարիկմախէր ժէլի մօտ շաբաթ օրերը դիտելով այցելուների բազմագոյն շարքերը. ասում են որ Մոլիէրը իր հետ միշտ թուղթ էր բերում, որի մէջ արձանագրում էր ամենից աչքի ընկնող փաստերը, տեսարանները և խօսակցութիւնները. նկարելով նոյնական աչքի ընկնող տիպերի պատկերները»: Պարոնեանի երգիծանքը շատ նման է Մոլիէրինի. նոյնիսկ կարելի է ասել, որ Պարոնեանի մէջ ծաղրելու առիթներ գտնելու ընդունակութիւնը մի տեսակ մոլիէրիզմ է պարունակում իր մէջ. այս կողմից կարող ենք եզրակացնել, որ Պարոնեանը հետևողական գեղարուեստագէտ է. բայց այդ հետևողականութիւնը ամեն տեղ եղել է, ամեն ազգի մէջ կը կնուել, ուր մնաց մեր մէջ և մանաւանդ Պարոնեանի ժամանակ, երբ զրական այդ ճիւղի համար մի առաջնորդ, մի սահմիրայ էր հարկաւոր, որ այնուհետև ճանաւպարհ բանար ազգային երգիծաբանութիւնն համար. միւս կողմից Պարոնեանի հետևողականութիւնը կոյր և կապկային չէ, այլ իր մէջ պարունակում է ազատ մտածողականութիւն և էլ աւելի կատարեալ ազգային երգիծաբանական երկեր արտադրելու նախանձախնդրութիւն. չքննադատենք նրան թէ կատարեալ պիտի լինէր և շատ բան պիտի տար, ինչպէս մի շարք քննադատներ պահանջում են մեզանում: Պարոնեանը արել է այն, ինչ որ թոյլ է տուել իր շրջապատը և իր հանճարը. չմուանանք ֆրանսական ասածը. «դժուար է արուեստը, իսկ քննադատութիւնը՝ հեշտ»:

Վ. Բ.

ՀԱՅՈՒՅԻՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ*)

I

Մի հայ աղջկայ խօսքը

«Մուրճի» այս տարուայ յունուարի համարում տպուած
«Ամուլ դասակարգ» վերնագրով յօդուածը ինձ վրայ վերին աս-
տիճանին ծանր տպաւորութիւն թողեց:

Գրչի մի հարուածով բոլոր կրթուած հայ կանայքը յայ-
տարարում են «մի ամուլ դասակարգ», «մի ոչնչութիւն»,
«մտաւորապէս ամուլ» և «հասարակական բնագդներից զուրկ»:
«Բարձրագոյն կրթութիւնը նրանց համար մի զարդ է, որով
նրանք նոյնքան հպարտ են, որքան իրանց ժամացոյցի ոսկէ
շղթայով, կամ ադամանդաղարդ մատանիներով» Դա հարկաւոր
է միայն «իրանց սին պչրանքի», «իրանց կոկետութեան համար»:

Մէկը միւսից աւելի վիրաւորական խօսքեր թափւում են
հայ կնոջ գլխին հէնց այն ժամանակ, երբ նրա մէջ արթնացել
է հետաքրքրութիւնը դէպի հասարակական կեանքը և պահանջ
է զգում գործելու:

Յօդուածաղիրը դիպչում է բոլոր կրթուած հայ կանանց,
բայց մասնաւորապէս Եւրոպա գնացող օրիորդներին, որոնք
«խմբերով գնացին, վերադարձան և ամուսնացան»: Այդ վեր-
ջին հանգամանքը սաստիկ հիասթափմունք է պատճառում յօ-
դուածագրին: Բայց ինչո՞ւ: Մի կրթուած մայր, որ իր
զաւակն հէնց սկզբից ճիշտ ուղղութիւն է տալիս և լաւ քա-
զաքացի պատրաստում, մի «ոչնչութիւն» է: Նրանից և նրա
պէսներից է կախուած ժողովրդի առաջադիմութիւնը, չչ որ
մայրեն են ստեղծումը մարդիկը ճշմարիտ:

*) «Մուրճը» ուրախութեամբ բանում է իր էջերը և հնարաւորու-
թիւն տալիս մեր յարգելի հայունիներին յայտնել իրանց կարծիքները
յարուցուած հարցի մասին:

Բայց ընտանիքը մենակ ասպարէզը չէ, որտեղ հայ կինը գործում է: Նա հրապարակ է դուրս գալիս ամեն տեղ, բաղխում է ամեն դուռ, որ մատչելի է նրան: Մենք ունենք տաղանդաւոր գերասանուհիներ, երգչուհիներ, երաժշտուհիներ, նկարչուհիներ, որոնք սկսել են գրաւել ժողովրդի հետաքրքրութիւնը: Պարիզում նկարչուհի տ. Բաբայեանը ամեն տարի իր պատկերներն է ցուցադրում Salon-ում, և մեծ գովեստի արժանանում արտասահմանեան թիրթերի կողմից: Այստեղ օր. Պապայեանն է հիացնում թատրոնի հանդիսականներին, մի ուրիշ տեղ օր. Արդութեանի վործերն են արժանանում նշանաւոր եւրոպացիների գործերի շարքում, Պարիզի նկարչահանդէսում ցուցադրուելու հայն: Ունենք նոյնպէս ամբողջ մի շարք համեստ գործիչներ, վարժուհիներ և կին-բժիշկներ: Միթէ որանք հաւարական գործիչներ չեն:

Յիրաւի, մի ասպարէզ, որտեղ հայ կինը գեռ քիչ է երեւացել, դա գրականութիւնն է: Բացի տ. Խատիսեանից, մենք ուստահայերս համարեա թէ կին գրող չունենք: Եւ, ինչպէս իրաւացի կերպով նկատում է յօդուածագիրը, պատճառը այն է, որ հայ կինը գեռ լաւ չկիտէ իր մայրենի լեզուն, իր անցեալը և այն ժողովուրդը, որից նա բղիկել է: Միայն, իսկապէս, միթէ հայ կինն է մեղաւոր, որ հայերէն չկիտէ այնքան, որ կարողանայ գեղեցիկ գրել: Զգիտէ, որովհետև հայ երիտասարդի պէս հնարաւորութիւն չունի մի հայկական դպրոց մտնելու, և իր լեզուն լիուլի ուսումնասիրելու: Կ. Պոլիս, որտեղ հայ կինը ազգային գպրոց է անցնում, կան կին գրողներ: Պէտք է խոստովանենք, որ մեզանում ոչ միայն հայ կինը, այլ համարեա թէ ամբողջ հայ ինտելիգենցիան օտարացած է, կտրուած՝ բուն հայ ժողովրդից:

Անարդար կը լինէր, եթէ ես այստեղ չշեշտէի ինքնաճանաչութեան զարգացման մէջ, այն նպաստաւոր գերի մասին, որ խաղում է արտասահմանը, ուր հայ աղջիկը գնում է բարձրագոյն կրթութիւն ստանալու: Հայրենիքից ժամանակաւորապէս հեռանալը շատ օգտակար է այն պատճառով, որ ուրիշ ազգերի հետ շփուելիս և նրանց եռուն կեանքը տեսնելիս, մարդու մէջ բուռն ցանկութիւն է արթնանում իր աղջի պատմական գերը նոյնպէս որոշելու: Նա այնտեղ սթափւում է, ուժեղ կերպով զգում է իր հայ լինելը, և պահանջ իր աղջի համար գործելու: Ուրեմն, մի շատ ուժեղ գործօն է աւելացել— ինքնաճանաչութիւն:

Մի բան նոյնպէս աչքի է ընկնում յօդուածի մէջ. ինչքան գոյները խտանում են կանանց ոչնչութեան մասին խօսելիս,

այնքան էլ ամեն ինչ վարդագոյն է դառնում նրանց արտասահման գնալու հեղտութիւնը նկարագրելու ժամանակ:

Մինչդեռ աղջիկը շատ դժուարութիւնների է հանդիպում: Նահապետական կեանքը դեռ շատ խոր արմատներ ունի մեր մէջ. աղջիկը երկար մաքառում պիտի մղէ իր ծնողների հետ իր ցանկութիւնը իրաբործելու—տանից հետանալու, Եւրոպա գնալու համար: Բարերարներից էլ նա աւելի դժուար է նըպաստ ստանում, քան տղամարդը, թէկուզ և ինքն աւելի ընդունակ լինի:

Այդ նախապաշտամունքը՝ դէպի կինը՝ թափանցում է մեր ամբողջ հասարակական կեանքը: Մեր հայ. հասարակութիւնը կարծես երկու տարբեր բանակի է բաժանուած, որոնք իրար չեն մօտենում, չեն հասկանում ու միասին գործում: Բայց եթէ տղամարդը չի մօտենում, չի ընկերանում կնոջը, գոնէ նրան դատելու դէպում պէտք է լինի արդար, և մի քիչ աւելի լայն նայի հարցին, քան դատել ու նայել է «Ամուլ դասակարգի» հեղինակը:

Օր. Մ. Հ.

II

Մի հայ կնոջ կարծիքը

Սոյն տարուայ «Մուրճի» № 1-ը գալիս է նորից ծանրանալու մի այրող խնդրի վրայ: Խօսքս «Ամուլ դասակարգ» յօդուածի մասին է: Մի ժամանակ Գր. Արծրունին կասկածում էր, թէ կանանց հարցին նուիրած իր յօդուածները կարգնում է արդեօք հայուհին, և ուրախ էր, անչափ ուրախ, երբ «Հայկական Աշխարհում» գրական պատասխան ստացաւ: Այսօր կարդացող հայուհիները բազմացել են. դա ճշմարտութիւն է: Սակայն «Մուրճի» պ. յօդուածագիրը աւելի քան յոռետես է մեր ներկայի նկատմամբ: Եւ նրա յօդուածը կարելի է բնորոշել բանաստեղծի այս երկտողով.

Это-крикъ наболѣвшай души,

Это-вопль отъ мучительной боли!

Ո՞րքան իրաւացի է արդեօք պ. յօդուածագիրը: Անկարելի է ուրանալ, որ մեր կրթուած, նոյնիսկ Եւրոպա եղած կանայք մի ամուլ դասակարգ են ներկայացնում: Պ. յօդուածագիրը ճիշտ է նկատել այն երեսյթը, որ այդ կանայք, եթէ ներկայացնէին որևէ ոյժ, անշուշտ մի կարգին զրող կը տային հայ հասարակութեան: Իսկ այդպիսին չկայ: Այդ բանն է հաստատում հէնց նորերս երատարակուած «Ոստիկ» ժողովաւԱպրիլ, 1905.

ծուն: Անցեալ դարու եօթանասնական թուականներին հայ հրապարակախօսը ուրախ էր, որ հայ կինը հետաքրքրւում է մամուլով: Այդ օրից անցել է 35 տարի և մենք իրաւունք ունենք այժմ աւելին պահանջելու: Մի բան միայն ամեկարելի է մոռանալ. մեզ շրջապատղ պայմանները այնպէս են, որ առանց քաղաքացիական կորովի, առանց «խենթ քաջազըրտութեան», ոոյնիսկ հայ տղամարդը իրանից մի բարոյական մեծութիւն չէ ներկայացնում: Կինը որ գարերից ի վեր «թոյլ», «քնքոյշ սեռ» և այլ ածականներով է զարդարւում, կինը՝ մեր ասիական իրականութեան մէջ (և սա չպէտք է մոռանալ) իր ինտելեկտուալ կարողութեամբ որբան էլ բարձր լինէր, այնուամենայնիւ իր միջավայրի հարազատ զաւակը պիտի լինէր: Մեր միջավայրը մի սառցնող ովկիանոս է, ուր կայծերից հըրդէներ անկարող են դոյանալ: Կ'ասենք աւելին. այդ միջավայրը հրդէներ կը մարէ: Այսքանից յետոյ, այնուամենայնիւ, «Մուրճի» պ. յօդուածագիրը իրաւունք ունի իր կշտամբանըների մէջ: Սակայն մենք պարոնի չափ պահանջկոտ չենք. միայն հարցնում ենք, արդեօք բարձր կրթութիւն սաշած հայունին, որպէս մայր, մայր՝ որոշ աղջի, որը իր ուրոցն լեզուն ունի, որքան ծաւալում է այդ լեզուն. պաշտպան կանգնում է նրան: Մենք տեսանք, որ նա հարստացնել այդ լեզուն և նրա գրականութիւնը, անկարող է: Բայց իր ընտանիքում նրան պահել գիտէ: Այստեղ անհրաժեշտ է մի նկատողութիւն: Այդ ասելով մենք հասկանում ենք զլաւորապէս մեր բուրժուացնութեան իրամունքների անդամունիներին և օրիորդներին: Վերջին գասակարգը մենք մէջ ենք բերում այն պատճառով, որ թէկ մանք բուրժուացնութեան ամեն տեղներկայանում է իրեն ազգայնութեան պաշտպան, բայց նա մի այլ յատկութիւն ունի. ընզօրինակել իրանից բարձր կանգնած իսկական բուրժուացին: Զէ՞ որ ամեն մանք բուրժուացնութեան իսկական բուրժուացնութեան պատճառով. բայց դա այդպէս է: Եւ ահա մեր բուրժուացիան իր օրինակով վարակում է որոշ կոնտինտենտ իր օտարամուլ յատկութիւններով: Այս գիտողութիւնը անելուց յետոյ, մենք էլի հարցնում ենք. հայունին՝ որպէս մայր, կանգնած է արդեօք իր աղջային ինքնաճանաչութեան բարձրութեան վրայ:

Ո՛չ

Շատ ու քիչ շրջանկատ ընթերցողը, կարծում ենք, փառտեր պահանջելու կարեր չե զգայ: Եւ այսպէս լինելուց յետոյ՝ հայունի գրողը մի շոայլութիւն է: Թող լ'սին գոնէ հայ-մայ-

բերությունագիտական հայ լեզուն համարում է մի «քաղքենի»—մեշտական ստացուածք և նոյն իսկ վախենում է, որ նրա գուեհիկ հնչիւնը կը վիրաւորէ իր քնքոյց լսելիքը։ Ահա ինչի դէմ պէտք է կուռել։

Տիկ Մար, Տէր-Դրիզորեան

ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. Գորկիի «Ճանակ»։—Լ. Անդրեևի «Կրանի Ծմեխ»։

«Ճնակ» հրատարակչական լոկերութեան «Ժողովածուի» III գրքի մէջ, ի միջի այլոց, զետեղուած են Մ. Գորկիի «Ամառանոցակեցներ» («Ճանակ») բեմական դրուածքը և լ. Անդրեևի «Կարմիր Ծիծաղ» («Կրանի Ծմեխ») պատմուածքը։

Գորկիի բացասական վիրաբերմունքը գէտի ոռւս ինտելիգենցիան կարմիր թելով անցնում էր մինչև այժմ նրա գըրշից զուրս եկած բոլոր երկերում, սակայն դեռ երբէք նաև այնպիսի արհամարհանքով, ծաղրով և հեղնութեամբ չի խօսել այդ «ինտելիգենցիայի» մասին, ինչպէս իր վերջին «Ամառանոցակեցներ» գրուածքում, որի մէջ մտրակում է, խիստ մեղաղբանքներ թափում այդ զասակաբոդի մարդկանց վրայ։ Այդ գրուածքը, ինչպէս և ինքը հեղինակն է անուանել, տեսարաններ են (Ընդեմ), ուր դուրս են գալիս ինտելիգենցիայի երկու սեսի զանազան ներկայացուցիչները և խօսում, վիճում ու գործում այն նպատակով, որ ընթերցողի առաջ երևան զան զրանց հոգու ամրող զատարկութիւնը և բարբերի նեխուածութիւնը... Երկու երեք «զրական» տիպերն էլ ժողովրդից զուրս եկած մարդիկ են, որոնց ըերնում Գորկին դնում է իր մեղադրական ճառերը։ Այդ դրական տիպերից մէկը վարվառ Միլայլովսան, օրինակ, ասում է.

«Ինտելիգենցիան—այդ մենք չենք! մենք մի ինչ որ ուրիշ բան ենք... Մենք՝ մեր երկրում ամառանոցակեցներ ենք... ինչ որ անցորդներ։ Մենք իրար ենք անցնում, որոնում ենք կեանքի մէջ յարմար տեղեր... Մենք ոչինչ չենք անում և զըզուելուն շատ ենք խօսում։ Եւ չափազանց շատ ստութիւն կայ մեր խօսակցութիւնների մէջ! Որպէսզի թագանենք միմեանցից մեր հոգեկան աղքատութիւնը, մենք դարդարուում ենք զեղե-

ցիկ Փրազներով, դպրական իմաստութեան էժան ցնցոտիներով... Խօսում ենք կեանքի ողբերգականութեան մասին, չճանաչելով կեանքը, սիրում ենք վագալ, գանգատուել, հեծել...

«Հերիք են գանգատները, ունեցիք քաջութիւն լոելու! Պէտք է լսել սեփական մանր մունք վշտերի մասին: Զէ որ մենք գիտենք լուել, երբ բաւական ենք մեր կեանքի օրերով: Խրաքանչիւրը մեղանից կուլ է տալիս իր բաղդի պատառը մեն-մենակ, իսկ մեր վիշտը, սրտի չնչին չանդրուածքը մենք դուրս ենք բերում փողոց, ցոյց ենք տալիս բոլորին ու բղաւում ենք, և լալիս ենք մեր ցաւի մասին ի լուր ամբո՞ղջ աշխարհի. մենք դուրս ենք նետում մեր տներից մեր կերածների մնացորդները և նրանցով թունաւորում ենք քաղաքի օղը... Ահա հէնց այդ կերպ էլ մենք դուրս ենք զցում մեր հոգիներից բոլորը՝ ինչ անպէտք է և ծանր՝ մեր մերձաւորների ոտերի տակ: Ես հաւատացած եմ, որ հարիւրաւոր և հազարաւոր ասողջ մարդիկ կորչուժ են, թունաւորուած և շշմած մեր գանգատներից և հառաչանքներից... Ո՞վ տուաւ մեզ չար իրաւոնք՝ թունաւորել մարդկանց մեր անձնական խոցերի ծանր տեսքով:»

Մի այլ դրական տիպ, դարձեալ կին, Մարիա Լիվոֆսա, առում է.

«Մենք բոլորս էլ, պարոններ, պէտք է այլ մարդիկ լինենք: Մենք՝ լուացարարների, խոհարարուհիների, ասողջ բանուոր մադկանց որդիներս, և պէտք է լինենք այլ, բոլորովին այլ տեսակի մարդիկ: Երբէք մեր երկրում չկային ժողովրդի մասսայի հետ արեան հարազատութեամբ կապուած, կրթուած մարդիկ... Այդ արենական հարազատութիւնը պէտք է որ վառէր մեզ ջերմ ցանկութեամբ—վերաշինել, լուսաւորել մեզ հարազատ մարդկանց կեանքը, որոնք իրանց գոյութեան բոլոր օրերում միայն գործում են, խեղուելով խաւարի և կեղտի մէջ... մենք չպէտք է որ խղճահարուելուց, ողորմելուց աշխատէինք կեանքի ընդարձակման համար... մենք պէտք է այդ անենք մեզ համար... որպէսզի չզգանք անիծուած մենակութիւնը... չտեսնենք վիշտը մեր՝ բարձունքներում կանգնածներիս, և մեր հարազատների՝ այնտեղ ներքեսում գտնուողների մէջ, որոնք մեզ վրայ վեր են նայում իրանց իրանց աշխատանքով ապրող թշնամիների վրայ: Նրանք մեզ իրանցից առաջ ուղարկեցին, որպէսզի մենք զըտնենք նրանց համար ճանապարհ դէպի լաւագոյն կեանքը... իսկ մենք հեռացանք նրանցից և կորանք, և մենք ինքներս ստեղծեցինք մեզ համար միայնակութիւն, լի անհանգիստ ունայնութեամբ և ներքին երկճեղուածութեամբ... Ահա մեր դրաման: Բայց մենք ինքներս ստեղծեցինք նրան, մենք արժանի ենք այն

Քոլորին, ինչ որ մեզ տանջում է: Այս, մենք իրաւունք չունինք
լրցնել կեանքը մեր հեծեծանքներով»:

Եւ ահա այդ դրական տիպերից մէկը, կեանքի բարիքների խորթ զաւակ Վլասը, ինչպիսի ծաղրական ոտանաւորով է նշաւակութեան սիւնին կապում «ինտելիգենտին»:

Маленькие нудные людишки
Ходятъ по землѣ моей отчизны,
Ходятъ и—уныло ищутъ мѣста,
Гдѣ бы можно спрятаться отъ жизни

Все хотятъ дешевенькаго счастья,
Сытости, удобства и тишины,
Ходятъ и все жалуются
Сѣренъкіе трусы и лгны.

Маленькия, краденые мысли...
Модныя, красивыя словечки...
Ползаютъ тихонько съ краю жизни
Тусклые, какъ тѣни, человѣчки. *)

Այդ մեղադրական ճառերին, զատափետումներին և մաս-
նաւանդ ոտանաւորին պատասխանում է մտրակուող ինտելի-
գենտներից մէկը, ինժեներ Սուսլովը, թափելով իր մաղձը հե-
տեւալ խօսքերով:

Սուսլով. Թոյլ տուէք այժմ ինձ, աղօտ մարդուկիս, պա-
տասխանել այդ... այդ... ներեցէք, չգիտեմ—ինչպէս անուանել
ստեղծագործութեան այդ տեսակը:

Թուք, Վլաս Միխայլովիչ... ես ձեզ չեմ պատասխանի...
ես կը գիմեմ ուղղակի ձեր ներշնչման աղբեւրին... ձեզ Մա-
րիա Լվովնաւ... Դուք, Մարիա Լվովնա, այսպէս կոչուած գաղա-
փարական մարդ էք... Դուք այստեղ խորքերում ինչոր խոր-
հրուաւոր բաներ էք անում... Դուցէ մեծ, պատմուկան գործեր,
այդ արդէն իմ բանը չէ!... Ակնյայտ է, դուք կարծում էք, որ

*) Փոքրիկ, նողկալի մարդուկներ շրջում են իմ հայրենիքի հողի վրայ, շրջում և վնասած տեղ են որոնում, ուր կարելի լինէր կեանքից թափնուել. բոլորն էլ ուզում են էժանագին բախտ, կշտութիւն, յարմարութիւններ և անդորրութիւն, շրջում են և բոլոր ժամանակ գանգատում, հառաջում այդ անգոյն վախկոտներն ու ստիլիզները: Փոքրիկ, գողացած մտքեր... Մոդային, գեղեցիկ բառեր... Սողում են կամացուկ կեանքի կողքով աղօտ, ինչպէս ստուերներ, այդ մարդուկները:

ձեր այդ գործունէութիւնը ձեզ իրաւունք է տալիս վերաբերուել մարդկանց վերևից ներքեւ։ Դուք ձգտում եք բոլորի վրայ աղղուել, բոլորին ուսուցանել... Դուք լարեցիք այս պատաճուն մերկայնող եղանակով... Բայց եթէ մենք ապրում ենք ոչ այնպէս, ինչպէս դուք եք ցանկանում, մենք դրա համար ունենք մեր պատճառները! մենք մեր երիտասարդութեան ժամանակ շատ յուղուցինք և սովից շատ տանջուցինք. բնականաբար, հասուն տարիքում մենք ուզում ենք՝ շատ և համեղ ուտել, խմել, ուզում ենք հանգստանալ... առհասարակ, վարձատրուել առատութեամբ ջահիլ օրերի անհանգիստ, սոված կեանքի փոխարէն... Ահա մեր հոգեբանութիւնը, որ դուք չեք հաւանում, Մարիա Լվովսա, բայց նա լիովին բնական է և այլ կերպ լինել չի կարող! Նախ և առաջ մարդը, պատուելի Մարիա Լրդովսա, և ապա միւս մնացած լիմարութիւնները... Ուստի թողէք մեզ հանգիստ!...»

Ինչպէս բերած կոսորներից կարող է տեսնել ընթերցողը, Գորկին ուսւական իրականութեան այլանդակ կողմերի զլիաւոր պատճառը գտնում է բարոյապէս փչացած, վախկոտ, դէպի հասարակական կեանքը անտարբեր ինտելիգենտի մէջ, և իր անզուսպ զայրոյթը թափում է այդ «մեղաւորների» վրայ, իր ոգեստրութեան մէջ մոռանալով որ, այնուամենայնիւ, մինչև այժմ Ռուսաստանում ոչ մի գասակարդ չի տուել երկրին այնքան գաղափարական, անձնազոհ անհատներ, կ'ասենք և մարտիրոսներ, ինչպէս հէնց այդ ինտելիգենցիան...

Մտրակողական—քարոզչական նպատակները, անշուշտ, արդարացնում են այդ միակողմանիութիւնը, որ պակասաւոր է դարձնում գրուածքը գեղարուեսական կողմից:

Շատ զօրեղ է գեղարուեստական կողմից լէօնիդ Անդրէ-ելի «Կարմիր ծիծաղ» պատմուածքը, որի ընթերցումը վերզգալ է տալիս ժամանակակից պատերազմների բոլոր արհաւիրքները և ցոյց է տալիս սարսափի կատարած աւերումները մարդկային զգայուն բանականութեան մէջ։

Պատմուածքը երկու մանից է. առաջինում իր տպաւորութիւններն է պատմում այս պատերազմում երկու ոտները կորցրած մի սպայ, որ մարդասպանական արուեստի հետ ոչ մէտ առնչութիւն ունեցող, խաղաղ-կուլտուրական կեանք և կոմֆորտ սիրող գրականասէր է եղել և չար բախտի բերմամբ միայն ստիպուել է մասնակցել մասսային սպաննութիւններին.— երկրորդ մասում խելագարութիւնից վախճանուած այդ դըժ-

բախտ սպայի եղբայրն է պատմում. նա թէև անձամբ չի մասնակցել պատերազմում, սակայն կարգացածի, լսածի և կոռուի դաշտից վերադարձած հիւանդներից ու գերիներից ստացած տպաւորութիւնների տակ, ինքն ևս սկսում է կամաց-կամաց խելագարուել:

Ընթերցողին գաղափար տալու համար է. Անդրէեվի դունագեղ և հզօր զրչի այդ նոր արտադրութեան մասին, մենք առաջ կը բերէնք այստեղ մի քանի կտորներ:

*

Հատուած վեցերորդ

... այդ մերոնք էին Շարժումների այն տարօրինակ խճուածութեան մէջ, որ վերջին ամսում հալածում էր երկու զօրաբանակները, մեր և թշնամու, ընկանելով բոլոր հրամանները և ծրագիրները, մենք հաւատացած էինք, որ մեր վրայ գալիս է թշնամին, այն է չորրորդ կորպուսը: Եւ արդէն ամեն բան պատրաստ էր յարձակման համար, երբ մէկը հեռազիտակով պարզ ջոկեց մեր նշանազգեստները, իսկ տասը բոպէից անց, ենթադրութիւնը դարձաւ հանդիսաւ և բարեբախտ վստահութիւն. այդ մերոնք էին: Եւ նրանք, ըստ երևոյթին, մեզ ճանաչեցին. նրանք մօտենում էին մեզ բոլորովին հանգիստ, և այդ անդորր շարժման մէջ զպացւում էր նրանց, ինչպէս և մեզ մօտ, նոյն բախտաւոր ժպիտը անտկնկալ հանդիպման:

Եւ երբ նրանք սկսեցին կրակել, մենք առժամանակ չկարողացանք հասկանալ՝ այդ ի՞նչ է նշանակում, և դեռ ժըպտում էինք, — մեր վրայ թափուող և միանգամից հարիւրաւոր մարդիկ գուրս հանող՝ շրապնելի և զնդակների կարկտի տակ: Մէկը ձայն տուեց սխալմունքի մասին, ես հաստատ յիշում եմ այդ — մենք բոլորս տեսանք, որ այն թշնամին է և նշանազգեստը նրանն է, և ոչ մերը և առանց յապազելու պատասխանեցինք կրակով: Այդ տարօրինակ կոռուի սկզբից հաւանական է տասն և հինգ բոպէ անց՝ կտրուեց տարուեց իմ երկու ոտու, և ես ուշքի եկայ արդէն լազարէթում, անդամահատութիւնից յետոյ միայն:

Ես հարցրի թէ ինչո՞վ վերջացաւ կոիւը, բայց ինձ տուին խուսափողական, հանդարտեցուցիչ պատասխան, որից ես հասկացայ որ մենք ջարդուել ենք. իսկ յետոյ ես՝ անոտս, ուրախութեամբ համակռնեցի, որ այժմ ինձ տուն կ'ուղարկեն, որ ես այնուամենայնիւ կենդանի եմ — կենդանի եմ երկար ժամանակով, ընդմիշտ: Եւ միայն մի շարաթից յետոյ ես իմացայ մի քանի

մանրամասնութիւններ, որոնք կրկին ինձ պցեցին երկմտութեան և նոր, գեռ ևս չփորձած երկիւղի մէջ:

Այո, ինչպէս երեսում է, այդ մերոնք էին,—և մեր ոռումբով, մեր թնդանօթից, արձակուած մեր զինուորից, տարաւոտերս: Եւ ոչ ոք չկարողացաւ բացատրել, թէ ինչպէս այդ պատահեց, ինչոր բան մթնացրեց տեսողութիւնը, և նոյն զօրքի երկու գնդերը, մի վերստի վրայ իրար դէմ կանգնած, ամբողջ ժամ փոխադարձ կոտորում էին իրար, միանգամայն հաւատացած թէ գործ ունին թշնամու հետ: Եւ յիշում էին այդ գէպքի մասին դժկամութեամբ, կիսատպութիւնը խօսքերով, և—այդ ամենից զարմանալին է—զգացւում էր, որ խօսուներից շատերը մինչև այժմ չեն գիտակցում սխալմունքը: Աւելի ճիշտը, նրանք ընդունում են սխալը, բայց կարծում են, որ նա տեղի ունեցաւ աւելի ուշ, իսկ սլզրում նրանք իսկապէս գործ ունին թշնամու հետ, որ ընդհանուր շփոթի ժամանակ ինչոր մի տեղ անհատացաւ և մեզ մատնեց մեր սեփական ոռումբերին: Ոմանք բացարձակ խօսում էին զրա մասին, տալով ճշգրիտ բացատրութիւններ, որ նրանց թիւում էին ճշմարտանման և պարզ: Ես ինքս չեմ կարող մինչև այժմ բոլորովին վստահաբար ասել, թէ ինչպէս սկսուեց այդ տարօրինակ թիւրիմացութիւնը, որովհետեւ հաւասարապէս պարզ տեսայ նախ մեր՝ կարմիր նշանազգեստը, իսկ յետոյ նրանցը՝ նարնջապոյնը: Եւ ինչոր շատ շուտ բոլորը մոռացան այդ գէպքի մասին, այնպէս մոռացան, որ խօսում էին նրա մասին, ինչպէս իսկական ճակատամարտի մասին, և այդ իմաստով գրուած և ուղարկուած էին շատ, բոլորովին անկեղծ թղթակցութիւններ, ես այդ կարդացի արդէն տանը: Դէպի մեղ, այդ կուում վիրաւորուածներիս, սկզբում վերաբերում էին մի քիչ տարօրինակ,—մեղ կարծես աւելի պակաս էին ափսոսում, քան միւս վիրաւորուածներին. բայց շուտով այդ էլ անցաւ: Եւ միայն նոր գէպքեր, նման նկարագրուածին, և այն, որ թշնամու զօրքում երկու վաշտեր իսկապէս համարեա գլխովին իրար կոտորել էին, զիշերը ձեռամարտի բռնուելով—տալիս է ինձ իրաւունք մտածելու, որ այնտեղ սխալմունք էր պատահել:

Մեր բժիշկը, նա, որ անդամահատութիւն կատարեց, չոր, ոսկրոտ մի ծերուկ, որից վչում էր եօդոֆորմի, թամբաքուի ծուխի և կարբուծան թթուի հոտ, որ միշտ մի ինչոր բանի ժպտում էր գեղնաւուն սպիտակ, ցանցառ բեղերի միջով, աչքերը կկոցելով՝ ասաց.

—Չեր բախտիցն է, որ գուք տուն էք գնում: Այստեղ ինչոր կարգի չեն բաները:

—ի՞նչ կայ որ:

—Հեսց էնպէս: Կարգի չեն: Մեր ժամանակ աւելի պարզ էր բանը:

Նա մասնակցել էր վերջին եւրոպական պատերազմում, որ համարեա քառորդ դար առաջ էր եղել, և յաճախ հաճոյքով յիշում էր այս: Իսկ այս մէկը չէր հասկանում և ինչպէս նկատեցի, վախինում էր:

—Այս, կարգին չէ,—հոգոցով ասաց նա և ունքերը կիւտեց, ծածկուելով թամրաքուի ծխի ամպի մէջ:—Ես ինքս կը հեռանայի այստեղից, եթէ կարելի լինէր:

Եւ թեքուելով ինձ վրայ, շնչաց գեղին, ծխամզած բեղերի միջով:

—Շուտով այնպիսի վայրկեան կը հասնի, երբ ոչ ոք այս տեղից գուրս չի գնալ: Այս: Ոչ ես, ոչ ոք,—և նրա մերձեցած պառաւ աչքերում ես տեսայ նոյն սառած, բութ ապշածութիւնը: Եւ ինչ որ ահօնի, անտանելի, հազարաւոր շէնքերի անկաման նման մի բան երևաց ու անհետացաւ իմ դլխում, և, ահից սարսափած, ես շնչացի.

—Կարմիր ծիծաղ:

Եւ նա առաջինն էր, որ հասկացաւ ինձ: Նա շասպ-շտապ դլխով արաւ և հաստատեց.

—Այս: Կարմիր ծիծաղ:

Բոլորովին ուստի նստելով կողքիս և չորս կողմը նայելով, նա շնչաց, արագ-արագ, ծերերին յատուկ ձեռվ, շարժելով սուր, սպիտակ մօրուքիկը:

—Դուք շուտով կը հեռանաք, և ձեզ ես կ'ասեմ: Դուք տեսահօն էր երրիցէ կոփւը գժամնում: Ո՞չ: Իսկ ես տեսել եմ: Եւ նրանք ծեծլում էին, ինչպէս առողջները, հասկանում էր, ինչպէս առողջները:—Նա մի բանի անզամ բազմախորհուրդ ձեռվ կը կնից այդ նախաղասութիւնը:

—Որ ի՞նչ—նոյնպէս շնչումով և վախվխելով հարցրի ես:

—Ոչինչ: Ինչպէս առողջները:

—Կարմիր ծիծաղ,—ասացի ես:

—Նրանց բաժանեցին ջրով:

Ես յիշեցի անձրել, որ այնքան վախեցրեց մեզ կոռուի ժամանակ, և բարկացայ:

—Դուք խելազարուել էր, բժիշկ!

—Ոչ աւելի, բան դուք: Յամենայն դէպս, ոչ աւելի:

Նա գրկեց ձեռներով սուր, պառաւային ծնկերը և բարակ ձայնով ծիծաղեց. և ուսի վրայից խեթ-խեթ աչքերը վրաս յառած, դեռ պահպանելով չոր շրթունքների վրայ այդ անսպասե-

լի և ծանր ծիծաղի արձագանքները, նա մի քանի անգամ խորամանկութեամբ աչքով նշան արաւ ինձ, իրրե թէ մենք նրա հետ միայն երկուսս գիտենք մի ինչ-որ շատ ծիծաղելի բան, որ ոչ ոք չգիտէ: Ձեռնածութիւններ ցոյց տուող մոկութեան պլրոփեսորի հանդիսաւորութեամբ նա վեր-վեր բարձրացրեց ձեռքը, սահուն իջեցրեց նրան և զգուշութեամբ, երկու մատներով կալաւ վերմակիս այն մասին, ուր պէտք է լինէին իմ ոտերը, եթէ նրանց չկտրած լինէին:

—Իսկ այս դուք հասկանո՞ւմ էք: —Խորհրդաւոր ձեռվ հարցրեց նա:

Յետոյ նոյն հանդիսաւոր և բաղմախորհուրդ կերպով ձեռքով ցոյց տուեց մի շարք մահճականներ, որոնց վրայ պառկած էին վիրաւորները, և կրկնեց.

—Իսկ այս դուք կարո՞ղ էք բացատրել:

—Վիրաւորներ, —ասացի ես: —Վիրաւորներ:

—Վիրաւորներ, —ինչպէս արձագանք, կրկնեց նա: —Վիրաւորներ: Առանց ոտերի, առանց ձեռների, պատուած փորերով, ջախջախուած կրծքերով, դուրս հանուած աչքերով: Այդ դուք հասկանո՞ւմ էք: Շատ ուրախ եմ: Ուրեմն, դուք կը հասկանաք և միշտ...

Եւ նրա տարիքի համար անսպասելի ձկունութեամբ, նա շուռ եկաւ, կանգնեց ձեռների վրայ, օդի մէջ շարժելով ոտերը: Սպիտակ վերնազդեստը ներքն ծալուեց, երեսը արիւնով լրցուեց, և, յամառութեամբ նայելով վրաս տարօրինակօրէն շուռ տուած հայեացքով, նա դժուարութեամբ նետում էր կը կըց կտուր խօսքեր.

—Իսկ այս... դուք նոյնպէս... հասկանո՞ւմ էք:

—Դադարէք, —վախեցած շնչացի ես: Թէ ոչ ես կը ճշամ:

Նա շուռ եկաւ, բնական դիրք ընդունեց, կրկն նստեց մահճակալիս մօտ և, փնչալով, ուսուցանողի ձեռվ նկատեց.

—Եւ, ոչ ոք այդ չի հասկանում:

—Երէկ կրկն կրակում էին:

—Երէկ էլ էին կրակում: Անցեալ օրն էլ էին կրակում, —ի նշան հաստատութեան զիխով արաւ նա:

—Ես ուզում եմ տուն վերադասնալ: —կարօտագին ասացի ես: —Բժիշկ, սիրելի, ես տուն եմ ուզում: Ես չեմ կարող մնալ այստեղ: Ես զադարում եմ հաւատալ, թէ տուն կայ, ուր այնպէս լաւ է:

Նա մի ինչ-որ այլ բանի վրայ էր մտածում, և ես լաց եղայ:

—Աստուած իմ, ես ուսներ չունիմ: Ես այնպէս սիրում

էի հեծանիւ նստել, մաս գալ, վազվել. իսկ այժմ ես ոտներ չունիմ: Իմ աջ ծնկանս ես ճօճում էի որդուս, իսկ նա ծիծաղում էր, իսկ այժմ... Անիծուած լինիք: Ինչու գնամ: Ես միայն երհսուն տարեկան եմ... Անիծուած լինիք:

Եւ ես հեկեկում էի, հեկեկում էի, յիշելով իմ սիրելի ոտները, իմ արագ, ուժեղ ոտները: Ո՞վ խեց նրանց ինձնից, ո՞վ համարձակուեց խել նրանց:

—Լսէք,—առաց բժիշկը, մի կողմ նայելով:—Երէկ ես տեսայ, մեզ մօտ եկաւ մի խելագար զինուոր: Թշնամու զինուոր: Նա համարեա բոլորովին մերկ էր, ծեծուած, չանգստուած և սոված, ինչպէս անսասուն. Նա ամբողջապէս մազակոխուած էր, ինչպէս և մենք բոլորս, և նման էր վայրենու, նախնական մարդու, կապիկի: Նա այս ու այն կողմ էր շարժում ձեռները, ծամածուում էր, երգում և բղաւում, և վրայ էր յարձակուում ծեծուելու: Նրան կերակրեցին և դուրս փռնդեցին դաշտը: Ել ուր տեղաւորել նրանց: Ցերել և գիշեր պատառոտուն, չարագուշակ ուրուականների նման թափառում են նրանք բլրից բլուր, յետ ու առաջ և ամեն ուղղութեամբ, անճանապարհ, աննպատակ, անսպաստան: Շարժում են ձեռները, հոճուում, բգաւում և երգում, և երբ հանդիպում են իրար, ոկուում են կոռուոտել, և, գուցէ, չեն տեսնուում իրար և անցնուում են կողքով: Ինչով են նրանք կերակրում: Երեկի, ոչնչով, և գուցէ, դիակներով, գազանների հետ միասին, այն հաստ, ճաթելու չափ կուշտ վայրենացած շների հետ միասին, որոնք ամբողջ գիշերները կոռուոտում են բլուրների վրայ և կաղկանձում: Գիշերները, ինչպէս թռչուններ՝ փոթորկից զարթած, ինչպէս այլանդակ թիթեռներ, նրանք հաւաքուում են կըսկի վրայ, և բաւական է ցրտի դէմ խարոյկ վառել, որ կէս ժամում նրա մօտ բռնին տառնեակ ճղճղան, գզգուած, վայրենի սիլուէտներ, նման ցրտից դողդողացող կապիկների: Նրանց վրայ երբեմն կըսկում են սխալմամբ, երբեմն գիտմամբ, համբերութիւնից դուրս եկած նրանց անիմաստ, վախեցնող ճիշից...

—Ես տուն եմ ուզուում,—ճշում էի, խցելով ականջներըս: Կարծես բամբակի միջով, խուլ և ուրուականի նման կտկառում էին իմ ասմնջուած ուղեղը նորանոր սարսափելի խօսքեր.

—...Նրանք շատ են: Նրանք մեռնուում են հարիւրներով անդունդների մէջ, գայլային փոսերում, որ պատրաստում են առողջների և խելօքների համար, փշփոտ մաֆտուների մնացորդների և ցիցերի վրայ. Նրանք խառնուում են կանոնաւոր, խելացի պատերազմների մէջ և կուում, ինչպէս հերոսներ միշտ

առաջնակարգ, միշտ անելկիւդ. բայց յաճախ խփում են իւրաքիններին։ Ես նրանց հաւանում եմ։ Այսրպէիս ես զեռ միայն սկսում եմ խելքս կորցնել և այդ պատճառով նստել եմ և զրուցում եմ ձեզ հետ, իսկ երբ բանականութիւնը իսպառ կը թողնի ինձ, ես գուրս կը գամ գաշտ,—ես գուրս կը գամ գաշտ, ես ձայն կը տամ, և կը հաւաքեմ իմ շուրջ այդ քաջերին, այդ աներկիւդ ասպետներին, և պատերազմ կը յայտարարեմ ամբողջ աշխարհին։ Ուրախ խմբով, նուագելով և երգելով, մենք կը մանենք բարաքներ ու գիւղեր, և ուր մենք ացնենք, այնտեղ ամեն ինչ կարմիր կը դառնայ, այնտեղ ամեն ինչ կը սկսի պտտել և պարել, ինչպէս կրակ։ Նրանք, որոնք չեն մետել, կը միանան մեղ, և մեր քաջ զօրքը կ'ածի, ինչպէս հեղեղ, և կը մաքրի այս ամբողջ աշխարհ։ Ո՞վ ասաց, թէ չի կարելի սպանել, այրել և կողոպտել...

Նա արդէն բզաւում էր, այդ խելագար բժիշկը, և իր ճիշով կարծես զարթեցրեց թմրած ցաւը նրանց, որոնց կուրծքերըն ու վորերն պատուուած էին, և աչքերը հանուած և ոտերը կտրած։ Լայն, չանգուսող, լացող հառաչանքով լցուեց հիւանդների դահլիճը, և ամեն կողմից դէպի մեղ շուռ եկան դալուկ, դեղնած, հիւծուած դէմքեր, ոմանք առանց աչքերի, ոմանք այնպիսի հրէշաւոր այլանգակութեան մէջ, կարծես զըժուխիկ վերագարած լինէին նրանք։ Եւ նրանք հառաչում էին և լսում, և բաց դանից զգուշութեամբ նայում էր աշխարհի վրայ բարձրացած սև, անձև ստուերը, և խելագար ծերը ճչում էր, տարածելով ձեռները.

—Ո՞վ ասաց, թէ չի կարելի սպանել, այրել և կողոպտել։ Մենք պիտի սպանենք, և կողոպահնք, և այրենք։ Ուրախ, անհոգ քաջերի մի վոհմակ՝ մենք կը կործանենք ամեն ինչ, նրանց շէնքերը, համալսարանները և թանգարանները. ուրախ տղերք լիքոցավառ ծիծաղով—մենք կը պարհնք աւերակների վրայ։ Իրունայի հայրենիք ես կը յայտարարեմ գժատունը. մեր թշնամի և խելագար—բոլոր նրանց, ով դեռ չի խելագարուել. և երբ մեծը, անյաղթելիս, բերկրեալս կը թափաւորեմ աշխարհի վրայ, ինչպէս նրա միակ տէր և տիրական,—ինչպիսի ուրախ ծիծաղ կը հնչի ամբողջ տիեզերքում։

—Կարմիր ծիծաղ,—ճչացի ես, ընդհատելով նրան. —Աղաւեցէք։ Ես կրկին լսում եմ կարմիր ծիծաղ!—

—Բարեկամներ,—շարունակեց բժիշկը, դիմելով հառաչողներին, այլանգակուած ստուերներին։ —Բարեկամներ, մենք կ'ունենանք կարմիր լուսին և կարմիր արեգակ, և գաղանները

կունենան կարմիր ուրախ մորթի, և մենք կը պոկենք նրանց կաշին,—ով չափազանց սպիտակ է, ով չափազանց սպիտակ է... Դուք չեք փորձել արիւն խմել: Նա մի քիչ մածուցիկ է, մի քիչ տաք, բայց նա կարմիր է, և նա այնպիսի՛ ուրախ կարմիր ծիծաղ ունի...

Ութերորդ հատուած

... Ինքնաեւի շուրջ, իսկական ինքնաեւի շուրջ, որից շոգին ժայթքում էր, ինչպէս շոգեկառքից—մինչև անգամ լամպի ասլակին մի քիչ մգապատուեց, այնպէս ուժգին էր բարձրանում շոգին: Եւ թասերն էլ նոյնն էին, գրսից կապոյաւ և ներսից սպիտակ, շատ գեղեցիկ թասեր, որ ընծայեցին մեզ դեռ մեր հարսանիքն: Քենիս ընծայեց—նա շատ լաւ և բարի կին է:

—Միթէ բոլորն էլ ողջ են,—անվատահութեամբ հարցրի ես, խառնելով շաքարը բաժակում արծաթէ մաքուր գդալով:

—Մէկը կոտրեցին,—ասաց կինս ցրուած. Նա այդ ժամանակ բոնում էր բաց ծորակը, և նրանից գեղեցիկ և սահուն վագում էր տաք ջուր:

Ես ծիծաղիցի:

—Այդ ինչու, հարցրեց եղբայրս:

—Այնպէս: Դէ, մի անգամ էլ տարեք ինձ առանձնասենեակս: Նեղութիւն կրէք ներսի համար! Պարապ մարապ մնացիք առանց ինձ, այժմ հերիք է, ես ձեզ կը ստիպեմ աշխատել—և ես կատակի համար, ի հարկէ, երգեցի. Մա խрабրօ նա վրացօ, նա բօյ, դրոյն ընթամու...

Նրանք հասկացան կատակը և նոյնպէս ժպտացին, միայն կինս չբարձրացրեց երեսը. Նա նորից սրբում էր թասերը մաքուր ասեղնագործած սրբիչով: Առանձնասենեակումս ես կրկին տեսայ. Երկնագոյն պաստառներ, լամպը կանաչ լուսամփոփով և սեղանը, որի վրայ զրուած էր ջրով գրափինը: Եւ նա մի քիչ թողոսուած էր:

—Դէ մի քիչ ջուր ածէք այս տեղից,—ուրախ-ուրախ հրամայեցի ես:

—Զէ՞ որ դու նոր թէյ խմեցիր:

—Ո՛չինչ, ոչինչ, ածէք: Իսկ դու,—ասացի ես կնոջս,—վերցը բալիկիս և նստիր մի քիչ այն սենեակում: Խնդրում եմ:

Ես մանր կումերով, վայելքով խմում էի ջուրը, իսկ հարեան սենեակում նստած էր կինս և որդիս, և ես նրանց չէի տեսնում:

—Այդակս, լաւ է: Այժմ եկէք այստեղ: Բայց ինչո՞ւ որդիս այդքան ուշ չի պառկում քնելու:

—Նա ուրախ է, որ դու վերադարձել ես: Սիրելիս, գնան հօրդ մօտ:

Բայց մանուկը լաց եղաւ և ծածկուեց մօր ոտների արանքում:

—Ինչո՞ւ է նա լալիս,—տարակուսելով հարցրի ես և նայեցի շուրջս.—Ինչո՞ւ զուք բոլորդ այդպէս գունատ էք, և լոռս էք, և ման էք զալիս իմ յետնից, ինչպէս սառելներ:

Եղայրս բարձր ծիծաղեց և ասաց.

—Մենք չենք լոռում:

Եւ քոյրս ասաց.

—Մենք բոլոր ժամանակ խօսում ենք:

—Ես կը գնամ ընթրիքի մասին կարգադրելու, —ասաց մայրս և շտապ-շտապ դուրս եկաւ:

—Այս, գոյք լսում էք, —անսապասելի վատահութեամբ կրկնեցի ես:—Առաւօտուանից հէսց ես չեմ լսում ձեզնից մի խօսք, միայն ես հմ զուտ տալիս, ծիծաղում, ուրախանում: Մի՞թէ դուք ուրախ չէք ինձով: Եւ ինչո՞ւ դուք խոյս էք տալիս վըրաս նայելուց, մի՞թէ ես այդքան փոխուել եմ: Ես հայելիներ էլ չեմ տեսնում: Դուք նրանց հեռացրել էք: Տուեք այստեղ հայելին:

—Իսկոյն կը բերեմ, —պատասխանեց կիսս և երկար ժամանակ չէր վերադասանում, իսկ հայելին բերաւ աղախինը: Ես նայեցի նրա մէջ, և ես արդէն ինձ տեսել էին վագոնում, վոկալում—այդ նոյն երեսն էր, մի քիչ ծերացած, բայց ամենասովորականը: Իսկ նրանք, կարծեմ, սպասում էին չգիտեմ ինչու, որ ես կը ճշամ և ուշաթափ կ'ընկնեմ, —այնքան ուրախացան նրանք, երբ ես հանդիսու հարցրի:

—Այստեղ ի՞նչ անսովոր բան կայ:

Աւելի և աւելի բարձր ծիծաղելով, քոյրս շտապով դուրս եկաւ, իսկ եղայրս ասաց վատահ և հանգիստ:

—Այս: Դու քիչ ես փոխուել: Մի քիչ ճաղատուել ես:

—Շնորհակալ եղիր և նրա համար, որ գլուխո մնացել է, —անտարբերութեամբ պատասխանեցի ես:—Բայց ո՞ւր են նըրանք բոլորը փախչում: Կամ կիսս կամ բոյրս ու մայրս: Մի քիչ էլ ինձ քշիր, ման ածիր սենեակներում: Ինչ յարմար բազկաթոռ է, բոլորովին անաղմուկ: Ո՞րքան էք վճարել: Իսկ ես արդէն փող չեմ ինայի, այնպիսի ոտներ կ'առնեմ, որ աւելի լաւ... Հեծանիւս:

Նա կախուած էր պատից, գեռ բոլորովին նոր, միայն առանց լցուած օդի, ներս ընկած բեղինի շրջանակներով: Յետևի անիւ-

ւին կպել էր չորացած ցեխի կտոր—վերջին անգամ զբօսնելուցու յետոյ: Եղբայրու լուս էր և չէր շարժում բազկաթոռը, և ես հասկացայ այդ լուսթիւնը և այդ անվճառականութիւնը:

—Մեր գնդում միայն չորս սպայ կենդանի մնացին, —դառնութեամբ ասացի ես—Ես շատ բախտաւոր եմ... Իսկ այդ հեծանիւը վերցրու քեզ, էգուց վերցրու:

—Լաւ, ես կը վերցնեմ, —հեղութեամբ համաձայնուեց եղբայրս: —Մեզանում քաղաքի կչու սուզի մէջ է: Իսկ ոտներդ այդ, իսկ որ...

—Իհարկէ: Ես թղթատար (պոստալիօն) չեմ:

Եղբայրու յանկարծակի կանդ առաւ և հարցրեց.

—Իսկ ինչու է գողգողում գումարդ:

—Դատարկ բան է: Այդ կ'անցնի, ասաց բժիշկը:

—Եւ ձեռներդ:

—Այս, այս: Եւ ձեռներս: Ամէնը կ'անցնի: Քշիր, ինդրում եմ, ձանձրացրեց կանգ առնելը:

Նրանք իմ տրամադրութիւնս վչացրին, այդ գժգոհ մարդիկ, սակայն ուրախութիւնս կրկին վերադարձաւ, երբ սկսեցին պատրաստել անկողինս. իսկական անկողին, գեղեցիկ մահճակալի վրայ, մահճակալի, որ ես գնեցի նախ բան հարսանիքս, չորս տարի սրանից առաջ: Փռեցին մաքուր սաւան, յետոյ տրփտրփեցին բարձերս, ծալեցին վերմակիս կողքերը, —իսկ ես նայում էի այդ հանդիսաւոր գործողութիւնների վրայ, և աչքերում կանգնած էին արցունքներ՝ ծիծաղից:

—Իսկ այժմս շորերս հանիր և ուսուկեցրու, —ասացի կը նոշա: —Ինչպէս լաւ է:

—Իսկոյն, սիրելիս:

—Շուտով:

—Իսկոյն, սիրելիս:

—Այդ ի՞նչ է:

Նա կանգնած էր մէջքիս յետեռում, տուալէտի մօտ, և ես իդուք էի շուս տալիս գլուխս, նրան տեսնելու համար: Եւ յանկարծ նա ճշաց, այնպէս ճշաց, ինչպէս ճշում են միայն պատեղագմում:

—Այդ ի՞նչ է:

Եւ նետուեց դէմի ինձ, գրկեց, ընկաւ մօտս, թագյնելով գլուխը կտրուած ոտերիս մօտ, սարսափով հեռանալով՝ նրանցից և նորից վրայ ընկնելով, համբուրելով այդ կտորները և լուվ.

—Դու ինչպիսի՞ն էիր: Ախր դու երեսուն տարեկան ես

միայն։ Զահիլ, գեղեցիկ էիր։ Այս ի՞նչ է։ Որքան անգութ են մարդիկ։ Ինչի՞ համար է այդ։ Ո՞ւմ է այդ հարկաւոր։ Դու, իմ հեզ, իմ խեղճ, իմ սիրելի, սիրելիս...

Եւ այդ ժամանակ նրա աղաղակից վրայ հասան նրանք բոլորը, և մայրս, և քոյրս, և զայեակս, և նրանք բոլորը լալիս էին, ինչ-որ ասում էին, թաւալւում էին ոտերիս տակ, և այդպէս լալիս։ Իսկ շէմքում կանգնած էր եղբայրս, գունատ, բոլորովին սպիտակ, գողդոջուն ծնօսով և կլլտոցով աղաղակում էր։

—Ես այսուեղ ձեզ հետ կը խելագարուեմ։ Կը խելագարուեմ։

Իսկ մայրս սողում էր բազկաթոռիս մօտ և արդէն չէր ճշում, այլ միայն խոխում էր և գլուխը խփում անխներին։ Եւ մաքուր, տփտփած բարձերով, կողքերը ծալած վերմակով կանգնած էր մահճակալս, նոյն այն մահճակալը, որ ես գնեցի՝ չորս տարի առաջ—հարսանիքիցս առաջ...

Բաւականանք այս երկու կտորով։ Կարծում ենք բերած հատուածներից արդէն կարելի է գուշակել թէ որբան զօրեղ տպաւորութիւնն է թողնում Լ. Անդրէեվի այդ պատմուածքը իր ամբողջութեան մէջ։

S.

Օ Բ Ե Ր Լ Ե Ն Ե Ր Ը

Դ է Պ

Ա ր թ ի Ռ ա զ է ն ի

II

Ջ ն ն ո ւ թ ի ւ ն ը

Հետևեալ օրը առաւօտը բաւական առաջացած էր, երբ
ժամ վար իջաւ իր սենեակից, և երևեցաւ վերնապաւթի վրայ,
շինուած՝ Սավերնի կարմիր քարից, ինչպէս ամբողջ տունը,
որի երկու երկար աստիճաններով սանդուխները նայում էին
պարկի կողմը: Նա հագել էր որսորդութեան և զրուանփի
զգեստ, որը ամենից աւելի դուր էր զալիս նրան, ոև կաշուէ
սրնքակալ, կապոյտ ըրդէ վարդիկ և վերարկու և ծածկել էր թաւ-
զիքեայ գլխարկ, որի ժապաւէնի մէջ խրել էր վայրի աքաղա-
ղի մի փետուր: Սանդուխների վերկից հարցըեց.

—Որտե՞ղ է հայրս:

Այն մարդը՝ որին ուղղուած էր հարցումը—ծառուղիի ա-
ւազները փոցխող պարտիզանը—պստախանից.

—Պարոնը սղոցարանի գրասենեակումն է:

Երբ ժամ Օքերլէ աչքերը բարձրացըրեց, առաջին անգամ
տեսաւ եղենեայ անտառներով ծածկուած Վոժի լեռները, որոնց
խոռոչները լեցուած էին ձիւնի շերտերով, իսկ սարերը վարա-
գուրուած՝ ցածր ու արագասահ ամպերով: Հաճոյքից թրթուաց:
Այնուհետև հայեացըը ցցեց լեռների, այգեստանների, մարգա-
գետինների վերջին զառիվայրերի վրայ, որպէս թէ կամինար
վերստին իր յիշողութեան մէջ զրոշմել այդ վալրերի մանրա-
մասնութիւնները, որոնց նորից էր զանում երկար բացակայու-
թիւնից յետոյ, նորից էր գտնում, մանաւանդ, այնտեղ բնակու-
թիւն հաստատելու դիտաւորութեամբ: Երկար նայեց սղոցա-

*) Տես «Մուբա» № 2—3.

բանի կարմիր տանիքին, որ դրաւում էր Օբերլիների կալուածքի կենդրումը, ծխնելոյդները, այն բարձրագիր շինութիւնը, ուր դժուում էին էլէկտրական մեքենաները, Ալշէյմ գետի աջ ափին, և նրա մօտ, այն շինուածանիւթերի պահեստարանը, որտեղից զործարանն ստանում էր հարկաւոր առարկաները—ամեն տեսակ ծառերի դէղեր, գերաններ, տախտակներ, և մնացեալ այլ իրերը, որոնք ահագին բուրգերի և խորանարդների ձեռվ բարձրանում էին օձապտոյտ ծառուղիների և թաւուաների ետևում, բնակարանից երկու հարիւր մետր հեռու։ Սղոցարանի տանիքի այլ և այլ կէտերից դուրս էին ժայթքում սպիտակ շոգու ցայտքեր և երկնքի ամսութերի նման հիւսիսի քամուց հարում, լուծւում էին։

Երիտասարդը ուզուեց նախ գէպի աջ, անցաւ պարկից, որը զցել և կանոնաւորել էր երեմն ոլ. Ֆիլիպ Օբերլին և որը սկսում էր գասնալ բնութեան մի աւելի աղասո, աւելի ներգաշնակ անկիւն—և յեսոյ կազմիների; Կնձնիների և եղենիների կոճղերի կայտի առաջից պտոյտ գործելով՝ գնաց թրխկացը երկարածիդ շինութեան վերջին դուռը։

Մտաւ ապակեայ պալլիեօնը, որ գործարանատիրոջ աշխատառինեակն էր կազմում։ Սա զրագուած էր սուրբհանգակից ստացած նամակները կարգալով։ Տեսնելով որդուն՝ թղթերը իսկոյն զբեց սեղանի վրայ, ձեռքով մի նշան արեց, որը նշանակում էր. «Իս քո այցելութեան էի սպասում. նոտիր», և, թիկնաթոռը մի քիչ յետ մղելով.

— Լաւ, զաւակս, տեսնենք ի՞նչ ունես ինձ ասելու։

Պ. Փողէֆ Օբերլին մի արիւնային, դիւրաթեք և հրամայելու սովոր անձ էր։ Իր ածելուած շրթունքների, կարճ ծնուտամօրուսի, իր զգեստների՝ միշտ մի քիչ բնազրօսիկ՝ անթերիութեան, և իր շարժումների ու խօսքերի գիւրաբուղիս լինելու պատճառով, նրան ընդունել էին ֆրանսիացի մի ժամանակին զատաւորի» տեղ։ Այսպէս գատողները մեղաւոր չէին։ Մեղաւորը հանգամանքներն էին, որ պ. Փողէֆ Օբերլին հեռացը էին, հակասակ իր կամքին, այն ճանապարհից, ուր նա կամննում էր մանել, և որը պէտք է նրան առաջնորդէր գէպի մի որևէ հասարակական, գատային կամ վարչական պաշտօն։ Նրա հայրը՝ զերպաստանի հիմնադիրը, Ֆիլիպ Օբերլի, որը սերում էր կալուածատէր գիւղացիների մի ցեղից, հիմնել էր Ալշէյմում, 1850-ին՝ այդ մեքենավար սղոցարանը, որը շուտով բարգաւաճեց։ Մի քանի տարուայ ընթացքում, նա զարձել էր մի հարուստ և հզօր հանձնաւորութիւն, ամենըից սիրուած,—որովհետեւ այդ բան ամար ոչինչ չէր խնայում—և, բացի այդ՝ չա ազդեցիկ՝ առանցի

բնաւ նախագուշակելու այն դէպքերը, որ նրան պիտի մղէին մի օր իր ալղեցութիւնը զործ դնել Ալղասի օգտին:

Երկրորդ կայսրութեան վերջին աւարիներում, այդ գործարանատիրոջ որդին չէր կարող երթէք պաշտօնեայ գառնաւլու երազից հրաժարուել: Եւ այդ պատահեց: Նա իր դաստիարակութիւնն ասացել էր այդ ուղղութեամբ իսկ: Վաղուց հեռացած Ալղասից, ութ տարի շարունակ Լուի-լը-Դրան լիսէի աշակերտ, յետոյ իրաւաբանութեան ուսանող, քսան երկու տարեկան հասակում, Շարանտի նահանգապետի դիւանում պաշտօնակատար էր, երբ ծագեց պատերազմը: Նրա պետը, իր բարեկամ ալղասիցի մնջ զործարանատիրոջ հաճելի լինել կարծում էր, իր մօտ երկար ամիսներ, Սնկուլէմի նահանգապետարանի պատերի ետև, վտանգից զերծ պահելով երիտասարդին: Բայց նա՝ իր մասնաւոր խնդրանքով վերջ ի վերջոյ մտաւ Լուափի բանակը: Փողէֆ Օբերլէ շատ քայլեց, շատ նահանջեց, ցրահից շատ նեղուեց, և կտուեց քաջարար, հազուադէպ պարագաներում: Երբ պատերազմը վերջացաւ, նա ստիպուեց ընտրութիւն կատարուելու ֆրանսիայի և Գերմանիայի մէջ:

Եթէ նրան թողնէին իր սեփական կամքին, նա կը մնար ֆրանսիացի և կը շարունակէր հետեւել իր վարչական ասպարէզին, որովհետև իշխանութեան համն առել էր և ինքն անձամբ չգիտէր, թէ ի՞նչ է նշանակում հպատակուել: Բայց հայրը նրան կանչեց Ալղաս: Պաղասում էր, որ արդէն սկսուած, յաջող գործը բարձի թողի չանէ: Նա ասում էր. «Յաղթանակը՝ իմ ճարտարարուեստը, ինդուստրիան դարձրեց գերմանական: Ես չեմ կարող իմ հարստութեան և ապագայի գործիքը խորտակել: Ես ասում եմ պրուսեացուն, բայց ես վերցնում եմ իմ ձեռքի տակ գտնուող, միակ միջոցը օգտակար կերպով կեանքս շարունակելու համար. Փրանսիացի էի, գտանում եմ ալղասեցի: Դու էլ նոյնն արան: Յոյս ունեմ, որ դա կը լինի կարծ ժամանակի համար»:

Ժողէֆ Օբերլէ հնազանդուել էր ճշմարիտ զղուանքով, զզուանք՝ ապրելու այդ Ալշէյմ գիւղում, կորսուած՝ Վոժերի խորքում: Այդ ժամանակներում, նա բանեցրել էր նոյնիսկ այնպիսի անխոհեմ լեզու, ունեցել էր այնպիսի անխոհեմ վարմունք, որոնց համար այժմ նա զզում էր: Ուրովհետեւ յաղթանակը յաւերժացել էր, Գերմանիայի բախտը աւելի ամուր հիմքերի վրայ էր վրուել և երիտասարդը, իր հօր ընկերանալով և մի գործաշընի դեկալար դառնալով՝ զդացել էր իր շուրջը՝ Փրանսիական վարչութեան նման մի վարչութեան օ-

դակների կազմուելն և սեղմուելը, վարչութիւն, որ աւելի խիստ էր, և գիտէր աւելի լաւ հնագանդեցնել: Նա՝ ի վեաս իրան՝ նկատել էր, որ ամեն դէպօւմ, առանց բացառութեան, գերմանական իշխանութիւնները, ոստիկանները, գատաւորները, այն հանրային պաշտօնեաները, որոնց հետ նա հանաւ պազօրեայ շփումն ունէր, ճանապարհի, երկաթուղու, ջրաբաշխութեան, անտառների, մաքսատան պաշտօնեաները պէտք է միշտ նրան մեղաւոր գուրս բերեն, երբ նրա հետ գործ ունենան: Եյն չկամութիւնը, որին նա բաղկաւում էր, հակառակ գերմանական հապատակ լինելուն ամեն կողմ, գերմանական վարչութեան ամեն բաժանմունքներում, հետզիւտէ անեց և ստացաւ միանգամայն սպառնալից բնաւորութիւն նոյնիսկ Ալշէմի տան բարգաւաճման համար, այն բովէից սկսած՝ երբ, 1874-ին, պ. Ֆիլիպ Օբերլէ իր որդուն յանձնելով սղոցարանի գեկավարութիւնը, տեղի տուեց այդ խեղճ, լքուած երկրի բնակչութեան թախանձանքին, որ ուզում էր կարգել և կարգեց նրան՝ Ռայխստագում իր շահերի ներկայացուցիչը, և Ալշասի բողոքող պատգամաւորներից մէկը:

Կեանիքի այդ փորձասութիւնը, սպառումից յոգնելլ, պ. Ֆիլիպ Օբերլէի հեռանալը, որ տարուայ մի մասը անց էր կացնում Բերլինում, զգալի կերպով փոխեցին դործարանի երիտասարդ գեկավարի վարմունքը: Նրա նախկին աշխոյժը, թէ գէպի իր անձը և թէ գէպի ուրիշները, հուազում էր: Տեսնում էր, որ Ալզասի գիւղացիների հակա-գերմանական ցոյցիրը հետզիւտէ սակաւաթիւ և խոհեմ էին դառնում: Թրանսիայի հետ համարեան հչ մի գործառնութիւն չէր ընդունում, թէկուզ գործի և առեստի վերաբերեալ: Թրանսիան, որը այնքան մօտիկ էր, այնքան զբացի, դարձել էր որպէս մի պարզուապատ, փակ երկիր, որտեղից ոչինչ չէր մտնում Ալզաս, հչ ճանապարհորդ, ոչ ապրանք: Նրա ստացած լրազրներն անզամ, հչ մի կասկած չէին թողնում: որ Ալզասը կամաց կամաց լրըւում, մոռացւում էր. Թրանսիայի որոշ բազաքագէտները, իմաստութեան և նախապատրաստութեան պատրուակի տակ այդ էին խորհուրդ տալիս:

Տաս տարուայ ընթացքում, պ. Փողէֆ Օբերլէ հաստատուած իշխանութեան դէմ գործածել, վիրջնապէս սպառել էր ըմբոստութեան այն լուրը ուժը, որ պարունակում էր իր նըկարազիրը: Նա դարձել էր gallié, այսինքն յարել, միացել էր գերման իշխանութեան: Մոնիկ Բիհէրի հետ իր ամուսնութիւնը, որ ցանկացել և պատրաստել էր Ռայխստագում

Բիզմարկ իշխանի ղէմ քուէարկող ծերունի և կրակոտ հայրենասէրը, ոչ մի ազգեցութիւն չէր գործել պ. Ժողէֆ Օրերլէի նոր տրամադրութիւնների վրայ, որոնք՝ նախ գաղտնի՝ շուտով կասկածելի, յետոյ յայտնի, յետոյ հաստատ դարձան և ասպա գայթակղելի կերպով փոսուեցին ամենքի առաջ: Պ. Ժողէֆ Օրերլէ այդպիսով գերմանացիներին գրաւականներ, յետոյ պատանդներ էր տալիս: Նա չափն անցկացնում էր: Հնազանդութիւնից շատ աւելի դէնն էր զնում: Գործարանի վերահսկիչները՝ (contremaîtes) որ ֆրանսիական նախկին զինուորներ, Պ. Ֆիլիպ Օրերլէի հիացողները, նրան Ալզասի գերմանացման դէմ մղած կոռուի ընկերներն էին, նոր գործարանատիրոջ վարժուարից գժգոհ էին, պախարակում էին նրա ընթացքը: Նրանցից մէկը, համբերութիւնից գուրս եկած՝ նրան ասել էր մի օր. «Կարծում էք թէ շատ հպարտ ենք, որ ծառայում ենք ձեզ նման մի ուրացողի մօա:» Գործարանից արտաքսուել էր: Խսկոյն նրա ընկերները նրա կողմն էին ըսնել, միջամտել էին, ըսնակցել, սպառնացել գործագուլ անել: «Լաւ, գործադուլ արեք, կոչել էր գործարանատէրը. ես չափազանց ուրախ կը լինիմ. դուք տաք-զլուխ մարդիկ էք. ձեր աեղ գերմանացիներ կը գնեմ:» Սպառնալիքին չէին հաւատացել բայց պ. Ժողէֆ Օրերլէ քիչ յետոյ իրագործել էր այն՝ տագնապի մի այլ բոպէում, որպէսզի չափէին թէ թոյլ մարդ է, մի բան, որից նա վախենում էր աւելի՝ քան անարդարութեան մեղադրանքից, և բացի այդ, նա մտածում էր, որ աւելի շահաւէտ է ալզասեցիների, հեշտութեամբ ընդվուղ այդ մարդկանց տեղ գործածել բաղեցիներ և վիւրդեմբերգցիներ, որոնք աւելի կարգապահ են և աւելի համակերպող Այգպէս, սղոցարանի պաշտօնէութեան մի բառորդը փոփոխուած էր: Գիւղի հիւսիսակողմում հաստատուել էր գերմանական մի փոքրիկ գաղութ, գործարանատիրոջ կողմից կառուցուած տներում. իսկ այն ալզասեցիները, որոնք մնում էին, գա պարզապէս իրանց ամենօրեայ հացը ձեռքից բաց չփողնելու համար էր: Այս բոլորը տեղի էին ունենում 1882-ին: Հազիւ մի բանի տարի անցել էր, երբ լսեցին, որ պ. Օրերլէ իր որդուն՝ Ժանին՝ հեռացնում էր Ալզասից և ուղարկում էր Բավիէր, Միւնիխի գիմնազիայում ուսման տալու համար: Նա հեռացնում էր նոյնպէս իր աղջկան՝ Լիւսիէննին, և յանձնում էր նրան՝ ամենաթունդ գերմանականութեամբ տողորուած մի հիմնարկութեան, Բադէն-Բադէնի գիշերօթիկ Միւնինէր ուսումնարանի անօրինունու խնամքին: Հասարակական կարծիքը ամենից աւելի այս վերջին կարգադրութիւնից վրդովուեց: Նա զայրացաւ ալզասական գաստիարակութեան և ազգեցութեան այդ

ուրացումի գէմ: Նա խղճում էր տիկին Օբերլեխն, որ բաժանուած արդէն իր որդուց, այժմ էլ զրկուում էր իր աղջկան դաստիարակելու իրաւունքից, որպէս թէ նա անարժան լինէր գրան: Բոլոր նրանց, որոնք պախարակում էին իրան՝ հայրը պատասխանեց. «Ես այդ արի նրանց օգտի համար: Ես կորցրի իմ կեանքը, չեմ ուզում որ նրանք էլ կորցնեն իրանցը: Ապագայում, երբ խելահաս լինին, թող իրանը ընսրեն իրանց ձանապարհը: Բայց ես չեմ ցանկանում, որ նրանք՝ հէնց իրանց երիտասարդդասակից՝ պարիս ալղասեցիների ցանկում դասուեն, դասակարգուեն և պաշտօնապէս արձանագրուեն:» Երբեմն և աւելացնում էր. «Միթէ չք ըմբռնում, որ այն ամեն զոհողութիւնները, որ ես անում եմ, անում եմ միայն իմ զաւակների համար: Ես ինձ զոհում եմ: Բայց չկարծեք թէ ես չեմ տառապում:»

Նա, արդարեւ, տառապում էր. տառապում էր մանաւանդ նրա համար, որ գերմանական վարչութեան վստահութիւնը չէր կարողանում զրաւել: Այդքան ջանքերը չէին վարձատրում ցանկալի կերպով: Ճիշտ է, պաշտօնեաները սկսում էին շոյել, սիրաշահել, որոնել պ. Ժողէֆ Օբերլեխն, և նոյնիսկ շատ «Kreisdirectors»-ներ պարձենում էին այդ թանկապին յաղթանակի համար բարձր իշխանութեան մօտ, բայց, այնուամենայնիւ, հսկողութիւնը չէին դադարեցնում նրա վրայից, աշխատելով հանդերձ հաճոյակատար լինել, չափից աւելի պատուել նրան հրաւելներով: Նա զգում էր վարանքը, հազիւ ծածկուած՝ յաճախ բրտորէն ակներև անվստահութիւնը իր նոր տէրերի, որոնց ցանկանում էր զուր գալ: Վստահութեան արժանի էր արդեօք: Արդեօք առանց յետին մտքի վճռել էր գերմանացի դառնալ: Բաւականաչափ հիացում տածում էր գէպի գերմանական հանճարը, գերմանական քաղաքակրթութիւնը, գերմանական վաճառականութիւնը, գերմանական ապագան: Պէտք էր շատ հիանալ, ու շատ բաների վրայ:

Այդ հարցերի պատասխանը հետզհետէ դրական էր դառնում: Այդ երեսում էր այն ցանկութիւնից, որ նա ունէր իր որդուն՝ Ժանին մտցնելու գերմանական ատենակալութեան մէջ. այդ երեսում էր և նրանից, որ երիտասարդին շարունակուում էր սիստեմատիկ կերպով Ալղասից հեռու, մի տեսակ հարկադրուած աքսորի մէջ պահել: Իր կլասիկական ուսումը վերջացնելուց, 1895-ի գպրոցական տարուայ վերջերում աւարտման քննութիւնը յաջողութեամբ տալուց յետոյ, Ժան մտել էր Միւնիխի համալսարանը՝ իբրև իրաւաբանութեան ուսանող: Երկրորդ աշրին նա շարունակել էր Բոնի և Հայդելբերգի համալսարաններում, յետոյ իր licence-ի քննութիւնը, Referendar examen-ը

անցկացրել էր Բերլինում: Վերջապէս, չորրորդ տարին Բերլինում մի փառարանի մօտ իրը *stagiaire*, իրը օգնական ծառայելոց, և օտար երկրներում մի երկար ճամբորդութիւն կատարելոց յետոյ, երիտասարդը վերադառնում էր իր հայրենական տունը, որպէս զի նախ քան զինուոր գրուելը մի քիչ հանգիստ վայելէ: Իսկապէս առաջ՝ մինոյն մէթոտը մինչեւ վերջը պահպանում էր: Ուսանողական կեանքի առաջին տարիների ընթացքում, անգամ արձակուրդների ժամանակ, բացի ընտանիքում անցկացրած մի քանի օրերից, նա ճամբորդում էր: Վերջին տարիներում, նա մինչեւ անգամ ոտք չէր կոխել Ալլելույ:

Վարչութեան կասկածները վերջ ի վերջոյ փարատուել էին: Ալզասի պաշտօնեաների և պ. Փողէֆ Օբերլէի միջև ընդհանուր մերձեց մասն զլիսաւոր արգելքներից մէկը անհետացել էր արդէն: Բողորող ալեհարդ պատգամաւորը, 1890-ին, քաղաքական կեանքըց քաշուել էր ՚Նիւանդութեան պատճառով: Այդ բոպէից սկսում էին նրա որդու համար ժամաները, խոստումները, ընդերկար թախանձուած շնորհները: Պ. Փողէֆ Օբերլէ այժմ համոզւում էր, այն բարգաւաճումից, որ ստացել էին իր գործերը հսկուսկեան երկրներում և նոյնիսկ աւելի հսկունեներում, օրինազանցութեան դէպքում իրա կամ իր գործակաւութների դէմ կազմուած տեղիկագրերի նուեղումից, ամենափոքր—առաջ ամենից աւելի ամբարտաւան—պաշտօնեաների դէպի իրան շուայլած ակնածութեան նշաններից, այն հեշտութիւնից, որով նա կարգադրել էր վիճելի հարցերը, ստացել թոյլտընութիւններ, ձկել կանոնադրութեան այս կամ այն կէտը—այս և շատ ուրիշ նշաններից նա համոզւում էր, որ կառավարական ոգին, ներկայ՝ ամեն տեղ, ամեն տեսակ տրիդի (galion) մարդկանց մի բազմութեան մէջ մարմնացած՝ նրան այլ ևս թշնամի չէր: Նրան ցոյց էին տալիս բարեացակամութեան աւելի դրական փաստեր: Անցեալ ձմեռ, մինչեւ լիւսիէնը Միւնինէր պանսիօնից վերադառնած՝ սիրուն, սրամիտ, դիւթիչ պարոււմ էր Ստրասբուրգի գերմանական սրահներում, հայրը խօսակցում էր մըտերմօրէն կայսրութեան ներկայացուցիչների հետ: Նրանցից մէկը, Ստրասբուրգի նահանգապետը, կոմս ֆոն Կառսըվից, ուրը հաւանականաբար գործում էր բարձրագոյն հրամանով, հասկացրել էր, որ կառավարութեան անախորժ չէր թուի բնաւ, եթէ պ. Փողէֆ Օբերլէ՝ իրը պատգամաւոր իր թեկնածութիւնը դնէր Ալզասի գաւառներից մէկում, և որ վարչութիւնը կիսապաշտօնապէս իր աջակցութիւնը չէր զլանայ բողոքող նախին պատգամաւորի որդուն:

Այս հեռապատկերը պ. Օքերլէին հրճուեցրել էր վերա-
կենդանացրել էր փառասիրութիւնը այդ մարդու մէջ, որ
մինչև այժմ իր արժանապատութեան, իր բարեկամութիւն-
ների, յիշատակների զահաբերութիւն համար շատ խղճուկ
կերպով վարձատրուել էր: Այդ հեռապատկերը՝ հանգամանք-
ների պատճառով ընկծուած պաշտօնեայի այդ խառնուածքին
տալիս էր մի որոշ նպատակ, վերապարձնում էր նրան իր
նախկին ուժն և պահանջկոտութիւնները: Պ. Օքերլէ նրանում
տեսնում էր իր ծածուկ արդարացումը: Նա մտածում էր, որ
շնորհիւ իր կորովի, իր արհամարանքի գէպի ցնորքը, իր պայ-
ծառատեսութեան՝ թէ ի՞նչ բան կարելի էր և ի՞նչ բան անկարե-
լի, կարող էր յուսալ իրա համար մի ապագայ, հասարակութան
կեանքի մէջ մասնակցութիւն, մի գեր, մի գործունէութիւն,
որը կարծում էր թէ վերապահուած է միայն իր որդուն: Եւ
այսուհետեւ, եթէ երբէք կասկածը գար պաշարել իր միաքը,
այդ պատասխանը բաւական էր ամեն տարակոյս չքացնելու,
բաւական էր իր վրէժը հանելու մի քանի տգէտ գիւղացիների
համբ նախատինքից, որ գիտմամբ նրան չտեսնել էին ձև-
ցնում, երբ հանդիպում էին ճանապարհին, և մի քանի սորագ-
րուրգցի կամ ալշէմցի ըուրժուաների վիրաւորանքից, որ
նրան բարեւում ու չէին բարեւում:

Ուրեմն իր որդուն պիտի ընդունէր հոգեկան մի այնպի-
սի տրամադրութեամբ, որը բոլորովին տարբեր էր անցեալից: Սյսօր, երբ գիտէր, թէ Ալզաս-Լոռէնի կառավարութեան մօտ
ինքը մեծ յարգանը ու համարում է վայելում, այնքան էլ փոյթը
չէր, որ իր որդին կէտ առ կէտ գործադրէր իր նախալէս
գծած ծրագիրը: Ժան իր հօր ծառայութիւն մատուցել էր ար-
դէն, ինչպէս Լիւսիէննը, որ մատուցանում էր: Նա եղել էր մի
շարժառիթ, մէկն այն պատճառներից, որոնք առաջ էին բերել
գերմանական վարչութեան կարծիքի այնքան ակնկալուած փո-
փոխութիւնը: Անկասկած նրա գործակցութիւնը գետ ևս օգ-
տակար կարող էր լինել, բայց ոչ անհրաժեշտ, և հայրը, իր
որդու Բերլինից գրած վերջին նամակների մէջ թափնուող մի
քանի ակնարկներից և լուելայն հասկացրուած մտքերից գու-
շակում էր—ակնարկներ և մտքեր, որոնք նրան էլ չէին զայ-
րացնում այնքան, որքան առաջ—որ իր որդին, գուցէ չհետեւ
այնչափ ինսամքով պատրաստուած գերմանական ատենակալու-
թեան ասպարէղին, և գուցէ հրաժարուի փաստաբանի մօտ
վերջին երեք տարուայ ծառայութեան պառլուներից և պետա-
կան քննութիւններից:

Սրանք էին ահա խորհրդածութիւններն այն մարդու, որը

իր կեանքում առաջնորդուել էր զուտ ևսասիրութիւնից, այն բովէին, երբ նա պատրաստում էր իր որդու այցելութիւնն ստանալ, որովհետեւ նա ժանին նշմարել էր՝ և տեսել, որ նա գաղիս է պարկի միջով: Պ. Օբերլէ իրա համար շինել էր տուել, սղոցարանի մի ծայրում, մի տեսակ վանդակ, կամ նաւի կամրջակ (paserelle), որտեղից կարող էր ամեն բանի վրայ հսկել: Մի պատուհանը նայում էր գէպի շինագործարանը, chantier-ն: Այդ պատուհանից պ. Օբերլէ դիտում էր շինագործարանը փայտ փոխադրող կամ այնտեղից փայտը տեղափոխող մարդկանց շարժումները: Մի ուրիշը՝ բաղկացած ապակեպատ կրկնակի շրջանակից, դորձարանատիրոջ թոյլ էր տալիս հետևելու հաշուապահներին, որոնք իր սենեակի համանման մի սենեակում, պատի երկարութեամբ նստած՝ աշխատում էին: Երբորդից, այսինքն ապակեայ միջնորմից, որ նրան բաժանում էր արհեստանոցից, իր աչքի առաջ պարզւում էր ամրող գործարանի անսահման սրահը, ուր ամեն տեսակ մեքենաներ, թոկերով շարժող սղոցներ, ատամնածե անիւներ և ատաղձագործի զանազան գործիքներ ուղղորդում, կարում, ծակում էին ծառի կոճղերը, որ մեքենապէս գրւում էին նրանց առաջ: Պ. Օբերլէ շրջապատուած էր ջրագոյն կանաչով ներկուած, ցածր տախտակորմերով, էլէկտրական, մանիշակածե լամպերով, ձախնատու կոճակներով, որ շարուած էին պղնձեայ մի սկզբեղի վրայ, որը կազմում էր գլասեղանի ճակատը, մի հեռախօսով, մի գրելու մեքենայով, սպիտակ ներկուած, թիթե աթուներով, որոնք ցոյց էին տալիս, թէ նա սիրում է յստակ գոյները, կեանքի յարմարութիւններ ընձեռող նորութիւնները և դիւրաբեկ տեսքով առարկաները:

(Կը շարունակուի)

ՔՆՆԵԳԵՏՈԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԵԽՈՍՈՒԹԻՒՆ

Դր. Ալանցեանի «Հայ հեղինակներ» զրքի առիթով:

Միջնակարգ գպրոցների համար յօրինուած այս դասագիրը գալիս է մեր քարորդ տար առաջ նորաբողբոջ, իսկ այժմ վաղաթառամ մանկավարժական գրականութեան մէջ՝ իբրև մի նոր երեսյթ՝ երկու զղալի պահանջ լեցնելու համար. աւելի բարձր նիւթեր տալու հասունացած աշտկերտների ընթերցանութեան համար և կենսագրական տեղեկութիւններ՝ այդ իսկ նիւթերն արտադրող հեղինակների մասին *). Սկսեալ այն օրից, երբ մեր մանկավարժական աշխարհի հորիզոնը խաւարեց, մենք տարաբախտաբ ձեռնաթափ եղանք և լրուած դրութեան մէջ թողինք նաև հարացագ հարցերը: Բայց մինչև երբ... Ռւստի թողինք թոյլ արուի գէթ այսոր՝ այս ձեռնարկի առիթով՝ դուրս գալ սովորական մատենախօսական ակնարկների նեղ սահմանից և աւելի ընդարձակ հողիդն բանալ ընթերցովի առջև:

Ընթերցանութեան դասագրքերի պատմութիւնը մի տեսակ բնորոշ պատմութիւն է պատմական որոշ շրջաններում տիրող իդէալների, այն սիրելի իդէալների, որոնցով այս կամ այն դարի առաջաւոր մարդիկ ձգտել են տոգորել նաև գեռահաս սերունդը և այն մտցնել իրանց փայփայած իդէալների աշխարհը: Երբ որ նոր արև ծագի մեր մանկավարժական հորից իգոնի վրայ, այն ժամանակ կը ներկայացնեմ մեր հարցասէր ընթերցողների համար պատրաստածս օտար և հայերէն ընթերցարանների համառօտ պատմութիւնը, իսկ հիմա՝ այդ արևի նշոյլներին՝ ի տեսք բաւականանում եմ մի քանի թռուցիկ ակնարկներով:

Թերթելով քաղաքակիրթ ու կիսաքաղաքակիրթ ազգերի մանկավարժական պատմութեան էջերը՝ տեսնում ենք, որ ինչպէս նրանց անցեալում, նոյնպէս և ժամանակակից յետա-

*.) Դոնէ ես այդպէս եմ հասկանում այս զրքի կոչումը: Յ.

մնաց ժողովրդների մէջ, սկզբները վարժապետներին բացառապէս կամ աւելի հետաքրքրել են ընթերցանելիք նիւթերի ձևը՝ քան բովանդակութիւնը։ Թէ այս գաղափարը որպիսի խոր արժատաներ էր զցել հաղարաւոր տարիների ընթացքում, այդ ցոյց են տալիս գերմանական երևելի մանկավարժներից մէկի՝ Դիստէրվէզի՝ հետևեալ խօսքերը. «Որովհետև ընթերցման մօտաւոր նպատակը նոյնիսկ ընթերցումն է, և ոչ թէ նախադասութեանց մէջ պարունակուած է ճշմարտութիւնը, ուստի ընթերցարանն այնպէս պէտք է կազմուած լինի, որ աշակերտի ուշադրութիւնը նախադասութիւնների բովանդակութիւնից նրանց ձեւերին դառնայ»։ Այս անհաւատալի էր այնպէս չէ, ընթերցող այն, բայց և այնպէս իրողութիւն է և առհաւութեան (ատաւիզմի) մի ուշագրաւ օրինակ։

Նաև մանկավարժական աշխարհի ապագայ բարօրութեան համար բարեբաղդաբար գոյութիւն է ունեցել հին, լուսաւոր Յունաստանը իր պանծալի Աթէնքով, որի գրական, գեղարուեստական, փիլիսոփայական ու քաղաքական բարձրագոյն կատարելութեան հրուանդանից ջերմ ու պայծառ շողեր են սփոռել կըրթական աշխարհի վրայ։ Առաջին անդամ յունական խորաթափանց ոգին էր, որ հասկացաւ թանձրացեալից վերացականին անցնելու ընական պահանջը. ժողովրդի և ազգի վեհագոյն զգացմունքների, մեծ ստրերի արտայայտիչ բանաստեղծներն ու իմաստասէրներն է, որ ըմբռնեցին թէ պէտք է գեռահաս սերունդի միտքն ու սիրտը զբաղեցնել ու արգասուաորել։ Հոռվմայեցիք՝ մինչև Յունաստանին տիրելը, ժողովրդական կրթութիւնը գրել կարդալու մէջ էին տեսնում, իսկ յետոյ միայն՝ յոյն մանկավարժների հետևողութեամբ՝ Հոմերոս ու Վիրզիլիոս տուին գեռահաս սերունդի ձեռքը և նրանց պարապեցրին պատմաբաններով։ Եւ որովհետև յոյնի իդէալը բարձրագոյն, բազմակողմանի կատարելութեան հասած մարդն էր, նա այդպիսի մարդեր պատրաստելու հետամուռ եղաւ. իսկ հոռվմայեցին՝ համաձայն իր իդէալների՝ պետական, ճարտասան մարդիկ պատրաստեց։ Այլ հին ազգերից պարսկականը աւելի ուշադրութիւն է դարձել ֆիդիքական կրթութեանը. սեմական ազգութիւններից մանկավարժական տեսակէտով իսրայէլացոց կեանքում գերակռնել է կրօնական տարրը, իսկ արաբական իդէալը գիտութիւնն է եղել. Հին Հայաստանի կրթական ուղղութեան վրայ ամենից շատ ազգած պիտի լինէին, նայելով յարաբերութիւնների սերտութեանը՝ նախ պարսկականը, ապա քրիստոնեայ Յունաստանի կրօնական իդէալները և այնուհետեւ միջնադարեան սրուաստիքական շկոլան ու մեր վերա-

ծընութեան շրջանում էլ՝ եւրոպական և գլխաւորապէս գերմանական մանկավարժական հայեացըները, անմիջական կերպով, կամ ոռուսականի միջոցով:

Գերմանական նախկին քրիստոնէական ուսումնարաններն էլ կրօնական ուսմունք էին տալիս, իսկ աշխարհիկ ուսմունքը վերապահուած էր ծնողներին: *) Ընթերցարանների խոկական շրջանը՝ նոյնիսկ Գերմանիայում, մէկ դարից շատ առաջ չէ սկսուել ժամանակակից գաղափարով ընթերցարաններ կարող էին երևան գալ ժողովրդական բանաստեղծութեան, տրուբատուրների շնորհով, որոնք ասպետական շրջանից յետոյ մի առանձին ազգեցութիւն ունեցան գերման ժողովրդի կրթական գործի վրայ: Ռէալական ուղղութեան կարապեաններ համդիսացան Բակոնը Անգլիայում, Ռատկլին Գերմանիայում, Կոմենսկին Բոհեմիայում 16 և 17 դարերում. և ապա, 18-րդ դարում, Ռուսաստանուայիլում Ռոբինզոնի պատմութիւնը մեծ ոգեսրութեամբ շատագովեց՝ իրրե լաւագոյն ընթերցարան, որովհետեւ այս գրքում նաև տեսաւ իր սիրելի իգեանները ներկայացրած, քաղաքակրթական պատմական աստիճանները վիպական ձևով այնպէս գրաւիչ կերպով պատկերացրած: Այս Ռուսոյին այս տեսակէտով ջերմածերմ հետևորդ հանդիսացաւ Գերմանիայում Հերթարտօլլերեան շկոլան 19-րդ դարի առաջին կիսից մինչև մեր օրերը: Այս մանկավարժական սրատեմով ուսուցման առարկանները դասաւորւում են բարդարակրթական պատմական աստիճաններին համապատասխան, իւրաքանչիւր տարեշրջանի գաստղերը կենտրոնական զիրք է բնուում գասլնթացի մէջ և, որքան որ հարաւոր է, կապակցութեան, առնչութեան մէջ է զրում վեր առած տարուայ գիտելիքների հետ: Գրական բաժինը պէտք է ժողովրդի գլխի ու սրաի, մտածածի ու բանաստեղծածի լաւագոյն և հաւատարիմ պատկերը ներկայացնէ: Բանաստեղծութիւնները պէտք է արձակ գրուածքների հետ կատակցուեն՝ իրար լրացնելու և պարզաբանելու համար: Փոխանակ շինծու, մտացածին յօւուածների՝ պէտք է տալ ժողովրդական կեանքից նկարագրութիւններ, պատմական հատուածներ ականատեսների կենսայի աղբիւրներից, որ առաջին հրապոյը ունին, հայրենազիտական ու աշխարհազրական նիւթեր, գործնական գիտելիքներից արհեստի, գիւղամանտեսութեան, բազարատնտեսութեան վերաբերեալ նիւթեր: Ընթերցարանը այսքան տարբեր ամփոփելով սակայն, չպէտք է ոչ հանրագիտական

*) Ճիշտ հակապանուկերը Ամերիկայում և այլ մի քանի երկրներում այժմ տիրող ձգտումների:

դառնայ և ոչ էլ ստրկական գեր կատարէ այլ և այլ գիտութեան վերաբերմամբ։ Այս դասագիրը պէտք է որոշ քաղաքակրթական շրջանի բազմակողմանի արտայայտիչը հանդիսանայ, ընթեցանութեան այնպիսի սիրելի գիրք դառնայ, որ ապագայում էլ, երբ այս օրուայ աշակերտը ընտանիքի հայր դառնայ, սիրով ձեռք առնէ այն։

Մարդիկ երկար ու ձիգ գարերէ ի վեր ուսուցման ինչպէս այլ, նոյնպէս էլ ընթեցարանների նիւթեր ընտրելիս ու դասաւորելիս՝ առհասարակ, զեկավարուել ևս նրանց գիրութեան ու գժուարութեան աստիճաններն ի նկատի ունենալով, որ, ինքն ըստ ինքեան, ուղեցոյց սկզբունքներ չէր կարող տալ մեր ձեռքը։ Իսկ երբ որ անցեալ 19-րդ դարում մարդկային իմացականութեանը յաջողուեց վերջապէս խելամտիլ, աւելի խորը թափանցել տիեզերական գաղտնիքների մէջ, երբ նատեսաւ որ բոլոր մարմինները՝ շնչաւոր թէ անշունչ՝ ենթակայ են եղել կազմակերպման (Էվոլիւցիա) կամ կազմալուծման (գիսովլիւցիա) անսասան օրէնքին, երբ բնագէտ ու հոգերան իրանց կողմից մանրակրկիտ զննողութեան ենթարկեցին բուսական ու կենդանական կեանքը, այն ժամանակ նաև մանկավարժական աշխարհի վրայ նոր լոյս ծագեց։ Կենդանաբանը տեսաւ, որ մարդը՝ կենդանական աշխարհում բարձրագոյն կատարելութեան հասած այս էակը՝ ինքն ըստ ինքեան մի կարճատել կրկնութիւն է կենդանական կեանքի պատմութեան։ Այս կենդանու սաղմը՝ իր գոյութեան ասածին վայրկանին մեզ ներկայացնում է այն կենդանական վիճակը, որ թագաւորել սկսեց հողագնդի վրայ, հէնց որ հսարաւոր եղաւ այդ։ Մարդկային սաղմի հետագայ օրերի և ամիսների կազմուածքն ու կեանքը հետզհետէ բարդուելով ներկայացնում են անցեալում ու ներկայումս գոյութիւն ունեցող կենդանիների հիմնական յատկութիւնները, ամենաստոր դասակարգից մինչև ամենաբարձրը։ Եւ ահա, երբ գիտութիւնը այստեղ հասաւ, այն ժամանակ արգէն գժուար չէր հոգերաններին հետամուտ լինել կենդանիների հոգեկան կեանքի համընթաց ուղղութեանը Փիզիքականի հետ։ Այսուհետև մանկավարժութեանն էլ մնում էր միայն մի քայլ յառաջ երթալ և ասել. բայց է որքան որ այսքան դարեր խարիսխեցինը խաւարի մէջ, գեռահաս մարդու մէջ բուռն ձգտում կայ նաև հոգով մի առ մի ապրիլ այն քաղակրթական—պատմական է եանքը, որ անցել է մարդկութիւնը չնայելով ահաւոր քայլայրումների, մեծամեծ յետաշրջումների։

Այս փրկարար խօսքը լսուեց Գերմանիայում Հերբարտօնէրեան շկոլայից, որի յառաջադիմական իդէաները սակայն

սկզբում իրեւ աղանդ ընդունուեցին պահպանողական մանկաւ վարժական աշխարհից: Բայց այդ երկու մեծ մանկավարժների եռանդուն աշակերտաները ոչ միայն չվհատուեցին, այլ գիտութեանց նորանոր յայտնութիւններով զինուած անյողողոդք յառաջ մղեցին այս մանկավարժական սիստէմը, որ ապագայի սիստէմն է: Ցիլերականները ի նկատի ունենալով իրանց ժողովրդական ուսումնարանների 8 ամեայ դասընթացը բաղաքարթական-պատմական նիւթերը 8 շրջանի վերածեցին և այնպէս զուրս եկաւ; որ կարծես թէ չափուած ու ձեռւած էր: Համառօտ ուրուագծենք այդ աստիճանները, որոնք իսկապէս Շտիպիքական շրջաններ են ներկայացնում:

Ա. Առասպելական դարաշրջան: 5—6 տարեկան մանկան մտքին համապատասխան է (Կոնգլուալ) նախադըմուրոցական շրջանում կենդանական կեանրից վեր առած առակները (Փաբլ), ապա հէրիաթները, որոնք շարունակում են նրա ուշք ու միտքը գրաւել նաև ուսումնարաննական կեանրի առաջին շրջանում 6—7 տարեկան հասակում: Նա սիրում է դեռ մնալ իր վաս երևակայութեամբ փայփայած առասպելական այդ հմայիչ աշխարհում, որ մարդկութիւնն էլ ստեղծել էր իր մանկական հասակում: Այս բանաստեղծութեանց մէջ դեռ սազմային զբութեամբ նիրհում է ազգային բանաստեղծութիւնը իր բազմազան ճիւղաւորութիւններով, այս հէրիաթների մէջ են ամփոփուած ժողովրդական կենդանի լեզուն, նրա պատմութիւնը, հաւատալիքը և օրէնքը, որ հետագայ դարաշրջաններում հետզինտէ իրանց արգասաւոր ծիլերն արձակում են բանահիւսութեանց մէջ: Այնուհետեւ մարդկութիւնը մտնում է:

Բ. Որտորդական կամ Ռոբինզոննեան շրջանը, երբ նաև պատանի մարդկութիւնը՝ արդէն սկսում է կառկածանքով վերաբերուիլ երևակայական երեսոյթներին և ձգտում է ոտք կոխել բնական երեսոյթների պատճառարանութեանց: աշխարհը: Ռոբինզոնի պատմութիւնը ներկայացնում է մեզ մարդու մղած ահաւոր ու տեսողական կոփւը բնական ոյժերի դէմ և վերջական յաղթանակը՝ չնորհի հնարագիտութեանց ու արհեստների: Ռոբինզոնին իսկապէս ալէտք էր զրկել կուլտուրական բոլոր միջոցներից, նոյնիսկ յիշողութիւններից և ապա թոյլ տալ որ նա ինքնուրոյն կերպով, սեփական ոյժերով իր զվարի ճարը տեսնէր: Ի հարկէ, այդպիսի մի անհատ շատ առաջ չէր գնալ այդպիսի պայմաններում, այս պատճառով էլ երեխ հեղինակը տուել է նրա ձեռքը այդ թէկ աննշան պատրաստի միջոցները: Որսորդական շրջանին յաջորդում է:

Գ. Դիւզազնեականը, որ նախընթացի ու յետագայ պատմական շրջանի միացուցիչ օղակն է կազմում: «Բաղել առանց ցանելու», ահա այս կեանքի նկարագիրը: Հետեարար պէտք է լինէին ցանողներ՝ երկրագործներ ու երկրագործութիւն: Բնական (վայրենի) կեանքին հետեւց զիւցազնականը. վայրի գիշատիչ կենդանիների ոյժը երբեմն հիացման տարրեայ դարձած լինելով՝ այժմ այդ զգացմունքը փոխանցուեց անսովոր ֆիզիքական ոյժով օժտուած հսկաներին ու տիտաններին:

Դ. Սահապնտական դարուն բացւում է մարդկութեան պատմական կեանքի դուսը: Հրէաների տիոպար նահապետական կեանքը իր պարզութեամբ ու գեղեցկութեամբ ի բնէ հմայել է ժողովուրդները, այդ կեանքին վերադառնալը սիրելի իղձ է դառել նրանց համար: Ժամանակի և տարածութեան հեռաւորութեան, ըանսատեղծական գրաւիչ նկարագրութեանց շնորհիւնահապետական այդքան իդէալականացրած կեանքի բնորոշ յատկանիշն է սակայն ընտանիքի հօրը և մօրը: Այս գարի գլխաւոր պարապմունքն է եղել խաշնարածութիւնը, որի հետ սերտ առնչութիւն ունին նահապետական կեանքի պայմանները: Բայց հասաւ ժամանակ, երբ հրէտական ժողովուրդի անդամները՝ ճակատագրի ըերմամբ՝ արդէն եղիպտոսում սկսեցին միմիանց ընդհանուր շահերով սերտ կապուած զգալ: Այս համայնակեցութիւնը նոր պայմաններ յառաջ բերեց և նոր շրջանի՝

Ե. Դատաւորների դարի սկիզբը զբեց: Մովսէսը այլիս հսար չունենալով ամբողջ ժողովովի մէջ ծագած վէճերը քըննելու, դատելու՝ զանազան աստիճանի օկնական դատաւորներ նշանակեց, իրան միայն գլխաւոր գործերի դատավարութիւնը վերապահելով: Եւ ահա այսպէս հիմք է դրւում պետական կազմակերպութեանը, որ սկահանջում էր հաստատուն բնակութիւն, որ իր հետ բերեց հողագործութիւնը: Ազգերի պատմական կեանքում դատաւորներին յաջորդում են դատաւորի գեր կատարող թագաւորները, որոնցից յետոյ բացւում է խսկական՝

Զ. Թագաւորի դարաշրջանը: Ժողովուրդը՝ իր զարգացման այս շրջանում բարձր է լինում ոչ միայն կոյր հնագանդութիւնից, այլ և նա զիտակցական հնագանդութիւնից անցնում է իրակատար ինքնազիտակցութեան աստիճանին: Նրա համար օրէնքը ճնշում չէ, այլ ներքին աղատութեան աղբերք: Նա խելամուտ է լինում, հասնում է այն զիտակութեանը, որ կատարեալ աղատութիւն վայելելու համար պէտք է որ մարդս ինքն էլ մերձաւորի աղատութիւնը, իրա-

ւունքը յարգէ։ Սակայն այդ ներքին ազատութիւնը տարաբախտաբար գեռ իդէալ է համարւում իրական կեանքի մէջ նաև մեր լուսաւոր օրերում։ տնատեսական արդարութիւնը, որ լցնելու է հարուստի և աղքատի մէջ գոյութիւն ունեցող անդունդը, կարծես գեռ անիրազործելի փափաքներ պիտի մնան մեր ժամանակակից կուլտուրական աստիճանում։ Թաղաւորների դարաշրջանում ծաղկած արհեստին ու արուեստին յաջորդեց

է։ Դործարանական կեանքը, ազգերը քաղաքական ազատութեան հետամուտ եղան։ Այս վերջին դարաշրջանը իր հետ բերեց անտեսական, քաղաքական, քաղաքատնտեսական նորանոր, բազմակողմանի, բարդ պայմաններ, որոնց չնորհով պետական կազմակերպութիւնը նորանոր աւելի արագ էվոլյուցիայի ենթարկուեց։ Մենք՝ այս մեծ ու խորհրդաւոր երևոյթների վկաներս՝ պարտական ենք դեռահաս սերունդը հասցնելով ժամանակակից կուլտուրական աստիճանին՝ մոցնել այդ ձրգութեամբ աշխարհը և, որքան որ հնարաւորութիւն ունենք, ուղեցոյց հանդիսանալ ապագայ կուլտուրական փրկաւէտ յոյշսերին համեմու մեծ գործում։

Քաղաքակրթութեան պատմական ընթացքը այսպէս ուրուագծելուց յետոյ, պէտք է դիմել որ, իհարկէ ոչ մի ժողովուրդ և ոչ մի ազգ անցած չէր կարող լինել այդ աստիճանները առանց մեծամեծ քայքայման, զգալի յետաղիմական յեղաշրջումների։ Այս ուրուագիծը ներկայացնում է մեզ միջին իդէալական դրութիւններ։ որքան որ մի ազգ աւելի է մօտեցել այս բնական զարգացման աստիճաններին, այնքան աւելի հիմնաւոր ու բարձր կուլտուրայի է հասել։

Մի ազգ, ինչպէս օրինակ հայոցն է, որքան էլ որ կուլտուրական ըուռն ձգտումներ ունեցած լինէր, իր պատմական կեանքի երկար ու ձիգ շրջաններում ահաւոր ցնցումների ենթարկուելու դատավարուած լինելով՝ կուլտուրական աստիճանները անսայթաք բարձրանալու հնարաւորութիւնից զուրկ պիտի եղած լինէր։ Մեր ազգը՝ ի սէր կուլտուրայի՝ իր չարաբաստիկ անցեալով կարող է մարդկութեան անդամների մէջ քաղաքակրթական զգալի կորուստների, մեծամեծ անկումների ենթակայ եղած տիպար ազգ հանդիսանալ։

Մի երջանիկ օր սկսած, և մի անրախտ օր փոշիների մէջ թաղած մանկալարժութեան ընդարձակ ձեռնարկիս ուսուցման նիւթերի բնական հիմունքները գտնելու համար՝ սրանից տասներկու տարի առաջ դիմեցի Paedagogische Studien մանկա-

վարժական հանդէսի միջոցով այն մեզ պէս կիսակուլտուրական ազգերի մանկավարժներին, որոնք ինձ պէս աշակերտելէին նոյն Հերթարա-Ցիլէրեան շկոլային։ Խնդրել էի լուսաբանել եթէ նրանք երբէք զբաղուել են այն խնդրով, թէ արդեօք ի՞նչպէս պէտք է որոշուէին մեզ պէս ազգերի կուլտուրական աստիճանները, երբ նրանք պատմական անցեալում ահագին ելեէջների են ենթարկուել. խնդրել էի պարզել, թէ ի՞նչպէս պէտք է այս կիսաբազաքակիրթ ազգերի պատմական շրջանները առնչութեան մէջ գնել համամարդկային շրջանների հետ։ Բաւական ժամանակ սպասելուց յետոյ սակայն, վերոյիշեալ հանդէսի խմբագիրը պատասխանեց, որ իմ առաջարկը ոչ մի արձագանք չգտաւ, և որ, քանի որ այս խնդրի սկզբնաւորութիւնը չէ արուած, նախ ես հանդէսին ուղարկեմ իմ խորհրդառութիւնները։ Եւ ես հարկադրուեցի վարանմունքս յաղթահարելով՝ ձեռքիս տակ գտնուած պատմական սուղ միջոցներից օգուտ քաղելով՝ մի այդպիսի փորձ անել նախ «Մուրճի» 1895 թ. 1—4 համարներում։ Որքան որ ինձ հսարաւոր եղաւ, քաշեցի մեր քաղաքակրթական պատմական կեանքի ուրուագիծը ընդհանրականին համընթաց, շատ անզամ լոկ նմանողութեան (անալոֆիայի) վրայ հիմնուելով։ Նոյն գրուածքով գիմեցի մեր բանասէրներին աշակցութիւն հայցելով և բանը տարաբաղդաբար հէց այստեղ էլ կանգ առաւ։

Ուշագրաւ երևոյթ է, որ այս մեծ խնդիրը չէ վրիպել հայ մանկավարժներիս *) հայեացքից։ Այս սկզբունքին գործնականապէս հետեւել են մեզանում Բահաթրեանցը, Աղայեանցն ու Մանդինեանցը իրանց ընթերցարաններով։ Առաջինը ներկայացրեց հէքիաթական աշխարհը, վերջինը գիւցազնական ու նահապետական աշխարհները, իսկ Աղայեանցը իր «Ռւսումն մայրենի լեզուի» ա. և բ. ընթերցարաններում հէքիաթների հետ խառն տալիս է դիւցաներգութեան ու նահապետական կեանքի վերաբերեալ նիւթեր։ Այսուեւեւ այս տեսակէտից ուշագրութեան արժանի են Յ. Նազարեանցի «Ընտիր հատուածները», մեր հայրենիքի անցեալի ու ներկայի կուլտուրայից խառն նիւթեր, զետեղուած մի զրգում աւելի հասունացած աշակերտաների համար։ Տէր Ղեռնդեանցի ընթերցարանները, որ

») Թող ներեն յանդգնութեանս այն հրապարակախօսները, որոնք հայ ազգի մէջ մի «միակ մանկավարժ» տեսան։ Մեծ կուրիօգ էր. գերմանական մանկավարժական հանրագիտարանը մի քանի հայ մանկավարժների անուններ էր տալիս, իսկ մերոնք այնքան խստապահանջ դուրս եկան, որ մեր ընդդունեցին։

Ե. Յ.

սկզբներում, եթէ կարելի է այսպէս առել միջազգային ընաւորութիւն էլիս կրում, հետզեաէ մօտեցան այն աղբիւրներին, որոնցից որ նիւթերը պէտք է քաղուէին: Նոյն շաւզով ընթացել է նաև Յ. Արարաջեանցը: Աղայեանցը շարունակում է չորրդ ապագրութեամբ իր «Ռւսումն մայրենի լեզուի» ձեռնարկում ու յաջորդ տարիների համար տալ զանազան արձակ ու չափածոյ ընտիր նիւթերի հետ նաև մեր ժողովրդի կեանքից նկարազրութիւններ գիւցազներգութիւններ ու հէրքիաթներ: Կ. Կուսիկեանցի և Լ. Սարգսեանցի «Մայրենի խօսքը»՝ երբորդ և չորրորդ տարիների համար կազմուած՝ հմտորէն ընտրուած այդպիսի նիւթերից զատ պարունակում է իրբեկուլտուրայի արտայայտիչ նիւթեր մեր առաջին վերաճնութեան շրջանից՝ հինգերորդ դարից՝ և նահապետական կեանքից վեր առած հատուածներ և հայրենի աշխարհից ու կեանքից նկարագրութիւններ:

Արդ՝ այս ասպարեզում զործողներիս առջև զրւում է հետևեալ խնդիրը. արդեօք ժամանակը չէ հասել մեր ցրուածոյթերը կենտրոնացնելու մեր ցիր ու ցան եղած կուլտուրական նիւթերը հաւաքելու, ընտրելու, դասաւորելու, իրար հետ ընտեկան առնչութեան մէջ զնելու, որպէսովի մեր գեռահաս սկրունդը միջոց ունենար աւելի խորը թափանցելու իր ազգի պատմական անցեալի մէջ, ճանաչել և գիտակցօրէն գնահատել սովորէր նրա կեանքի կուլտուրական անընկճելի ձգտումները յուսալի, խրախուսական, հատու երևոյթները: Բանասէրների ու մանկավարժների մի ձեռնհաս ընկերակցութիւն, բաղկացած այս մեծ պահանջի կարևորութեանը խելամուտ և այս մաքով ոգեսորուած մարդկանցից *) կը կազմէր մի մանրամասն ուղեցոյց ծրագիր, աշխատանքը կը բաժանէր մասնադիտական տեսսակէտներով և այսպիսով հնարաւորութիւն կ'ունենար մի արդասաւոր, գեղեցիկ գործ առաջանելու: Եւ այն ժամանակ՝ այսպիսի լուրջ և միահամուռ աշխատութեան ընթացքում՝ երեան կը գային այն նիւթերի զգալի պակասութիւնները, որոնք անհրաժեշտ էին այս կամ այն կուլտուրական պատմական դարաշրջանի արտայայտիչ պատկերը լրացնելու, ամբողջացնելու համար: Կը զգացուէր պահանջ այս կարեւոր պակասորդները անալոգիայի հիման վրայ, այլ աղգերի անցեալից վեր

*] Անհաւանական չէ, որ արդէն գոյութիւն ունեցող ընթերցարանների յօրինողներից մի քանիսը այս առաջարկութեան համակրէին և միացնէին իրանց աշխատութեան արդիւնքները ընդհանուր զործին, որոշ պայմաններով:

առած նիւթերով լրացնելու։ Ի՞նչ դրութեան մէջ էլ որ այսուհետև մնան այն ուսումնաբանները, ուր հաղարաւոր հայ մանուկներ են սովորում, մենք չենք կարող այլևս անտես առնել կամ յետաձգել այս կարևոր աշխատութիւնը։ Ահա, իմ համոզմունքը։

Այժմ գառնալով այս խորհրդածութեանցը առիթ ներկայացնող «Հայ հեղինակներ» ձեռնարկին՝ մեզ առաջնորդող ոկրպունքները պարզելուց յետոյ՝ հիմա հեշտ կը լինի որոշել նրա նշանակութիւնն ու դիրքը արդէն գոյութիւն ունեցող ընթերցաբանների շարքում և ուրուագծածս ծրագրի մէջ։ Պ. Վանցեանի գիրքը հետեւեալ հատուածներիցն է բաղկացած։ 1. Բանաւոր գրականութիւնն, 2. Գրականութիւնն, 3. Գերածնունդ, 4. Արելեան բաժին, 5. Ազգագրութիւնն, 6. Պատմական, 7. Ճամբորդական և 8. Բանաստեղծութիւններ։ Յօրինազը յառաջաբանը այս տողերով է սկսում. «Մեր նպատակն է երկու կամ երեք ամփոփի հատորներում տալ մեր գրականութեան և լեզուի զարգացման պատմութիւնը, հեղինակների կենսագիրներով և նրանց լաւագոյն երկերից հանած նմուշներով՝ սկսած հնագոյն անցեալից մինչև նորագոյն ժամանակները»։ Ուրիմնապ. Վանցեանը խոստանում է մեզ՝ այս և հետեւեալ գրքերում, ներկայացնել հայ գրականութեան ու լեզուի զարգացման պատմութիւնը։ Բայց խնդիրն այն է թէ՛ նա ի՞նչ սկզբունքներով պիտի ղեկավարուի իր ծրագիրը իրադրութելու համար։ Եթէ գրականութեան ու լեզուի զարգացման պատմութիւն է այս, ապա ուրիմնական հետեւեալ հատորներում պէտք է ղետեղուած լինին գրականութեան աւելի՛ բարձր արտագրութիւններ, թէ՛ բովանդակութեան և թէ ոճի տեսակէաններով։ Եւ յօրինողը հետեւեալ հատորներին վերապահել է Խրիմեանի, Այվազովսկու, Սագաթեանի, Զօպանեանի, Մասենեանի, Նար-Դոսի և այլոց երկերից հանուելիք նմուշները։ Ալիշանից, Պէշիկթաշլեանից, Դուլեանից, Ռ. Պատկանեանից, Շահաղիկից, Ահարոնեանից... յետոյ վերոյիշեալ հեղինակները տալով՝ արդեօք պ. Վանցեանը հետեւղականութեամբ վարուած կը լինէր։ Այս դասաւորութիւնը ինձ համոզիչ չէ թւում։ Եւ եթէ վեր տոած նմուշները արելեան ու արևմտեան հայաբարբառների զարգացումը ներկայացնելու համար են, հապա ինչու, օրինակ՝ Պարոնեանից վեր տոած նմուշները իսկական բարբառով են, իսկ Ալիշանինը, Սրուանձտեանինը՝ արելեանի վերածուած։

Գալով այս առաջին հատորի նիւթերի գասաւորութեանը՝

«Բանաւոր գրականութիւնից» *) յետոյ, ըստ իս՝ պէտք է դըրուէին «Գրականութիւն» հատուածի տակ՝ ա.) Առաջին վերածնունդ ե. դարում, բ.) Անկում, գ.) Նորագոյն վերածնունդ արևմտեան և արևելեան հայերիս մէջ առանձին-առանձին։ Պ. Վանցեանի ստորաբաժանմունքները պարզ ու հետեղական չեն։ 5-րդ «Աղքագրութիւն» 7-րդ «Ճամբորդական» հատուածները թէև հետաքրքրական նիւթերից կազմուած, բայց իր սիստեմական նիւթերի հետ անմիջական առնջութիւն չունին։ 6-րդ «Պատմական» հատուածը՝ հնից ու նորից պատմական հատուածներ ու երկու պատմական տեսութիւններ է պարունակում, իսկ 8-րդ և վերջին հատուածը մի ժողովածու է մեր նորագոյն կովկասեան բանաստեղծներից՝ բացի Շանթից, Զարքից («կիսակովկասցիներից») ու մի քանի՛ օտարազգի գրականութիւնից վեր առած նիւթերից։

Պ. Վանցեանի ձեռնարկի նիւթերի ընտրութեան ու դասաւորութեան վերաբերեալ զուտ գրական ինսգիրները վերապահելով աւելի ձեռնհաս բանասէրների քննադատութեանը, ես իբրև մանկավարժ՝ այս գրի մէջ չեմ տեսնում հայ լեզուի ու գրականութեան գարգացման պատմութիւն, այլ միջնակարգ դպրոցների չորրորդ կամ հինգերորդ գասարանների։ տակաւին տհաս աշակերտների մէջ դէպի ազգային գրականութիւնն և հեղինակները հարցասիրութիւն առաջացնող մի ուշագրութեան արժանի աշխատութիւն։ Դրականութեան պատմութիւնից մենք կը սպասէինք որ նկարագրուէր հեղինակների ու նըրանց երկերի զարգացման ուղին, այն ազգակները հայ և օտար գրականութիւնից, որոնց շնորհով նրանց երկերը այս կամ այն արտայայտութիւնն են ստացել։ Մենք չենք տեսնում համեմատութիւններ, քնորոշումներ ևայլն։ Այս՝ իր տեսակում մեր դասագրքերի մէջ միակը՝ ապազայում աւել էլ կը գնահատուէր, եթէ իւրաքանչիւր հատուած աւելի ճոխ ու բազմակողմանի լինէր («Բանաւոր գրականութիւն» և «Գրականութիւն» հատուածները, ըստ իս՝ աւելի կարօտ են կատարելագործման։) Յետոյ՝ մեր հեղինակների կենսագիրները շատ անհաւասար արժէք ունին։ մէկինը բաւականին հետաքրքրական, իսկ միւսինը՝ որ պակաս արժէք չունի, չոր ու ցամաք։ Այս հեղինակներին գեռ անտեղեակ աշակերտների մէջ մնայուն, տեղական հարցասիրութիւն առաջացնելու համար պէտք էր աւելի պարզ

*) Արևելեան հայոցս մէջ գործածուող «Բանաւոր գրականութիւն» կամ «Անգիր գրականութիւն» գարձուածները աւելի լաւ չէր լինի «անգիր բանահետառութիւն»-ով փոխարինել։

բնորոշել իւրաքանչիւրի գործունէութեան նկարագիրը, բարձրակէտը և այս շրջանի արգասիքները. ինչ որ անհնարին է, երբ մի երկու նմուշներ են առաջարկում, ինչպէս, շատ անզամ, այս ձեռնարկի մէջ:

Դիտեմ որ այս ամենը մի մարդու ոյժերից վեր է, կամ պահանջում է մի անհատից երկար ու ծիկ տարիների ծանր և անխոնջ աշխատութիւն: Բոլոր ասածներից կարծեմ ակներն է, որ հաւաքական ու բազմակողմանի ոյժերը՝ այս ասպարէզում, աւելի կատարեալ գործ կ'առաջնէին (*): Իսկ եթէ այս նիւթերը լրացնելով զասաւորէինք քաղաքակրթական պատմական աստիճաններով մի՞թէ աւելի ազդու չէին լինի նրանց տպաւորութիւնները: Օրինակ՝ «Ռուկեղարի վերածնութիւն» հատուածը կազմէինք «Հայ հեղինակներ», «Քրականութիւն» հատուածից վեր առնելով «Հայոց գրերի գիւտը», «Քրիստոնէական գրականութեան սկիզբն ու բարգաւաճումը», պատմական հատուածից «Վասակի վերջին օրերը», աւելացնէինք սրանց վրայ Ռ. Պատկանացնից «Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը», «Եղիշէն» և այլն ու այսպէս շարունակէինք առնչունակ նիւթերը խորացնելով ու կենտրոնացնելով որոշ իդէաների, որոշ զզացմունքների աշխարհի շուրջը:

Այստեղ վերջ եմ տալիս խօսքիս այլևս հնարաւորութիւն չունենալով մտնել մանր գրախօսական դիտողութեանց մէջ և շեշտում եմ, որ պ. Վանցեանի «Հայ հեղինակները» գնահատելի և դասաւուներին յանձնարարելի աշխատութիւն է: Թողլ յօրինողի այս «առաջին փորձը» փորձեն ուսումնարանները և տեսնեն, թէ այս գիրքը ո՞րքան հարցասիրութիւն առաջացրեց աշակերտների մէջ դէպի հայ հեղինակներն ու նրանց երկերը:

Յ. Տէր Միւրաքեանց

«Միրու երգիչ»—Նահապետ Քուչակի երգերը—մշակեց Գէորգ Ասատուր.
Թիֆլիս, 1905, գ. 40 կոպէկ:

Մեր հին գրականութեան ամենախնդնատիպ, ամենաքնաքուշ ու գունագեղ ծաղիկներից մէկի, Նահապետ Քուչակի՝ եթէ ոչ յայտնագործելը, գոնէ կատարեալ լոյսի մէջ դնելը

*) Վերջերս Թիֆլիսում այս բանի վրայ մտածողներ եղել են. մի անգամ էլ խորհրդակցել են մի քանի անձեր:

պէտք է վերագրել պ. Արշակ Զօպանեանի: Ճիշտ է, նրանից առաջ Տէվլանց և Կոստանեան, իրանց «Հայերգով» և «Միջնաշղարեան հայոց տաղերի ժողովածու»-ով հարթել էին նրա ճանապարհը, բայց զիսաւորապէս պ. Զօպանեանն է, որ «Նահապետ Քուչակի Դիւան»-ի առանձին հրատարակութեամբ Քուչակի դէմքին տուեց իր իսկական նշանակութիւնը:

Նրանք, որոնք հետաքրքրութիւնն ունեցան Քուչակի տուղերը կարդալու ուշագրութեամբ, առանց խրտնելու նրանց արտաքին, քիչ ռամիկ, օտարոտի կեղկից, կարող պիտի լինին համարձակ հաստատելու, որ Քուչակը մէկն է մեր մեծագոյն բանաստեղծներից: Քուչակ բանաստեղծ է յղացումով, ներշնչումի անկեղծութեամբ, պատկերների զմայլելի երաժշտութեամբ, բանաստեղծ, վերջապէս, մինչև հոգու խորքը:

Արդ, պ. Գէորգ Ասատուր ստանձնել է մի մեծ պատասխանաւութիւն, մշակել Քուչակը, աւելի հասարակ լեզուով՝ սրբագրել գեղեցկացնել:

Առաջին հարցը, որ բնականորէն ներկայանում է մեղայս գէպքում, այն է, թէ, պ. Ասատուր մէնի եթէ ոչ աւելի—որովհետեւ մի գործ սրբագրելու համար պէտք է հեղինակից աւելի օժտուած լինել—զոնէ Քուչակի չափ բանաստեղծական թոփչը:

Աւելի քան կասկածելի է: Որովհետև «Դիւանի» հեղինակը կրում է իր մէջ հոգու այն թրթուումը, յուզումի այն կայծը, որ ամեն հասարակ մահկանացուի յատուկ չէ:

Եթէ պ. Ասատուր իր յաւակնութիւնը սահմանափակած լինէր Քուչակի լեզուի խորթութիւններն ու օտարարանութիւնները «մշակելու» մէջ, գործը դարձեալ բաւական դժուար, բաւական փափուկ գտնելով հանդերձ, ներողամիտ պիտի լինէինը:

Ցրանսիական գրականութեան մէջ կայ մի տխուր տիպ, որը անհամացած է, դիտէք, ինչու, որովհետև հազուազիւտ անմտութիւնը ունեցած է սրբագրելու, պ. Ասատուրի ասութեամբ, «մշակելու» ... Շէկսպիրը: Այդ երանելին գտնում էր, որ անգլիացի հանճարը բաւական ներդաշնակ, բաւական կանոնաւոր ու յատակ չէ: Ու ֆրանսիական հասարակութիւնը մի աւելի կատարեալ Շէկսպիրով բախտաւորացնելու համար, խեղաթիւրեց հանճարը:

Ցոյց տալու համար թէ ի՞նչպէս է «մշակում» պ. Ասատուր, առաջ բերենք օրինակեր:

Լուսնին, պարծենաս, ասեն, «Լուս կուտամ աստնվորիս».

Ահա հողեղին լուսին ի զրկիս ե'ւ երեսն երեսիս.

Թէ՛ չես աւտալ այս գերուս, յնտ տանիմ բգփէշ կապայիս,
Վախիմ սիրոյ տէք լինիս, լուս պակաս տաս աստնլորիս:
Այս գոհաբը ահան թէ ինչ է եղել պ. Ասատուրի գրչի
տակ:

Հէյ, մի պարծենար, լուսին երերուն,
Թէ սիրուն քեզ պէս ոչոք չէ շողրւմ;
Երկրի լուսինք՝ ք'զանից սիրուն,
Թուշ թրշիս կրպած կրծքիս է զողուժ:

Լուսին, մի ժամանակ կասկածով այդպէս,
Եթէ ոչ կարաս կը զբցէմ ուսից,—
Վախում էմ, սիրես դռւ էլ խննիլ պէս,
Խաւարիս, զրկիս աշխարհը լուսից:

Բաղդատութեան դնել անզամ կարելի չէ այս երկու բա-
նաստեղծութիւնները: Նախ՝ ինչ որ Քուչակ ասել է չորս տողի
մէջ, պ. Ասատուր ամփափում է կրկին տողերի մէջ: Տարբերու-
թիւնը անհուն է. մի բանաստեղծութիւն որքան խիտ է, որքան
սեղմ, այնքան ուժեղ է և արտայայտիչ: Բանաստեղծութիւնը,
հրապարակախօսութիւն չէ, որպէսզի կարելի լինի առանց ան-
պատեհութեան ընդլայնումներ անել, վերից վար, վարից վեր
ձգուել, վոռուել: Այսչափ ձեւ տեսակէտով: Գանք հիմա յղա-
ցումին, ողիին: Քուչակ այսպէս է բանաստեղծում: Լուսին,
ասում են թէ դռւ պարծենում ես, որ աշխարհին լոյս ես տա-
լիս. բայց, տես, հողեղին լուսինը զրկիս մէջ է, երեսն էլ երե-
սիս. եթէ չե՞ս հաւատայ ինձ նման մի գերու (սիրոյ գերի, որ-
քան ուժեղ է բացարութիւնը) խօսքին, կապայիս փէշը ետ
տանեմ: Բայց ոչ, ոչ, այդ բանը չեմ անի, որովհետև վախենում
եմ, որ դռւ էլ սիրոյ տէք կը լինես, կը սիրահարուես, գլուխդ
կը կորցնես ու աշխարհին պակաս լոյս կը տաս:

Սիրոյ այս զմայլելի, քնքուշ, միամիտ, թեթև երզը՝ պ.
Ասատուր դարձրէլ է ուռուցիկ, ջրալի, յոխորտ ու ծանր: Նախ
այդ սկզբնաւորութիւնը.

Հէյ, մի պարծենար, լուսին երերուն.

Հրաշալի չէ այդ «երերուն» ածականը. և մանաւանդ այդ
բացականչական չեշտը: Յետոյ «ոչոք չէ շողում»-ը. յետոյ
յանդ բերելու համար «կրծքիս է զողում»-ը: Քուչակ ասել է
«հողեղին լուսին», պ. Ասատուր՝ «երկրի լուսին». մի նմանու-
թիւն, որ մանքան գործ է ածուել, որ մաշուել, սպառուել է:
Յետոյ երկրորդ տունը. «Լուսին մի ժամանակ եայլն... եթէ ոչ
կարաս եալին:» Քուչակի մէջ այդպիսի սպառնական ձեւ չկայ.
այդ սպառնանքը և՛ ծիծաղելի է, և՛ կոշտ, և՛ սամիկ: Ընդհա-

կառակը նա վախենում է, որ եթէ իր կապայի փէշը ետ տանի, լուսինն էլ նրա պէս սիրոյ լրակից կայրուի, նա էլ սիրոյ տանջանքներին կենթարկուի և «պակաս լուս կը տայ»։ Այս վերջին բացատրութիւնը եղել է պ. Ասատուրի գրչի տակ՝ «խաւարես, զրկես աշխարհը լուսից», ինչ որ դարձեալ ծամծըմուած է և անտանելի. բացի այդ՝ «պակաս լուս տաս»-ի մէջ, այնպիսի երանգներ կան, այնպիսի նրութիւններ, որոնք պէտք է զգալ: Քուչակ չի ցանկանում որ լուսինը հչ թէ խաւարի, այլ իր լոյսից մի կաթիլ անգամ կորցնէ. լուսնի համար այդտեղ խորունկ խանդաղատանքի մի շեշտ կայ, որ բանաստեղծութիւնը աւելի յուզիչ է դարձնում: «Պակաս լոյս տաս» և գուցէ, այն ժամանակ, սիրով հարբած սիրահարները քո կաթնագոյն շողերի տակ չկարողանան իրանց երազանքը պալուցընել, չկարողանան ըմբոշինել, վայելել քո եթերային, հեռաւոր ութաւիշէ գգուսմնքները:

Ահա մի նմուշ, «այլաբանական» մասից:

Արեգակն ու լուսինկան խմեցին եւ եղան մախմուր.¹⁾

Աւաւօտոն ի վերայ եկ, լոր²⁾ եղան երկու թուր ե՛ւ ի թուր³⁾

Աստղերն ալ առաջ ելին, լուսնելին ասին, դուն ի լուր⁴⁾.

Ատոր արեգակ ասին, որ ցաթէ ի սար եւ ի թուր:

Այս պատկերալից այլաբանական տաղը՝ դարձել է մի պարզ ու գոեհիկ առակ.

Լուսնի մէջ ու արեւի

Մէկ օր ծագեց թունդ կորիւ

(կոնծել էլն երեւի),

Եւ աստղերը ցան ցր'ւ

Տժգոյն երկնի երևին՝

Ուզեցին նրանց խաղաղել,

Թէ՞ «քո բան չէ, այ լուսին,

Արեւի դէմ կորիւ մղել».

Տիրեց լուսին, գալիսցաւ,

Փախուստ տըւեց դողալով:

Ծագեց արեւն ու անցու

Արեւելքից շողալով:

Ահա և մի օրինակ «պանդիստի երգերից»:

Զիմ եարն էմանէթ կուտամ, ի վարդին մէջ պանեցէր.

1) Թունդ հարբեցան. 2) յանկարծ. 3) միմեանց դէմ սըհըլ բաշեցին.

4) լուր:

թէ երթամ ու շուտով դառնամ, զամանաթս ի տէք հասուցէք.

թէ երթամ խարիստուկ մեռնիմ, վարդն ձեզ՝ գտէրն յիշեցէք:

Այժմ տեսնենք պ. Ասատուրի «մշակածը»:

Նայեց պանդուխտն իր սիրածին կանչեց այսպէս.

«Ինձ նայեցէք»:

Ես թողնում եմ իմ հարն աւանդ, վարդերի մէջ փայփայեցէք.

Եթէ դառնամ, տիրոց հասցրէք աւանդն անխախտ իր կաթողին,

իսկ թէ մտնեմ, աւանդր ձեզ, ողորմի տուէք տիրոց հողին...»

Թուչակը ուր, պ. Ասատուրը ուր: Առաջինն ասում է իմ եարը «վարդի մէջ պահեցէք». երկրորդը՝ «վարդի մէջ փայփայեցէք». առաջինը՝ «թէ երթամ խարիստուկ մեռնիմ, վարդը ձեզ՝ գտէրն յիշեցէք.» երկրորդը՝ «իսկ թէ մեռնեմ աւանդս ձեզ, ողորմի տուէք տիրոց հողին...» Նախ պէտք է լինի «հոգուն» և ոչ «հոգին», որովհետև «հոգին ողորմի տալ» հայերէն չէ. և յետոյ, «յիշեցէք»-ը, պարզ ու յուղիչ «յիշեցէք» առել է «հոգուն ողորմի տուէք» պառաւական ձեւը...

Նոր օրինակներ տալ աւելորդ ենք համարում: Մենք պատահական նմոյշներ բերինք Թուչակի տաղերի իւրաքանչիւր տեսակից. «սիրոյ», «այլարանական» և «պանդխտի» երգերից: Բաղրատութիւնը, անկասկած, պ. Ասատուրի համար անգութէ:

Տ. ԶԱՄԵԴԻ

Ա. Մարգար. «Երախտի», պատմուածք. 1904, Բագու, գինն է 10 կոպէկ:

Ինտելիգենցիայի, իհարկէ, ոչ բուրժուական ձգտումներով տոպորուած ինտելիգենցիայի՝ գաւառներում և գիւղերում գործելու հարցը, ուսւ գրական որոշ ուղղութեան գործիչների ազգեցութեան տակ արծարծուել է և մեր մամուլի և գրականութեան մէջ: Մեզանում նոյնպէս հնչել է. «դէպի գաւառ, դէպի գիւղ» յայտնի կոչը: Սա մի հարց է սակայն, որ ինչպէս ամեն հասարակական երևոյթ՝ կարելի չէ միայն զգացմունքներով վճռել:

Եթէ նոյնիսկ իբրև արսիօմ ընդունէինք, թէ մտաւորականութեան գիւղերում գործունէութիւնը աւելի նպատակայարմար է—ինչ որ գժուար է հաստատել, որովհետև քաղաքներում, ինդուստրիական կենտրոններում անտեսական և սոցիալական յայտնի պայմանների շնորհիւ ազատազրումի խօսքին համար աւելի նպաստաւոր հող կայ—պէտք էր դարձեալ մեր ուշադրութիւնից չվրիպէր այն էական կէտը, թէ գիւղերը ո՞ր առ

տիճան բեղուն հող կարող են մատակարարել ինտելիգենտ դործիչի «բարի» խօսքի համար:

Մարդը մի վերացական ըմբռնում, մի արստրակցիա չէ, այլ մտաւոր, բարոյական, ֆիզիքական պահանջներ ներկայացնող մի օրգանիզմ: Արդ, տարեք այդ օրգանիզմը մի այնպիսի միջավայրում, ուր նա իր պահանջները գոհացնելու հչ մի հնար, ոչ մի միջոց չունի, նա այնտեղ հակառակ իր բարի կամեցողութեան, օգտակար լինելու անկեղծ ցանկութեան, արմատ չէ կարող բռնել: Մինչև որ մեր գիւղերը չօժտուին գործիչների իմացական, բարոյական կեանքի պահանջներին բաւականութիւն տալու գոնէ միջակ յարմարութիւններով, ինտելիգենցիայի չուն դէպի երկրի խուլ անկիւնները՝ ցանկալի, բայց անիրագործելի մի իդէալ պիտի մնայ:

Ահա այս հարցն է, որ պ. Ա. Մարգար փորձում է լուծել իր «Երախտիք» պատմուածքով: Բայց այս կարգի հարցերը, հազեւթէ այդ միջոցով կարելի լինի լուծել: «Երախտիքը» մասնաւորապէս իրբն որոշ ձգտումի, որոշ գաղափարի պաշտպանութեան համար արտադրուած գործ, ընականաբար թոյլ է գեղարուեստական հիւսուածքի կողմից: Լաւ կը լինէր, որ գրական ասպարէզ իջնող մեր սկսնակ ոյժերը, փոխանակ թէզաներ պաշտպանելու, տենդենցիօգ գրականութիւն անելու, ջանային անկեղծօրէն պատկերացնել մեղ՝ իրանց զգացած, ապրած, դիտած կեանքը:

Տենդենցիօգ գրականութեան մէջ յաջողելու համար հարկաւոր է միծ տաղանդ:

Տ. Զ.

Նար-Դոս. «Ենորածին մանուկը». Վաղարշապատ. 1904. թ. գիւն է 3 կ.:

Նար-Դոսը, որոշ շրջաններում, բելեկը իստ գրողի անուն է վայելում... Բայց, յամենայն դէպս, այն «պատմուածքը»—Նորածին մանուկը—որ ունենք մեր աչքի առաջ, գեղարուեստական հշնչ չի պարունակում: Շաբլոն նկարագրութիւններ, խճողուած օտար, թուրքերէն անհամար բառերով, ինչպէս «քուրք, գերիա չփլախ, դումար, ջիբ, դասար, ջիթ, խալիչ, հախ, եավնջի, եայլն» և մտացածին, շինծու, կեղծ դրութիւններ, որոնք իբր թէ պէտք է «կեանքի պատկեր» կազմին—ահա ի՞նչ է «Ենորածին մանուկը»: Նար-Դոս մի աղքատ, չքաւոր մօր խեղքամահ է անել տալիս իր գաւակին, իր արդանդի պտուղին: Այդպիսի եզակի դէպը, մեր երկրում դժուար է ըմբռնել: Եւ այն էլ ի՞նչպիսի մօր

կողմից—որ արդէն ունի չորս զաւակներ. այսինքն թէ նա գոնէ մի խարուած աղջիկ—մայր էլ չէ, որ իր յանցանքը ծածկելու անողոք հարկում գտնուէր... այլ «մնայր»:

Սուրէն

Մ. Տէր-Գևոնիկենսի. «Թօւղբա-Լաւաշի գոկր» պատկեր. 1904. Բագու գին, 3 կողէկ.

Յայտնի է, թէ ինչպէս երեխաները՝ տղէտ ծնողների շնորհիւ, մնութապաշտութիւնների աղդեցութեան տակ մեծանալով, յետոյ անկարող են լինում թօթափել իրանց անիմաստու ծիծաղելի վախերը: Այսպէս օրինակ, ժարդիկ, որ կարող են աներկիւղ գաղանների դէմ զնալ, երկիւղ են կրում մկնից, գորտից ևայլն: Կամ ուրիշներ, որ ցերեկով ամեն վտանգ արհամարհում են, մութն ընկնելու պէս վախենում են քաջքերից, դեռից և զանազան ոգիներից: Այդ անխմաստ վախի արմատը պէտք է փնդուի երեխայութեան հասակում տրուած յոռի կըրթութեան մէջ:

Վերոյիշեալ պատկերը՝ ահա այդ ծնողական սխալ դաստիարակութեան դէմ կոռւելու նպատակ ունի: Պատկերի միակ արժանիքը դրանումն է:

Սուրէն

Արևան Միլվեսր եւ Մարտէ Պրէփօ. «Յանցաւոր մօր խոստվանութիւնը». «Ընկերակից» Թարգմ. ? Թիֆլիս, 1905, գինն է 5 կոպ.:

Մենք անկարող ենք ըմբռնելու, թէ ի՞նչ մտքով են դեկավարուել վերոյիշեալ ֆրանսիացի երկու հեղինակների այս բոլորովին աննշան էջերը ներկայացնելով հայ ընթերցողներին: Նիւթի ոչ ընտրութիւնն է յաջող և ոչ թարգմանութիւնը: Թարգմանութիւնը առ հասարակ անզրագէտ է: Մի օրինակ. «Տեսէք, չհակառակէք նրան, և, երբ նա երբ և իցէ կը տրամեցնի ձեզ իւր կամասիրութիւնով, որը այն անսպասելի անկարգութիւններից մէկն է, որոնք ինձ և ամենին էլ, որոնք նրան շատ մօտ են եղել, լաւ ծանօթ է և այդ ժամանակ նրան. չը հայնոյէք, իսկ աւելի լաւ է պինդ գրկէք, —կարծում եմ, որ այդ նըրան հանգստացնելու միակ միջոցն է:»

Իսկ, ի ըրութիւն ամենայնի, սրբագրութիւնը կատարուած է չափաղանց անխմամ:

Սուրէն

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾԾ ԳՐԲԵՐ

- 1) Վլագ զրականութիւն. № 6. Է. Նինօշվիլի. «Գօղիա Ռւիշվիլի» (պատմուածք), հրատ. Գ. Աւանեսյանի, թարգմ. Դ. Կ., Թիֆլիս, 1905 թ. գինն է 8 կոպ.:
- 2) Թովմաս Բոցարիս, հրատարակութիւն «Արծուի», Բագու, 1904 թ. գինն է 5 կոպ.:
- 3) Մեր էժանագին գրադարանը, հրատ. տիկլ. Զարէլի. Բ. Պէնկօ, «Մեծ տօն» (ռուսերէնից) Ս.-Պետերբուրգ, 1904 թ. գինն է 10 կոպ.:
- 4) Մեր էժ. գրադ., հրատ. տ. Զարէլի. «Նոր լոյս», մանր պատմուածքներ (ռուսերէնից) Գր. բ. Պետրօվ: Ս.-Պետերբուրգ, 1904 թ., գինն է 10 կոպէկ.:
- 5) Ա. Տ. Տ. «Եիմակներ», Թաւրիկ, 1905 թ. գինն է 50 կոպ.:
- 6) Վ. Փափազեան, «Պատմուածքներ թիւրքահայերի կեանքից», 1904, Թիֆլիս, գինն է 1ր.:
- 7) Շիրվանզադէ, «Ժողովածու երկերի». հատորներ Ա., Բ և Գ: Առանձին հատորների գինն է 1 ր. 50 կ. չորս հատորները միասին՝ Թիֆլիսում՝ 4 ր. 50 կ., օտար քաղաքներում՝ 5 ր. 50 կ.:
- 8) Գ. Աստուր, «Սիրու երգիչ», Թիֆլիս, 1905 թ. գինն է 40 կոպ.:
- 9) Ալ. Կալանտար. «Судьба табаководства на Черноморской нобережкѣ», Тифлисъ, 1905 г.
- 10) Մելք. Եսայեան, «Երազ» (պատկեր Բալախանու կեանքից) Թիֆլիս, 1905, գ. 3. կ.:
- 11) Մելք. Եսայեան, «Մի բուրլի...» (պատկեր Բալախանու կեանքից) Թիֆլիս, գ. 3 կ.:
- 12) Վ. Փափազեան, «Երկու թուշուն», Թիֆլիս, գ. 3. կ.:
- 13) Վ. Փափազեան, «Վիշապ և ուրիշ զրոյցներ». Թիֆլիս, 1904, գ. 5 կ.:
- 14) Մեր էժան. զրադ. հրատար. տիկլ. Զարէլի, Ա. Լէշկէ. «Ռւաման սէր» թարգմ. ռուս. Ս.-Պետեր, 1905, գ. 7 կոպ.:
- 15) Մեր էժան. զրադ. հրատար. տիկլ. Զարէլի, Մ. Սէլաս. «Մանկան մօտ», «Լերջին խօսք» Ս.-Պետեր. 1905, գ. 7 կ.:

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Համասուտ տեսութիւն գեղարուեստի դպրոցներու սկիզբէն
մինչեւ նորագոյն շլջանները

Մարդկութեան նախապատմական մշուշոտ անցեալին մէջ
իսկ գեղեցիկի զգացումը և ձգտումը զուգընթաց է եղած կեան-
քի ինքնապաշտպանութեան բնազդին և ամենաքնական պա-
հանջներուն:

Առաջին գետնափոր ապաստանը շինող մարդը անշուշտ
բնական պահանջի մը կատարումին աշխատած է՝ այն է բնու-
թեան խոտութիւններուն և վտանգներուն դէմ պաշտպանուիլ՝
բայց գրեթէ այդ գրական աշխատանքին միացուցած է անմի-
ջապէս՝ եթէ կարելի է այսպէս ըսկ՝ իդէալական աշխատան-
քը, ջանալով իր խոռոչը, նախնական հագուստները, անձը կամ
գործիքները գեղեցկացնել, հնազանդելով բնական և ինքնածին
մղումի մը դէպ ի գեղեցիկի ձգտումը:

Մինչեւ այսօր Ավրիկէի դեռ վայրենի բնիկներու գործա-
ծած միջոցները՝ զանազան զոյներով և թոշունի փետուրներով
անձերնին զարդարելու, ապացոյց մըն է այդ տեսութեան:

Անշուշտ այժմեան մեր գարերու քաղաքակրթական կնի-
քը կրող գեղեցկագիտական հասկացողութիւններով և ճաշակ-
ներով գեղարուեստի այդ նախնական միամիտ արտայայտու-
թիւնները շատ անձաշակ և կոպիտ կրնան համարուիլ. բայց
իրը կենդանի փաստեր անհետացած մարդկութեան մը ունե-
ցած գեղագիտական ճաշակին, մտապատկերներուն, կեանքի
ըմբռնումին և բարքերուն, այդ կատէ տձե կտորները, կոշտ
քանակները պակաս ուշադրութեան արժանի չեն, քան Միշէլ-
Անժի մը հանճարին հսկայական արտադրութիւնները:

Այդ կատէ առաջին ամանները ձեակերտած ժամանակ,
մարդը՝ ինչպէս և այսօր՝ միշտ բնութիւնն է ունեցած իրը
առաջնորդ, ընդօրինակելով իր շուրջը գտնուող բոյսի մը ձե-
երը, ծաղկի մը բաժակը ևայլն, ձեսփոխելով և յարմարեցնելով

զայն իր մէջ նախապէս կազմած անորոշ ու տարտամ մէկ մը-
տապատկերին, «յայտնի ձևերով արտայայտուած արտա-
դրութեամբ մը դէպ ՚ի անյայտ գեղեցկութիւն» մը դիմելով:

Գեղարուեստներու սաղմը ըոլոր սպակերու նախապատ-
մական ներկայացուցիչներուն մէջ գտնուած է ըոլոր ժամա-
նակներում. և եթէ երբէք այս կամ այն ազգի մէջ, աշխարհի
այս կամ այն մասում այդ ձգտումը արտայայտուած է աւելի
ուժեղ, աւելի բազմակողմանի և փայլուն զարգացումով մը,
մինչդեռ ուրիշ երկրի կամ ազգի մը մէջ անշարժութեան է
մատնուած՝ այդ երևոյթին նպաստած են անշուշտ բնական, բա-
րոյական և նիւթական բազմակողմանի պայմաններ, ու նպաս-
տաւոր կամ աննպաստ շարք մը հանգամանքներ:

Այդպէս ասորական, եգիպտական և յունական արուեստ-
ներուն մի և նոյն շրջանին պատկանող արտադրութիւնները
իրենց կատարելութեամբ և գեղեցկութեամբ շատ տարբեր են
եղած, յարաբերաբար իրենց քաղաքակրթութեան և զարգա-
ցումի տարբեր վիճակներուն:

Պատմութիւնը. իրը գեղարուեստական որոշ նշանակու-
թեամբ ծանօթ առաջին գործ, Մովսէսի հրամանով շինուած Տա-
պանակը ցոյց կուտայ, որը «նորութիւն և ճոխ արտադրութիւն
մըն է եղած» հակառակ իր մեծութեան, մաս առ մաս քանդուե-
լով տեղէ տեղ փոխադրուելու յարմար՝ ինչպէս այդ կը պա-
հանջէր երրայեցիներու անապատին մէջ ըրած երկար բնա-
կութիւնը:

Մաս առ մաս փոխադրուելու դիւրութիւնները ներկայաց-
նող այդ գործը՝ երրայեցի արուեստագէտներուն մէջ, ժամա-
նակին համար; բաւական մեծ ճարտարութիւն մը կենթաղբէ:

Բայց թէ եգիպտական արուեստի ազգեցութիւն մը կրած
է այդ գործը, այդ մասին պատմութիւնը ոչինչ կըսէ, և որ
սակայն հաւանական կրնայ ըլլալ, իրենց Եգիպտոստի մէջ եր-
կարամեայ բնակութիւնէն հետևցնելով:

Աւելի ուշ մի և նոյն տապանակին փոքր չափով մէկ ընդ-
օրինակութիւնը կը շինուի կնոջ մը ձեռնարկութեամբ և ա-
րուեստագէտի մը ջանքով, որը անհատական բնաւորութիւն
մը կը կրէ, մինչդեռ մինչև այն ժամանակ միակ «պաշտօնական
շինուածք» մը կար. Տապանակը:

Եգիպտական հսկայ մեհեաններուն, Յարելնի ու Նինուէի
հիմնարկութիւններէն գրեթէ միաժամանակ՝ Քրիստոսէ տամն և
մէկ դար առաջ՝ Երուսաղէմի կառուցումը կը սկսի, ուր Սոլոմոնի
պալատը և մեհեանը՝ ոչ պակաս հսկայական գործերը, քան ե-
գիպտական մեհեանները և բուրգերը՝ քսան տարիներու ժա-

մանակամիջոց մը կը գրաւեն, սպառելով 343,600 բանուորաներու աշխատանք և 6,000,000,000 ֆրանկի ահապին գումար մը:

Ժամանակի ընթացքին, անոնց մէջ դիզուած անթիւ գանձեւ բու գոյութիւնը յարատեն ընչափաղցական ցանկութիւններ՝ կը յարուցանեն, և բազմաթիւ աւառարութիւններու ենթարկուելէ յետոյ, Նաբուգոդոնոսորի տեղակալին՝ Նաբուգարտամի՝ ձեռքով հիմնայատակ կըլլան (Քրիստոսէ 588 տարի առաջ):

Սովորմանի պալատի մասին Աստուածաշունչն քաղուած նկարագրութիւններ միայն կան, ուր սակայն կը սպակախն ուրոշ գաղափարներ անոր ներքին գեղարուեստական գարդարանքներուն, անթիւ սպասներուն, ամաններուն և կարասիներուն մտախն: Զօրաբարէլի ձեռքով վերաշինուածէն յետոյ, դարձեալ չուշանար ոսկիի և արծաթի գանձարան մը դառնալ, գրգուելով նոր ախորժակներ, և Տիտոս՝ (Քր. 70 տարի յետ) հակասակ իր ջանքերուն զայն անզնաս զրաւելու, կը ոտիպուի կրկին հիմնայատակ ընել, այսպէս, որ «Քիչ ժամանակ յետոյ հաղիւ կը նշմարուէր թէ այդ տեղը երբ և իցէ բնակուած ըլլար»:

Եւ այդպէս աննպաստ պայմաններ վերջ կը դնեն երբայական արուեստին, որուն պիտի յաջորդէ յունական և հառվամէական Դպրոցներու Արուեստը, Յուստինիոսի ձեռնարկած նոր շինութիւններով:

Նինուէ՝ ասորական այս միւս յայտնի քաղաքակրթական կեղրոնը՝ որ Երուսաղէմի առաջին կործանուածէն հազիւ մի քանի տասնեակ տարի յետոյ նոյն վիճակին կենթարկուի (Քր. 625 տարի առաջ) ասորական գեղարուեստի օրբանը եղած է:

Եփրատի հովտին մէջ զարգացող արուեստը ժամանակակից է նեղոսի հովտին՝ Եգիպտոսի մէջ ծագում առնող արուեստին:

Իրենց սկզբնաւորութեան առաջին դարաշրջաններուն, այդ երկու հոսանքները իրարու մնծանօթ են մնացած, ու շատ յետոյ՝ հաւանականօրէն Ասորեստանի աշխարհակալական ամենափայլուն շրջանին, Եգիպտոսի կրկին նուաճումներուն ժամանակ միայն կրցած են իրար հետ շփուիլ և իրարու ազգեցութիւնը կըեւ փոխադարձաբար:

Տիգրիսի ափին բարձրացող այդ հսկայ մայրաքաղաքը՝ որ երկու միլիոն բնակիչ կը հաշուէր, և որուն շուրջը գառնալու համար երեք օր պէտք էր, իր ժամանակին քաղաքակրթական որոշ դեր մը կատարած է, Բարելոնի հետ մրցելով իր ճոխութեամբ, շինութիւններով և զարդերով. այն Բարելու

նի՞ որ այնքան գրաւիչ է դարձած Շամիրամի և Արայ գեղեցիկի աւանդավէսլով՝ և ուրկէ սակայն դարձեալ աւերակներ ու քարակոյտեր մնացած են:

1848-ին ձեռնարկուած նոր խուզարկութիւններ կրցած են երեան բերել Նինուէի փառաւոր անցեալէն մնացորդներ, որոնք, սակայն, ամբողջութեան մասին կատարեալ գաղափար մը կազմելու բաւական չեն:

Եղիպատոսի նման, քանիվակագործական արտադրութիւններէն է որ պիտի կրնանք ծանօթանալ ասորական արուեստին, որ իր մանրամասնութիւններուն մէջ եղիպատականին հետ շատ կապեր ունենալով հանդերձ ունեցած է նաև իսքնուրոյն յղացումներ և երեակայութիւններ, որոնց հետաքրքրական մէկ օրինակն է թեաւոր մարդացուլը:

Այդ երեակայական և մտացածին արտայայտութիւններուն քով կան աւելի բնական արտայայտութիւններ, իրենց կեանքի առօրեայ տեսարաններէն առնուած, որոնք կը ներկայացնեն հունձքի, հացկերոյթի, որսորդական կամ պատերազմական տեսարաններ:

Ասորական արուեստին լնդհանուր նկարագիրը այս վերջինով կը բնորոշուի: Ոյժի զգացումը, սերը, ամեն տեղ կը զգացուի: Թէպէտ համեմատարար անհչան, բայց գտնուած քանդակագործական կտորները տարօրինապէս ուժեղ զգացումներու քարացած արտայայտութիւններ են, որոնք համեմատարար աւելի բնական, իրական և կատարեալ են եղած՝ քան եղիպատական հարթաքանդակներու վրայ նկարուած անձնաւորութիւնները և խորհրդաւոր Սպինքները:

Ուշագրաւ է սակայն, որ ասորական ոյժի պաշտումը յոյներու ունեցած ոյժի պաշտամունքը չէ: Մինչդեռ յունական արձանագործութիւնը վեհ և ազնիւ ոյժին գեղեցիկ ու գրաւիչ աստուածացումն է եղած, ասորականը՝ կոսիտ և տիրապետող ոյժին փառաբանումն է: Մինչդեռ ոյժը Յունաստանի մէջ գեղեցիկի գաւանանքին զլխաւոր մէկ տարը կազմող ազգային պարծանք մընէ, Ասորեստանի մէջ ճնշելու և տիրապետելու զլխաւոր ազգակն է եղած: Գաղափարի մաքրութիւնը և նպատակի ազնւութիւնը պարզ է որ պիտի յոլանային յունական արտադրութիւններուն վրայ:

Եղիպատականին, յունականին և շարունակաբար Միջին Դարով մինչև նորագոյն շրջաններու գեղարուեստի դպրոցներուն հասնելէ առաջ, աւելորդ չըլլար անցողակի ծանօթանալ ուրիշ հեռաւոր անկիւններում՝ Հնդկաստանի և Ամերիկայի մէջ նկատուած գեղարուեստական: Տգաւումներուն:

Հնդիկ արուեստին ստորերկրեայ մեհեաններու ձևով արտայատած շինութիւնները՝ որոնց գոյութեան ոկիզբը ումանք նախապատմական շրջանները կենթազրեն, իսկ ուրիշներ քրիստոնէական շրջանի առաջին դարերը՝ միջին հաշուով կրնան 2200—2500 տարուան գոյութիւն մ'ունենալ, որ գրեթէ ժամանակակից՝ եղիպատական, երրայական և ասորական արուեստներուն, բայց ապահովարար շատ տարբեր է եղած ձևի, ըմբռումի, ճաշակի և գործագրութեան կողմէն:

Հակառակ այն նկատուած ազգեցութիւններուն՝ որոնց կրոծ ըլլալ կը թուի եկիպատական արուեստէն, կամ գուցէ և յունականէն՝ հնդիկ արուեստը չէ կրցած արտադրել ոչ եղիպատական անլուծելի յաւիտենական խորհուրդի մը քարացած մարմնացումը ներկայացնող սփյնքներու նման յղացումներ, և ոչ համսնիլ ասորական արու և ջղուտ արուեստին ուժեղ՝ թէպէտ վայրագ՝ բայց բնական արտայայտութիւններուն:

Իր մէջ ապահովարար կը նկատուի աւելի վայրենութիւն և նախնական կոպտութիւն, անշուշտ արգիւնք իր բարքերուն և արտաքին աշխարհին հետ աւելի բիչ շփումին:

Յեղի գեղեցկութեան աստիճանը նաև անտարակոյս մեծ դեր մը կատարած է այն տգեղ ու այլանդակ վերաբաղրութիւններուն մէջ՝ որոնք հնդկական կուռքերը կամ աստուածները կը կազմեն:

Յունաստան երրէք չպիտի կրնար իր շնորհալի ապոլոնները և վէնիւսները ստեղծել, եթէ ցեղային կազմուածքը և գեղեցկութիւնը, բարքերու բանաստեղծականութիւնը և խելացի օրէնքները նող մը չստեղծելով չմղէին զայն կատարելութեան շաւզին մէջ:

Այդ տեսակէտով ուրեմն աշխարհի զանազան մասերում՝ ինչպէս նախապէս ակնարկեցի՝ գեղարուեստները գրեթէ միենոյն ժամանակամիջոցի մը մէջ ծնելով և ապրելով հանդերձ, դատապարտուած են կրել իրենց ցեղի, կլիմայի, կեանքի բարոյական կամ նիւթական աւելի կամ նուազ բարենպաստ պայմաններու անխուսափելի ազգեցութիւնը և կնիքը:

Առանց ուեէ գեղարուեստական ուշազրութեան արժանի գիծ մ'ունենալու, լեռներու լանջերուն մէջ փորուած հնդկական մեհեանները համրերատալ աշխատանքի մը արգիւնքին յուշարձաններն են եղած՝ «գուցէ յաղթականի մը անողորմ մտրակին տակ գերութեան մատնուած ցեղի մը քրտինքով և արցունքով շաղախուած»:

Ճարտարապետական ոճին մէջ՝ եթէ երրէք կարելի է ոճ անուանել հնդկական այդ շրջանի շինութիւններու ձևերը՝ Մարտիրոս, 1905.

նաւկան, եղիպտական և պարսկական ուայրերը են նշմարուած, որոնց մասին սակայն անհերքելիորէն ապացուցանող միաստեր կը պակին:

Այդ ժամանակաշրջաններում զանազան արուեստներու իրար վրայ ունեցած ազգեցութիւնները որոշ յարաբերութիւններ կենթադրեն այդ ազգերուն մէջ: Այդպէս չինական կայսերու գետնափոր դամբարաններուն կազմութիւնը կապացուցանէ, թէ եղիպտական Փարաւոններու դամբարանները և իրենց ոճը անծանօթ չեր եղած չինացիներուն:

Բայց ինչ որ աւելի ինքնամատիպ է, այդ չինական ճարտարապետական ոճն է իր տարբորինակ ու «առայտական» ձեերով, սրածայր տանիքներով, որոնց եղերքներէն դանդակիներ են կախուած:

Իրենց եսական ինքնապոհութեան մէջ ամփոփուած, իրենց չինական պատերու ետին ամրացած, գեղարուեստական առաջին փորձերը անծանօթ կը մնան մինչեւ ցարդ, իրենց խորհրդաւոր գոյութեան նման:

Չինական յախճապակի արուեստը՝ որով այնքան յայտնի է գարձած՝ կը կարծուի թէ Ասորեստանէն ընդօրինակած ըլլայ, ուր կը գործածուէր շինութիւններու զարդարումին մէջ:

Այդ ենթադրութիւնները ուղեմն մեզ կը ստիպեն եղաւակացնել, թէ չինացիք՝ գոյնէ անցեալին մէջ՝ աշխարհի զանազան մասերուն հետ յարաբերութիւններ ունեցած են. բայց այն ազդերը, որոնք կրնային ունէ տեղեկութիւն թողու այդ մասին՝ իրենք կորսուած են հեաւոր անցեալի մը մշուշին մէջ:

Այդ անհետացած քաղաքակլը թութիւններու նշխարներով է որ զարձեալ զաղափար մը կրնանը կազմել Բաբիլոնի ունեցած գեղարուեստական արժանիքին վրայ:

Գեղարուեստը՝ մանաւանդ արձանագործութեան մէջ՝ մեծապէս օգաուած է եղիպտականէն, փոխ առնելով նստած՝ ու ձեռքերը ծունկերուն վրայ հանգչեցուցած արձաններու կամ զանազան զարդերու ձեերը, որոնք գերազանցօրէն եղիպտական են:

Բարիլոնէան արուեստէն՝ որ արտադրած է Նարուգոթունոսրի պալատը, որ «աշխարհի մէջ գտնուող պալատներէն ամենէն հրաշալին կը համարուէլ»՝ կամ Շամիրամի կախեալ պարտէզներէն ոչինչ մնացած է բայցի ընդարձակ դաշտավայրի մը մէջ իրար վրայ թափուած քարակոյաերէ:

Պարսկական արուեստին նախկին արտագրութիւնները մի ենոյն վիճակին են ենթարկուած արարական հրոսակներու արշաւանքին տւերիչ ազգեցութեան տակ:

«Բաղադրեալ արուեստ մընէ, թագաւորական քմահաճոյքէ մը ծնուած, որ, իր կայսրութեան պէս իսկ, հաւաքած է և առուեստական միութիւն մը կազմած՝ այն բոլոր արուեստագիտական ձևերէն, որոնք իր ուշագրութիւնը գրաւած էն Ասորեստանի, Եգիպտոսի, Ասիական Յունաստանի իր նահանգներուն մէջ։ Զօրաւոր գեղասէրի մը քմահաճոյքին արդիւնքն է, որ մեծին ճաշակը ունի» կը գրէ Յ. Դարմստէտէր, Կիւրոսի ժամանակաշրջանին ակնարկելով։

Յայտնի պատմարան մը կը գտնէ, թէ պարսկական արուեստի տփեղ և անիմաստ կողմերը ասորական սնապաշտական ազգեցութեան արդիւնք եղած էն, մինչդեռ բուն հետաքրքրական մասերը՝ որոնք հոգեպաշտական կնիք մը կը կրեն պարսկական ինքնուրոյն յղացումներն են, արդիւնք իրենց հաւատալիքներուն և գաւանանքին։

Բայց բան որ ուշագրաւ է, այն է, թէ ինչպէս նախապէս ակնարկեցի՞ այդ ժամանակաշրջանի ընդհանուր զեղարուեստական արտայայտութիւններուն մէջ՝ ի բաց առեալ Յունաստանը՝ միմիայն ասորեստանցիք էն եղած, որոնք կրցած են աւելի մօտենալ բնութեան ու դնել աւելի ու աւելի հոգեկան ուժեղ արտայայտութիւններ և զգացում, քան միւս կեղրոններու գեղարուեստական գոլծերուն մէջ։

Զանազան պայտաներու աւերակներուն մէջ գտնուած հարթաքաղակներուն վրայ ասորական, երրայտական կամ եղիպտական ազգեցութիւնները նկատուելով հանդերձ, պարսիկ արուեստագիտները զիտցած են իրենց ներկայացուցած անձնաւորութիւններուն տալ մարդակաղմական տեսակէտով աւելի բնական դիրք մը. մինչդեռ եղիպտացիք կողմնակի նստած մարդու մը գէմքը ու մէջքէն վարի մասը կողմնակի կը քանդակէին, բայց կուրծքը զիտողին կը ներկայար ճակատէն նայուած ամբողջ լայնութեան դիրքին մէջ, ինչ որ տարօրինակ այլանդակութիւն և գտարում մը տուած է այդ մարմիններուն։

Պարսկաստանում՝ ինչպէս նաև աւելի նոր շրջաններու քաղաքակըթական կեղրոններու մէջ՝ գեղարուեստը սերտ կապ ունեցած է երկրի կրօնական հաւատալիքներուն և վարչական ձեին հետ այնպէս, ինչպէս վերջին ժամանակներու կը ձգուի կեանքին՝ իրապէս ապրուած կեանքին հասարակական ձգտումներուն ու մտապատկերներուն իսկատիպ և հարազատ թարգմանը ըլլալ։

Պատմութեան համար անգնահատելի այս իմաստերու անհետացումը, արարներու արշաւանըներուն յորձանքին մէջ, մը շուշով մը կը պատէ հին պարսկական քաղաքակըթութեան առ-

տիճանը ընդհանրապէս և գեղարուեստականը մամնաւրապէս:

Միայն նկատուած է թէ ինը իր մէջ աննկարագիր, բայց ձոխ՝ եզիպտա-ասորական արուեստի և քաղաքակրթութեան գլխաւոր գծերուն ամփոփողը և զայն Յունաստանին փոխանցողը եղած է. և այդ միջնորդութիւնը պիտի նկատուի յունական արուեստին մէջ, արևելեան արուեստին հետ ունեցած կապերով, որ սակայն պիտի կրնայ շուտով թօթափել, գերազանցօրէն ինքնուրոյն և բարձր նկարագիր մը ստեղծելու համար իրեն:

Աւելի ուշ՝ 1787-ին՝ աշխարհի մէկ ուրիշ անկիւնը՝ Մեքսիքայում, անտառի մը մէջ ձեռնարկուած պիզումներ երևան հն բերած Փարիզի չափ մեծ քաղաքի մը աւելակները, որոնց վրայի մեհենազբոշները, բրգանման շինութիւնները կրնան ապացուցանել, թէ Կոլոմբոսի գիւտէն առաջ Ամերիկայի ցամաքը ծանօթ է եղած եզիպտացիներուն, փիւնիկեցիներուն, կամ յոյներուն, թէպէտ գտնուած արձաններու բեկորները նուրր ճաշակի կամ կորովի երեւակայութեան մը ապացոյցը չեն տուած:

Ինչպէս պարզ կ'երեայ, աշխարհի իւրաքանչիւր մասում, գրեթէ միենոյն ժամանակաշրջանի մը մէջ արուեստի սաղմը՝ ընդհանուր գծով ու կապերով՝ միջավայրին համապատասխան զանազան արտայայտութիւններ ստացած է, որոնցմէ ոմանք՝ շնորհիւ գտնուած և ստեղծուած պայմաններուն՝ գեղարուեստական ճշմարիս վասարաններ եղած են իրենց լուսարձակ ճառագայթները տարածելով ամեն կողմէ, իտաղաղ բայց անվլրէպ յառաջնազացութեամբ մը տիրելով ու դրաւելով անտաշ մըտքերն ու զես մրափող երեւակայութիւններն և զգացումներն, ինչպէս պիտի տեսնենք շրջաններու յաջորդումի ընթացքին:

Եզիպտական արուեստի զանազան արտայայտութիւնները նոյնպէս հաւատալիքներու և գաւանանքներու մարմնացումները եղած են: Այդպէս, արձանագործութիւնը ուղղակի կրօնքի ազգեցութեան տակ ծնունդ առած է:

Եզիպտացիք ընդունուած են թէ մարդս իր մէջ մէկ ուրիշ օրինակը կը կրէ, աւելի աննիւթական և աննշմարելի՝ նախադադարը մեր այժմեան ունեցած հոգիի հասկացողութեան՝ հետեւաբար մարդու մեւնելէն յետոյ, այդ կրկին մարդու գոյութիւնը պահպանելու համար, իր նիւթեղէն մարմինը զմւասելով յաւելմացնելու և մեռնողին մէկ կինդանագիր արձանով անոր գոյութեան պատրանքը շարունակիլու սովորութիւնները հնարած են:

Մտիպուած ըլլալով մեւնողին միշտ զիմագծերը և նմա-

Նութիւնը տալ, եզիսպտական արուեստը որոշ չափով իրապաշտ և բնութիւնն հարազատ մնացած է:

Մեռեալներու պաշտամունքը կրօնական առանձնայատկութիւններու հետ միացած, գետնափոր ընդարձակ գերեզմանատներու գոյութիւնը առաջ են բերած, որոնց տարածութիւնը պատճառ դարձած է սիւներու նախատիպարը ստեղծել, ձեղունաները փլչելէ արգելելու համար:

Նկարչութիւնը իր նախնական ձերբով՝ ծառայած է՝ մեռնողի կեանքին պատահարներու նկարներով կամ ներկուած մեհենապրոշմներով անոր կեանքին նկարագրութեամբ՝ այդ գերեզմանները զարդարելու:

Դարեր յետոյ, այդ փառաւոր քանդակները իրենց թարմութիւնը պահպանած են, ցոյց տալով որ եզիսպտացի նկարիչները վեց գոյն միայն գործածած են, ոպիտակ, սև, կապոյտ, կարմիր, դեղին և կանաչ:

Աստուածներու իւրաքանչիւր արձանը առանձին գոյնով կը ներկուէր: Այդ արուեստի գլխաւոր և սիրելի նիւթերէն մէկը եղած է թագաւորի ընտանեկան կեանքին զանազան տեսարանները:

Իր նախնական շրջաններուն՝ առաջին և երկրորդ թագաւորութիւններու ժամանակ եզիսպտական արուեստը կրցած է ուժեղ արտայայտութիւններ տալ, որոնք սակայն, յետոյ, վերապն ժամանէններու ժամանակ՝ կը սկսին տժուսնիլ ու տեղի տալ մեծի և հսկայականի ձգտումին, գերիշխան թագաւորներու ժամանակաշրջանին ստեղծելով «Աստուած-թագաւորի» կամ «հսկայ թագաւորի» տիպարը, և արտագրելով Դիցէնի հըսկայական Սփինքսը, որուն միայն դլուխը 2^{1/2} մետր եղած է, 39 մետր երկարութեամբ և 17 մետր բարձրութեամբ, իր թերուն մէջտեղ պարփակելով մեհենան մը, որ սւելի փոքր սփինքսներով զարդարուած է:

Մի քանի հեղինակներ սփինքսներու մէջ իմաստութեան և ոյժի խորհրդանշանը կուզեն տեսնել, մինչեռ ուրիշներ աստուածոցուցած անհատներու կամ թագաւորներու պատկերը կը դանեն, ինչ որ սակայն դրեթէ մի և նոյն եզրակացութեան կը յանդի:

Իրենց հսկայական մեհեաններով, կոթողներով՝ որոնցմէ մէկը՝ կուկսորի հոչակաւոր մեհեանին առաջին բերուած՝ այսօր Փարիզի Կոնկորդի հրապարակը կը զարդարէ, մինչդեռ մէկ ուրիշը կը գտնուի կ. Պոլսի հրապարակներէն մէկուն վրայ, Կոստանտինանոսի ձեռքով բերուած՝ բուրգերով՝ որոնց գոյութիւնը հեղինակ մը ժողովրդին ծայրայեղ ստրկութեան մէկ

առացոյցը կը համարի, այլապէս անհասկանալի գտնելով 100,000 հոգիներու քառասուն տարուան շարունակական աշխատանքը բուրդի մը վրայ, սիմինըներու գէմքին խորհրդաւոր ու համդարտ արտայացութիւններով որոնք յաւխտենականութեան որոշ զիտակցութեան մը գրոշմը կրել կը թուխն եղիպտացիք անհերքելիօրէն անհունին և յաւխտենականութեան ձգտումը ունեցած են:

Կենդանագիր արձաններէն մեկնելով եղիպտական արուեստը կը սկսի հսկայականին ձգտիլ: Հայեացքները փոխուած են արդէն: Մեծութիւնը գեղեցկութեան համարժէք կը նկատուի: Անհատականութիւնը կը սկսի անհետանալ, և աւելի ուշ, Սահսի արուեստագէտները աւելի ողորկ և նուրբ վերաբարութեան մը ձգտումով կը սկսին կոկել, հարթել իրենց նախորդներու արուեստին յատկանշական (caractéristique) ցայտուն կողմերը, անարին ու պատմական արուեստի մը ծնունդ տալով, որ եղիպտական արուեստի անկումի բնորոշ գիծը պիտի կաղմէ, ջնջելով եղիպտական իսկատիպ ոճին տուանձնայատկութիւնները, ու պտղոմէական կոչուած շրջանին յունական և հռովմէական աղղեցութիւններու հետեղութեամբ գրեթէ անհետանալու:

Սուրենդուած և բնական, բարեյաջող պայմաններու շնորհիւ Յունաստանը այս միակ երկիրն է եղած, որ կը ցած է արուեստը իր կատարելութեան հասցնել, անոր տալով մաքուր, զազափարական և ազնիւ յատկութիւններ, գտելով զայն ամէն կրքերէն, պատկերը դարձնելով իր կեանքին, որը այս ժամանակ արուեստի մը ամենաբարձր ներշնչումները աղգելու բոլոր գեղեցիկ տարրերը պարունակած է: Յունական արուեստը արելեան հոսանքներու ծնունդ մը եղած է՝ ինչ որ սակայն քանի մը տասնեակ տարիներ առաջ շատեր անդիտացած են, բնածին արուեստ մը կարծելով զայն: Բայց որ ան կը ցած է անհունապէս գերազանցել արելեան արուեստները՝ որոնցմէ ներշնչուած ըլլալ կը թուի՝ և նոյն իսկ աւելի ուշ, նոր և ակնախտիղ գեղարուեստական վառարան մը դառնալով իր ճառագայթները սփռած է գէպի արևելք՝ ուրկէ ծնած էր՝ և գէպի արևեմուտք՝ որը կարթնցնէ—պատմութեան և բարերախտաբար մինչև մեղ հասած վաստերու շնորհիւ անհերքելի է աս:

Իր զարթնումը սկիզբ առնելով Յիսո, Սամոս, Տէլոս և այլն՝ կղզիներէն՝ ուր տեղական պայմաններու համեմատ զանազան փոփոխութիւններ կրած է, կը հասնի Մայր Երկիրը՝ Յունաստան՝ աւելի և աւելի կատարելութեան դիմելով, անհերքելիօրէն ինքնուրոյն և աղգային գոյն մը ստանալով ու

թօթափելով արևելեան արուեստին հետ ունեցած կապերը և հետեղականութիւնը:

Արիստոտէլ, ուրիշ փիլիսոփաներ և յոյները, առհասարակ, գեղարուեստի հիմք ընդունած են բնութեան իսկական և անկեղծ ընդօրինակութիւնը. մինչդեռ ներկայիս որոշ հոսանք մը կընդունի գեղարուեստագէտը իրը ստեղծագործող մը: Արդի գեղեցկագէտները՝ որոշ մասամբ ճիշտ մտածելով արուեստագէտի ստեղծագործող մը ըլլալու մասին, ոլէտք չէ սակայն մուանան Հին Յունաստանի գեղագիտական օրէնքները և կանոնները, որոնք առողջ մտածման մը և ազնիւ զաղափարներու հաստատ հիմերուն վրայ կանգուն, կրցած են այնքան կատարեալ և հրաշալի գործեր արտադրել, ընութեան միշտ հարազատ մնալով:

«Այն բանն է գեղեցիկ, ինչ որ լաւ է. իսկ այն է լաւ, ինչ որ օդտակար է: Ինչ որ մեզ գեղեցիկ կը թուի, եթէ ուշադրութեամբ դիտենք, լաւ պիտի զանենք: Գեղեցիկի ճանաչումը մեզ անօգուտ պիտի ըլլար, եթէ լաւին ճանաչումը չըլլար» կըսէր Սոկրատ:

«Մեր մարմնի ձևերուն մէջ գեղեցիկ կը գտնենք այն բուլով, ինչ որ պատշաճուէն կարգադրութեան համար», ահա թէ ինչպէս նաև կը հասկնար Դիոդինէս իր ժամանակին գեղեցկագիտութիւնը և այդ հասկացողութիւններն են, որոնք իբր հիմք ծառայած են այն բոլոր զլուխ-գործոցներուն, որ այսօր կը տեսնենք թանգարաններուն մէջ, հիանալով անոնց կատարելութեան վրայ:

Տըլվագայի մէջ արձանագործութիւնը իր սաղմային շրջանին մէջ արտայայտուած է տնական ամաններու ձևերով, որոնց այդ գարու արուեստագէտները ջանացած են տալ մարդկային կամ զանազան անասուններու կերպարանքներ, անշուշտ շատ հեռու որևէ գեղեցկագէտի մը ճաշակին գոհացում տալէ:

Կիսրոսի մէջ միևնույն հոսանքը յայտնուած է միաժամանակ, բայց սա տարբերութեամբ, որ կիսրոսցի արուեստագէտները առաջինը եղած են այդ ամանները գոյնզգոյն ներկերու խառով մը ծածկելու գիւտին մէջ, որ ամաններու պահպանումէն զատ գեղեցիկ երևոյթ մը տուած է անոնց միաժամանակ առեղծելով նկարուն ամաններու արուեստը:

Կլիմայի, երկրի, տեղի գեղեցկութեան նպաստաւոր պայմաններուն հետո՝ յոյն գիլիսոփանները և ծեր օրէնսգիրները գիտցած են հաստատել այնպիսի օրէնքներ, որոնք միայն յունական բնածին ճաշակին, հանճարին կորովի կերպով զարգացման կընային նպաստել:

«Մարդը իրենց համար ամեն բան էր» կը գըէ է. Դավիթ. (T. R. E. David) և այդպէս իրենց արտադրած արձաններու գեղեցկութեան զլխաւոր պատճառը եղած է ժողովրդի բնածին գեղեցկութիւնը, որը սակայն դիացած էն խնամել զանազան բացօքեայ խաղերով, տօներով և մրցումներով, հասցնելով այդ խնամքը տեսակ մը պաշտամունքի, որը ամենագեղեցիկ և կատարեալ կաղմուածքով ըմբիշը մինչև հրապարակի մը վրայ իր պատուին կանգնուած արձանով մը նուիրագործելու կրթիչ և օրինակելի յղացումին հասած է:

«Մերկ ու կանգուն մարդկային սկզբնական տիպարը աստիճանաբար մինչև Ապոլոնի ջնորհալի արձանին առաջնորդել փայտէ կուռքէ մը՝ իր վերարկուին մէջ փաթաթուած կնոջ պչող կերպարանքը արտադրել, հագուստներու ուսումնասիրութեամբ մը ծալքերու հարուստ և այլազան խաղէր գտնել, գիմագծերուն արտայայտութիւն մը տալ, արևելքի սարսափելի և անկարեկից աստուածներուն անծանոթ ժպիտը ճառագայթեցնել գէմքերու վրայ, ասոնք են այն գիւտերը, որոնցմով յոյն հանձարը արգէն իր գերիշխանութիւնը կը յայտնէ» զրած է Կոլինեօն (M. Colignon) իր «Յունական Արձանագործութիւնը» անուն երկին մէջ (եր. 390):

Յունական ժողովրդի վայելած մեծ բարիքներէն մէկը եղած է նաև՝ թէպէտ միշտ ներքին խովութիւններու կամ արտաքին յարձակումներու ենթակայ՝ ուրիշ ազգի մը լուծին տակ գտնուած չըլլալը:

Տրովագայի պատերազմէն յետոյ Պելոպոնէսը զրաւող դորիացիները գրեթէ միենոյն արխիւնը կրող միենոյն ժողովուրդը եղած էն: Եփիպտացիք իրենց արշաւանքի ժամանակ «աւելի հիւրեր են եղած՝ քան թէ յաղթականներ». պարսիկներու ժամանակաւոր տիրապետումները չեն կրցած աղջել, և այսպէս միշտ ամփոփ և անխառն մնացած, կրցած են առանձնայտուկ և ինքնուրոյն նկարագրի մը համազրական ուժեղ արտայայտութիւնը տալ իրենց արուեստին:

Գեղարուեստները՝ «հաճոյքի միջոցով՝ կրթութեան» գերազանց միջոցները եղած են Յունաստանի մէջ:

Եւ իրօք յոյն կեանքի բովանդակ երևոյթները, սովորութիւնները, զուարձութիւնները այդ պաղափարին ծառայած էն: Աստուածներու պատուին կաղմուած հանդէսները ժողովրդին համար՝ վայելքի և զրուանքի հետ՝ կրթութեան և զարգացման աղբիւրներ էին միանգամայն:

Բազոսի պաշտամունքին նուիրուած տօներուն մէջ նախնական թատրոնի սաղմերը ծան: Անոր բագինին շուրջը անոր

աւանդավէպերը կերպէին, որոնցմէ ոմանք յուղիչ և ոմանք զուարձալի էին: Աւելի ուշ, այս երկու տարրեր ուղղութիւններու բաժանումէն և զարգացումէն է որ պիտի կազմակերպուի ողբերգութիւնը:

Նկարչութեան գիւտին, կամ աւելի շուտ նախափորձերու մասին, սիրուն, բայց անհաւական պատմուածքներ ստեղծուած են: Այդպէս, օրինակ, կը պատմեն թէ սամոսցի Սոռիսացը սուրբին ծայրովը առաջին շրջագիծը գծեց, արև օք մը, իր ձիուն գետինը ձգած ստուերին վրայ, կամ սիկիօնցի Կորէն՝ Դիրիւտատի աղջիկը՝ իր սիրահարի գլխու ստուերին շրջագիծը գծեց այն պատին վրայ, որուն կոթնած կը քնանար տղան. յեայ խնդրեց իր հօրմէն այդ շրջագիծերու միջի մասերը գաճով ծեփել, կաղապարել զէմքի նման, որով կ'ենթազրին հարթաքանզակի առաջին փորձը. և կամ, կորնթացի Կլէանտը և սիկիօնցի Կրատոնը յդկուած մարմարէ սեղանի մը վրայ երկու անձերու դէմքին անդրագարձութիւնը տեսնելով՝ ջանացած են ներկերով նոյնը վերարտադրել, և նկարչութեան սկիզբը կ'ենթադրեն:

Նկարչութիւնը սակայն յոյն արուեստին մէջ սահմանափակ և երկրորդական տեղ մը գրաւած է: Իր փայլուն շրջանը կրնայ համարուիլ Փիտիտոնէն սկսած մինչև Մեծն Ալէքանդր, ուր երկցած են Պոլինեօտի, Զիւքսիսի, Պառսասիտի և Արէլլի նման արուեստագէտներ:

Պոլինեօտ իր ժամանակի ամենայայտնի որմանկարիչը եղած է. արուաղբելով Ծրովազայի առումի նման բարդ գործեր: Արէլլ աւելի կենդանազրի նկարիչ մը եղած է, մինչդեռ միւս ներուն վրայէն ժամանակը եկած է իր տւերիչ շունչով՝ անհետացած թէ անձ և թէ գործ, պատմութեան մէջ ձգելով հազիւ անուանական յիշատակութիւն մը:

Քանդակագործութիւնը և ճարտարապետութիւնը անհամեմատ աւելի փայլուն և ճոխ են եղած քան նկարչութիւնը, որ առաջին շրջանին մէջ ճարտարապետութեան տեսակ մը օժանդակի և ծառայողի գեր կատարելէ յետոյ, միայն իր ազատութիւնը կը դանէ Փիտիտասի դարչն սկսելով:

Պատմութիւնը այդ զարաշրջանի (Վ—Ն-րդ թ. ա) նկարչական գործերու մասին հիացմունքով կը խօսի, և որը առաջին անշուք շրջաններէն անցնելով, որոշ կատարելութեան մը հասած լլալ կը թուի այդ պահունու Դժբախտաբար քսան և չորս դար յետոյ, աչքի առաջ չունինը այդ գիւրեղծանելի գործերը, մեր այժմեան ճաշակին և հասկացողութեան ենթարկելու համար. բայց եթէ աւելի ուշ՝ միջին դարերու գեղա-

բուեստի երկու ճիւղերուն՝ նկարչութեան և արձանագործութեան յարաբերութիւնները բաղդատենք, սա եղաւակացութեան կը յանդինք, թէ, արձանագործութիւնը համեմատաբար շատ աւելի կատարեալ դործեր արտազրած է, քան թէ նկարչութիւնը. ուրիշ խօսքով, նկարչութիւնը մի և նոյն շրջանին մէջ մի և նոյն ոյժով և զարդացումով չէ յայտնուած: Այսուղ ամսուշտ կարելի է ընդունիլ, որ պալատներու, տաճարներու կամ զանազան յիշատակարաններու կառուցումը՝ ճարտարապետութեան մէկ ճիւղը կազմող արձանագործութիւնը՝ դէպի կատարելագործում մղած ըլլայ, շատ քիչ ասպարէկ ձգելով նկարչութեան:

Վերոյիշեալ կարծիքիս փաստ կրնան համարուիլ թանգարաններու մէջ անցեալ զպրոցներուն պատկանող արձաններու աւելի վայելչութիւնը և ճկունութիւնը, նոյն շրջաններուն պատկանող նկարներու անձաշակութեան և միօրինակութեան դէմ: Հետեարար եթէ ընդունենք, թէ Յունաստանում միենոյն երեւոյթը պատահած ըլլայ՝ ինչ որ կրնայ հաւանական ըլլալ իշրենց արձաններու համար ունեցած մասնաւոր պաշտումով՝ պէտք է եթաղբել, թէ այդ շրջանի նկարները ունեցած չեն իշրենց ճիւղին մէջ Միլոի վէնիւսին կամ Լաօկրնի նման արուեստի քննքոյց կամ ուժեղ արտայայտութիւններ:

Ճարտարապետութիւնը սերտ կապ է ունեցած քանդակագործութեան հետ: Յունաստանի մէջ աստուածութիւն մը ներկայացնող արձանը անպատճառ պէտք է ունենար նաև իրեն վայելու և արժանի տաճար մը: Յոյն կրօնքին արուեստներուն վրայ ունեցած բարերար գերը արդէն կուրուագրուի այդ օրէնքով:

Մեհեանը տեսակ մը խորան եղած է, պաշտուող աստուածութեան արձանին նուրիրուած, որուն շուրջը նախանձոտ խնամքով մը հաւաքած են արուեստի բոլոր գեղեցիկ կուրոները, տեսակ մը կրթիչ թանգարան կազմելով միանդամայն:

Նախապատմական կիկլոպեան կոչուած շինութիւնները՝ որոնք անկանոն, բազմանկիւն և հսկայական քարերու իրար վրայ դասաւրութներէ կը բազկանային, Քրիստոսէ տան և հինգ գար ասած սկսած են ճարտարապետական նախնական ձևեր ստանալ:

Փիւնիկէ, Մեծ և Փոքր Յունաստան, Փոքր Ասխայի գաղութները մի ժամանակ այդ շինութիւններով լեցուն եղած են: Այդ ձևի շինութիւններու հետքեր նոյնիսկ գտնուած են Ափրիկէի մէջ:

Այդ նախնական ձևերէն մեկնելով, ճարտարապետական ամենաշնորհալի ոճերը Յունաստանի մէջ ծագում առին: Կորն-

թական, յոնիական և դորիական ոճի սիւները իրենց երկրի և բարքերու առանձնայատկութիւններուն հետ յարաբերաբար մերժ պարզ ու խիստ, և մերթ ճոխ ու չնորհալի խոյակներով՝ որոնք թէպէտ բնութեան մէջ դիտուած և ընդօրինակուած՝ մանաւանդ կոլնթականը՝ յունական մտքին և ճաշակին աղքեցութեան տակ կրցած են համնիլ կատարելութեան աստիճանի մը, որուն չեն հասած նախորդ կամ նոյն շրջանին ժամանակակից միւս գալրոցները:

Ի՞նչպէս նկատեցինք, կրօնքի աղքեցութիւնը, պահանջները ամենազօրեղ ազգակը եղած են ճարտարապետական և արձանագործական արտադրութիւններու գարգացումին:

Մշտակապոյտ երկնրի մը տակ, ծաղկալից դաշտերուն մէջ, հովուական սրնգին և երգերուն տպաւորիչ ազգեցութեամբ՝ յոյն ժողովուրդը կազմած էր նուրբ զգացումներով, թափանցող ճաշակով և վառ, բանաստեղծական երևակայութեամբ օժտուած:

Նորապսակներու տան դռան առաջ ծաղկեայ պսակներ կախելու սովորութիւնը, սիրուն այլաբանութեամբ մը հոգին թիթեռնիկի և մահը՝ քնացող երեխայի մը երևոյթին տակ ներկայացնելը, բաւական պերճախօս ապացոյցներ են այդ մասին:

Մահուան արդի խորհրդանշանը՝ կմախք մը՝ և յոյներունը՝ քնացող մանուկ մը՝ շատ թելադրական է նախկին և ներկայ հայեացներու, ճաշակի, մտածումի և երևակայութեան տարբերութիւններու նկատմամբ։ Զգացումներու, ճաշակներու և երևակայութիւններու այդ ներդաշնակ ամբողջութեան վրայ աղքած և անկէ փոխազարձարար ազդուած կրօնքը՝ անշուշտ չէր կրնար գեղեցկութեան զգացումն ուրիշ պաշտամունք մը ունենալ:

Եւ մնիեանները արուեստագէտներու վարժ ձեռքերուն տակ կը դասնան տաճարներ, նուիրուած զանազան աստուածութիւններուն՝ որոնք նոյնպէս արուեստի գլուխգործոցներ՝ գեղեցիկի ճաշակը աւելի կը զօրեղացնեն և բնական պահանջ մը կը դարձնեն զայն հասարակութեան համար:

«Մարդիկ կը սիրեն այն, ինչ որ լաւ է։ Միայն լաւն է որ մարդուն սիրոյն առարկան կը լլայ։ Սէրը Գեղեցիկին համար ունեցած ճաշակէն կը յառաջանայ։ Տգեղը միայն իր աստուածութեան հետ ունեցած հակասութեամբ տգեղ է։» «Մարդոց մէջ ամենէն գեղեցիկը նա է, որ մարմնին արտաքին կաղմութեամբ և բարոյական ներքին արժանիքներով ամենէն աւելի կարող է իրեն և իր նմաններուն օգտակար ըլլալ։»

Պարզ է որ հասարակութիւն մը, որ այս մտքերով կը դե-

կավարուէր, չէր կընար գեղեցիկի մասին ուրիշ մտապատկեր մը կտղմնիլ. և իր աստուածութիւնները՝ մարմնապէս ամենազեղեցիկ կազմուածներն են, առանց խօսելու անոնց յատկացուածքարյական առաքինութիւններուն և յատկութիւններուն վրայ:

Արիստոտէլի վկայութեան համեմատած Յունաստանի մէջ գծագրութիւնը կրթութեան հետ զուգընթաց է եղած, որովհետեւ կը կարծէին թէ՝ իրաւամբ՝ «վաճառականական զանազան շահագործումներու, կարասիներու և հարուստի ընտրութեան» կը նպաստէր, և կը դիւրացնէր «գեղեցկութիւնը կազմող ձևերու ճանաչումը»:

Եւ կընզումէին՝ թէ այդ բոլորէն զատ, «հանգստի ժամերուն՝ պարկիշա զուարձութիւններու հայթայթիչը կընար ըլլալ», ինչ որ խորապէս ճիշտ է, և այդ մաքով ըմբռնումը ցանկալի՝ մանաւանդ մեր այժմեան երիտասարդութեան համար, որուն՝ գեղարուեստը գրեթէ անծանօթ է գեռ իր նախնական ձևերուն մէջ անգամ:

Հր. Ալեանիաք

(Կը շաբուհակուի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հասարակական արքացած գիտակցութեան անընդհատ աճումը:—Բոլիգինեան խորհրդակցութիւն:—Փետր. 18-ի Սենատին տուած բեսկրիպտի հետեւոնքները հասարակական կարծիքի ազատ առաջայցնեան համար:—Ազգաբնակութեան զանազան խաւերի եւ կրտսեացիսների պահանջները եւ բժիշկների Պիռղովեան հոմաժողովի վճիռը իրեւ պրոգրամ:—Զինովիէների եւ պրաւօպար հոգեւորական ազդուիլը հասարակական ներկայ տառադրութիւնից:—Ներկայ հոսանքի բանմիների տակը ազդուիլը հասարակական առաջնորդութեան ասմանները:—Ներկայ հոսանքի բանմիների տակը ազդուիլը հասարակական առաջնորդութիւնից:—Ներկայ հոսանքի ազդուիլը հասարակական ասմանները:—Ներկայ հոսանքի բանմիների տակը ազդուիլը հասարակական ասմանները:—Ներկայ հոսանքի ազդուիլը հասարակական ասմանները:—Ներկայ հոսանքի բանմիների տակը ազդուիլը հասարակական ասմանները:—Ներկայ հոսանքի ազդուիլը հասարակական ասմանները:—Ներկայ հոսանքի բանմիների տակը ազդուիլը հասարակական ասմանները:

Հնգարձակ և բազմալիգու Ռուսաստանի զանազան մասերում ազգարնակութեան բոլոր խաւարի մէջ շատ նկատելի կերպով արթնացել է գիտակցութիւնը. բիւրոկրատիական ծանրը կապանքներից թեթևացած հասարակութիւնը այժմ բացարձակօրէն յայտնում է իր պահանջները: Ներքին կեանքը մի անցողական, յուղուած, հոման վիճակի մէջ է: Անցքերը իրար հետեւում են զարմանալի արագութիւնամբ և իւրաքանչիւր օր բերում է անդեկութիւնների այսպիսի յորդ հոսանք, որ մարդ գժուարանում է այդ բոլոր տպաւորութիւնների կոյտի մէջ ընտրել միայն բնորոշ տեղնկութիւնները՝ ներկայ կացութիւնը լուսաբաննելու կամ իրենց թները ամփոփելու համար:

Մեր այս տեսութիւնը այս անգամ սկսէնք համապետական նշանակութիւն ունեցող խնդիրներից:

Մեր անցեալ տեսութեան վերջում մենք միայն ժամանակ ունեցանք առաջ բերել վետրուար 18-ի Բարձրագոյն Ռեսլրիպար՝ տուած ներքին գործերի մինիստր Բուլիղինին: Այդ բերկիպարի մէջ ասուած էր. «Ես մատղեցի այսուհետև Առ-

տուծոյ օգնութեամբ՝ օրէնսդրական նախադիճների նախնական մշակման ու քննութեան մասնակից անել արժանաւորագոյն, ժողովրդի վսահնութեամբ օժուած, ազգաբնակութեան կողմից ընտրուած մարդկանց»: Եւ այդ մտավրութիւնը իրականացնելու նպատակով մինիստր Բուլիգինի նախագահութեամբ պիտի կաղմուի առանձին խորհրդակցութիւն:

Նոյն փետր. 18-ին Կառավարիչ Սենատին արուած Բարձրագոյն Ռեկազով բարուոք էր համարուած՝ զիւրացնել բոլոր հպատակների համար յայտնելու իրանց կարծիքները բարձրագոյն իշխանութեան. իրա համար Մինիստրների Խորհրդին յանձնուած էր՝ նայել ու ընութեան առնել մասնաւոր անձերից և հիմնարկութիւններից ներկայացուող հայեացքները ու խորհրդագութիւնները, «որոնք վերաբերում են պետական բարենորութեան կատարելագործման և ժողովրդի բարօրութեան բարուոքման»:

Թէ այդ ըեսկրիպտը և թէ ուկազը հնարաւորութիւն տուին երկրի բոլոր կենդանիի ոյժերին ազատօրէն արտայայտելու իրանց անկեղծ հայեացքներն ու իղձերը: Եւ ընդարձակ կայսրութեան թէ կենտրոնի և թէ ծայրերի մէջ իւրաքանչիւր ազգութիւն ու կրօնական համայնք, ամեն մի դասակարգ ու կորպորացիա, և բոլոր ինքնավարական մարմինները շտապեցին օգտուել Բարձրագոյն տուած արտօնութիւնից և հայրենիքի վերածնութեան վեհ գործի աջողութեան համար մատնանիշ անել երկրի յետամնացութեան խկական պատճառները և ցոյց տալ ցաւերը բուժելու արմատական միջոցները: Այլ ևս ոչ ոք չէր ցանկանում ապրել այնպէս, ինչպէս ապրում էր մինչեւ այժմ, սև օրեր բաշելով. նոր կեանք, նոր կարգեր էր պահանջում հասարակութեան արթնացած գիտակցութիւնը:

Այդ պահանջները ընդհանուր են ամեն տեղ, և ծանօթանալով մի որոշման հետ՝ դուք կարող էք հաւատացած լինել որ հիմնական կէտերով գրա նման են լինելու այլ բիւրաւոր գեկուցումներն ու վճիռները: Եւ դա հասկանալի է. եւրոպական քաղաքակրթութեանը հետ սերտ կապուած ոռւսական կեանքը վաղուց հասունացել է այն կարգերի համար, որոնք անվիճելի են համարում իւրաքանչիւր բաղաքակիրթ երկրում: Ռուսաստանը փոխ առնելով Արևմուտքից գիտութիւնը, տեխնիկան, ճարտարարուեսար և այլն, ինչպէս և արուեստական հովանաւորութեամբ ստեղծելով խոշոր կապիտալիստական արդիւնագործութիւն, չէր կարող անվերջ անտես առնել այն հասարակական-պետական պայմանները, որոնք կեանքի յիշած բոլոր կողմերի աղատ

գարգացման համար նոյնը անհրաժեշտ էն, որքան օդը, լոյսը, սնունդը իւրաքանչիւր կենսունակ օրգանիզմի համար:

Ասցեալի քննադատութիւնը և ապագայ իղձերը շատ լաւ էն արտայայտուած Մոսկովայում մարտի 21—23 գումարուած բժիշկների Պիրողովեան համաժողովի վճռի մէջ, որ միաձայն ընդունուել է բոլոր (մօտ 1000 հոգ.) անդամների կողմից:

«Բժիշկների Պիրողովեան համաժողովը,—ասուած է այդ վճռի մէջ,—որ հաւաքուել է ամբողջ Ռուսաստանից՝ մշակելու մաքառման միջոցներ Ռուսաստանի վրայ արշաւող նոր պատուհասի՝ խոլերայի դէմ, հաստատում է թէ այն պայմաններում, որոնց մէջ վիճակուած է մեզ աշխատել և ապրել ոչ միայն իրքեւ բժիշկների, այլ և իրքեւ մեր հայրենիքի քաղաքացիների, անհարին է այդպիսի կուլտուրական և խաղաղ աշխատանք, քանի որ գոյութիւն ունի այժմեան քեժիմը. ագմինիստրատիւ անսահման կամայականութիւնը, Փինանսների մէջ անկոնտրու կարգադրութիւնները և նուաճողական, բաղդախնդիր քաղականութիւնը արդէն մեր հայրենիքը՝ իր չափերով սարսափելի՝ աղքատութեան մէջ, ոսովել՝ հեռաւոր Մանջուրիայի դաշտերը մեզ համար թանգագին արեան հեղեղներով։ Բայց այդ քիչ է։ Ռուսաստանի վրայ արշաւում է ահոելի պատուհաս՝ խոլերան։ Հեռանկարի վրայ գծադրում են այդ ահոելի պատուհասի հազարաւոր, տասնեակ հազարաւոր զոհերը։ Իսկ ի՞նչ է անում բիւրօկրասիան։ Նա մի կողմից դիմում է մեզ, առաջարկելով բացատրել ժողովրդին ձեռք առնելիք ժամանակաւոր միջոցների օգտակարութիւնը, իսկ միւս կողմից— գրգռում է այդ նոյն ժողովուրդը մեզ դէմ, տարածելով անմիտ լուրեր։ Խոլերայի դէմ կոռուելու գործը յանձնուած է արդէն-նրա՝ բաւականաչափ վարկաբեկ եղած մեր ագմինիստրացիայի ձեռքը, արգելում է մեր համաժողովը, արգելում է միասին հաւաքուել և գտնել համաժողովրդային պատուհասի դէմ կոռուելու լաւագոյն հնարները։ Համաժողովի փակման փորձը, իրքեւ կամայականութեան նոր արտայայտութիւն, նոր ապացոյց է այն բանի, թէ մինչև կենդանի է այդ կամայականութիւնը, զուր է մեզ երազել մեր բժշկական գործունէութեան նորմալ պայմանների, ինչպէս և առհասարակ նորմալ կեանքի մասին։ Այդ պատճառով մենք, բժիշկներս, յայտնում ենք որ անհրաժեշտ է հրաւիրել Հիմնարկիչ ժողով՝ ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատութեան հիմունքներով, առանց սեռի, դաւանութեան, ազգութեան խարանքի, այն պայմանով որ անյապաղ գաղարեցնուի պատերազմը և այն պայմաններով որ նախապէս ոչնչացնուի սաստկացրած պահպանութեան դրու-

թիւնը, պողիցիան յանձնուի ինքնալարական մարմինների ձևուքը, տրուի ապահովութիւն մամուլի, խօսքի, գումարումների, միութիւնների և զործադուլների, ազատութեան և ներում ջնորհուի զանազան բաղաքական ու կրօնական յանցանքների համար աքսորուածներին ու բանտարկեալներին։ Մենք ոկտաք է ձգտենք որ հինգ առաջին Հիմնարկիչ ժողովում անցկացնուի բաղաքական և տնտեսական բեֆորմների այն նուազականը (տիուտու), առանց որի աներևակայելի է մեր երկրի բազմակողմանի առաջազիմութիւնը և աշխատող մարդկանց տնտեսական վերելքը։ Այդ բեֆորմների թուին, բացի վերև յիշուած ազատութիւններից, պատկանում են. օրէնքի առաջ բոլորի հաւասարութիւնների, և ազգութիւնների, լեզուների, կրօնների հաւասարական սկզբունքների վրայ, հարկային սիստեմի բեֆորմ, պրոգրեսիւ, հասոյթի համեմատ հարկերի ներմուծում, կողմնակի հարկերի ոչնչացում, հողաբաժինների յետ գնման վճարների ոչնչացում և աշխատաւորներին ապահովութիւն հողով։ Աշխատանքի բոլոր տեսակների մէջ վարձկան բանուարների պետական ապահովագրութիւն և առհասարակ լայն գործարանա-առողջապահական օրէնսդրութիւն՝ բանուարների շահերի պաշտպանութեան համար։ Ահա այդ նախնական պայմանների իրագործման միջոցով կարելի է արգիւնաւոր և նպատակայարմար կոիւ կազմակերպել ժողովրդային պատուհամների և համաճարակների գէմ, միայն այն ժամանակ ահռելի չեն լինի մեր երկրի համար ոչ ժանտախոր, ոչ խոլերան, և ոչ որևէ այլ համաճարակ։»

Նման պահանջներ են արել Պետերբուրգում գումարուած ինժեներների, փաստաբանների, ուսուցիչների, գործակատարների և այլ միութիւնները։ Շատ քչով են տարբերւում իրանց բովանդակութեամբ և այն զեկուցագրերը, որ—Սէնատին տուած Բարձրագոյն ուկազի հիման վրայ—ներկայացրել են Մինիստրների կոմիտետին ինքնավարական զանազան հիմնարկութիւնները։ Վերանորոգելու այդ ընդհանուուր տենչը իր բարերար ազգեցութիւնը տարածել է նոյնիսկ չինովիկական աշխարհի վրայ։ Ինչպէս յայտնում է «Ըստ Օтечես্তվա» թերթը, մայրաքաղաքում զանազան մինիստրութիւնների պաշտօննեանների մէջ արծարծւում է այն միտքը, որ ամէրաժեշտ է և չինովիկների կողմից ներկայացնել հաւաքական որոշում, քանի որ իրանք, չինովիկները, աւելի լաւ զիտեն բիւրօկիւրատիական բիժիմի պակասութիւնները և անձնականապէս նուազ չեն տուժում

կանցելարական բուտինայից և իրանց անմիջական իշխանաւուրդների կամայականութիւններից, ինչպէս և այն սիստեմից, որ խեղդում է ամեն մի ձիք, ստուերի մէջ թողնում լաւագոյն աշխատաւորներին։ Պրաւուլաւ հոգեռականութիւնն էլ դժգոհ է զոյութիւն ունեցող կացութիւնից, միջնորդում է համառուսական եկեղեցական ժողովի գումարման մասին և, բացի այդ, յարուցանում է՝ Ռուսաստանում պատրիարքութիւնը վերականգնելու հարցը։ Մեծն Պետրոս, որ վերջ դրեց ուռսական պատրիարքութեան, եկեղեցին համարում էր ոչ իբրև հաւատացեալների մի ժողով, այլ աշխարհական իշխանութիւնից կախում ունեցող մի հաստատութիւն, բիւրոկրատիական կազմի որոշ ճիւղ։ Պրաւուլաւ եկեղեցու գլուխը համարւում է ինքը Յարը։

Ինչպէս պարզ է փետրուարի 18-ի Ռեսլրիպտի մի քիչ առաջ բերած կտորից, ապագայ Ներկայացուցչական ժողովի իրաւասութեան սահմանները լոկ խորհրդական է լինելու, այն է՝ «օրէնսդրական նախագծերի նախնական մշակութիւն և քըննութիւն։» Մինչդեռ հասարակական կարծիքը և նրա թարգման մամուլը գտնում են, որ «պետական բարենորոգութեան կատարելագործման և ժողովրդի բարօրութեան բարուոքման» համար անհրաժեշտ է՝ ազգաբնակութիւնից ընտրուած ներկայացուցիչների ժողովին յատկացնել նաև օրէնսդրական նախաձեռնութեան, բիւրժէի և հարկերի հաստատութեան, ինչպէս և աղմինիստրացիայի վրայ կոնտրոլի իրաւունքներ։ Զնայած որ այդ կարծիքները յայտնում են համաձայն փետրուարի 18-ի Ռեսլրի բուն իմաստին, մութ և յետալէմ ոյժերը ձգտում են այդ կերպ մտածողների վրայ ստուեր գցել, դրանց «հայրենիքի դաւաճան» անուանել և գրգռել հասարակութեան տականքները այդ ինտելիգենցիայի դէմ։ «ՄՕԾ. ԲԷ.» ափսոսում է որ թոյլ չեն տալիս խուժանին «ինչպէս հարկն է դաս տալ այդ խառնակիչներին։» Գտնուեցան և հոգեռականներ, որոնք եկեղեցու բեմից զրգուիչ քարոզներ էին արտասանում «հայրենիքի այդ թշնամիների դէմ»... Զարմանալի չէ որ զանազան քաղաքներում լինում էին դէպքեր, որ խուժանը յարձակում էր աշակերտների, ուսանողների և ինտելիգենցիաի վրայ և ջարդեր սարքում։ Սակայն այդ ողորմելի փորձերը անդօր են կանգնեցնելու կեանքի հաստացած առաջադիմական բուն հոսանքը...»

Զանազան հիմնարկութիւնների և կորսորացիաների կողմից արդէն լնուրուել են 300-ից աւելի պատգամաւորներ, որոնք ներկայանում են մինիստր Բուլիգինին և ինդրում թոյլութիւն մասնակցելու առանձին խորհրդակցութեան պարտպահութեալ Ապրիլ, 1905.

ներին։ Այդ պատգամաւորներից մի քանիսներին, ինչպէս օրինակ խոշոր արգիւնագործութեան զանազան ճիւղերի ներկայացուցիչներին, ոլ, մինիստրը յայտնել է որ անպատճառ կը հրաւիրուեն կայսրութեան բոլոր արգիւնագործական հիմնարկութիւնների ընտրուածները իր նախագահութեամբ կաղմուելիք խորհրդակցութեան, որ, ինչպէս երեսում է «ՊրաՎԻ. ԵԽԸՏ.» ուժ տպուած պաշտօնական հազորդագրութիւնից, կը սկսի իր պարագմունքները 2—3 ամսից յետոյ։ Նաև պէտք է հաւաքուին հարցին վերաբերեալ բոլոր նիւթերը, վերջացնուին նախապատրաստական զանազան աշխատանքները, ապա ծրագըրուին այն հիմքերը, որոնցով կարելի կը լինի իրականացնել Բարձրագոյն բնսկրիպտը. յետոյ այդ հիմքերը նախապէս պէտք է քննուին Մինիստրների Խորհրդում և վերջը այդ հիմքերը և մինիստրների կարծիքները ենթարկուին վերջնական մշակութեան փետր. 18-ի բնսկրիպտի հիման վրայ կազմուելիք Բուլղարինեան խորհրդակցութեան մէջ, որ ըստ երեսոյթին կազմուած է լինելու մեծ մասամբ նախագահի կողմից հրաւիրուած անձերից։

Այդ կերպ են կազմուած և այն յանձնաժողովները,—օր. Կոբեկօխնը՝ մամուլի համար և Կոկովցեվինը՝ բանուորական հարցի համար,—որոնց յանձնուած է գեկտ. 12 ուկազի այս կամ այն կէտի մանրամատն մշակութիւնը։

Մինչ շարունակուում են այդ նախապատրաստական աշխատութիւնները, երկրի խառնակ գրութիւնը օրէցօր բարդանում է. բանուորական, ուստանողական, աշակերտական գործադուներին աւելացան գործակատարների գործադուներ և գիւղացիական շարժումներ կայսրութեան զանազան մասերում, ինչպէս և Կովկասում։

*

Կեանքի այն ընդհանուր պայմանները, որոնցից դժգոհ է առաջադէմ ուռւս հասարակութիւնը, ինարկէ գոյութիւն ունին և Կովկասում, ուր բացի այդ կան՝ «ծայրերի», «օտարացեղերի» և «այլաղաւանների» վերաբերեալ յատուկ օրէնքներ ու կարգուդրութիւններ, որոնք աւելի ևս ծանր են դարձնում ազգարնակութեան համար բիւրոկրատիական-պոլիցիական բեժիմի պակասութիւնները։ Սակայն, ինչպէս երկի յիշում է ընթերցողը, գեկտեմբերի 12-ի Ռւկազով, որ առաջ է բերուած ամսագրիս այս տարբուայ առաջին գրքում, պէտք է վերաքննուին և այդ բացառիկ օրէքները։ Եւ արդէն այժմ նկատելի է ծայրերի քաղաքականութեան մէջ մեզմ, զիջող ուղղութիւն։ Այդ նոր ուղղութեան յուսատու նշմարէ Կովկասի համար հէնց այն հանգաման-

քը, որ երկրի կառավարութիւնը յանձնւում է Կովկասի վերածնութեան պատմութեան մէջ համակրելի յիշաատակ թողած մի տոհմի շառաւիդին, որ ինքը սիրում է բնութիւնից հարուստ օժառած մեր երկիրը, որին պակասում է միայն մարդասիրական, արդար օրինակարգ: Պակաս յուսատու չէ և այն հանգամանքը որ փոխարքայի երկու օգնականների պաշտօններում (գինուրական և քաղաքացիական մտով) նշանակուած են ազգաբնակութեան համակրութիւնը վայելող այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս գիներալ լէյտենանտ Մալատան և կառավարչապետի խորհրդի անդամ Սուլթան-կըրմ-Դիրէյը: Որ Կովկասը անմատ չի մնալու այն ընդհանուր վերանորոգումներից, որ ծրագրում է Ռուսաստանի համար, այդ կարելի է գուշակել երկրիս նոր փոխարքայ Վորոնցով-Դաշկովի խօսքերից, որ նա ասել է Թիֆլիսի բաղաքային ինքնավարութեան պատգամանուրին Պետերբուրգում: «Կովկասի վարչութեան ամենամերձաւոր նպատակն է այժմ մամնակից անել երկիրը Ռուսաստանի մնացած մասերի բարենորոգումներին և ինքը, կոմսը, չի գտնում ոչ մի հիմք Կովկասի ազգաբնակութիւնը թողնելու առանձին պայմանների մէջ և իր նպատակները յոյս ունի իրականացնել տեղական ոյժերի գործակցութեամբ»:

Մեր երկիրը կարօտ է հիմնական վերանորոգութիւնների: Կովկասի կեանքում վերջին տարիներս տեղի ունեցած ցաւալի գեղքերը ցոյց են տալիս, որ նրա զարդացումը շեղուել է կուլտուրական խաղաղ ճանապարհից, տառապում է խոր ցաւերից, առաջադիմելու փոխարէն յետ է զնում նրա մէջ հաստատուն օրինակարգը: Աւագակութիւններին, կողոպուտներին աւելացան կազմակերպուած ջարդեր զրացի աղջութիւնների մէջ, այժմ կովկասցին չի կարող ասել որ ապահով է նրա անձը, գոյքը և պատիւը: Բանուրական և գիւղացիական մեծածաւալ շարժումները, աշխատանքի ընդհանուր աննպաստ պայմաններից բացի, ունին առանձնայատուկ Կովկասեան հանգամանքներ, որոնք տալիս են նրանց առանձին գոյն և սրութիւն: Գիւղացիական շարժումը վերջերս դարձրեց իր վրայ հասարակութեան և կուռավարսւթեան առանձին ուշադրութիւնը, վրաստանի զանազան կողմերում ծագած լուրջ խառնակութիւնների շնորհիւ: Այդ շարժումը հերթական է զարձնում գիւղացիական հարցը, որ մեր երկրի ընդունութիւնը մէջ առաջնակարգ տեղ պէտք է բռնի, որովհետեւ ազգաբնակութեան ահազին մեծամասնութիւնը (90%) իր գոյութիւնը պահպանում է երկրագործութեամբ: Նա իր աշխատանքը արդիւնքի է վերածում հողի միջոցով, մինչդեռ արդիւնաբերութեան այդ գործիքը, հողը, շատ չնշն չափով է

պատկանում գիւղացուն և նա ստիպուած է կապալով վերցնել մշակելու հողեր կալուածատէրերից, որոնք օգտուում են նրա այդ անել զբութիւնից և հարստահարում նրան: Արքունական ընդարձակ հողերից ևս չի կարողանում օգտուել տեղացի գիւղականը, որովհետև այդ հողերը վերապահուած են ներքին նահանդներից ներմուծող ոռւս գաղթականների համար: Սակաւահողութեան աւելացրէք իրաւագուրք զբութիւնը, ծանր հարկերը, պոլիցիայի և պաշտօնեանների անկոնտրոլ պահանջները և կամայականութիւնները, զպրոցների և այլ կրթական հիմնարկութիւնների, ինչպէս և կանոնաւոր հաղորդակցութիւնների, մասր կրեգիտային հաստատութիւնների բացակայութիւնը, և դուք կը հասկանաք որ քառասուն տարի առաջ յայտարարած ճորտերի ազատութիւնը մի կիսատ-պոտ բեֆորմ էր, որ չէր ապահովում գիւղացու տնտեսական անկախութիւնը աղնուականներից և չէր բանում նրա առաջ քաղաքակրթութեան բարիքները: Անձի ազատութեան հետ նախկին ճորտերը չստացան հողաբաժններ և վերածուեցին ժամանակաւոր-պարտադրական մի վիճակի, որ քառասուն տարի է շարունակում: Օրէնքը թողել էր որ իրանք գիւղացինները սեփական միջոցներով յետ գնեն իրանց հողաբաժնները կալուածատէրերից, փոխադարձ համաձայնութեան գալով. չկար կառավարութեան դրամական օգնութիւնը և յետ գնուման պարտադրութիւնը, ինչպէս մուսաստանի ներքին նահանգներում. և այդ զբութիւնը նպաստաւոր էր միմիայն աղնուականների համար: Գիւղացին պէտք է հաշտուէր այդ զբութեան հետ և իր կիսաքաղցած զոյութիւնը շարունակէր, որովհետև ինքը փող չունէր, իսկ վաշխառուներից պարտք անելով հողաբաժնն գնել՝ նշանակում էր կրկնակի չարիքի մէջ ընկնել: Գիւղացիական բանկ չկայ մեր երկրում, որ գնէր հողեր կալուածատէրերից և ծախէր գիւղացիններին:

Այդ ողբալի գրութիւնը համատարած է Անդրկովկասում, և եթէ զուրիացին միայն եղաւ ուժգին բողոքողը, այդ ցոյց է տալիս որ նա մտաւորապէս աւելի է զարգացած, քան թուրք և հայ երկրագործը: Աղրարային շարժումների պատճանները ուսումնասիրելու համար Կովկասի իշխանութիւնից Գուրիա ուղարկուած Սուլթանները-Գիրէյին մի զիւղացի ասել էր. «Մեր ձեռները միշտ զբաղուած են աշխատանքով միայն նրա համար, որ վճարենք ծանր հարկեր գանձարանին, կալուածատէրերին և հոգեսորականներին: Մեզ և մեր կիսասոված ընտանիքի համար մենք չենք կարողանում ոչ մի բաժին հանել:» Այդ խօսքերի մէջ արտայայտուած է դաւն ճշմարտութիւն... Տասնեակ տարիների ընթացքում ամեն զրկանք և անար-

գարութիւն կրելուց՝ գիւղացիների համբերութիւնը սպառուեց և նրանց շարժումը ստացաւ ապատամբութեան ձև։ Վրաստանի կալուածատէրներին և տեղական պաշտօնեաներին յայտարարուած էր կոփութիւնները և բոյկոտը սարսափի մէջ են գցել հողատէրերին և տեղական ստորին պաշտօնեաներին։ Բանը այնտեղ է հասել որ ամբողջ Թութայիսի նահանգը և Բաթումի շրջանը պատերազմական վիճակի մէջ են յայտարարուած։

Սուլթան-կրօմ-Դիրէին, չնորհիւ իր խաղաղասէր և մարդասէր վերաբերմունքին, աջողուեց աելին ու տեղը ծանօթանալ գիւղացիներին բնակուել արքունական ազատ հողերի վրայ։

1) Դանձարանի հաշուով յետ գնել ժամանակաւոր-սպարտագիր գիւղացիների հողաբաժնները։ Թոյլ տալ սակաւահող գիւղացիներին բնակուել արքունական ազատ հողերի վրայ։

2) Կառավարութիւնից որոշել կապալավարձի ամենաբարձր չափը։

3) Վերացնել կալուածատէրերի օգտին կատարուող որևէ անվարձ սպարտաւորութիւն գիւղացիների վրայ։

4) Ճանապարհների, կամուրջների շինութիւնը և նրանց պահպանութեան ծանրութիւնը գցել և միւս գասակարգերի վրայ, որոնք պակաս չեն օգտում հաղորդակցութեան այդ միջոցներից։

5) Վարչական զանազան անձանց երթեկութեան շնորհիւ ձի, ուղեկից, ճաշ և այլն տալու ծախքերից աղատել գիւղացիներին։

6) Վերացնել պարտադիր վճարը յօպուտ հոգեորականութեան (զրամ)։

7) Վերացնել հարկերը և մոցնել հասոյթների համեմատ տուրքեր։ Վերացնել ակցիզը։

8) Վերացնել անցաթղթերը։

9) Զինուորակուութեան հրաւիրուածներին թողնել Անգրեկովասում և չուղարկել ներքին նահանգները։

10) Կրթութեան հանրամատչելիութիւն առանց գաստիարգային, գաւանական և ազգային խտրութիւնների։

11) Տեղային ինքնավարութիւն, անձի, բնակարանի, խօսքի, գումարումների ազատութիւն, մայրենի լեզուով դասաւանդութիւն, և—մի շարք ընդհանուր աղատագրական պահանջներ, որոնք դրուած են և այլ զասակարգերի կողմից։

Այդ ընդհանուր պահանջները շեշտուած են և այն յիշատագրերի մէջ, որ ներկայացրել են մինիստրների կոմիտետի նախագահին վրաց ազգի ներկայացուցիչները և ներքին գործերի

մինիստրին Քութայիսի նահանգական ազնուականութեան պարագութի Ծերեթելին:

Այդ բոլոր պահանջները, ինչպէս, ելեի, նաև հայ և թուրք ազգաբնակութեան պահանջները, տարբեր չեն այն իղձերից, որ յայտնուում են ուստ ինտելիգենցիայի կողմից, ինչպէս տեսանք բժիշկների պլիբոգովեան համաժողովի բերած վճարից:

Առանձին ուշադրութեան արժանի են հայերի և վրացիների պահանջների մէջ եկեղեցական-դպրոցական հարցերը: Այդ կողմից ևս պէտք է սպասել փոխարքայի քաղաքականութեան մէջ նոր վերաբերմունք: Այսպէս յուսուլու իրաւունք են տալիս թէ՝ վոխարքայի արտասանած խօսքերը մարտի 20-ին վեհափառ Կաթողիկոսի պատգամաւորներին Պետերբուրգում: — «Յունիսի 12-ի պոլուծենիան կը վերաբննուի, աքսորուած հոգեորականների հարցը կը վերաբննուի և սպասելուն նրանք կը վերադարձնուին և գպրոցական հարցը կը կարգաւորուի», — և թէ իշխան Արամէլիք—Լազարեանի հետեւալ հեռագիրը թիֆլիսի քաղաքագլխին, մարտի 24-ից:

«Հայոց հոգեոր պատգամաւորութեան—Ներսէս եպիսկոպոսից և Մեսրոպ վարդապետից կազմուած—այսուեղ համեմելուց սկսած՝ ես պարու համարեցի նրանց ցոյց տալ ամեն տեսակ հնարաւոր օգնութիւն: Երկամսեայ միահամուռ գործունչութեան արդիւնքը բոլորովին բաւարար է: Պատգամաւորութեան յաճախակի գիմունները Վիտոտէին նրա կողմից մեծ ուշադրութեան էին արժանանում: Վիտոտէն՝ հասցրեց Մինիստրների Կոմիտէտին պատգամաւորութեան զեկուցագիրը, որ ներկայացուած էր 1904 թուի գեկտեմբերի 12-ի ուկազի հիման վրայ: Մարտի 22-ին՝ կոմսն ընդունեց հոգեորական պատգամաւորներին և յայտնեց, որ այս մօտ ժումանակներս յունիսի 12-ի օրէնքը՝ կ'ենթարկուի վերաբննութեան, գպրոցական հարցը կը կանոնաւորուի և աքսորուած հոգեորական անձերի գործը կը վճռուի»: Նշանակելի է և տեղական թիրթերում մարտի 20-ին Պետերբուրգից հաղորդած տեղեկութիւնը, որ «Մարիս Կայսրունու գպրոցական հաստատութիւններում հայերին կրօնը, բացի ազօթքներից, ուսւերէն լեզուով անցնելու կարգագրութիւնը ոչնչացուած է, որովհետև ընդհանուր հարց է յարուցուած՝ այլապաւաններին կրօնն աւանդելու մասին»:

*

Այդ բոլոր իղձերի և յոյսերի իրականացումով բացւում է լայն ասպարէզ տեղական կենդանի ոյժերի համար—նուիրուել խաղաղ-կուլտուրական գործունէութեան ժողովրդական խաւերում, որ վերջին տասնեակ տարիների ընթացքում խափանուած

էր զանազան աննպաստ հանդամանքների շնորհիւ։ Այդ պայմանները ստիպում էին մեր շոտ ոյժերին հեռանալ հասարակական ասպարէզից, նույրուել առևտրական գործունէութեան կամ կովկասից գուրս գտնել իրանց հուանդի կիրառութիւնը։

Մի այդպիսի խոշոր հասարակական գործիչից զբկուեց մեր երիտասարդութիւնը յանձին Քրիստոնիոր Միքայէլեանի, որ մեծ համակրութիւն էր վայելում շնորհիւ իր անսահման նորիրուածութեան գաղափարական մի մեծ հարցի։

Սովիայում, գյուղու պատահարից մարտի 6-ին մեռած Քրիստոնիոր Միքայէլեանը Գողթան գաւառի գիւղաքտադար է. Ազուլիսում է ծնուել 1859 թուականին։ Ինքը դուրս գալով հայ ժողովրդի միջավայրից, նա իրան նույրեց նոյն ժողովրդի ցաւերին ու իզներին իր հոգեկան ոյժերի ամբողջ կարողութեամբ։ Մինչև այժմ էլ յիշում են Ազուլիսում նրա զեկավարութեամբ ու թսունական թուականների վերջում տեղական ծխալան կարոցներում գործող ուսուցչական խմբի կատարած արթնացնող գերը, որ չէր բաւականանում միայն գպրոցի չորս պատերով, այլ տարածում էր նաև ընտանիքների մէջ, ազգում և հարեւան թուրքերի վրայ, ամեն տեղ ուրամանելով ինքնագիտակցութեան և համերաշխութեան ազնիւ սերմեր։ Ինսունական թուականների սկզբում նա թողեց դպրոցական ասպարէզը և իրան նույրեց աւելի մեծ հասարակական զործի ծառայութեան...»

Իր ընաւորութեան հազուագիւտ կողմերի շնորհիւ Քրիստոնիոր Միքայէլեանը կարողանում էր կազմակերպել և իր սիրած գործի շուրջը համախմբել իրարից տարրեր ոյժեր։ Նոյնիսկ բուրժուատինատելիզենաններից շատերը՝ հմայուած նրա անձնաւորութիւնից՝ աշխատում էին մի բան անել, ասելով՝ «մենք գործի համար չենք սնուում, այլ Քրիստոնիորի խաթեր»... Հաւատալով՝ թէ ժողովրդների զարգացումը կատարում է որոշ, ամեն տեղ միատեսալ օրէնքներով, նա առանձին նշանակութիւն չէր տալիս իրականութեան ու նրա առանձնայատուկ պայմանների ուսումնասիլութեան և մտածում էր ու գործում անալոգիաներով... Անշուշտ սխալմունքների մէջ էլ էր նա ընկնում, ինչպէս և ամեն մի անկեղծ, համողուած զործիչ, —որովհետև անսխալական է միայն նա, ով ոչինչ չի անում, —սակայն իրեւ մի գաղափարի իր ամրողջ էութեամբ և եռանդով նույրուած անձնազո՞ւ գործիչ, Քրիստոնիորը մեր կեանքում մխիթարական երևոյթ էր, հայ ժողովրդի տուած սակաւաթիւ զրական ալպարներից մէկը՝ և իրեւ այդպիսին՝ նա կը լինի մշտապէս իրեւ հայ գործիչի իդէալական օրինակ։

Յյլ աշխարհի էր պատկանում նոյն օրը վախճանուած երաժշտագէտ Մակար Եկմալեանը, որ հանգաւ իր սիրած ասպարիզից գուրս մղուած, հոգեկան ծանր հիւանդութեան պատճառով։ Եկմալեանի նշանակութիւնը հայ երաժշտական զարդացման գործում բնորոշուած էր այս տարուայ «Մուրճի» Գեղարուեստի աշխարհում (№ 1), ուստի մհնք այստեղ կանգ չենք ասնի, և կը բաւականանանք մի քանի կենուազրական տեղեկութիւններով։ Մակար Եկմալեանը վաղարշապատցի էր, իր ոկզբնական ուսումը ստացել էր իշմիածնի ժառանգաւորաց դպրոցում։ Երաժշտութեան առաջին դասերը վերցրել էր յայտնի թիւրքահայ երաժշտապէտ Ն. Թաշճեանից, որ Գէորգ Դ. կաթողիկոսի ժամանակ հայկական ձայնադրութիւն էր ուսուցանում իշմիածնում։ Այդտեղ ստացած իր երաժշտական կըրթութիւնը Եկմալեանը շարունակեց Պետիրրուրզի կոնսերվատորիայում։ Վերադառնալով Թիֆլիս, նա ուժ տարի վարում էր Ներսիսեան զպրոցում և Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում ուսուցի և երգեցիկ խմբի կառավարչի պաշտօնը, երբ հոգեկան հիւանդութիւնը ընդհատեց նրա գործունէութիւնը և 50 տարիկան հասակում նա գերեզման մտաւ, թողնելով անջնջելի հետք մեր եկեղեցական երգեցողութեան ներդաշնակման գործում։

Բոլորովին աննկատելի անցաւ մի հայ գրական գործիչի մահը, խօսքս Սիմէօն Ֆէլէկեանի մասին է.

Թէ իմս հայրենեաց ընար սփաւոր
Հեծէ տիւրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկրեկ թեկեր վշտաւոր
Խօսի ողբածայն՝ իմ սրտիկս է այն...

... Եւ Հայաստանիս հոգերը ուխտիւ
Պիստ սրտով գըկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթողին լանդիւն՝
Ո՞հ մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապարազգ՝ իմ ճակատս է այն.
Մասեաց սուրբ քարերն իրը բարձ
Դրած սգաւոր՝ զլուխիկս է այն...

յայտնի երգի և այլ բանաստեղոծութիւնների հեղինակն էր նա:
Դեկտ. վեոջերում, Եղիպատոսի Գահիրէ քաղաքում, նա կասքի

տակ է ընկնում, տարւում գերմանական հիւանդանոց, ուր և վախաճանուում է, հանգիստ գտնելով Պոլսի 1895 թ. գետքերից յետոյ իր աստանդական թափառումներից։ Մենք այնքան կտրուած ենք մեր թուրքահայերի կեանքից, որ չգիտենք էլ թէ կարողացան արդեօք նրանք որմէ բան զրել այդ տարաբախտ բանաստեղծի մասին, որ այնպէս էլ կարող չեղաւ տեսնել իր «հէդ Հայաստանը» և «մեսնիլ նրա մայրական ծոցում և իր վերջին շունչը տալ նրան»։

Ապաբաղդ հայ, որ իր թափառումներով կարծես իր թըշըուառ թիւրքահայ եղբայրների մի մարմնացում էր...
*

Թիւրքահայ գաղթականների մի մասը, ինչոյն յայտնի է, գետ 60-ական թուականներից, թիւրքահպատակ յոյների հետ միասին հաստատուել են Սև ծովի ափերում և մտցրել այդտեղ ծխախոտագործութիւնը։ Այդ խաղաղ, աշխատասէր ազգաբնակութեան շնորհիւ Անդրկովկասի այդ ափերը այժմ ծաղկած գրութեան մէջ են։

Այդ թիւրքահպատակ ծխախոտագործները, որոնցից 3,700 տուն հայեր են 1,700 տուն յոյն, համաձայն 1898 թ. մայիսի 28 Բարձրագոյն Ռւկաղի, պէտք է թողնէին իրանց գործունէութիւնը Սև ծովի ափերում և այլ տեղ գաղթէին։ Տեղական կալուածատէրերը, ոռւս, վրացի, և ծխախոտի խոշոր առետրականները ահազին վլասներ պէտք է կրէին այդ կարգագրութեան իրագործմամբ, ինչպէս պէտք է քարուքանդ վինէին և իրանք գաղթականները։ Կառավարութեան առաջ հարկաւոր միջնորդութիւններ էին արուած գեռ անցեալ տարի։ Նոյն այդ հարցին առանձին նիստ նուիրեց Կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը։ Լսելով ալ. Ալէքսանդր Քալանթարի ղեկուցումը «Սև ծովիզրեայ ծխախոտագործութեան վիճակի» մտախն, Ընկերութեան ժողովը միաձայն որոշեց միջնորդութիւն յարուցանել երկրագործութեան և ֆինանսների մինիստրութիւնների և Կովկասի կառավարչապետի պաշտօնակատարի առաջ, որ Սև ծովի եղերը թիւրքահպատակ ծխախոտագործների վրայ տարածուեն այն արտօնութիւնները, որոնցով օգտուում են այդ ափի դործարանատէրերը և հանքաղործները, այսինքն՝ նրանց ևս իրաւունք տրուի կապալով վերցնել և վարձել հողեր մշակութեան համար։

Ընդունելով ընկերութեան կողմից ներկայացած պատգամաւորութիւնը՝ գեներալ-լէյտենանտ Ե. Դ. Մալաման խոստացել է իր կողմից լիակատար աջակցութիւն՝ ապահովելու համար Սևծովելիքիայ ծխախոտագործութեան ապագան։ Այդպիսով

յոյս կայ որ այդ աշխատասէր և խաղաղ ազգաբնակութեան տասնեակ տարիների թափած ջանքերը, —որոնց շնորհիւ այդ կողմերի հողերի կապալագինը տասնապատկուել է, ինչպէս և բանուորավարձը, և Անդրկովկասի արդինաբերերութեան մի ճիւղ տալիս է մօտ 10 միլիոն եկամուտ, —կը գնահատուեն, հարցը արդար լուծում կը ստանայ և թիւրքահայը ստիպուած չի լինի կրկին, պանդխոտութեան ցուալը վերցրած, նոր հողեր որոնել իր գլուխը պահելու համար...

Հ. Ս.

30 մարտի:

Յ. — Արդէն շարուած էր մեր այս տեսութիւնը, երբ ստացանք «Կավկազ» թերթի ապրիլի 1-ի թիւը, որի մէջ աըսպուած է հետեւեալ կարեսր պաշտօնական հաղորդագրութիւնը. Կովկասնան երկրի ազգաբնակութեան

Ես ստացել եմ մարտի 30-ին Կովկասում Նորին Կայսերական Մեծութեան փոխարքայ զհներալ-ագիւտանտ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովից հետեւեալ հետագիրը.

«Թագաւոր Կայսրի կամքով ես կոչուած եմ կանդնելու ինձ թանկադին Կովկասի կառավարութեան գլուխը: Ափսոսում եմ որ ինձ վիճակում է ստանձնել իմ պարտականութիւնները այն ժամանակ, երբ ամեն օր ստացւում են լուրեր բարեկեցութեան խանգարման, խանակութիւնների, աւարառութիւնների և ամեն տեսակ բռնութիւնների մասին: Ինչպէս հին զինուոր, ես անկարելի եմ համարում պատերազմական ժումանակում հրաժարուել ծառայելու կոչից. այդ անելիս ինձ զօրավիգ է երկրի լիակատար խաղաղացման և արդիւնաւոր զարգացման խոր յոյսը: Ես հաւասարի եմ կովկասնեցիների հաւատարմութեան գէտի թագաւոր Կայսրը, որի համար բոլոր տեղական ազգաբնակութիւնները հաւասարապէս մօտ են և թանգ: Դիմում եմ բոլոր բնակիչներին առանց դաւանանքի և ազգութեան խարութեան աշակցելու հայրենի երկրի բարեբախտ վերաշնութեան: Ուսպէս զի երկրում ներմուծուի կարգը խաղաղ ճանապարհով, անհրաժեշտ է բոլոր հասարակական ոյժերի օգնութիւն: Ես հաւատում եմ ժողովրդի իմաստութեան և համոզուած եմ, որ ազգաբնակութեան անհանգիստ մասը չի զիմանայ բարեմիտ ահազին մեծամասնութեան միահամուռ հասարակական զրոհի առաջ: Ինձ Նորին

Կայսերական Մեծութիւնից արուած ցուցմունքների համաձայն՝ ես պիտի ժողովեմ ազգաբնակութեան ներկայացուցիչների խորհրդակցութիւններ, ուր պէտք է մտնեն ընտրուածներ ազնուականութիւննից, քաղաքներից և գիւղական հասարակութիւններից, ինչպէս և պրաւոլաւ, հայ-լուսաւորչական և մահմեդական հոգեւորականութիւններից։ Խորհրդակցութիւններին առաջարկուելու է արտայայտուել այն միջոցների մասին, որ անհրաժեշտ է ձեռք առնել ամեն տեսակ աւազակութիւններ, աւարառութիւններ և անկարգութիւններ վերջացնելու համար, պարզելու, թէ որչափ փոփոխութեան կարիք է զգացւում այժմ երկրում գործադրուող գատաստանական կարգ ու սարքի մէջ, քննելու գեմսավային հիմնարկութիւնների կանոնադրութեան կիրաւման կերպերի հնարաւորութիւնը և նպատակայարմաբութիւններ։ Բացի այդ, ես պէտք է ձեռք առնեմ ինձնից կախուած բոլոր միջոցները արագացնելու հողերի սահմանաշափութիւնը, ինչպէս և պարզելու ամենից շատ հողի կարօտութիւն ունեցող բնակիչների տարաբնակութեան համար արքունական պիտանի, տոճեռն պատրաստ հողաբաժնների խական տարածութիւնը։ 'Ի յարդանս Ամենայն հայոց կաթողիկոսի ամենահպատակ աղերսի, հայոց եկեղեցուն պատկանող կալուածները արքունական կառավարութեան յանձնուելու գործը Բարձրագոյն հրամայուած է վերաքննել։

Ես հաւատացած եմ, որ պետական հիմնարկութիւնների մէջ բոլոր ծառայողները կը համակուին համոզմունքով, որ ներկայ ծանր ժամանակ ծայրայեղորէն անհրաժեշտ է խզճի մտօք առանձնապէս լարել իրանց ոյժերը, համանելու համար բոլորին ցանկալի բարեբախտութեան, ի նկատի ունենալով կովկասի զարգացումը և բարօրութիւնը կայսրից իմ անունով տուած ըես-կրիպտի մէջ աւանդած հիմքերի վրայ։

Կոմի Վորոնցով-Դաշկով

Յայտնելով դրա մասին, արտայայտում եմ հաստատ վըստահութիւն, որ Կովկասեան երկրի ազգաբնակութիւնը լիովին կը գնահատի Կովկասեան Փոխարքայի ներկայ հաղորդագրութեան ամբողջ կարևորութիւնը։ Առաջ բերուած հեռագրով յայտնում է, որ մօտիկ ապագայում երկրի մէջ լինելու են արժատական վերանորոգութիւններ, որոնք կը շօշափեն տեղական

կեանքի ամենակարեռը կողմերը և կ'իրագործուհն ազգաբնաշկութեան մերձաւորագոյն մասնակցութեամբ, ի դէմս նրա ներկայացուցիչների՝ առանց կրօնի, ազգութեան և գասակարգերի խորութեան։ Այդ դժուար աշխատանքի սկզբնաւորութեան և նրա աջողակ կատարման համար անպայման հարկաւոր է հասարակական կեանքի հանդիսատ ընթացքը, որպէսզի ինքը ազգաբնակութիւնը, առանց մի կողմ գրաւուելու ներկայ խառնակութիւններով, կարողանայ անարգել քննել իր կարիքները և գիտակցաբար վերաբերուել առաջիկայ աշխատանքին։ Աւսուի ես հրաւիրում եմ ազգաբնակութիւնը ի հանգստութիւն, կարգ և կատարումն օրէնքի, որպէսզի աւելի և շուտով հազորդակից անուի Կովկասեան երկիրը ներքին վերաբինող աշխատանքին՝ այն սկզբունքներով, որ աւանդուած են բարձրագոյն բհոկրիպտականութով, փեարուարի 18-ին՝ ներքին գործերի մինիստրի անունով և փեարուարի 26-ին՝ Կովկասեան Փօխարքայի անունով։

Կովկասի քաղաքացիական մասի Կառավորչապետի պաշտօնակատար և Կովկասեան դինուորական շրջանի ժամանակաւոր Հրամանատար գեներալ-լեյտենանտ Մալակա

31-ին Մարտի 1905 թ., Թիֆլիս

Ուրեմն բացւում է այն նոր կեանքի արշալոյնը, որին անհամբեր սպասում է Կովկասը...

Բարձրագոյն ընկլլիպտ զեներալ-աղիստանտ կոմս Վորոնցով-Դաշկովի անունով։

Կոմս Իլլարիօն Իվանովիչ։ Այն ժամանակից, երբ Կովկասը մտցրուեց ռուսական պետութեան կազմի մէջ, իմ Պասկակիր Նախորդների և իմ նպատակն է եղել այդ երկրում խաղաղութեան, բարօրութեան և կարգի պարզացումը մեր հայրենիքի միւս մասերի սերտ միութեան հիմունքներով։ Այդ կողմից հասուծ առաջադիմութիւնը, որ արտայայտուել է Կովկասեան ազգաբնակութեան բարօրութեան ընդհանուր աճումով և Կովկասի շատ բնիկների աչքի ընկնող աշխատանքներով յօդուտ և ի պատիւ Խուսիայի, ի ցաւ իմ՝ վերջին ժամանակս մոայլուեց առանձին ազգութիւնների փոխազարձ ընդհարումներով, իշխանութիւններին չնազանդուելու դէպքերով, անկարգութիւններով, որոնք խանդարեցին կեանքի անդորր հոսանքը։ Այդ բոլոր անկարգութիւններին ժամանակաւոր երեսյթների նշանակութիւն տալով, անհրաժեշտ եմ համարում անյապաղ վերականգնել Կովկասում անզորրութիւն, որպէս զի այդ երկիրը հաղորդակից անեմ ներքին վերաբինող աշխատանքին, որ այժմ

ձեռնարկում է մեր տէրութեան մէջ իմ նախագծումների հարմեմատ: Այդ նպատակներով ես Զեղ նշանակում եմ իմ Կովկասիան փոխարքայ: Այդ երկրի Զեր ծանօթութիւնը, որ դուրս էր բերել նախընթաց ծառայութիւնով Կովկասում, բազմակողմանի պետական փորձառութիւնը և հայրենիքի օգտին կատարած աշխատանքը ինձ հաստատ վստահութիւն են տալիս, որ այժմ Զեր առաջ դրուող նպատակը դուք աջողութեամբ կ'իրականացնէք. հանզիպելով համերաշխ աջակցութեան՝ Կովկասի ազգաբնակութեան բոլոր դասակարգերի և ազգութիւնների բարեմիտ մարդկանց կողմից:

Խոկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրուած է Նիկոլայ

Յարսկոյէ Սելօ

26 Գետրուարի 1905 թ.

Բարձրագոյն անուանական ուկազ Կառավարիչ Սննատին

Բարուոք համարելով վերականգնել կովկասեան Մեր Փոխարքայի պաշտօնը իր բոլոր իշխանութեան լիակատար ամբողջութեամբը, այն վայրերի սահմաններում, որոնք այժմ գտնուում են Կովկասի կառավարչապետի, կովկասեան զինուուրական շրջանի զօրքերի հրամանատարի և կովկասեան կազակ զօրքերի նակազնի ատամանի վարչութեան տակ,—հրամայում ենք. 1) Մեր Կովկասի Փոխարքային յատկացնել իրան յանձնուած երկրի քաղաքացիական վարչութեան բոլոր մասերի բարձրագոյն իշխանութիւնը:

2) Հստ իր կոչման՝ Փոխարքան լինելու է պետական խորհրդի, մինիստրների խորհրդի և կոմիտէտի անդամ, Փոխարքայութեան սահմաններում գտնուող զօրքերի գլխաւոր հրամանատար, և կովկասեան կազակ զօրքերի նակազնօյ ատաման:

3) Նրան յանձնուած երկիրը կառավարելու գործին օգնելու համար՝ հիմնել Փոխարքայի երկու օգնականների պաշտօն—զինուուրական և քաղաքացիական, անմիջապէս ենթարկելով նրանց Փոխարքային:

4) Փոխարքայի բացակայութեան դէմքում, զինուուրական մասի նրա օգնականը վարում է Փոխարքայի պաշտօնը:

5) Մեր տուած ցուցութիւնը զարգացնելու համար Կովկասի Մեր Փոխարքային պարտաւորեցնել կազմել օրէնքներ այդ Փոխարքայութիւնը կառավարուելու համար:

6) Մինչև այդ օրէնքների (5-դ կէտում յիշուած) հրա-

տարակութիւնը պէտք է գործեն. ա) Փոխարքայի վերահասութեան հնմթակայ առարկաները, նրա իրաւունքները և պարտականութիւնները դէպի այն հիմնարկութիւնները, որոնք գտնվում են Կովկասի քաղաքացիական բաժնի կառավարչականի, Կովկասի զինուորական շրջանի գորքերի զինուորականի և Կովկասի իրաւունքնեան տակ՝ որոշել համաձայն 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19-դ յօդուածների Կովկասի և Անդրկովկասի օրէնքների (օրէնքների ժողովածուի, հատ. II 1876 թուի հրատարակութիւն), թողնելով Փոխարքային այն բոլոր լիազօրութիւնները, որ այժմ ունեն Կովկասի վարչութեան յիշուած պաշտօննեանները, բ) Փոխարքայի զինուորական բաժնի օգնականին յատկացնել Կովկասի զինուորական շրջանի գորքերի զինուորական բաժնի առաջարարական քաղաքացիական բաժնի կառավարչապետի իրաւունքները, դ) Կառավարչական վայրերը և պաշտօնական անձերը, ինչպէս Կովկասի զինուորական այնպէս էլ տեղական վարչութիւնները պէտք է գործեն այժմ գոյութիւն ունեցող հիմքերով, որոնք բացարուած են Կովկասի օրէնքների մէջ (օրէնքների ժողովածու, հատոր II. հրատարակութիւն 1892 թուի):

7) Վերացուած են Կովկասի կառավարչապետի և Կովկասի զինուորական շրջանի գորքերի զինուորական բաժնի առաջարարական անձերը, ինչպէս Կովկասի զինուորական այնպէս էլ տեղական վարչութիւնները պէտք է գործեն այժմ գոյութիւն ունեցող հիմքերով, որոնք բացարուած են Կովկասի օրէնքների մէջ (օրէնքների ժողովածու, հատոր II. հրատարակութիւն 1892 թուի):

Թող կառավարիչ սենատը ձեռք առնէ այս կարգադրութիւնը իրագործելու համար անհրաժեշտ միջոցները:
Խսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱ:

Ցարսկոէ Սելո
26 փետրուարի 1905 թ.

Բագուի սարսափելի դէպքերը դեռևս շարունակում են լարուած դրութեան մէջ պահել հայ-թուրքական յարաբերութիւնները, ամենաշնչին դէպքից առաջանում է Բագուում և Երեւանում սարսափ: Խնքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը երբէք այնքան չի զգացուել մեր երկրում, ինչպէս այդ արիւնալի անցքերից յետոյ: Մարդ սոսկում է կարգալով այն մանրամասնութիւնները որ պատմում են ոռւս ականատեսները մայրաքաղաքի թերթերում (Օ. Օ.) Բագուի դէպքերի մատին... Հասարակական կարծիքը սպասում է որ Բագու քաղաքի և նահանգի վրայ նշանակուած սենատոր Կուզմինսկու քննութիւնը կատարուի լայն հրապարակական հիմքերով, որպէսզի կատա-

րեալ անաչառութեամբ երևան հաճուեն այդ սարսափելի վայրագութիւնների բուն պատճառները և կտպմակերպողները, ուրոնց մէջ մինչեւ այժմ լոյս տեսած վկայութիւններով, որոշ գերեն կատարել տեղական պոլիցիական հետ և թուրք ուսուցիչները... Միայն կատարեալ վստահութիւնը՝ ուր յանցաւորները կը ստանան արժանի պատիժ և արմատախիլ կ'անուին նըման զէպըերի կը կնութեան հնարաւորութիւնները—կարող է լիովին հանդստացնել երկրիս խաղաղ ազգաբնակութիւնը:

—Մեր կեանքը աւելի արդար և խելացի հիմքերով վերաշինելու հստարակական լայն հստանքը՝ որ համակում է ամբողջ պետութիւնը իր կենդանարար շունչով, տողորեց և գործակատարների դասը Թիֆլիսում։ Կարճատեւ գործադուլից յետոյ գործարանատէրերի (խոզէին) և գործակատարների (սլրիկաշչիկ) մէջ կայացաւ համաձայնութիւն հետեւալ կէտերում։ 1) Պարապմունքների ժամանակը՝ առաւօտեան ժամի 8-ից մինչեւ երեկոյեան ժամի 6-ը անընդհատ, ամեն մի գործակատար ճաշի համար ստնում է 1 ժամ. 2) առաջին անհրաժեշտութեան պիտոյքներ ծախող մագաղինները կարող են բաց լինել ժամի 7-ից մինչեւ 7 ը. 3) առևտուր անել առանց առկարկութեան, յաճախորդներին կանչելու սովորութիւնը թողնել և գործակատարներին տոկոսներով վարձատրութիւն տալը վերացնել, 4) մի տարուց աւել ծառայած անձինք, երբ լուրջ կերպով հիւանդանում և զրկում են իրանց պաշտօնը կատարելու կարողութիւնից, ստանում են մի ամսուայ ոռճիկ և տեղից չեն զրկում. 5) տարի ծառայածները հիւանդութեան դէպքում ստանում են 2 ամսուայ ոռճիկ, իսկ 5 և աւել տարիներ ծառայածները—4 ամսուայ ոռճիկ. 6) մի տարուց ոչ պակաս ծառայած իւրաքանչիւր գործակատար տարուայ ընթացքում իրաւունք ունի երկու շաբաթ արձակուրդ ստանալ առանց ոռճիկց զըրկուելու. 7) առանց յարգելի պատճառների արձակուած գործակատարը պիտի ստանայ վարձատրութիւն. եթէ մի տարուց պակաս է ծառայել—մի ամսուայ, եթէ մի տարուց աւել է ծառայել—երկու ամսուայ ոռճիկ. 8) ճաշի կամ ճաշի փողի հարցը պիտի վճռեն խանութատէրերը և գործակատարները փոխադր համաձայնութիւամբ. 9) խանութատէրերի և գործակատարների փոխադր յարաբերութիւնները պիտի լինեն բաղաքավարի. 10) գործադուլ արած բոլոր գործակատարները պիտի ընդունուեն նորից ծառայութեան մէջ և ոռճիկ ստանան գործադուլի օրերի համար։

—Մեր երկը մասուլի աշխարհում կատարուել են հետեւալ փոխադրութիւնները անցած ամսուայ ընթացքում.

Միրզա-Զալալ-Մահմէդ Կուլիկին թոյլատրուած է Թիֆլիսում հրատարակել թուրքերէն լեզուով հեռագիրներ թէ Ռուսական և թէ Պետերբուրգի գործակալութիւնների: Ա. Ս. Գուլաձէին թոյլ է տրուած Թիֆլիսում իր խմբագրութեամբ հրատարակել վրացերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր, նախնական ցենզուրայով, «Նօրատի» (Նուէր) անունով: Թոյլատրուած է հրատարակել Թիֆլիսում մի նոր հայերէն ամենօրեայ լրագիր, ևնթակայ նախնական ցենզուրայի: Խմբագիրը լինելու է պ. Գ. Մելիք-Ղարաբեկօղեանը. լրագրի անունն է «Բամբեր Կովկասի»: Թիֆլիսում այժմ հրատարակուող «Կավկազսկի Լուստոկ» և «Տելեֆոն» լրագիրների խմբագիրներին թոյլատրուած է հրատարակել իրանց լրագիրները ընդարձակուած ծրագրով:

Տիկ. Լիսիցեանին թոյլատրուած է «Հասկեր» մանկական ամսագրի հրատարակութիւնը:

ԿՈՎԿԱՍԻ ԹՐՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

Դարձեալ «Շարքի-Ռուսի» նոր ուղղութեան մասին.—Հայերն և Թիւրքիան, համերախութեան և գործակցութեան կոչ թուրք ինտելիգենցիային, —կրօնք և քաղաքակրթութիւն.—Լուսթիւնը նշանաբան:

«Շարքի-Ռուսի» Բազու փոխադրուելու, և այդ առիթով թուրք լրապրի ուղղութեան մէջ տեղի ունեցող փոփոխութեան մասին անցեալ անգամ գրել էինք: Այժմ կարեսը ենք համարում մեր ընթերցողներին ներկայացնել Մէհմէդ աղա Շահթախթինսկիի մի յօդուածը, որը մեր աչքից վրիպել էր, և որը բաւական մեծ լոյս է սփոռում նոյն հարցի վրայ:

«Շարքի-Ռուսի» ուղեգծի մէջ կատարուած փոփոխութիւնը մատնացոյց արել էինք Ահմէդ բէկ Աղայենի ծրագիրը քննելով և մեկնելով: Մէհմէդ աղան իր վերոյիշեալ յօդուածի մէջ այդ փոփոխութեան էութիւնը պարզում է աւելի բնորոշ մանրամասնութիւններով: Բանից գուրս է գալիս, որ Մէհմէդ աղան իրան ընկերակից դարձնելով Ահմէդ բէկին, ստիպում է հրաժարուել ոչ միայն թուրք կանաց ազատազրութեան վերաբերեալ հարցեր յուղելուց, այլ և յանձն է առնում մի շարք ծրագրային կրծառապումներ, զիջողութիւններ: Պէտք է ցաւով նկատել թէ այն՝ որից Շահթախթինսկին հրաժարում է, կազմում էր իր լրագրի ուղղութեան ամենահամակրելի զծերից մէկը, տալիս էր «Շարքի-Ռուսի»-ն մի ազատամիտ, առաջապէմ, կուլտուրական օրգանի նկարագրը: Այսպէս Շահթախթինսկին, եթէ մեր ընթերցողները յիշում են, երբեմն մերկացնում էր մահմեդական այլնայլ երկրների, մասնաւորապէս Թիւրքիայի վարչական թերութիւնները, ծաղրում, խայթում, հարուածում էր—թէպէտ և շատ չափաւոր կերպով—սուլթանական ուժիմի այլանդակութիւններն ու հակամարդկային արարքները:

Երևում է որ Մէհմէդ աղան պէտք է մնաս բարով առէ և այդ կարգի քննադատութիւններին: Եւ այդ շատ ափսոս: Ա՛, զիսեմ որ այս ափսոսանքը պիտի վրդովէ այժմ մեր մահմեդական հարևաններին: Նրանք այժմ պիտի բացազանչէն:

«Ա... հա, տեսէք, տեսէք, թէ ինչպէս է դուրս ժայթքում հայկական ոխը, մաղձը. տեսէք, թէ հայերն ինչպէս են խոստվանուամ, որ թիւրք կառավարութեան դէմ ուղղուած քննադատութիւնները, նրանց հրճուեցնուամ, հովացնուամ են...» Այս, մեր իսլամ հարևանները պիտի բացագանչեն այս, և որա նման ծամծմուած, յաճախ կրկնուած, սովորական յանկերդ գարձած ֆրազները: Բայց, ի զնուր: Եւ ահա թէ ինչո՞ւ: Քանի որ տոիթը ներկայացել է, խօսենք անկեղծօրէն, սրտադիմ: Բագուի արթմոտ գէպքերից յետոյ, գուցէ աւելորդ չէր լինի բաց անել մեր սիրտը մահմեդական ինտէլիգէնտների առաջ, և գոնէ մի բոպէ խօսել անկեղծութեան, ազնւութեան, արդարութեան անխարդախ լեզուով:

Մահմեդականները՝ Կովկասում, Թիւրքիայում թէ այլուր, կարծում են, այնպէս են հաւատացած՝ թէ հայերը թշնամի են, ոխերիմ, արիւնախում թշնամի Թիւրքիային: Մահմեդականները այնպէս են համոզուած՝ թէ նա՛ ովկ կրում է հայ անուն, միայն մի իդա, մի փափաք ունի—կործանուած, ընաջինջ եղած տեսնել Թիւրքիան, օսմանեան պետութիւնը: Եւ ինչո՞ւ համար: Որովհետեւ, իբր թէ, հայերը ձգտում են ինքնիշխանութեան, աշխատում են բաժանուել Թիւրքիայից, ձեռք բերել ազգային թագ ու գահ: Այս համոզմունքը, որ մեխի նման նստած է, կարծում ենք, համարեա ամեն մահմեդականի ուղեղի մէջ, վերջերս, Բագւում, Ամիլախորիի հրաւիրած խորհրդական նիստին երբ վիճում էին ողբերգական դէպքերի շարժառիթների մասին, յանկարծ արտայայտուեց արձակ, համարձակ, գրեթէ պաշտօնապէս, մի թուրք ձայնաւորի կողմից: Պ. Հաջիեվ յայտարարեց, թէ մահմեդականները չեն կարող հանդուրժել երբէք, որ հայերը որևէ ձեռվ թշնամական դիրք բռնեն Թիւրքիայի հանդէպ: Ուրեմն, պարզ է, որ հայերը մեղադրում են, նրանց վերազրում են անկախութեան, ինքնիշխանութեան ձգտումներ:

Լաւ ուրեմն: Եթէ Թիւրքերը երբ և իցէ հաւատացել են ազնիւ խօսքի գոյութեան, եթէ նրանք ընդունում են, որ կայ սրտից բղխած անկեղծ, անդիմագրելի ճիշ, մենք մեր հոգով, մեր ամրող ուժով ճչում ենք, աղաղակում ենք, երգում ենք, որ մեզ վերագրուած այդ ձգտումները անհիմն են, որ գա արդիւնք է մի մահացութիւրիմացութեան, որ գարերով միենոյն հողի վրայ, միւմեանց կողքին ապրող, միենոյն շահերով առաջնորդուող, միենոյն բարուն և միենոյն չարին ենթարկուած, տառապանքի ինչպէս և հրճուանքի մէջ եղբայրացած երկու ազգերի կեանքն է թունաւորում:

Այս, այս ամենը բարձրածայն հաստատում ենք:

Սակայն մենք մի՛թէ սիրում ենք Թիւրքիան։ Մենք նոյնքան համարձակ յայտարարում ենք, որ, ոչ մենք ատում ենք այն ըեժիմը, որ ծանրանում է անխտիր ամրող երկրի վրայ, և որը աղբիւր է միմիայն չարիքի ու դժբաղզութեան։ Մահմեղական ինտելիգէնսաներ, լոռում էք, մենք ատում ենք այն, ինչ որ ատել ենք ու պիտի ատենք ամեն տեղ, ամեն երկրի վրայ ու ամեն երկնքի տակ—բռնութիւնը, հարստահարութիւնը։

Եւ գնեք, թիւրք ընկերներ, թիւրք ինտելիգէնսաներ, եթէ ձեր մէջ կայ բանականութիւն, խիզճ, եթէ ձեզ համար մարդկային անհատի իրաւունքները նուիրական են, ի՞նչ գոյնի և ինչ ցեղի էլ որ պատկանի նա—դուք ինքներդ մեզ պիտի ասէք—բրածո։ Դուք ինքներդ ձեր ձեռքը պիտի գնէք մերինի մէջ, մի քիչ արդարութիւն, մի քիչ գութ, մի քիչ խաղաղութիւն մտցնելու համար այդ դժբաղզութեան ու սուզի աշխարհում, եւ այդ անելով դուք ոչ միայն մեզ համար աշխատած պիտի լինէք, այլ և ձեզ համար, ձեր այն եղբայրների համար, որոնք նոյն զանութեան արցունքն են լաց լինում, նոյն անաւոր ցաւի տակ են կուսած։ Բայց մի՛թէ դուք հաւատացած էք, որ բանութեան մէջ է մի ազգի, մի իշխանութեան, մի պետութեան կեանքի, գոյութեան զաղտնիքը։ Մի՛թէ սուրն ու բանան է, որ մի երկիր զրախտի է փոխում։ Այդ նոյն ուժիմի շնորհիւ չէ, որ Թիւրքիան հասաւ այս դրութեան։

Ահա թէ ինչնև համար է մեր ափոսանքը։ Թուրք մամուլը, գոնէ ազատ մամուլը, պէտք է անդադար յիշեցնէ Վոսփորի ափերում իշխող կառավարութեան իր նուիրական պարտականութիւնը—մարդկային լինել անխտիր իր բոլոր հպատակների վերաբերմամբ։ Առանց դրան՝ Թիւրքիան կը գիմէ միմիայն իր կործանման։ Եթէ հայը կուլ տայ իր արցունքը,—արաբը, մակեդոնացին, ալբանացին կը կանգնի՝ ահաւոր ու սպառնալից, իր հարստահարչի գէմ։ Այդպէս չեղաւ և անցեալում։ Մի՛թէ, երբ հայերը անմոռնչ տանում էին իրանց ծանր լուծը, այդ մինչեւ Թիւրքիան իր յայտնի ուժիմով՝ իր ձեռքից չհանեց Յունաստանը, Սերբիան, Բուլգարիան, վերջապէս առբողջ եւրոպական Թիւրքիան։ Ուրեմն, Թիւրքիան սպանող ցաւը հայերը չեն, այլ այն ներքին զարհուրելի վէրքերը, որ կրծում են նըւրան և, եթէ այսպէս շարունակուի, յամրաբար պիտի իշեցնեն գերեզման։ Ամեն մահմեղականի, զիտակից, տղնիւ մահմեղականի անյետաձգելի պարտականութիւնն է աշխատել այդ վերքերի մերկացման և բուժման։ Բանութեան երկրում, ձեր եւ-

բայրակիցները անկարող են այդ պարտքը կատարելու։ Գոնէ գուք մի դաւաճանէք ձեր կոչման։

Այս է ամեն ինտելիգէնտ հայի համոզումը. այս թող լինի և ձերը, որպէսզի գոնէ մինչ՝ երկու ցեղերի ինքնաճանաչ ներկայացուցիչներ՝ հաղորդուենք միենոյն իդէալով և ձեռք ձեռքի տուած՝ զործենք արդարութեան, ճշմարտութեան դառն, բայց փրկարար ճամբու մէջ...

* * *

Դիմենք սակայն փաստերին։ Մէհմէդ աղա Շահթախ-թիմակի՝ իր յիշեալ յօդուածում, նախ հարկաւոր յարգանքը մատուցանելուց յիսոյ Ահմէդ բէկ Աղայեվին, զրում է։

«... «Շարիֆ-Ռուս»-ն այսպէս, փոխանակ մի տնօրէն ունենալու, երկուսը պիտի ունենայ։ Այս առիթով անհրաժեշտ էնք համարում այսուհետև մեր լրագրի հետեւիք ուղղութեան գլխաւորը կէտերը յիշել։

«Մեր լրագրի հիմնալկութեան և յարասեւութեան նպատակն է ծառայել մեր մահմեղական եղբայրների նիւթակոն և բարոյական շահերին։

«Ամբողջ մահմեղականները մի դաւանելով՝ նրանց մէջանդ գոյութիւն ունեցող կրօնական տարրելութիւնը չեղեալ պիտի նկատենք։ Ինչ գէտըում էլ լինի, այսուհետև մեր լրագրում ոչ մի անգամ չպիտի գործածենք սիւննի և շիա բառերը։

«Եւրոպացիների մէջ շատ տարածուած է իրանց վարքն ու բարքը ընսաղատութեան բոլից անցկացնելու սովորութիւնը, և եթէ մարդկային խելքն ու ընութիւնը թոյլ տան՝ նրանց փոխելու։ Եւրոպացիների այդ աշխարհայեացքից, թէ չգիտենք ուրիշ շարժառիթից գրգուած՝ մենք էլ սկսեցինք անցեալներում մեր լրագրում խօսել մեր մահմեղականների մի քանի սովորութիւնների մասին։ Մեր մահմեղական հասարակութիւնը, երեսում է, որ այս տեսակ հարցերի տևումնասիրութիւնից չի ախորժում։ Դրա համար, ընդհանրապէս վարք ու բարքի, և մասնաւորապէս թուրք կանանց բաց երեսով ման գալու վերաբերեալ հարցեր չպիտի յուղենք մեր լրագրում։

«Դրացի մահմեղական երկրների զրութեան մասին այսուհետեւ վճռապէս կը հրաժարուենք ընսաղատութիւններ և դատողութիւններ ներկայացնելուց. գէպքերի, իրողութիւնների մասին կարող ենք խօսել միայն պատմուածքների ձևով։

«Մինչև ոռւսական նոր տարուայ վերջը, մեր մշտական, կտրող գըչի ընկերների թիւը պիտի աւելացնենք. իսկ չպիտի տը-

պենք յօդուածները մեր այն թղթակիցներին, որոնք իրանց միտքը արտայայտելու բաւականաչափ կարողութիւն չունին»:

Մէսմէդ աղայի ներկայացրած այս նոր ուղեգծի առաջին կէտը կարող է միայն ուրախութիւն պատճառել: Իհարկէ պէտք է մուանալ կրօնական խարութիւնները. կրօնական խարութիւնները՝ որ գոյութիւն ունին, ոչ միայն մի ազգի զանազան հատուածների, այլև բոլոր ազգերի մէջ: Այլևս անդարձ կերպով անցել են այն ժամանակները, երբ ազգերը, ժողովուրդները մոլեռանդութիւնից կուրացած՝ միմեանց արիւնի մէջ էին մարում իրանց միստիք ու բռնաւոր հոգու կատաղութիւնը: Այժմը լուսաւորուած մարդկութիւնը ոչ մահմեղական է ճանաչում, ոչ քրիստոնեայ, ոչ բուդայական—այլ միայն մարդ, մարդ՝ որի բաղդատորութեան համար պէտք է զոհել ամեն նախալաշարմունք, որի եղբայրութեան համար պէտք է քանդել ամենէց, որ սահեղել են, դիտմամբ, ուժեղներն ու խորամանկները, իրանց աիրապետութիւնը, իրանց շահագործումը ապահով հիմքերի վրայ դնելու և յաւերժացնելու նպատակով: Ահա ի՞նչու համար մենք սրտանց ողջունում ենք «Ծարքի-Ռուսի» այդ քայլը, իբրև առաջադիմութեան մի քայլ և յօյս ունենք որ մեր մահմեղական հարեանները կրօնական ներողամտութիւնը կը մղեն ոչ միայն մինչեւ շիառութեան և սիւնիութեան սահմանները, այլ և շատ առելի դէնը:

Ուղեգծի երկրորդ կէտի մասին՝ մենք յայտնել ենք արդէն մեր կարծիքը անցեալ համարում. դա սիսալ է, ողորութիւն: թուրք հասարակութեան վերածնումը մի երազ կը դառնայ, եթէ այդ հասարակութեան հիմքը, թուրք կինը՝ չբարձրանայ իր սարուկ գրութիւնից, եթէ թրքուհին էլ չվայելէ, իբրև մարդ՝ իր սարրական ու անբանաբարելի իրաւունքները:

Իսկ ինչ վերաբերում է երրորդ կէտին, մահմեղական երկրների քննադատութեան հարցին, «Ծարքի-Ռուս»-ի նահանջումը մի ցաւալի թիւրիմացութիւն է, որի մասին խօսեցինք վերևում:

Գալով չորրորդ կէտին, մայրենի լեզուով իրանց միտքն արտայայտելու բաւականաչափ կարողութիւն չունեցող թղթակիցների գրութիւնը չնրատարակելու հարցին—դա էլ մի գովելի սկզբունք է, որին «Ծարքի-Ռուս» պէտք է հետևած լինէր իր առաջին քայլեց: Լրագիրը, պարբերական հրատարակութիւնը՝ ուսումնաբանից յետոյ ամենազօրեղ գործօններից մէկն է մայրենի լեզուի տարածման: Մի լրագրի ստիպողական պարտականութիւնն է իր էջերում զետեղել միմիայն այն գըրութիւնները, որոնք չեն մեղանչում լեզուի կանոնների դէմ:

Կովկասաբնակ մահմեղականների լեզուն դժբախտաբար այնքան էլ կանոնաւոր, կոկ, կազմուած չէ: «Շարքի-Մուս»-ը հետևելով լեզուի միօրինակութեան՝ կարող է Կովկասի մահմեղականների համար անել այն, ինչ որ արել են կ. Պոլսի թիւրք լրագիրները օսմանցիների համար—ստեղծել մի գրական ընդհանուր լեզու:

* *

Թուրք հասարակութեան առաջադիմութիւնը կախումն ունի միմիայն ճշմարիտ ու անկեղծ հրապարակախօսութիւնից: Մէնմէդ ազա Շահթափինսկին՝ եթէ ոչ միշտ, զոնէ երրեմն երբեմն հնչեցնում էր այդ վերանորոգող հրապարակախօսութեան ձայնը: Այսպէս՝ «կրօնը և քաղաքակրթութեան» մասին գրուած մի յօդուածի մէջ («Շարքի-Մուս» № 85) թուրք խըմբագիրը բացատրում է մահմեղականներին, թէ որքան մեծ տպիտութիւն է այդ երկու գաղափարները միմեանց հետ շփոթել: Կըրոնքը աւելի սրտի, խղճի հարց է, քան խելքի ու դատողութեան: Նա խօսում է Աստուծոյ, յաւիտենականութեան, արքայութեան, կարձ՝ գերերկրային կեանքի մասին, իսկ քաղաքակրթութիւնը՝ ընդհակառակը, երկրային կեանքի մասին, թէ ինչպէս մարդիկ կարող են բարւոքել իրանց գրութիւնը, ապահովել իրանց գոյութիւնը: Ուրեմն, ամեն մարդ, ամեն ազգ՝ կրօնքից բոլորովին անկախ եղող քաղաքակրթութիւնից պէտք է օգտուի, որքան կարելի է: «Իմ մահմեղականութիւնս ի՞նչ արգելք կարող է լինել, որ ևս իմ տունո կառուցանել տամ ֆրանսիական ճարտարապետութեան օրէնքների համեմատ, որ սուսների շինած երկաթուղով ճամբորդեմ, և կամ սուսական «բորշը» թուրքական «բող-բաշից» գերադասեմ,» ասում է թուրք հրապարակագիրը:

«Ո՛չ միայն նիւթական, այլ և բարոյական հարցերում էլ մահմեղականները (նախկին) ոչ-խւամ ժողովուրդների քաղաքակրթութիւնից չեն խոյս տուել: Միթէ արաբները չեն, որ Հին Յունաստանի փիլիսոփաները թարգմանել և մեկնաբանել են: Եւրոպացիները յունական իմաստասիրութեան ծանօթայել են նախ արաբական թարգմանութիւնների շնորհիւ և աւագ, դարեր յետոյ միայն դիմել են յոյն, հելլէնական լեզուին:

«Հարուն -էլ-Մուշիպը մի յոյն կայսրից խնդրեց, որ մի փիլիսոփայ ուղարկէ Բաղդատ իմաստասիրութիւն դասախուելու համար: Յոյն կայսրը մերժեց: Այն ժամանակ արաբ խալիֆէն հրամայեց որ բանակ պատրաստեն, որպէս զի գնայ յարձակուի յոյն կայսեր վրայ և նրան խելքի բերէ:

«Մեր համար իրանց արիւնը թափեցին, որպէս զի իւրանց կրօնքից դուրս եղողների մոռերը սովորին։ Իսկ մինք՝ մեր ծուլութիւնը, անպիտանութիւնը նուիրական քողերի տակ պարտկած, ծածկած՝ օտար ազգերից խրտնում ենք։»

* *

«Շարքի-Ռուսի» խմբագրութեան մէջ ուսումը կ. Պոլսում ստացած և նոյնաեղացի մի աշխատակից կայ, Ֆայլիդ Նոման-զատէ, որի մի երկու յօդուածի մասին առիթ ունեցել ենր խօսելու այս էջերում։ Արդ, այդ պարոնը՝ «Շարքի-Ռուսի» այս տարուայ 16-րդ համարում տպել է մի յօդուած, որը ցոյց է տալիս, թէ մահեղականները որ աստիճան զգածում են օսմանիան կառավարութեան գէմ ուղղուած քննադատութիւններից։ «Շարքի-Ռուսի»-ում երևացել էին Թիւրքիայի մատին մի քանի յօդուածներ՝ «Ղազիթնէվիս» ստորագրութեաւը։ Այդ յօդուածները թւում է, թէ մեծ վրդովմունք առաջացրել են Կովկասի իսլամների մէջ։ Վերոյիշեալ Նոման-զատէն յայտնում է, որ այդ առիթով թէ զրաւոր և թէ բերանացի գանգատներ ստացել է այլևայլ կողմերից և շտապում է յայտարարելու, որ ինըը չէ այդ յօդուածների հեղինակը։ «Ես, զրում է Նոման զատէն, ճիշտ է շատ լաւ ծանօթ եմ թիւրքական գործերին, պալատական գաղանիքներին, բայց այդ բոլորը—նկատի ունենալով կացութիւնն ու տեղը—իմ սրտումս եմ պահել։ Ես չեմ ուղեցել Բագուի մեր ուսուցիչներից Զէմալէդինին եղբօր լնթացքին հետեւ, որը Պոլսում մի դործ չկարողանալ ճարելու պատճառով, այսուղ տեսած ըոլորովին մասնաւոր ու չնչին դէպքերը, սրանից քիչ առաջ ընդարձակօրէն պատմեց «Շարքի-Ռուսի» էջերում և փոխանակ յօնք շինելու, աչք հանեց։»

Ու պարոնը յայտնում է, որ չպէտք է Թիւրքիայի հանդիստ մարսողութիւնը խանգարել։ «Այսեղ, կովկասում, մահմեղականները բարենորոգման կարօտ հաղար գործեր ունեն, մեզ շրջապատող սարսափելի ամպերը, մեզ կաշկանդող անփիտակցութեան կապերը, մեր վիզն անցած տպիտութեան շղթանները, մեր ազգային գոյութիւնը չորացընող, նոյնիսկ մեր հիմքը փորել ջանացող ամեն տեսակ... արգելքները՝ չորս ձեռքով, մեր բոլոր ուժով ոչնչացնելու փոխարէն, ի՞նչ հարկ կայ օսմանյիների, պարսիկների մի քանի մասնաւոր, մեզ անմիաս թերութիւնները հրապարակելու։»

Ուրեմն, ամբոխը չգայթակեցնելու, զգայուն սրտերը չվերաւորելու, տղէտ ու անհեռատես նախապաշարմունքներն ու բնագիտները փայփայելու համար պէտք է լսել։ Այսպէս են դատում մեր մահմեղական հարևանները... Տիզրան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խուս-հապնական պատերազմը:—Ժրանտիան եւ Գերմանիան Մարոկկօյում:—Կրէտական ապսամբութիւն:—Արաբական շուժումը:—Բժիշկ Զավեհինի ձեռնարկութիւնը:—Թիւբանայատանում:—Պարականան զարծերից:—Նոր հնդկա-պարսկական առեւտրական ընկերութիւն:—† Ժիլ Վերն:

Մուկդէնը ընկաւ: Կատարուեց Հեռաւոր-Արևելքի պատ-մութեսն մէջ գարագլուխ կաղմող անցքերից մէկը: Այն ահեղ ճակատամարտը, որ ակում էր 14 օր և որին մասնակցում էին մօտ 850 հազ. մարտիկներ, վճռուեց յօդուու ճապոնացիների: Ռուսների կորուստը ահապին էր, մօտ 115,000, որոնցից 50 հազ. գերի ընկան յաղթողների ձեռքը: Կուրոպատկինը զրկուեց իր բանակի $\frac{1}{3}$ -ից: Ռուսները կորցրին աւելի քան 100 թնդանօթ, ահապին քանա-կութեամբ ուազմաժենը և պաշարեղէն, ինչպէս և ամբողջ տարուայ աշխատանքների արդիւնքը՝ գիրքերը ամբացնելու համար: Կուրոպատկինը հրաժարեցրուեց հրամանատարութիւ-նից և նրա տեղը նշանակուեց ծերունի դեներալ Լինեվիչը:

Զարդուած ոռւս զօրքը մասս-մաս յետ էր նահանջում գէպ հիւսիս, համարեա առանց կոսուի յանձնելով թշնամուն ճանա-պարհի բոլոր ամբութիւնները: Մարտի 3-ին ճապոնացիները գրաւեցին Տելինը, որ զառաւ Օյամայի զլիսաւոր բնակավայրը: Ճապոնացիները շարունակում են հալածել ոռւսներին, որոնք հապճեպով գիմում են Փիրին և Խարբին:

Ծովային բեմի վրայ է այժմ զարձրած բոլորի ուշա-դրութիւնը: Մարտի 26-ին Բոժեստվենսկու նաւատորմիզը անցաւ Սինգապուրի մօտով և մտաւ Խաղաղ Ռվկեանոսի ջրերը: Նրան օգնութեան ուղարկուած ներոգատովի նաւատորմիզը (Դ ուազմանաւ) այդ օրը դուրս էր եկել Զիրութիից, և 18 օր անց միայն կարող է միանալ երկրորդ նաւատորմիզի ուժերին: Այժմ Բոժեստվենսկու նաւատորմիզի մէջ կան 15 ուազմանաւեր, որոնցից 5-ը առաջնակարգ զրահակիրներ («Ալէքսանդր» Ա, «Բորո-տինօ», «Օրեօր», «Սուվորով» և «Օսլեաբլեա»): Վլադիվաստո-կում ոռւսները ունին արդէն կարկատուած և կազմ կոռուի հա-

մար «Գրումոքօյ» և «Ծոսսիա», իսկ «Բողատըրը» դեռ պատրաստ չէ: Այնպէս որ ռուսների ամբողջ նաւասարմիզը միասին վերցրած համարեա հաւասար է ճապոնականին, որ կարող է գուրս բերել թշնամու դէմ 24 ռազմանաւ: Անհամբեր սպասուող ծոփային ճակատամարտը երեխ կը վճռի հաշտութեան հարցը, և խաղաղութիւնը կը վերականգնուի ի մեծ ուրախութիւն ռուս հասարակութեան լաւազարն մասի, որ ներքին խոշոր բեֆորմներին աւելի մեծ նշանակութիւն է տալիս, քան այսուհետեւ նոյնիսկ յաղթութեան հեռաւոր Մանջուրիայում կամ Խաղաղ Ավկեանսոսի ջրերում:

Ոռւսաստանի ժամանակաւոր թուղացումը բաւականին խոշոր աղղեցութիւնն է արել միւս պետութիւնների քաղաքականութեան վրայ, անցեալ անգամ մենք տեսանք Անգլիայի և Թիւրքիայի ընթացքը, այժմ նոր տարր մտցրեց միջազգային հարցում և Գիրմաններն: Ա.Փրիկայի հիւսարևեմտեան ծայրում, մահմեղական Մարոկկում, ուր մի տարի առաջ գերմանական շահ չէր գտնում Վիլհելմ Կայսրը և Թրանսիան Անգլիայի համաձայնութեամբ իր գերիշխանութիւնն էր մտադիր հաստատել, այժմ Փրանսիական ազգեցութեան բացառիկութիւնը վիճելի է համարում: Վիլհելմը անցնելով Մարոկկօի կողքով հարկ համարեց կանգ առնել Մարոկկօի նաւահնութիւն Տանժերում: Գիրմանական կայսրի շքեղ ընդունելութիւնը չէր կարող մեծ աղղեցութիւն չանել արեկը զաւակների վրայ և չգրօշմել նրանց երեակայութեան մէջ Գիրմանիայի հզօրութիւնը: Վիլհելմը չբաւականացաւ հասարակ տեսակցութեամբ Մարոկկօի սուլթանի հետ, այլ և ընդգծեց՝ թէ ճանաչելով սուլթանին իրեն ազատ վեհապետ ազատ երկրի Գիրմանիան պէտք է, առանց սրա նրա միջնորդութեան վրայ ուշք դարձնելու, միշտ իր գործերը ուղղակի տեսնի սուլթանի հետ: Այժմ, աւելացրել է նա, ժամանակը չէ եւրոպական ոգով որևէ բեֆորմի ներմուծում այդ երկրում, բոլոր բեֆորմները պէտք է հիմնուած լինին խոլամի աւանդութիւնների և օրէնքի վրայ: Մարոկկօին միայն հարկաւոր են խաղաղութիւն և անզորբութիւն:—Պարզ էր այդ բոլոր խորհուրդների և ակնարկների նշանակութիւնը: Թրանսիայի համար բացւում է Մարոկկօյում մրցութիւն գիրմանական առևտուրի հետ, իսկ Գիրմանիան այդ կողմից անխոցելի է, որովհետեւ գերմանացու պատրաստած արդիւնքները աւելի էժան են նստում և գիրմանացին գիտէ լաւ կազմակերպել վաճառման գործը և աւելի առկուն է: Այդպիսով Մարոկկօյուն

հասցրուեց Ֆրանսիային ոչ միայն բարոյական կամ պրեստիժի հարուած, այլ և նիւթական:

Մենք անցեալ անգամ տեսանք թէ ինչպէս Գերմանիան դուրս վանեց ֆրանսիական ազգեցութիւնը Մերձաւոր Արևելքում, Թիւրքիայում: Այժմ, ուրեմն, հասել է հերթը և աֆրիկական երկրներին: Շոյելով մահմեդականների կրօնասիրութիւնը Գերմանիան լաւ դրասում է իր «գէշէֆտները» (առեալրական ձեռնարկութիւնները) և զարմանալի խանդուութեամբ չէ թոյլ տալիս որ իր ձեռքերից դուրս կորդեն Թիւրքիայի տնօգնականութեան շահագործումը: Գերմանիան սպաննաց սուլթանին, երբ լսեց որ թնդանօթներ պէտք է պատուիրուեն և ֆրանսիայում, որի գեսպան Կոնստանը միշտ առանձին հուանդ է արտայայտում երբ հարցը գալիս է Ֆրանսիայի վաշխառուների և խոշոր կապիտալիստների շահերի պաշապանութեան և զարմանութի թոյլ է գտնուում երբ ճնշուածների կողմը պէտք է ըստել զուտ մարդասիրական հարցերի ժամանակ...

Բուփորում ամուր ոտքով կանոնած Գերմանիան արդէն նաւթարպիւնագործական մեծ ձեռնարկութիւններ է ուզում սկսել Միջագէտքում, որի նաւթային հարստութիւնների մասին առիթ հնք ունեցել անցեալներում խօսելու:

Ազգերի ազատութիւնն էլ ստրկութիւնն էլ իրանց շահերի մաշտաբով չափող մեծ պետութիւնները այժմ կրկին սովորուած են զբաղուել կրէտական հարցով: Ազատելով այդ կղզին թիւրքական բեժիմից, Եւրոպան չուզեց թողնել իրանց կրէտացիներին՝ վճռելու թէ ինչպէս են ուզում անօրինել իրանց բաղդը, և արուեստական ինչ որ խնամակալութիւն սարքեցին: Կրէտացիները ուզում էին որ իրանց չանչատեն արիւնակից Յունատանից: Եւրոպան այդ անխոհեմութիւն համարեց և միջին ճանապարհ ընտրեց, նշանակելով այդ կղզու վրայ կառավարիչ յունաց տրքայազն Գէորգին: Թիւրքական լծից ազատուած կրէտան, մի քանի տարի ազատ շունչ քաշելուց յետոյ, դիմումներ արտ Եւրոպային որ խաղաղ ճանապարհով կատարուիներկայ կացութեան յեղափոխում—և կրէտան միացուի Յունատանին: Կրէտայի կառավարիչը արքայազնի ճանապարհորդութիւնը Եւրոպայում և գիմումները արքունիքներում աջողութեամբ չպատկուեցան: Եւ կրէտան ապստամբունց արդէն իր երկկույց ազատիչների և այսօրուայ խնամակալների դէմ: Ապստամբները դիմում են մեծ պետութիւրներին խնդրելով որ յանուն քաղաքակրթութեան զինուած ոյժով չփորձեն ձնչել այդ բնական շարժումը և յարգելով ազդային ժողովի վճիռը, միացնեն կղզին

Յունաստանի հետ: Թիւրքիան, դուցէ, դեռ կարողանայ հաշտուել այդ մասի կատարեալ անջատումից, սակայն Մակեդոնիան և Արաբիան նա հեշտութեամբ բաց չի թողնի իր ճանկերից:

Պատրաստում է ապատամբութիւն Մակեդոնիայում, շարունակում է և արաբների շարժումը: Եւրոպա փախած Հեջիր-Ազուրիբէյ նորերս հրատարակել է Պարիզում «Reveil de la nation arabe» դերքը (Արաբական ազգի զարթումը), որի շապկի վրայ խոշոր տառերով տպուած են հեղինակի քաղաքական credo-ն, որ է. «Արաբներով բնակուած հողերը պէտք է պատկանեն արաբներին, բացառապէս թիւրքերով բնակեցրուած նահանգները—թիւրքերին, Հայաստանը՝ հայերին, Քիւրդիստանը՝ քիւրդերին, յունական կղզիների խումբը՝ յոյներին, իսկ Մակեդոնիան պէտք է բաժանուի Բուլղարիայի, Սերբիայի և Յունաստանի՝ միջև»: Համակրանքով վերաբերուելով հայերին, հեղինակը գտնում է որ հայերի շարժումը պակաս ազգեցութիւն չի արել արաբական ազգային ինքնազիտակցութեան գործում: Եօթ ամիս կոիւ մղելով օսմանեան քայլայող բեժիմի դէմ, արաբները այժմ վստահ են իրանց ոյժերի վրայ: Կրօնական տարբերութիւնը այլ ևս ոչ մի դեր չի խաղում նրանց մաքառման գործում: Առաջարկութիւնը ուղղութագիր է ճանաչուած և մուսուլման արաբներին միացել են իրանց ձգտումներով նաև Սիրիայի և Պաղեստինի քրիստոնեայ արաբները: Եզիսակառում, Եւրոպայում և Ամերիկայում արաբները յեղափոխական կոմիտեներ են կազմել, զէնք և միջոցներ են հայթայթում ապատամբներին...

Թիւրքա-Հայաստանում սուլթանը կարողացաւ խեղդել անդէն ազգաբնակութեան բողոքի թոյլ փորձերը: Զարդերից և աւելումներից արիւնաքամ, սովամահ, ցրտահարժողովրդին օգնելու համար ամբողջ ձեռ նախապատրաստութիւններ էին տեսնում: Ֆարունն էլ անցաւ և գեռ չգիտենք աջողութեց Սասունի և Մուշի դաշտի հայերի բժշկական և սահիտարական օգնութիւն հասցնելու նպատակով բժիշկ Զավրիելի ձեռնարկութիւնը: Հասարակութիւնը հետաքրքրում էր այդ հարցով և տեղական լրագրներում տառւած էր թէ «Խուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը և Կ. Պոլսի սուսաց լիազօր զեսպան իվան Ալէքսէելիի Զինովիէվի օգնութեամբ զոկոր Զավրիէվը ձեսք է բերել թոյլտուութիւն թիւրքաց կառավարութիւնից՝ գնալ Մուշ և այնուեղ բժշկական ուսանիտարական օգնութիւն հասցնել տառապեալ հայ ժողովը»

զին, ինչպէս և այլտպգի տառապեալներին, որոնք զիմելու կը լինեն սանիտարական խմբի օդութեան: Այդ խումբը բաղկացած է բժիշկ Զավրիէլից և 3 ֆէլիչէրներից: Խումբը իր հետ տանում է զեղորայքի և տողջապահական—ախտահանիչ նիւմիների բաւական մեծ քանակութիւն: Խմբի ծախքերը պէտք է նոգացուեն ինքնակամ նուիրատութիւններով, որոնք պէտք է ուղարկուեն Կ. Պոլսի ոռւսաց դեսպան ալ. Զինովիէլին՝ բժիշկ Զավրիէլին հասցնելու համար: Դեսպան Զինովիէլը այդ նպատակով սուսացուող բոլոր զբամական նուէրները կ'ուղարկէ Մուշ, ոռւսաց Բիթլիսի հիւաստոսի ձեռքը, գոկտոր Զավրիէլին տալու համար: Վերջինս պարտաւոր է պարբերաբար հաշիւ ներկայացնել գեսպանին սուսացուած զումարների և բախչուած նողաստների մասին: Բժիշկ Զավրիէլի միստիան շտապեցնելու և նրան դիւրութիւններ հայթայթելու համար արտաքին գործերի մինիստրութիւնը յանձնարարել է Կովկասի բարձր իշխանութեան մօտ գտնուող սահմանագծային յարաբերութիւնների պաշտօնեայ ալ. Կախանովսկուն ամեն ահսակ աշակեցութիւն ցոյց տալ բժ. Զավրիէլի ձենարկութեան: Շնորհիւ ալ. Կախանովսկու ձեռք առած միջոցների, խմբի ուղևորութիւնը սահմանից մինչև Մուշ կը կատարուի ապահով կերպով: Թիֆլիսում արդէն լուր է սուսացուած, որ սուլթանը նոյն իսկ իրադէ է տուել խմբին սահմանագլուխը անցնելու և Մուշ գնալու մասին»:

Պարսկահայերի վիճակը անհամեմատ աւելի միսիթարական է շնորհիւ այն համգամանքի որ պարսից կառավարութիւնը բարեկամաբար է է վերաբերում իր երկրում ապրող այդ խաղաղ-կուլտուրական տարրին: Բաղուի ջարգերի փորձերը Պարսկաստանի զանագան անկիւններում աջողութիւն չունեցան պարսից իշխանութեան ձեռք առած միջոցների շնորհիւ: Խոշոր խանակութիւններ տեղի են ունեցել միայն Մեշէդում: Եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը հետևեալ հեռագիրն է ուղարկել Թէրան պարսից Մուղագիֆէր-էղդին Շահին:

«Նորին Կայսերական Մեծութիւն իրանի Շահնշահին, ինձ հետազրում են Թիֆլիսից, որ Մէշէդում տեղի է ունեցել կոտորած, աւարառութիւն հայերի և քրիստոնեաների մէջ: Ապահով եմ, կարգը կը վերականգնուի անմիջապէս և Զեր հայ հաւատարիմ հպատակները կը վայելեն ինչպէս միշտ—Զեր Կայսերական Մեծութիւն հայրական բարձր հովանաւորութիւնը: Եւ ես իմ զառամեալ օրերում ազօթում եմ Աստուծուն իրանի մեծ վեհապետի ասողջութեան և երկար կեանքի համար:

Մրկրտիչ Կաթողիկոս Ամենային Հայոց»:

Մուզաֆֆէր Էդլին Շահը պատասխանել է.—Էծմիածին.
Նորին Սբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Մեր բարձր հովանաւորութիւնը չէ դադարել գործառուելուց Մեր Կայսրութեան մէջ ապրող հայերի և քրիստոնեաների վերաբերմամբ, նրանք այնտեղ վայելում են և կը զայլեն կատարեալ ապահովութիւն։ Ես հաւատացած եմ, որ Զեր Սբութիւնը կը շարունակէ բախշել նրան ձեր իմաստուն խորհուրդները։

«Մուզաֆֆէր-Էլլին»։

12/III 1905 թ. Թէհըն.

Թէրթերում լրյու տեսած տեղեկութիւններից երեսում է որ Հեռաւոր-Արեւլիք պատերազմը և Խուսաստանի համեմատական թուլութիւնը ներկայումս ազգել է և իրանի վեհապետի քաղաքականութեան վրայ. Պարսկաստանը դիմում է և իր գօրքիրը վերակազմում. նրա մերձեցումը Անդիխային ակներև է։ Պարսկաստանում անդղիական ազգեցութեան օրէցօր աճման մնար նուիրեցինք անցիալ անզոտ մի քանի տողեր։ Այժմ Հնդկաստանի տուստրական կապը Պարսկաստանի հետ ամրացնելու նպատակով կազմուել է նոր հնդկա-պատրակական տուստրական մի ընկերութիւն, որի նախագահը Ա. Բորերու Բոմբէյում հետեւալ կերպով է բնորոշել այդ ընկերութեան նպատակը։ «Մենք ստացել ենք Պարսկաստանում անազին առաւելութիւններ միւս պետութիւնների համեմատութեամբ և այդ առաւելութիւնները պահպանելու համար հիմնել ենք նոր առաւելութեական ընկերութիւն, որի նախագահ լինելու պատիւն ունիմ։ Կայլաթայում եղած կենտրոնական բաժանմունքից բացի մենք բացում ենք բաժանմունքներ Բոմբէյում և Բենգալում և տասը բաժանմունք Պարսկաստանում։ Մեր ընկերութիւնը կը կենտրոնացնի իր ձեռներում ամբողջ առևտուրը Պարսկաստանի հետ, Հնդկաստանի ամբողջ արտահանութիւնը, ուղղելով նրան հաւասարապէս զէպի բոլոր սպառող շուկաները։ Բրիտանական իւրաքանչիւր առևտրական պիտի օգտուի այդ ընկերութեան ոչ միայն ցուցմունքներից և նիւթեական նպաստներից, այլ և իրաւունքների պաշտպանութիւնը իր վրայ է վերցնում անդիխական առևտրի պահպանութիւնը Պարսկաստանում միւս երկրների արտահանողների ունաձգութիւններից և միշտ պատրաստ է լինելու պաշտպաննել նրան զինուած ձեռքով։ Այդ նպատակով պարսկական եզրերով շինուած են ծովային կայտաններ և ամեն մի առանձին առևտրական գործակալութիւն կը ստանայ զինուած բական պահպանութիւն։ Մենք վճռել ենք ոչ մի դժուարութեան առաջ չնահանջել, որպէսզի չքացնենք ուսւա և գեր-

ման ազգեցութիւնը։ Այժմ, երբ իրականացաւ ընկերութեան բացման եղելութիւնը, երբ մենք շահի կառավարութեան հետ կնքեցինք առևտրական պայմանագրեր, կարող ենք այդ մասին խօսել համարձակօրէն։ Միակ լուրջ հակառակորդը Պարսկաստանում մոռւսաստանն է, որ Պարսկաստանին դրամ է փոխ տուել՝ երկաթուղինել կառուցանելու նըսպատակով։ Մանջուրական պատերազմի շնորհիւ մեզ համար ստեղծուած նպաստաւոր բոպէն հազիւ թէ կրկնուի, այդ պատճառով մեր բոլոր ջանքերը ղետք է ուղղուած լինին այն նպատակով որ գրաւեն նոր սպառողների (մուշտարիների) վասահութիւնը։ Դարձնում եմ ձեր ուշաղրութիւնը այն ֆակտի վրայ, որ մոռւսիայի առևտրական գործակաները այժմ շրջում են պարսկական բոլոր առևտրական կէտերում՝ վաճառականական ձեռնարկութիւններ հաստատելու նպատակով։ Միը կողմից արդէն միջոցներ են ձեռք առնուած որ այդ ձեռնարկութիւնները չկայանան, և մասամբ արդէն հասել ենք մեր նպատակին։ Ահա թէ ինչ կերպ են մրցում անգլիացիները...

Ժիլ Վերն (1828—1905) իր ծննդավայր Ամբիչնում վախճանուեց 78 ամեայ մի քրանսիացի, որ իր կեանքում զրել է 90 վէպ և յայտնի է համարեա իրաքանչիւր մի մարդու, ով գրել կարդալ գիտէ։ Ժիլ Վերնի վեպերը իրանց տեսակի մէջ միակն են։ Ժիլ Վերնը ստեղծեց վէպի մի ինքնուրոյն ձև, որի շնորհիւ կարողանում էր իր պատանի ընթերցողներին հետաքրքել գիտական հարցերով և մատակարարում էր նրանց գիտական պաշար։ Նա վեր էր սլացնում ընթերցողին երեակայութեան մի աշխարհ, ուր գիտութիւնը միացած բանաստեղծութեան հետ թուիչքներ են կատարում լուսնի շուրջ, ծովերի յատակում, պտտում աշխարհի շուրջը, թափառում օգային ովկիանոսում, երկրագնդիս հեռաւոր անկիւններում, թափանցում երկրի միջուկը։ Ինքը երբէք չճանապարհորդած ժիլ Վերնը գիտական—ֆանտաստիկ մի ուղեցոյց էր երիտասարդ ընթերցողների համար գիտութեան հրաշքների աշխարհում։ Նա լայն մտաւոր հորիզոններ էր բանում իր մանուկ ընթերցողների առաջ, ներշնչում նրանց մէջ հաւատ դէպի մարդկային մտքի զօրութիւնը, խիզախութիւն և կամք ամենայանդուազն իղձերը իրագործելու համար։ Նրա ազդեցութիւնը քաղաքակիրթ մարդկութեան մատադ սերնդի մտաւոր կրթութեան վրայ ահազին է եղել և գետ երկար ժամանակ նա կը շարունակի մեալ պատանիների ամենասիրուած հեղինակը։

Հ. Ս.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳԻՐՈՒԹՅԱՆ

I

Ամենակին նպատակ չունենալով վիճաբանութեան մէջ մասնել «Մուրճ»-ի 1904 թ. № 3-ի յարգելի քննադատիս հետ, սակառուած եմ նկատողութեան առնել հետեւեալը:

Վ. Գ. Բաստամեանը, Ա. Եպ. Սեղրակեանը և ես գրել ենք ամուսնութեան մասին մի աշխատութիւն։ Հարկապէս հայ եկեղեցու ամուսնութեան իրաւունքի համար երեքիս աղքիւրն էլ այդ եկեղեցու ժողովների կանոններն են. թողնելով հ. Բաստամեանի աշխատութեան մասին մի այլ տեղ խօսել կանցնեմ Ա. Եպ. Սեղրակեանի գրքին։

Ամուսնական հաս ու չհասի աստիճանների մասին եկեղեցական կանոնները հասկանալիս և բացատրելիս՝ երկուսս եկել ենք հետեւեալ եզրակացութիւնների։—Ս. Սեղրակեանն ասում է 1) Աշտիշատի ժողովը (365 թ.) արգելել է չորրորդ աստիճանի պատկը. 2) Շահապիվանի ժողովը (447 թ.) չորրորդ աստիճանը. 3) Դուինի բ. ժողովը հինգերորդ աստիճանը. 4) Պարտաւի ժողովը չորրորդ աստիճանը. և 5) Սսի ժողովը հինգերորդ աստիճանը։

Ես՝ ճնոյն ինքնուրոյնութիւնը» չունեցող Արաէն վարդապետս դրա հակառակ ասում եմ. 1) որ Աշտիշատի ժողովը արգելած աստիճաններ չի թւում, և եթէ նա արգելել է, դա երրորդ աստիճանը պիտի լինի։ 2) Շահապիվանի ժողովն արգելել է ստուգապէս երրորդ աստիճանի արենակացական պատկը։ 3) Դուինի բ. ժողովն եղել է ներսէն բ. կաթուղիկոսի և ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի օրով, և որովհետև նըրանց օրով գրուած կանոնների մէջ ամուսնական չհասութեան մասին և ոչ իսկ մի ակնարկ կայ, ուստի և մենք չենք ընդունել որ Դուինի ժողովը այդպիսի խնդրով զբաղուած լինէր, որի պատճառաւ էլ չենք յիշել խապաս։ 4) Պարտաւի ժողովն արգելել է չորրորդ աստիճանը և 5) Սսի ժողովը վեցերորդ աստիճանը։ Այսաեղ հարևանցօրէն ասենք, որ մեր եզրակացութիւնները էապէս տարիերւում են Բաստամեանի ասածից։ Թէ որպիսի՞ միծ տարբերութիւն կայ Սեղրակեանի և նուատիս մէջ այդ արդէն տեսաք. բայց դա դեռ բաւական չէ։

Եկեղեցական իրաւունքի ինչ զիբք էլ վերցնէք, կտեսնէք, որ յունա-բուլգանդական եկեղեցին ու պետութիւնը մինչև 385 թ. ոչ մի արգելք զրած չունի չորրորդ աստիճանի պսակների համար: Նոյն իսկ կարող ենք ասել, որ բացարձակարգելք չկար և երրորդ աստիճանի համար: 385 թ. Թէոդոս մեծը օրէնքով արգելեց չորրորդ աստիճանի պսակը, սակայն մի քանի տարի յետոյ նրա յաջորդները վերացրին այդ արգելքը: Դրանից յետոյ թէ չորրորդ դարի վերջում, թէ հինգերորդ և վիցերորդ գարերում պետական օրէնքներով, որը եկեղեցու համար պարտապիր էր, արգելում էր բացարձակ կերպով երրորդ աստիճանի պսակը ու թոյլ տրւում չորրորդը: Ս. Սեղբական այդ պատմական փաստերին հակառակ պնդում է, թէ հայ եկեղեցին «քրիստոնէութեան առաջին չորս գարում վարուել է ճիշտ այնպէս, ինչպէս վարուել են յունական և հոռվմէական եկեղեցիները»: Արդէն մեծք տեսանք, որ այդ եկեղեցիների համար 385 թ. հրատարակուած օրէնքը, որ արգելում էր չորրորդ աստիճանի պսակը, գոյութիւն ունեցաւ մի քանի տարի միայն. արդ, 385 թ. օրէնքը, որ գոյութիւն ունեցաւ մի քանի տարի միայն, ինչպէս կարող էր 365 թ. Ներսէս մեծի Աշտիշատի ժողովի մէջ սահմանած կանոնի վրայ աղուել, երբ ինքը սահմանուել է 385 թ:

Ս. Սեղբակեան ահա այլպիսի զիտական հիմքի վրայ է յենում իր կարծիքը, և այն ոչ եսթաղրաբար, այլ «կարելի է հաստատապէս ասել, թէ այդ (Աշտիշատի) ժողովում արգելուած պիտի լինի նոխ՝ արենակցական չորրորդ աստիճանի ամուսնութիւնը»: Սա զեռ բաւական չէ: Շահապիվանի ժողովի մի կանոնի (ժգ.) մէջ կայ «՚ի հրէութեան կործանեսցի» նախագասութիւնը: Ս. Սեղբակեան ծանօթութիւնը հրէտական օրէնքին՝ նրան թոյլ է տալիս պնդելու, որ այդ օրէնքով (30—32 երես) թոյլ է տրւում չորրորդ աստիճանի պսակը և արգելում երրորդը, ուստի և «՚ի հրէութեան կործանեսցի» խօսքերն իւրեն հիմք վերցնելով, նա արդէն հաստատ կերպով եղբակացնում է, որ Շահապիվանի ժողովը արգելում է չորրորդ աստիճանի պըսակը, նա մանաւանդ, որ իր նայած ձեռագրի մէջ XVIII դարի) ասուած է հօրաքոյրորդի: Նթէ սրբազնը ձանձրութիւն յանձն առնէրնայելու միւս ձեռագիր կանոնագրքերը, կը տեսնէր, որ իր ձեռքի տակ եղած օրինակը ամենավատ, տգէտ գրչի ձեռագիր է նախ. երկրորդ, մնացած բոլոր ձեռագրերը, թուով 27-ը, որոնց մէջ կայ և XIV դարի ձեռագիր, ունին հօրաքոյր, որ կը լինի երրորդ աստիճանը, և ոչ թէ հօրաքոյրորդի, որ տգէտ գրչի

սխալ է։ Այս մասին մենք առիթ կ'ունենանք խօսել մի այլ տեղ, ուստի անցնենք։

Մովսիսական օրէնքը, ճշմարիտ է, արգելում է երրորդ աստիճանի արենակիցների պատկը, սակայն ոչ բոլոր դէպքերում, ուստի և յատկապէս թւում է այն արենակիցներին, ուրոնց հետ չի կարելի ամուսնանալ. ըստ այդ օրէնքի, երրորդ աստիճանի մասացած բոլոր ազգականների հետ կարելի է ամուսնանալ։ Մի կարևոր տեղեկութիւն, որ պակասում է ս. Սեղբակեանին, ու ձգում սխալ ենթադրութիւնների մէջ, որի մասին իր ժամանակին ունի ակնարկած «Ամուսնական Տարակուսանքներ» գրքի հրդինակը։

Շահապիվանի կանոնն ասում է «... զքոյր կամ քեսորդի, կամ զեղրօրորդի, կամ զօրաքոյր և կամ զայլ ոք յազգին իւրում մինչև՝ ՚ի չորրորդ ծնունդն կին առնել մի իշխանց»։ Թուած օրինակները երրորդ աստիճանից բարձր չեն գնում։ Վերևում հրէից և յունա-ըիւղանդական օրէնքները տեսանք. արդ, եթէ ազդուել ենք նրանցից, որ անկասկած է, համեմատական ուսումնասիրութեան եղանակն ու պարզ տրամարանութիւնը ասում են, որ Շահապիվանի ժողովը արգելել է երրորդ աստիճանի չհասութիւնը, ուստի և երբ ասում է «մինչև չորրորդ» խօսքերը, չորրորդն ինքը մէջը չէ և չի էլ կարող լինել։

Ինչ որ է, կան շատ տարբերութիւններ էլ, որոնց մասին աւելորդ եմ համարում գրել։

Յերածս փաստերը ցոյց տուին, որ ոչս. Սեղբակեանը և ոչ էլ հ. Բաստամեանը, որ առաջնի գլխաւոր ազբիւրն է, կաւելացընեմ ես, ինձ աղբիւր չէին կարող ծառայել։

Այժմ, երբ մի հեղինակի համար ասում են, որ նա այս ուայն հեղինակի հետ (Բաստամեանի և Սեղբակեանի) համեմատած նոյն ինքնուրոյնութիւնը չունի—խօսքը հայ եկեղեցու կանոնները բացարելուն պիտի վերաբերի այստեղ—այն ժամանակ պէտք է ցոյց տալ այն աղբիւրը, որից այդ հեղինակն օգտուել է ու քաղել իր աղբիւրը։

Արսէն վարդապէտ

1905 թ., մարտի 20
Թիֆլիս.

II

Կարդալով «Մուրճի» ներկայ տարուայ փետրուար-մարտի համարներում գերապատիւ Եղեշէ ծայրագոյն վարդապէտի բացարութիւնը այն մասին, թէ «ո՞վ է եղել պատճառ Լիլաւայի դպրոցների փակման 1903, 4 ուսումնական տարուայ ընթաց-Ապրիլ, 1905.»

քում» և գտնելով այստեղ իմ հասցէին ուղղուած անհիմն մեղաղբանք՝ պարտք եմ համարում ներկայ զրութեամբ հերքել այն:

Առապատականի նախկին առաջնորդը առում է որ ես գպրցին պարտ եմ 500 թուման և այդ պարտքի վճարումը վեր է իմ նիւթական կարողութիւնից: Այդ մասին պատիւ ունիմ յայտնելու, որ պարտքիս դիմաց ես գրաւ էի զրել հոգարարձութեան մօտ, օրինական վաւերագրով, իմ տունը, որ երկու երեք անգամ աւելի տրժէ, քան 500 թումանը և այդ օրինական վաւերագրը հաստատել էր իր ստորագրութեամբ ինքը զեր. Եղիշէ ծ. վ. Մուրադեանը:

Արդ, եթէ նա ինձ անվաստահելի պարուապան էր համարում ինչու էր իր սեփական ստորագրութեամբ հաստատում իմ մուրհակը: Աւելորդ եմ համարում յիշատակել, որ ես միշտ իր ժամանակին վճարել եմ պարտքիս տոկոսիքներն և կարող եմ վերեսում յիշուած 500 թումանը դնել հոգարարձութեան տրամադրութեան տակ, որա առաջին իսկ պահանջի համաձայն:

Արշակ Ղոբրաննեանց

1905 թիւ մարտ 26-ին
Թաւրիդ:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Գիտութեան», թիւ 4, յունուար:
—Մէնք նկատել էինք (1904, 11)՝
այդ հանգիսի մի քանի թերութիւն-
ները, այժմ, ինչպէս կարզում ենք այդ
թւում «Գիտութեան» ընթերցող-
ներից ոմանք նոյն տուրքութիւն-
ներ են անում խմբագրութեան, յայտ-
նելով որ իրանց հասկացողութիւ-
նից վեր են այդ հանգիսի նիւթերը ի-
րանց բռվանդակութիւնը և լեզուվ:
Խմբագրութիւնը լոստանում է յօդ-
ուածների ժողովրդականացման վրայ
աւելի մեծ ուշադրութիւն դարձնել:
«Երբ ժամանակը զայ, աւելացնում է
խմբագրը, Գիտութիւնը պիտի սկսի
զիտական այլ և այլ ճիւղերուն վրայ
ժողովրդական դասագրքերու հրա-
տարակութեանց շարք մը»: Մէնք ա-
սել էինք, «Վատ չէր լինի եթէ ին-
տելիքինս ընթերցողների համար
գրուածքների կողքին գրուէր նաև
բնական զիտութիւնների սիստեմա-
տիկական դասընթացների մի շարք,
գրուած տարրական պատրաստու-
թիւն ունեցողների համար»: Այդ
կերպ էին ժողովրդականացնում բր-
նական գիտութիւնը Անգլիայի ա-
մենահոչակաւոր գիտնականները»:—
Ուրեմն, այդ մեր պահանջն էլ ար-
դարացի է գտնում «Գիտութեան»
խմբագրութիւնը: Շատ ուրախ ենք:
Ցիշած թուի բովանդակութիւնը
հետևեալն է. Ժ. Փանուրն գիտութիւն
և բանաստեղծութիւն. Է. Եռնել
Ռատիումը և կեանքը. Ռևունեան
Ելքարաբուժութիւնը. Գ. Բաղա-
սեան կեանք և վանդակիկներ. Ման-
կավածական, զիտական լուրեր, օգ-
տակար զիտելիքներ:

Խմբագրութիւնը խոստանում է
յաջորդ թուով բանալ և գիւղատնտե-
սական բաժին:

«Ծառայի», № թիւ 12.—«Խորհր-
դածութիւններ օրուան զրական
կեանքին վրայ» յօդուածում, օգ-
տուելով «Բիւզանդիոնի» տարեկան
տեսութիւնից թրքահայ զրականու-
թեան վրայ, ահա թէ ինչ զրական հա-
շուեկշիռ է անւում: Տպուած է մի տա-
րուայ ընթացքում, բաց առած դըպ-
րոցական և դասական աշխատասի-
րութիւնները, 11 գիրք, որոնցից 5
հատ կրօնական, 2 հատ բանաստեղ-
ծութիւն, 1 հատ ժողովրդականա-
ցրած կէս-բժշկական, 1 հաւաքածու,
և 1 թատերական: Վերոյիշեալ 11
հատորներից եթէ հանենք երկու
խմբագրմանութիւն և մէկ հաւաքա-
ծու, կ'ունենանք ինքնագիր ուիթ
հատոր:

Պարբերական հրատարակու-
թիւնների մէջ անցեալ ապրուայ
ընթացքում ուշագրաւ են համարւում
միայն—Յովի. Գաղանճեանի «Եւզո-
կիացի հայ կինը» տեսայեանի «Վէ-
պը», Զիվիլ-Սարաֆի «Միամիտի
մը արկածները և «Պոլսական տե-
սարանները»:

«Արդի Պոլսահայ լուագրութիւնը»
—իր զիւրքը, գերը և ընթացքը յօ-
դուածում, որ սկսուել է նախորդ
համարում և գես չի վերջանում, ե-
նովք Արմէն այնքան էլ պատուաբեր
գոյներով չէ ներկայացնում մեր
թիւրքահայ օրագրութեան ներքին
կազմը: Նոյն հարցերի շուրջ են պը-
տըսում, սակաւն այլ տեսակէտից,

Արամ Անտոնիանի «Օրուան զրականութիւնը»: Դուքս է գալիս, որ թերթիրի շատանալու հետ չեն աւելացել Պոլսում գրական ոյժերը, ուստի թերթիւնը «գոճէ լեցունելու համար» դիմում են «անարժան» և «տաղանդակաղուրկա սկմնակիներին: Լըռազրապետները իրանց շահերի զոհողութիւն յանձն չառնելով գերազառում են ձրի աշխատակիցներ ունինալ: «Եյդ ինքնեկ աշխատակիցներու խումբին մէջ—որուն պէտք է կցել նաև գաւառային թղթակիցներու մեծամասնութիւնը,—լրագրապետին տեսակէտով ամենէն թանկագինները անոնք են, որոնք հրապարակախօսութիւն կ'ընեն, այսինքն թաղային խնդիրներ կը յուզեն, գաւառային առաջնորդները կը ձադեկեն, հանրային պաշտօնէութիւնները կը քննադատեն, աղդի հստատութեան վարչութիւնը կը իմարձն, հանրային անհատներու գործունէութիւնը կը գնահատեն և այլն: Յօդուածազիրը՝ թիւրքահայ լրագրական ընկած դրութեան պատճառները քննելիս՝ մեզ թւում է թէ նմանում է այն գիտողին, որ ծառերի լեռնեց անտառը չի տեսնում... Ամենամեծ պատճառը սոսկալի բեժիմըն է, որ սպանում է ամեն մի կենդանութիւն, աղատ զարդացում, իսկ թուած պատճառները հետևանքներ են այդ գլխաւոր անորմալ պայմաններ...»

«Մասիս», թ. 1, 2.—Մի քանի ժամանակվ կալպարած այդ հանդեպը կը կիրկին սկսեց հրապարակուել: Եյդ համարներում տպուած են հետևալ յօդուածները.

Թ. 3. Պէրպէրեան՝ գովում է, թերթեցաւը, օգտակար գրքերի ընթեցումը և նրա կատարած մեծ դերը լնիթեցողի վրայ, երբ կըթիշ հրահանգիչ է և չի պարունակում սնութի ու փուծ շատախօսութիւններ. և ապա, մէջ բերելով նշանաւոր հեղինակների խօսքերն ու կարծիք-

ները ընթերցանութեան բազմակողմանի օգուտների վրայ, եղրակացնում է, թէ ամեն ժողովուրդ երախտագիտական պարտք ունի զէպի իր գրական մշակներն և աշխատառութեանը: Խմբագրութիւնը՝ Հինէն ու նորէն յօդուածում այլ և այլ խնդիրներ է յուղում: Խօսում է պարահանդէսների և նրանց իրքարեղան աշխատակաբաշխութեան և նորընտիր առաջնորդների վրայ:—Առ հասարակ ըլուր թրքահայ գրականութեան վրայ երկում է մի սպանիչ ուժիմի մեռցնող ազգեցութիւնը: Խիզդերը բացի կրօնական, առկտրական, զուտ «գրական» և արտասահմանեան ետիրացուական—դպրոցական հարցերից, այլ բանների մասին զրելու իրաւունք չունին: բուն կեանքը, բուն թրքահայ իրականութիւնը իր անթիւ ցաւերով զրաքնչական եօթ կողպէքներով է փակուած: Եւ այդ բեժիմին միթէ վերջ չպէտք է լինի...

Հարիզոն. — Ստացանք Եղիպտոսից և այս նորածին շաբաթաթերթի առաջին երկու համարները, որոնցից երկում է, որ «Հորիզոնի» վարիչները «գրականութիւն» անելու յատկնութեամբ չեն իջել հրապարակ: «Հորիզոնը» մի պարզ կոռու օրգան է, որ Եղիպտոսի նման աղայական հողի վրայ կարող է հասարակական մաքրագործողի մեծ դեր կատարել, եթէ միայն յարատեէ:

Անահիթ. — Իր յօւնուարի հսմարի առաջնորդում «Կայծ մը վերագրի տակ խօսում է Խրիկի-«Քանդատ» բանաստեղծութեան մասին, որը նկատում է աղատ մտածումի, ըմբռու ողիի միակ կայծը բացառապէս կրօնական, միստիքական և աստուածաբանական շունչով գրուած առաքեալների և ս. հայրերի աղդեցութեամբ ձեռւած մեր նախկին:

ամբողջ մատենագրութեան մէջ։ Առաջ է ըերուած «Քանզարոց» աշխարհաբար թարգմանութեամբ հանդեպ։

CORRESPONDANT. — (մարտի 10).—Ա. Շէլադամ կարծում է, որ ոռուս-ճապոնական ընդհարման իսկական նկարագիրը ճանաչելու համար, պէտք է զիմենալ, թէ ի՞նչ է Գերմանիայի քաղաքականութիւնը Հեռաւոր-Արևելքում։ Նա է, որ Ռուսաստանին մղեց դէպի Հեռաւոր-Արևելք և 1895-ից իվեր նրան մղեց ընդունել մի արագ ու բուռն քաղաքականութիւն, որը բոլորովին հակասում էր Ռուսաստանի մինչև այն ժամանակ Ասօլայում զործազրած ձկուն ու ճալապիկ քաղաքականութեան։ Եթէ նկատի առնենք Կուլիշայի և զրան հետեւող հարցերը, կը գանք այն եղբակացութեան, որ 1897-ին Գերմանիան իրականացրեց այս երկու նպատակները։ Ինքն անձամբ հաստատուել չինական ափերում և Ռուսաստանը ամբողջապէս քաշել գէպի Հեռաւոր-Արևելք։

NOUVELLE REVUE. — (մարտի 15).—Ժողէֆ Ռիբէ՝ «Արծուի թոփչըր» վերնագրի տակ մի յօդուածով ցոյց է տալիս Միացեալ Նահանգների զարգացումը Սոնրոէից սկսած մինչև Ռուզլէլու։ Յօդուածագիրը յիշեցնում է որ Վաշինգտոնի գարգապետութիւնն էր՝ աշխարհակալութիւնների հակից չվաղել, փառասիսիրական յիմարութիւնների չզոհնել ազատագրուած Միացեալ-Նահանգների ոյժերը, և այդ պատճառով էլ նա քարոզեց, որ Ամերիկան չպէտք է միջամտէ Եւրոպայի զործերում։ Սոնրոէի գարգապետութիւնը, որ աւելի էր ուժեղացնում Վաշինգտոնինը, զօրեղների ձեռքում մի վահան զարձաւ, և ոչ թէ տկարների համար պաշտպանութեան մի զէնք։ Սոնրոէ քարոզում էր, որ Եւրոպան իրաւունք չունի միջամտելու Ամե-

րիկայում, ամերիկեան դործերում։ Ահա ինչու այս վարդապետութիւնը զարձաւ մի վահան, արդէն հզօրացած Մ.-Նահանգների համար։ Եւ չնորհիւ այդ վարդապետութեան է, —որից ծընունիք աւատ և եանկի իմպերիալիզմը, այսինքն աշխարհակալական քաղաքականութիւնը, —որ Միացեալ-Նահանգները զարձան աշխարհի տընտեսական առաջին ուժը։ Անգլիան կանգնած է այլևս երկրորդ կարգում։ Ամերիկան քարածուիթի, մետաղածոյլի (fonte), պողպատի արգիւնաբերութիւնն կողմից Անգլիային արդէն զերազանցած՝ լուրջ կերպով սպասում է զերազանցել նաև հիւսուածելին և բրդեղէն արտադրութիւնների կողմից։ Մետաքսի արդիւնաբերական ճիւղում Ֆրանսիան դեռ ևս ամենքի գուշին է, թէպէտե Մ.-Նահանգներում, ոստայնների (broche) թիւ 22 օ/օ աճում է, մինչդեռ Եւրոպայում 10 օ/օ։ Սէն-Լուիի զերջին ցուցահանգէսը, որ 5,000,000 քառակուսի մետր տարածութիւնն էր զբաւում և 250 միլիոնի արժողութիւն ունէր, որ կը կնապատիկ միծէր, քան Զիլկազոյի ցուցահանգէսը և քառապատիկ մեծ՝ քան Պարիզինը, հիացմունք, զարմացք պատճառեց ամբողջ աշխարհին։

REVUE DES DEUX MONDES.— (Մարտ 15). Փ. Բուրդո խօսում է քուղաքական գործադուների մասին։ Սիդնէյ Ուլուք, Տրալ-Դևիսոնիստների պատճարանը ընդհանուր զործադունը նկատում է բանւորական շարժման տեհնդային, բուռն բուլեում ծընուած մի յզացում։ Բելգիական բանւորների ընդհանուր զործադունը, որ տեղի ունեցաւ 1893-ին և տեղի միայն մի օր, ստիպեց բելգիական խորհրդարանը վերջ գնել ընտրողաւ-

կան տիրող ոչժիմին. մի նոր ընդհանուր գործադուլիս սպասնանքը բառական եղաւ տապալելու վանդեն Պէտրը Բօօմի նախարարութիւնը: Բայց 1902-ին, 350,000 բանտոք լարած լինելով ընկերվարականների կոչին հետևեալ պրոգրամով, «Մի մարդ մի քուեց», խորհրդարանը ընտրողական սիստեմի վերաբնութիւնը չընդունեց: Բեղիայի բանւորական կուսակցութիւնը այդ պարտութիւնից գեռ ևս չէ վերականգնել: 1902-ին Բարցելոնայում տեղի ունեցած գործադուլը աւտոմատոնութիւնների նահանգական կատարեալ ինքնավարութիւնը պահանջողների և անիշխանականների գործն եղաւ: Գործադուլը արժանի էր ընդհանուր անունը կրելու: Գործատուլ անողները չուրը, դաշը, հեռագրական և հեռախոսական թելերը կտրեցին, թալանեցին հացագործների փոները, մասնաները, հայահատիկի ամբարները, ուստեղեցնի խանութները, հացի և մսի պաշար հայժհայժումը արդելեցին: Ընկերավարականները չէին մասնակցում գործադուլով: Սառհոլմի գործադուլը մի պարզ ցոյցի բնաւորութիւն կրեց արտայատելու համար աշխատաւորների կամքը ընդհանուր քուէարկութիւն ձեռք բերել: 120,000 գործաւոր խաղաղ ցոյցեր կաղակերպեցին և երեք չորս օր քաղաքի տէրերը դարձան: Մայրաքաղաքը լրագրներից և համարեալ լոյսից գրկուեց: Օրէնսդոր խորհըրդարանը՝ այն ժամանակ յայտարարեց, որ կառավարութեան ներկայացրած ծրագիրը անբաւարար էր: Ո՛չ մի գործադուլ այնքան մեծ չափեր չէ ստացել և կէտ առ կէտ չէ գործադուլուել որքան 1904 սեպտ. 16-ի իտալական գործադուլը: Այդ գործադուլն առիթ էր տուել Սարդինիայում, Բուջերիա քաղաքի մէջ զօրքի և բանւորների միջն տեղի ունեցած ընդհարումը, բայց նըազլիաւոր նպատակն էր Զիօլիտտի նախարարութեան տապալումը: Ամեն

տեղ հասարակական կեանքը դադար առաւ: Ո՛չ գալ, ոչ էլէքտրականութիւն, ոչ ձիաքարը, ոչ երկաթուղի, ոչ պոստ: Կանայք և երեխանները երկաթուղու գծերի վրայ պատկում էին զնացքի մեկնումն արգելելու համար: Ստիպում էին բոլոր մագաղիները, նոյնիսկ դեղարանները փակիլ: Վենետիկում հիւանդանոցի հիւանդների յատկացրած կաթը գըցում էին ջրանցքում: Զենովյայի փողոցներում մեծ չափերով սպանութիւններ էին կատարում Այս բոլոր քաղաքները, ուր գործադուլը 24 ժամ տևեց, ընկերվարականներից երես դարձրին, եղբակացնում է յօդուածագիրը:

EVERYBODY'S MAGAZINE. (մարտ). —Նիւ-հօրկի այս հանդիսում տըպուած մի յօդուած հաւաստում է, որ աշխարհի ամենամեծ տրաստ է մսի տրըստն է (American Beef trust), նա զրաւել է, իր ձեռքի մէջ է առել Միացեալ-նահանգների բոլոր հրապարակները: Նա հիմնուել է այն բոլէից սկսած, երբ հնարուել են «ցուրտ վաղոնները», որոնք այժմ շըշում են թուով 54,000: Beef trust-ը միայն իր համար նրանցից 42,000 հատ ունի: Այդ հսկայ ընկերակցութիւնը կազմուած է 1880 թ.: Նրա հիմնադիրները եղան Նէլսոն Մորըիմ՝ տաւարի թաղաւորը: Զիկազօյում և մի մսագործ՝ Գիւստաւ Սուլիֆու: Այս գերջինը միտք յզացաւ մսի փոխադութեան գործում կիրակել ցրտացուցիչ սիստեմը, և հիմքը գրեց հսկայ trust-ին: Նրանց երկուը միացան և ապա իրանց մէջ մտցրին Արմուր և Համմոնդ կոնսերվի և մսեղն վաճառքների վիթլարի առևտուրական տները: Այս չորս խմբերը յաջորդաբար նոււանեցին ամերիկական ոչ միայն տաւար, այլ և պտուղ արդիւնարերող բոլոր կենդրունները: Մ.-Նահանգների ոչ մի նահանգ չէ կարողանում աղատուել նրանց ճանակրից: Տըըստի գեղին կառքերը,

որոնց ամերիկացիները տալիս են սվաճառականութեան աւագակներ» անունը՝ երթևեկում են երկաթուղային բոլոր գծերի վրայ և ձգմում են ամեն մրցութիւն:

—
«Բանակ» 11—12. — Արդէն ապրիլ ամիսն է, իսկ պ.կ. Պասմաճեանի «Բանասէրի» 1904 թ. նոյեմբ. և զեկտեմբ. ամիսների համարները նոր են լոյս տեսնում, այն էլ միացած մի թուի սէջ: Արդ լդաբիկ տետրակում է շարունակւում է «Անիի կործանում» սպամական վէպը՝ որի միայն Ա. մասն է վերջացրել ոլ. Բագրատ Սյալաղեանցը: Ապա շարուած է «կանոնք ձեռնադրութեան» և գրա կողքին .. «Լուիզ Միշել»-ին նուիլուած մի յօդուած: «Գէղիան ներկայացրուած է մի թարգմանական ոտանաւորով. «Նորին կայսերական բարձրութեան Շ. Պ.-ի (?) բանաստեղծութիւններից»: Ահա ամրող բովանդակութիւնը այդ «գրական զիտական» ամսաթերթի»...

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օապեր բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրութեանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացւում են: Զեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն վերադարձնուում:

3. Քրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրնի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմոլ անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

Կովկասի Ռւսութեալիան Շքանի հոգաբարձական Խորհի որումամբ, որ հաստատուած է Կովկասի ժաղաքացիական պ. կառավատչապետի պատօնակատարի կողմից:

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԻՕՒՔ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

(ԵՐՐՈՐԴ և ՀՈՐՈՌ տարիների համար).

Համազայ հայերէն-ռուսերէն բառզբօշ

ԳԻՆՆ է 70 կ.

(246 ելես)

Դիմել Թիֆլիս «Գուտտենբերգ» և «Կինտրոնական», խոկ Բառ «Сотрудникъ» գրավաճառանոցներին:

LA REVUE

(Ancienne «Revue des Revues»)

A B O N N E M E N T

Etranger (Union postale) par an: 28 fr.

» » » par semestre 16 fr.

Directeur-Rédacteur en chef

JEAN FINOT

Administration et Rédaction:

12 Avenue de l'Opéra

Paris

1—5

ԲԱՅՈՒԱԾ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԿԱՆ ՀՐԱՄԱ

(33-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1905

ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Մշակ» կը հրատարակուի նոյն պլողամեռվ և նոյն ուղղութեամբ

Ամեն օր սացի տօներին յաջորդող օքերից:

Բաժանորդագինը «Մշակ»։ տարեկան դիմք 10 ռուբլի է, տասնեւմեկ ամսուանը նոյնպէս 10 ռ., տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ռուբլի։

Արտասահմանեան բաժանութագրութիւնը. Ամ երեկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակ» դրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակ» գրքուելու համար և առհասարակ նամակներ և ծրաբներ ուղարկելլայ՝ պէտք է դիմել հետևեալ հասցէով. ՏԱՓ-ԼԻСՑ, Ռեդակցիա „ՄՇԱԿ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունւում են բոլոր լեզուներով։

Ապառիկ բոժանորդագրութիւն չէ ընդունւում։

VII года
издания

ОТКРЫТА ПОДПИСКА

VII годъ
издания

на 1905 г.

на газету

,Нефтяное Дѣло“

Издание Совѣта съѣзда нефтепромышленниковъ въ Баку.

Выходитъ два раза въ мѣсяцъ

Подписная цена съ доставкой.

на годъ 10 руб., на 6 мѣсяцевъ 6 руб., на 3 мѣсяца 4 руб.

Подписка принимается въ гор. Баку, въ редакціи, въ помѣщении Совѣта съѣзда нефтепромышленниковъ.

Объявленія принимаются тамъ-же.

Мамятники древне-армянской архитектуры

Бъ фотографіяхъ и чертежахъ

Подъ редакціей академика архитектуры профессора Инст.
Гражд. Инж. Гер. Д. Гrimma,
составили и издали
Л. Егіазаровъ и Р. Мартиросянцъ
выпускъ I

Հայոց Հին Ճարտարապետութեան նշաններ

Издание будетъ состоять изъ 10 выпусковъ, по 5 таблицъ въ каждомъ. Стоимость издания съ пересылкой при единовременномъ взносѣ 12 рублей, съ разсрочкой платежа 13 рублей. Подписка принимается: У Л. Егіазарова, С.-Петербургъ, Инст.
Гражд. Инж., 2-я рота Измайловскаго полка; въ г. Тифлисъ,
у Е. А. Цатурова, Дворцовая ул.

ԼԵԽԸՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Մ Ի Ք Ա Ն Ի Օ Ր

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

Դին է 20 կոտեկ:

Խօս. Ա. Սումբատովի

ԴԱԿԱՇԱՆՈՒԹԻՒՆ

ՊՐԱԺՄԱՆԻԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ ՊՐԱՍՏԱՆԻ ԱՆԴԻԿԱԼԻՑ
5 արտարուածով(Հեղինակի պատկերով և յառաջաբանով)
ԲՆԱՊՐԻՑ ԹԱՐԳՄԱՆԻՑ
Ալ. ծատուրեան
Գին է 50 կ.

Զ. ՄՈՐԵԿ

ՀԱԶԻ ԲԱՐԱՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ՊԱՐՍԿԱՄԱՆՈՒՄ

Վէպ պարսկական կեանքից
Լորդ Կըրգընի ներածութեամբ
Թարգմ. անզ. բնապրից
Մ' Կալապետեան.

Գին է 2 ր.

Բ Ա Ն Ա Ս Ե Ր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ

«Բանասէր»-ի խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել իր համակրողներուն, լնիթեցողներուն եւ բաժանորդներուն, որ 1905-ի յունուարէն սկսելով «Բանասէր» պիտի հրատարակուի բոլորովին նոր ծրագրով եւ նոր ուղղութիւնով:

«Բանասէր» պիտի պարունակէ իր բանասիրական եւ հնախօսական յօդուածներու շաբթը, աւել մողովովականացած նոր ձևի մը տակ:
«Բանասէր» ընդարձակ տեղ մը պիտի տայ՝ «Փաղավեպակոն Համալսարան» բաժնի մը տակ՝ գիտական, գրական, արուհատական, իմաստափական, հոգեբանական, բազմարուկատական եւ համայնագիտական յօդուածներու:«Բանասէր»-ի 1905-ի յունուարէն սկսելով նոր վարչութիւն մը կազմուած է, եւ նոր շրջանը պիտի սկսի նոր ոյժերով:
ԿՈՎԿԱՍԻ մէջ կը յանձնաբարենք զիմել Բաղու, Նիկոլաեվսկայա փողոց, ա. համար 1, տիկին Մ. Ա. Սունգուկեանցին, որ մեր բոլոր հրատարակութիւններին ունի իր նորահասուաս գրախանութիւն մէջ, կարել է զիմել նաև թիֆլիս, «Գուտանեմբերգ» ին:

Բանասիրդագրուելու համար

Տարեկան գինն է 6 լուրիթ, վեց ամսուանը՝ 3 ր.
Մէր հասցն է Basmadjian.—Bd., Rochechouart. Paris.

Բացուած է բաժանորդազրութիւն

Ե. ՖՐԱՆԳԵԱՆԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

Պատկերագարդ ժողովածուի

«Ատրպատականը» իր մէջ պարունակում է մի շարք յօդուածներ (թուով 30—35), որոնք զանազան ժամանակներում տպագրուել են պարբերական հրատարակութիւնների մէջ, մեծագոյն մասը «Մուրճ» ամսագրում: Կը լինին նաև նոր զլուխներ, իսկ արտատպումները լոյս տեսնելու են նոր սրբագրութեամբ, աւելի ընդարձակած և ճոխացրած: Դիրքը, որ տպագրուելու է Թիֆլիսում, ունենալու է 450—500 էջ, մօտ 50—60 տիպեր և տեսաբաններ:

Բաժանորդագինն է Ռուսաստանում 1 լ. 50 կ., Պարսկաստանում 1 թուման, իսկ արտասահմանում՝ 5 ֆրանկ:

Բաժանորդագինը կանխիկ է: Լոյս տեսնելուց յետոյ գրքի գինը կառող է զգալի կերպով բարձրանալ:

Բաժանորդագինը ընդունելում է

Ռուսաստանում.

ա) Թիֆլիսում—«Հերմէս» տպարանում.

բ) Բագւում—պ. Տիգրան Ռաշմանեանի մօտ.

գ) Երևանում—պ. Սարգիս Օհանջանեանի մօտ.

դ) Բոստով գոնի վրայ—պ. Ռուստամեանի մօտ (Յ. Սահական Նո 174).

ե) Բաթումում—պ. Սոլոմոն Յարութիւնեանի մօտ.

Պարսկաստանում.

ա) Թեհրանում—պ. Յարէթ Խաչատրեանի մօտ (Ռուսցիչ).

բ) Թաւրիկ—պ. Ալէթ Բարայեանի և Յովհաննիսինի մօտ.

գ) Սալմաստում—հեղինակի մօտ.

Արտասահմանում.

ա) Եգիպտոս—դոկտոր Կ. Փաշալեան (Ալեքսանդրիա)

բ) Ամերիկա—«Հայրենիքի» խմբագրատումնը (Բոստոն)

գ) Բուլգարիա—«Շարժումի» խմբագրատումնը (Վառնա).

3—2

Ժամանակաւոր պատախանատու-խմբագիր Յ. Սպենդիարեան
Հրատարակուիլ Ա. Քանանեան

իսուլը եւ կորադրացիաների պահմանչները եւ բժիշկ-ների Պիրողովեան համատորոգի վճիռը իբրև որո-գրամմ։—Չինովնիմսերի և արաւուալ Յովեորականու-թեան ազգուիլը հասարակական ներկայ արածադրութիւ-նից։—Ներկայացուցական ժողովի առաջ դրած իրաւ-ասութեան սահմանները։—Ներկայ հոսմարի Ֆշամի-ների տակտիկան։—Գիւղացիական շարժումներ եւ դր-րամց Կովկասիան առանձնայտելութիւնները։—Արաս-տանի գնուզացիների պահմանչները։—Ճորտերի ազատու-թիւն եւ տնտեսական կախում ազնուականութիւնից։— Թիվորմների պահմանչը Կոլլատում։—Նոր ուղղութեան նշանաբներ։—Կովկասիան փոխարքայի խօսքերը Թիվիշ-սի եւ Կամուդիկոսի պատգամաւորներն։—† Ք. Վի-րայէլեան։—† Ա. Եկմակեան։—Ա. Ֆէլիկեան։—Սիւ-ծովեկերեաց գաղթականների հարցը։—Առվիկ. փոխ-արքյի դիմումը երկրիս ազգաբնակութեան։—Բարձրա-գոյն ուկագ եւ բեսկրիպտ փոխարքայութեան վերաբե-րեալ։—Գործակատարների շարժումը Թիվլիտում։—Բա-զուի գէպքերի ստեղծած լարուածութիւնը։—Անուշա-հրապարակային քննութեան անհրաժեշտութիւնը։—Մա-մուլի վերաբերեալ կարգադրութիւններ։ Լ. Ս. . .

208

19. ԿՈՎԿԱՆԻ ԹՌԻՄՔ ՄԱՍՈՒԹԻԾ։—Գարձնալ «Նարքի-Խուսի» նոր ուղղութեան մասին։—Հայեն եւ Ծիւրքիան, հա-մերաշխութեան եւ դործակցութեան կոչ Թուրք ինտելի-դինցիային։—Կրօնը եւ քաղաքակրթութիւն։—Լոռութիւ-նը նշանաբան։ Տիգրանի

229

20. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։—Ուսւահական պատերազմ։— Ֆրանսիան եւ Գերմանիան Մարոկկոյում։—Կրէտա-կան ապստամբութիւն։—Արաբական շարժումը։—Բժիշկ Զավիրիսի ձեռնարկութիւնը Թիւրքայ Հայաստանում։— Պարտիկական գործերից։—Նոր հնդկա-պարսկական ա-ռեւորական բնկրութիւն։—Ժիւլ-Վիրն Լ. Ս. . .

236

21. ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ,

243

22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

247

23. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

253

24. ՅԱԽԵՂՈՒԱԾ. ՋԷյմս Մորիէլ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԴ- ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանրից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան.

1—16

ԹՐԱՔՆԵԿՈՒԹԻՄ կ ԸՆԴՀԱՐԴՐԱԳՐԱԳՐԻՒԹԻՒՆ

1905 թ.

ՄԱԿՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԿԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՈԱԳՐԻ

(Նոր շրջան N^o տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ա Բ Դ Դ Ա Գ Ի Ն Բ

Թուրքական տարեկան	10 ր.	Արևմտահամայնական	12 ր.	(32 դ.)
Կես տարին	6 »	»	7 »	(18 դ.)
1 ամսումն	1 »	»	1 » 20 կ.	(3) 2 դ.)

Խանօքաբիլի, Յանձանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս, ոկրպում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.- կամ ոկրպում 5 ր. և յունիսի 1-ին 5 րորդի: Գիւղական բանահանրի, ուսուցչների ուսուցչների և աշակերտների համար տարեկան բանորդագինն է 8 րորդի օտարասանեած:

ԲԱԺԱՆԱԲՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲՆՆԴԱՀՆԻՈՒԹԻՄ է
Թօփլիսած - խմբագրառուներ (ձայնայինձեռն վաղոց, տ. № 12)
Կողաւորիան այլ ենթից պէտք է դիմու Տիֆլիս, վեր թագավորական ժողովի աշխատական քայլած պատվիրակութեածունեած:

ԱՐԵՎԱԿԱՆԻՑԻԳ՝ Tbilis, Rédaction de la revue «MOURTCHI»,

«Մուրճ»ի գործադիրներ:

Անդրանիկ - Գ. ք. Մկրտչումեան:
Անդի - Արամ Յակոբեան (Սհճովեան շրջան):
Ամանրիսելի - Ա. ք. Բէլլիկեան (Անդրկառապեան երկիր):
Անուսան - Շեռու:
Թիմիլիք - «Գուտանահներդ» և «Կենուրնական» դրավաճառ:
Բագու - բժ. Գ. Մարգարեան, (Ե. Մօրեալ, ձ. № 26):
Բիթի-Ելյար - պ. Գ. Տ. - Դանիէլեան:
Երեւան - «Ագուրտա» զրափանութեած:
Երևան - պ. Համազասոյ Տ. Պաշտառիկեան:
Մովիկուն - պ. Մտ. Թումեան:
Թառթիզ - պ. Յ. Տէլ-Մուկանեան:
Եզիդասս - դոկտոր Կ. Փաշանեան-Պան:
Լինլիլի - պ. Գ. Մելիք-Աբրահամեան:
Անդիսան - պ. Եր. Ֆրանզեան:
Նոր-Զուլու - պ. Տիգրան Արգարեան:
Թէհանի - պ. Ա. Յակովեան և Ալեքսան Թունեանց:

ՑԱՀԱՏԱՐԱՐԱՑՈՒԹԻՒՆ. Ծնունդում է ամեն լիզուով: Ցայտարացութիւնների համար վճարում են, և երես բանող յայտարարութեան համար 15 ր., 1/2 եր.-8 ր., 1/4 եր.-4 ր., տողատեղ (կորպ.) - 40 կ.:

Չեռագիրները, նամակները և ծրաբները պէտք է ուղղել խորագրութեան, և ելլու ՍԱՐԴԱՐԱՅԻ անունով: